

«ԽԱՉԻԿ ԳԱՊԻԿԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ՀԻՄՆԱԳԻՐԱՄ» – ԹԻԻ 1
«KHATCHIG BABIKIAN LITERARY FUND» – N^o 1

ԿԱՐԷՆ ՀՐԱՆՏԻ ԽԱՆԼԱՐԵԱՆ

**ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ
ԷԹՆՈԿՐՕՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(1923 – 2005 թթ.)**

Դիսերտացիա՝ պատմական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար
ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՂՈԿՏՈՐ ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ

ԱՆԹԻԼԻԱՍ
2009

9(47.925)

Պ-20

h2

«ԽԱՉԻԿ ԲԱԲԻԿԻԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ» - ԹԻԻ 1
«KHATCHIG BABIKIAN LITERARY FUND» - N° 1

ԿԱՐԷՆ ՀՐԱՆՏԻ ԽԱՆԼԱՐԵԱՆ

4913

ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ
ԷԹՆՈԿՐՕՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՈՒՄ
(1923 – 2005 թթ.)

Դիսերտացիա՝ պատմական գիտությունների
բեկնածուի գիտական աստիճան հայցելու համար

ԳԻՏԱԿԱՆ ԴԵԿԱԿԱՐ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԴՊԿՏՈՐ ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ

ԱՆԹԻԼԻԱՍ
2009

Հրատարակության պատրաստեց՝

Երուանդ Փամպուքեան

Garen Hrant Khanlarian

"THE ETHNORELIGIOUS TRANSFORMATION OF THE
ARMENIANS IN THE REPUBLIC OF TURKEY" (1923-2005)

Preface by Dr. Ashot Melkonian

Printing House of the Armenian Catholicosate of Cilicia

© 2009 All Rights Reserved

Armenian Catholicosate of Cilicia

Antelias - Lebanon

ISBN: 978-9953-0-1405-0

«ԽԱՉԻԿ ՊԱՊԻԿԵԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»

Շուրջ քարի մը առաջ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նախաձեռնութեամբ հիմը դրուեցաւ **«Խաչիկ Պապիկեան Հրատարակչական Հիմնադրամ»**ին: Սոյն հիմնադրամը մաս կը կազմէ **«Խաչիկ Պապիկեան Հիմնադրամ»**ի ընդհանուր գործունեութեան, որ կ'ընդգրկէ կրթական, մշակութային, ընկերային եւ այլ մարզեր: Իր մահէն առաջ Մեթր Խաչիկ Պապիկեան Մեզի հետ խորհրդակցաբար հիմը դրած էր յիշեալ հիմնադրամին:

Ծանօթ անուն մըն է Մեթր Խաչիկ Պապիկեան ազգային կեանքէն ներս: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան իր կարեւոր մասնակցութիւնը բերած է ան ամբողջ կէս դար, որպէս Արեւնապետ Ազգ. Կեդրոնական Վարչութեան, ինչպէս նաեւ՝ իրաւական հարցերու խորհրդական Մեր նախորդներուն: Իսկ Լիբանանի հայ կեանքէն ներս՝ որպէս Ազգային Իշխանութեան Գաւառական Ժողովի արեւնապետ, պետական երեսփոխան ու նախարար, մնայուն ներկայութիւն դարձած է Մեթրը փաստամեակներ շարունակ: Մեթր Պապիկեանի անունը նաեւ սերտօրէն առնչուած է Լիբանանի քաղաքական կեանքին, ուր իր ազդու ներկայութեամբ բոլորին յարգանքը վայելած է:

Քաղաքական կեանքը Խաչիկ Պապիկեանի ծառայութեան դաշտէն ներս, ազգային թէ լիբանանեան, ա-

ռաջնահերթ փեղ է գրաւած: Հետեւաբար, մեկնելով այս իրողութենէն, ուզեցինք որ իր անունը կրող Հիմնադրամի հրապարակութիւնները կեդրոնական ընդհանրապէս հայ քաղաքական մարքի ու կեանքի եւ յարկապէս Հայ Դաւին առընչուած նիւթերու հրապարակութեան: Ներկայ աշխարհին մէջ, հայ ժողովուրդի իրաւունքներու հետապնդման ծիրէն ներս, մասնաւորաբար հայ քաղաքական մարքի մշակումը եւ քաղաքական, իրաւական ու միջազգային հարցերու քննարկումը կը նկատենք այժմեական ու կենսական: Վստահ ենք, որ «*Խուչիկ Պապիկեան Հրապարակական Հիմնադրամ*»ը կարելորդ դեր մը պիտի ունենայ այս ուղղութեամբ:

Հիմնադրամը արդէն իսկ մշակած է իր կանոնադրութիւնը եւ ունի Մեր նախագահութեամբ գործող յանձնախումբ մը, որուն անդամներն են՝ Երուանդ Փամպուքեան, Արեւնապետ (Պէյրութ, Լիբանան), Շահան Գանարահարեան (Պէյրութ, Լիբանան), Կիրօ Մանոյեան (Երեւան, Հայաստան), Հայկ Օշական (Նիւ Եորք, ԱՄՆ) եւ Կարօ Մոմճեան (Լոս Անճելոս, ԱՄՆ):

Հիմնադրամի առաջին հրապարակութիւնն է ներկայ հատորը: Հրապարակութիւնները պիտի ըլլան բոլոր լեզուներով: Հետեւաբար, կոչ կ'ուղղենք մեր մտաւորականներուն ու պատմագէտներուն, իրենց մասնակցութիւնը բերելու հիմնադրամի աշխատանքներուն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

Յունուար 2009

Անթիլիաս

Ներածութիւն

Թուրքիայում հայ ժողովրդի դէմ իրականացուած պարբերական ջարդերի, բռնի տեղահանումների եւ, յատկապէս, 1915-23 թթ. Ցեղասպանութեան հետեւանքները չափազանց մեծ են հայ իրականութեան մէջ: Թուրքիայում մնացած հայ տարրի էթնոկրօնական այլակերպման եւ վերակերպման իրողութեան խորքից յառնում է նշուած հետեւանքների մի կարելորդ երեսը, որը, ըստ էութեան, ճակատագրական նշանակութիւն ունի բովանդակ հայ ժողովրդի ներկայի եւ ապագայի համար:

Այս առումով թէեւ համիդեան ջարդերի ազդեցութիւնների ընդհանուր ոգին նոյնանում է Հայոց Եղեռնի հետ, սակայն չափերի ու ծաւալի իմաստով 1915-23 թթ. Հայոց Ցեղասպանութիւնը բացառիկ երեւոյթ է հայասպանութեան իմաստով: Հետեւաբար՝ հայութեան մնացորդացի վերակերպման պատմական գործընթացը գերազանցապէս անցնում է Թուրքիայի արդի պատմութեան, Թուրքիայի Հանրապետութեան ծեւաւորման բնաշրջումի միջով:

Վերակերպումը հայութեան իրողութիւնն այսօր՝ հայկական անկախ պետականութեան պայմաններ-

րում, շարունակում է մնալ որպես հայ ազգի էթնիկական դիմագծի պահպանման, ազգային լինելության գերխնդիրներից մեկը:

Սոյն ուսումնասիրությունը նպատակ է հետապնդում վեր հանել Հայոց Ցեղասպանության շրջանից յետոյ Թուրքիայի Հանրապետությունում (բացի Արեւմըտեան Թուրքիայից) գոյատևած հայության էթնոկրօնական այլակերպման ու վերակերպման գործընթացը՝ մօտաւոր գնահատումներ տալով տուեալ տարրի վիճակագրական եւ ժողովրդագրական պատկերին, լուսաբանել նրա հասարակական կեանքի ու հոգեմտաւոր այժմէական ներաշխարհի ծալքերը:

Նկատի առնելով սոյն հետազօտութեան ընդհանուր սահմանները՝ նիւթը կրում է քաղաքական որոշակի նշանակութիւն եւ իր տեսակի մէջ արդիական է: Այս իմաստով հետազայ հետազօտութիւնների համար այն կարող է համարուել սկիզբ:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Տեսական նախադրեալ

Հետազօտութիւնը հիմնաւորելու համար հարկաւոր է նախ սահմանել, թէ ո՞վ է հայը, կամ ու՞մ կարելի է հայ համարել:

Հնարաւոր է, որ այս հարցադրումը թուայ անիմաստ կամ ժամանակավրէպ: Սակայն նոր հազարամեակում բաւական անհրաժեշտութիւն է զգացում մէկ անգամ եւս պատասխանելու այս էական հարցումին՝ վերստին բնորոշելու համար ազգ, ազգութիւն հասկացութիւնը, քանզի այսօր հայութեան առջեւ ծառացած դժուարին խնդիրներն ինքնին թելադրում են վերանայել մինչ այժմ առգոյ աւանդական ըմբռնումները:

Հարցադրմանը կարելի է պատասխանել հողի պատկանելութեան տեսութեամբ, որով նոյն հողի ծնունդները կամ նոյն բնօրրանից սերուածները համարում են միեւնոյն ազգին պատկանողներ: Այս տեսութիւնը մեզ նման ցրուած ու քանակապէս փոքր ազգերի պարագայում ընդգրկում է շատ սահմանափակ շրջագիծ:

Հարցին կարելի է պատասխանել նաեւ ազգակ-

ցական կապի տեսանկյունից, որով ազգային պատկանելությունը բնորոշում է արինակցական կամ ցեղային կապերով: Այս մօտեցմամբ թեև ամելի է ընդլայնում ազգ հասկացութեան սահմանումը, սակայն դրանում բաւական բարդ կիրառական արժեքավեր են պահանջում:

Խնդրին կարելի է մօտենալ կիրառական ամելի դիրին չափանիշեր ենթադրող տեսություններով. օրինակ՝ լեզուական, կրօնական կամ անուանական պատկանելութեան առանձին կամ խառն զանազան տեսություններ: Սակայն դրանք եւս նեղ են եւ սահմանափակ, որովհետեւ այդ հիմնաւորմամբ էլ անորոշ է մնում հայութեան մի խոշոր մասի պատկանելութիւնը. նրանք, ովքեր հայերէնին տիրապետելու հնարաւորութիւններից բռնի կամ նոյնիսկ ոչ բռնի կերպով զուրկ են եղել, նրանք, ովքեր չունեն մկրտութեան վկայագիր եւ նրանք, ովքեր իրենց ազգանուան մէջ չեն կրում «եան» կամ «յան» վերջածանցը, փաստօրէն մնալու են սահմաններից դուրս...

Մենք քանակապէս այնքան էլ մեծ ազգ չենք, հետեւաբար կանգնած ենք ազգը բնորոշելու յարմարագոյն մի տեսութիւն որդեգրելու հրամայականի առջեւ:

Որպէս այդպիսին՝ մեզ թոյլ ենք տալիս առաջադրել ազգային գիտակցութեան տեսութիւնը, որին կառչած են եղել ազգային գաղափարախօսութեանը յարած մի շարք մտաւորականներ:

Միքայէլ Վարանդեանը, օրինակ, ազգային պատկանելութեան ամենակարեւոր յատկութիւնն է համարում արինակցական, բնօրրանային, լեզուական եւ մշակութային գործօնների եւ էտաբրերի ընդհանուր հէնքի վրայ ստեղծուած ինքնութեան գիտակցութիւնը:

«Ընդհանուր ծագում, ֆիզիկական ու հոգեկան նմանութիւններ, ընդհանուր հող, լեզու, կրօն, ընդհանուր պատմութիւն եւ այլն եւ այլն,- հիմնաւորում է Միքայէլ Վարանդեանը,- ահա այն գործօնները, որոնք զատ-զատ կամ մի քանիսը միասին, կամ բոլորը մէկտեղ՝ կոչուած են լուսաբանել ազգայնութեան իմաստը, բայց եւ անկարող են մատակարարել մի զուտ գիտական բաւարար որոշում:

«Ո՞րտեղ է մնում ազգայնական գաղափարի «սուբստրատումը», նրա ամենաէական յատկանիշը: Մի գաղտնիք կայ ազգայնութեան գաղափարի մէջ, որ երբեք չի դրսեւորուած, որ խոյս է տալիս մեր դիտողութիւնից- մի գաղտնիք կայ, որ ամելի բարձր է, ամելի հարուստ, ամելի խորունկ, ամելի ընդարձակ՝ քան թէ բոլոր բնորոշ գծերը, որ մենք կարող ենք թուել,- լեզու, կրօն, արինակցութիւն եւ այլն:

«Յամենայն դէպս՝ մենք գործ ունենք մի կենդանի իրողութեան հետ. մեր առջեւ կանգնած է մի շատ կոնկրետ անհատականութիւն, որ իրօք մէկ է իր բնորոշ գծերով, տարբեր ուրիշներից»¹: Այսինքն՝ այն, ինչ իր ներաշխարհում գիտակցում է ինքը՝ մարդը, եւ որին կապուած է պատմական յիշողութեամբ:

«Էթնիկական պատկանելութեան ինքնագիտակցութիւնը,- ասում է ռուս նշանաւոր տեսաբան Կուզմինկովը,- պահպանում եւ մարդկանց արարքների ու վարմունքի վրայ ազդում է տասնեակ ու հարիւրաւոր տարիներ նոյնիսկ այն բանից յետոյ, երբ մարդիկ կորցրել են փաստական կապն իրենց ազգի հետ,

¹ Վարանդեան Մ., Հայրենիքի գաղափարը, Ժնեւ, 1904, էջ 15-18:

ապրում են ուրիշ հողում, խօսում այլ լեզուով»²:

«Փաստորեն, անհատը, ինչպես եւ համապատասխան ազգային հաւաքականութիւնը,- գրում էր տեսաբան Լեւոն Մկրտչեանը 1960-ականներին,- ամէն ինչ կորցնելուց եւ մերկանալուց յետոյ, մինչեւ վերջին շունչը փչելն իր հետ է ունենում բացառապէս «ազգային գիտակցութիւնը», նրանով պայքարում մահաբեր ալիքների դէմ եւ միայն նրանից զրկուելուց յետոյ է, որ ընկղմւում է ու անհետանում՝ որպէս ազգային անհատականութեան միաւոր»³:

Ըստ ազգային գիտակցութեան այս տեսութեան՝ ով ինքն իրեն հայ է համարում, գիտակցում է հայկական ծագումը կամ իրազեկ է իր հայկական արմատներին, նա արդէն հայ է, հայ է անվիճելիօրէն, անկախ այն բոլոր հանգամանքներից, թէ որտեղ է բնակւում, ինչ լեզուով է հաղորդակցւում, ինչ անուն է կրում կամ կրօնական ինչ անյարիր դաւանանքի է պարտադրուել:

Ահա այս մօտեցմամբ անխուսափելիօրէն կանգնած ենք յատկապէս Թուրքիայում ապրող հայութեան կենսավիճակն ու գոյութեան պայմանները նորովի ճանաչելու պարտաւորութեան առջեւ:

Միայն նման տեսական նախադրեալով կարելի է քննել նիւթը, առանց որի այն յառաջագունէ դատապարտուած է անիմաստութեան:

² Բագին, Բէյրութ, 1970, էջ 66:

³ Նոյն տեղում, էջ 68:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Քննարկման հիմունքները

Հայոց Ցեղասպանութիւնից յետոյ (1915-23 թթ.)՝ Թուրքիայի Հանրապետութեան ժամանակահատուածում, հայ էթնիկական տարրի գոյատեւման խնդրին առընչուող նիւթն ուսումնասիրելու համար հարկաւոր է հետեւել դրա պատմական հոլովոյթին, ճշտորոշել աշխարհագրական ընդգրկումն ու պայմանական շրջագիծը եւ, ըստ էութեան, սահմանել դրա տիպաբանութիւնը:

ա) Պատմաժամանակագրական հոլովոյթը

Նիւթի ծաւալը թելադրում է կիրառել քննարկման եւ ներկայացման յարմար հոլովոյթ: Ուստի փորձ է արուել սոյն հոլովոյթը, հնարաւորութեան սահմաններում, համապատասխանեցնել Թուրքիայի Հանրապետութեան քաղաքական պատմութեան նշանակալից ժամանակագրական փուլերին:

Համառօտ կերպով քննելով Թուրքիայի Հանրապետութեան անցած քաղաքական ուղին՝ յատկապէս Աթաթուրքի իշխանութեան շրջանին յաջորդող տա-

րիներին, պարզում են քաղաքական դաշտի պարբերական ապակայունության շրջաններ, որոնց յաջորդել են զինուորական յեղաշրջումներ կամ բանակի միջոցով կատարուած այլ տեսակի վարչաքաղաքական կոպիտ միջամտութիւններ: Այս երեւոյթի օրինաչափ դրսեւորումը կարելի է համարել Թուրքիայի ցայժմ տասնմէկ նախագահներից հինգի՝ բանակի բարձրաստիճան սպայ լինելու հանգամանքը: Բանակի այս դերն անփոխարինելի նշանակութիւն ունի Թուրքիայի քաղաքական կեանքում եւ պետական ճակատագրում:

Թուրքիայի քաղաքական կեանքում Համայնավարական կուսակցութիւնից ծնունդ առած ծայրայեղական ծախը, իր բոլոր հոսանքներով հանդերձ, առհասարակ հեռու է եղել իշխանական ոլորտներից եւ աւանդաբար գտնուել է կոշտ ընդդիմութեան դիրքերում:

Կենտրոն-ծախը՝ Քեմալի հիմնադրած Հանրապետական ժողովրդական կուսակցութիւնը (ՀԺԿ կամ CHP), իր այսպէս կոչուած «սոցիալ-դեմոկրատական» յաւակնութեամբ, կազմել է քաղաքական կեանքի հիմնական առանցքներից մէկը:

«Ձախի» սպեկտրում է գտնուում նաեւ Իսմէթ Ինոնիի զաւակ երդալ Ինոնիի 1980-ականներին հիմնադրած Ընկերվար-ժողովրդավար ժողովրդական կուսակցութիւնը (ԸԺԿ կամ SHP), որը փաստօրէն հանդիսանում է ՀԺԿ-ի կամ CHP-ի գաղափարական պրոտոտիպը:

Մենդերէսի ժողովրդավար կուսակցութեան (ԺԿ) փլատակների վրայ 1961 թ. ձեւաւորուած Դեմիրէլի Արդարութիւն կուսակցութիւնը (ԱԿ), իր հետա-

գայ անուանափոխուած տեսքով (Ճշմարիտ Ուղի կուսակցութիւն - ՃՈՒԿ կամ DYP), աւանդաբար գրաւել է աջի կենտրոնը եւ յարմար պահերին ստանձնել գործադիր իշխանութիւնը: 1993 թ. Դեմիրէլ-Չիլլերներքին հակադրութեան արդիւնքում, Չիլլերը ըստանձնեց իշխանութիւնը եւ հետագայում ճանապարհ հարթեց Հանրապետական ժողովրդական կուսակցութեան (ՀԺԿ կամ CHP) հետ կոալիցիա կազմելու համար, որը, սակայն, չունեցաւ երկար կեանք:

Նոր պահպանողական կուսակցութիւնների բնորոշով, 1983 թ. Օզալի ջանքերով հիմնադրուած Մայր հայրենիք կուսակցութեան (ՄՀԿ կամ ANAP) մէջ առաւելաբար համախմբուել են «ազնուական» դասի ներկայացուցիչներ եւ մտաւորականներ: Այս կուսակցութիւնը նշանակալից դերակատարութիւն ունեցաւ 1980-ականների կէսերից սկսեալ, յատկապէս 1990-ականների Թուրքիայի իշխանութիւններում: Կուսակցութեան առաջատար ղեկավարներից նախկին վարչապետ Մեսուդ Եւմազի «համշէնահայ լինելու» մասին⁴ թուրքական մամուլում հնչեցուած «գրպարտանքները», երկար ժամանակ մնացին չհերքուած եւ վերածուեցին քաղաքական առեղծուածի:

1997 թ. բանակի սպառնական կեցուածքների հետեւանքով իշխանութիւններից հրաժարուած իսլամիստները, իրենց «Միլլի սալամէթ», «Ռեֆահ», «Ֆեզիլէթ» եւ «Արդարութիւն եւ առաջադիմութիւն» (ԱԱԿ կամ AKP) անուանակոչումներով, քաղաքական սպեկտրում գրաւում են իւրայատուկ տեղ՝ կենտրոնական եւ ծայրայեղական աջի արանքում: Խորհրդ-

⁴ <http://www.bolsohays.com>.

դարանական ընտրություններում ծայների համեմատական առաելությունը հաւաքած սոյն հոսանքն այսօր փաստօրէն ղեկավարում է գործադիր իշխանութիւնը:

Իսկ ծայրայեղ աջը, Ազգայնական շարժում կուսակցութեան (ԱՇԿ կամ MHP) հիմնադրութիւնից սկսեալ (1969 թ.), թէեւ կարելոր տեղ չի զբաղեցրել գործադիր իշխանութեան մէջ, այնուամենայնիւ իր ահաբեկչական գործողութիւններով եւ խափանարար դիրքորոշումներով յաճախ ազդել է ինչպէս ներքին, այնպէս էլ արտաքին քաղաքականութեան, դատական եւ օրէնսդիր ոլորտների վրայ: Իր այս իւրայատուկ գործառնոթով MHP-ն հանդէս է գալիս քաղաքական ստատուս-քուոն պահպանելու կամ հարկ եղած պահին խախտելու պատեհապաշտական դերում:

Այս սպեկտրից միանգամայն դուրս պէտք է համարել հիմնականում քուրդ խորհրդարանական չափաւոր գործիչներից բաղկացած ժողովրդական ժողովրդավարութիւն կուսակցութիւնը (ԺԺԿ կամ DeHaP), իր քաղաքական իրաւայաջորդ՝ ժողովրդավարութիւն կուսակցութեանով (DeP, հիմնադրուել է 1994 թ.): ԺԺԿ-ն հիմնականում աշխատում է քրդաշատ նահանգներում:


Այստեղ ուզում ենք նշել քաղաքական մի կարելոր հանգամանք, որից թեմատիկ հետեւութիւններ ենք անելու յառաջիկայ գլուխներում. Թուրքիայի 1999 թ. ապրիլի եւ 2002 թ. նոյեմբերի խորհրդարանական ընտրութիւններում յաղթած ուժերի պատկերն ըստ նահանգների⁵ համեմատելիս (տես՝ Նկ. 1) պարզուում

⁵ <http://www.milliyet.com.tr/ozel/siyaset/secim2002/images/>.

է. որ Արդարութիւն եւ առաջադիմութիւն կուսակցութեան (իսլամիստական - AKP) եւ ժողովրդական ժողովրդավարութիւն կուսակցութեան» (Քրդական - DeHaP) քաղաքական ազդեցութիւնները մեծ յաւելում են արձանագրել յատկապէս արեւելեան նահանգներում (եւ սա այն դէպքում, որ Քրդական DeHaP-ին չարտօնուեց մասնակցել 1999 թ. ընտրութիւններին): Այս փաստը կարող է կարելոր նշանակութիւն ունենալ մեր աշխատութեան առարկայ հայութեան քաղաքական պայմանների եւ կացութեան գնահատման տեսակէտից:

Թուրքիայի նշուած քաղաքական ուժերը (քրդական DeHaP-ից բացի) պաշտօնապէս չեն ընդունում Լօզանի դաշնագրի հասկացութիւնների ընդհանուր շրջագծից դուրս էթնոկրօնական խմբերի գոյութեան փաստը Թուրքիայում եւ առհասարակ Թուրքիայի բազազգ լինելու իրողութիւնը: Դրանցից ոմանք (օրինակ՝ ԱՇԿ) անպաշտօն կերպով նոյնիսկ մերժում են Լօզանեան տրամադրութիւնները: Կան նաեւ աւելի

ա) 1999 թ. ապրիլի խորհրդարանական ընտրութիւններում յաղթած ուժերի պատկերը



բ- 2002 թ. նոյեմբերի խորհրդարանական ընտրություններում
յաղթած ուժերի պատկերը



Նկար 1

լայնախոհություն մոգացողներ (CHP եւ ANAP), որոնք, օրինակ, Կ. Պոլսի քաղաքապետական խորհուրդների ընտրություններում մի քանի հայեր են ներառում իրենց ընտրացուցակներում⁶:

Մեր աշխատության առարկայ հայության գոյությունը հաշուի առնելու տեսակետից աննշան բացառություն են կազմում հատ ու կենտ ծայրայեղ ծախ հոսանքները, որոնք իրենց ենթակայ կայքէջերում բաւական խեղաթիւրումներով ընդունում են, օրինակ, համշէնական լեզուի հայկական ծագումը⁷:

Թուրքիայի քաղաքական դաշտի կենսագրականից ու անատոմիայից մեկնելով եւ նկատի առնելով համաշխարհային եւ տարածաշրջանային քաղաքա-

⁶ Նոր Մարմարա, Ստամբուլ, 2004, ապրիլի 2:

⁷ http://www.devrimcidemokrasi.org/arsiv/2001/Karadeniz'de_Azinlik_Miliyetler.htm.

հասարակական խոշոր իրադարձությունները, ինչպէս նաեւ արեւմտահայութեան ազգային-համայնքային կեանքի շրջադարձային փոփոխությունները՝ նիւթի քննարկման համար առաջարկում ենք պատմաժամանակագրական հետեւեալ փուլերը.

1923-38 թթ. - Մուստաֆա Բեմալի (Աթաթուրք) նախագահութեան, Թուրքիայի Հանրապետութեան հիմնադրման, եւ դրա պետական-իրաւական, տնտեսական-քաղաքական եւ հասարակական-մշակութային հիմքերի ձեւաւորման ու ամրապնդման ժամանակահատուած:

1938-50 թթ.- Իսմէթ Ինոնիւյի նախագահութեան, Երկրորդ աշխարհամարտի եւ նացիզմի քաղաքական ալիքների վրայ երիտթուրքականութեան անպաշտօն վերադարձի, աշխարհի նոր բաժանումների լոյսի տակ գերպետական հաւասարակշռությունների ոլորտներում մանւերելու ժամանակահատուած:

1950-60 թթ.- Դեմոկրատական կուսակցութեան իշխանութեան, նախագահ Բայարի եւ վարչապետ Ադնան Մենդերէսի բարեկարգչական փորձերի, Հիւսիսատլանտեան խաղաղութեան ուխտին (NATO) միանալու, ծայրայեղական եւ յետադիմական ուժերի ընդդիմութեան, հայոց համայնքային դադարեցում կեանքի վերաշխուժացման եւ Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրեանի պատրիարքութեան ժամանակահատուած:

1960-71 թթ.- առաջին զինուորական յեղաշրջման, պետական ահաբեկչութեան, «մաքրագործման», ներքաղաքական դաշտի նոր երանգաւորումների եւ Շնորհք եպիսկոպոս Գալուստեանի պատրիարքութեան ժամանակահատուած:

1971-80 թթ.- երկրորդ զինուորական յեղաշրջման (աւելի ճիշտ՝ «coup memorandum» կամ «յուշագրային» յեղաշրջում), կիպրական հարցի սկզբնաւորման, պանթուրքիզմի վերանորոգման՝ «գորշ գայլերի» վերակտիւացման, գործադիր իշխանութեան յաճախական փոփոխութիւնների եւ հայ ազատագրական նորագոյն պայքարի ծննդեան ժամանակահատուած:

1980-91 թթ.- երրորդ զինուորական յեղաշրջման, քաղաքական դաշտի վերստին «մաքրագործման», իսլամացման քաղաքականութեան, քրդական ազատագրական շարժումների վերածննդեան, չափաւոր եւ ծայրայեղ ձախի տեղատուութեան ժամանակահատուած:

1991-2005 թթ.- Տեղեկատուական յեղափոխութեան, Խորհրդային Միութեան փլուզման, ԱՊՀ երկրների անկախութեան եւ վերանկախութեան, Արցախի ազատագրական շարժման, Գարեգին արքեպիսկոպոս Գազանճեանի, ապա Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանի պատրիարքութեան ժամանակահատուած:

Բ) Աշխարհագրական շրջագիծ

Ներկայումս Թուրքիան բաղկացած է 81 վարչատարածքային միաւորներից կամ նահանգներից, որոնցից 57-ը կազմում են մեր ուսումնասիրութեան պայմանական շրջագիծը (Անկարայից դէպի Թուրքիայի արեւելեան սահմանները): Այս 57-ից մօտաւորապէս 18-ը համընկնում են ուիլսոնեան իրաւարութեամբ Արեւմտեան Հայաստանի (այսույետ՝ տարածք «ա»), իսկ մօտաւորապէս 9-ը՝ Հարաւ արեւ-

մուտեան Հայաստանի սահմանների հետ (այսույետ՝ տարածք «բ»): Համարեա 7-ը կարելի է առանձնացնել որպէս պատմական Կիլիկիայի սահմաններ (այսույետ՝ տարածք «գ») եւ միւս 23-ը՝ պայմանականօրէն որպէս Փոքր Հայք եւ յարակից շրջաններ (այսույետ՝ տարածք «դ») (տես՝ Նկ. 2):



Նկար 2

Այստեղ պէտք է նշել, որ սոյն տարածքների սահմանագծման հարցում առաւելաբար հաշուի են առնուել ներքոյիշեալ հիմունքները.

1. Սեւրի պայմանագրով եւ ուիլսոնեան իրաւարութեամբ ճշտորոշուած Արեւմտեան Հայաստանի առանցքային եւ դրա անմիջական հարեւանութեան մէջ գտնուող տարածքների երկրորդական նշանակութիւնը Հայկական Հարցի եւ Հայ Դատի պահանջատիրութեան մէջ: Նշենք, որ ռազմավարական

պատճառներով Հանրապետական Թուրքիայի իշխանությունները սկզբից մինչ այժմ մերժողական կարծիք դիրք են ընդունում Արեւմտեան Հայաստանի (տարածք «ա») հայապատկանութեան մասին բոլոր իրական փաստաթղթերի նկատմամբ եւ ըստ այնմ որդեգրում հակահայ քաղաքականություն:

2. Հայ տարրի մօտաւոր ցրուածութիւնը, նախաեղեռնեան շրջանի հասարակական կեանքի եւ յարաբերութեան ամբողջութիւնը:

Այս իմաստով մեր պայմանական սահմանագծումները, ընդհանրութեան մէջ, չունեն միմիայն պատմական նշանակութիւն: Օրինակ՝ Դիարբեքիրը (Ամիդ, ըստ բազմաթիւ աղբիւրների՝ Տիգրանակերտ), պատմական Արեւմտահայաստանի գաւառ լինելով, ներառում ենք մեր կողմից պայմանականօրէն գըծուած «Հարաւարեւմտեան» տարածքում: Այլ խօսքով՝ այս սահմանագծումները միմիայն նիւթի մատակարարման համար են օգտագործուելու եւ պատմական առանձին նկատառումներ չեն պարունակում:

Գ) Տիպաբանական տեսակաւորում

Ներկայիս Թուրքիան էթնոկրօնական խմբերով հարուստ, բազմազգ պետութիւն է: Սակայն «Փոքրամասնութիւններ» պետական սահմանումը հիմնուած է միմիայն Լօզանի դաշնագրի տրամադրութիւնների վրայ եւ այդ պատճառով խիստ սահմանափակ է եւ թերի: Հայերն օրինակ, որպէս փոքրամասնութիւն ճանաչուելով հանդերձ, ըստ պետական տեսակէտի՝ միայն գտնուում են Կ. Պոլսում: «Անատոլուի մէջ, - գըրում էր պետական օրգան համարուող «Ջումհուրիէ-

թը», 1925 թ., - ոչ հայ է մնացել է եւ ոչ էլ յոյն, եւ նրանցից նմոյշներ են միայն ապրում Պոլսի մէջ»⁸:

Թուրքիայի էթնոկրօնական պատկերը բարդ խճանկար է յիշեցնում: Հակառակ պետական պնդումներին ու ներկայացրած վիճակագրական տուեալներին՝ այսօր աւելի քան 50 էթնոկրօնական խմբեր են ապրում Թուրքիայում, որոնց կարելի է ամփոփել հետեւեալ աղիւսակում⁹ (տես՝ Աղ. 1):

	էթնիկական խումբ	կրօն	դաւանանք	ենթախումբ
1	աքդալ	իսլամ	սուննի	
2	ադրբեջանցի	իսլամ	շիա	
3	արաբ	իսլամ	սուննի	
4	արաբ	իսլամ	շիա	ալեւի
5	արաբ	քրիստոնեայ	ուղղափառ	մելքիթ
6	ասորի	քրիստոնեայ	ուղղափառ	քելդանի
7	ասորի	քրիստոնեայ	ուղղափառ	ջելօ
8	ասորի	քրիստոնեայ	ուղղափառ	սիրիակ
9	բոշնակ	իսլամ	սուննի	հանեֆի
10	գնչու	իսլամ	-	-
11	դաղստանցի	իսլամ	սուննի	հանեֆի
12	դաղստանցի	իսլամ	սուննի	շաֆէյի
13	զազա	իսլամ	սուննի	շաֆէյի
14	զազա	իսլամ	շիա	ալեւի
15	թաթարցի	իսլամ	սուննի	-
16	թաթար - ուզբեկ	իսլամ	սուննի	հանեֆի
17	թաթար - ղրիմի	իսլամ	սուննի	հանեֆի
18	թաթար - նողայի	իսլամ	սուննի	հանեֆի
20	թուրք	իսլամ	սուննի	-
21	թուրք	իսլամ	սուննի	-

⁸ Դրօշակ, ժնեւ, 1925, օգոստոս, էջ 55:

⁹ Oehring O., Human Rights in Turkey, Secularism, Religious Freedom, 2002, missio order no 600 215, p 2

22	թուրք	իսլամ	սուննի	իւրուկ
23	թուրքմէն	իսլամ	սուննի	-
24	թուրքմէն	իսլամ	շիա	ալեւի
25	լազ	իսլամ	սուննի	հանեֆի
26	կարափափախի	իսլամ	սուննի	-
27	կարաչայ	իսլամ	սուննի	հանեֆի
28	Կիրգիզ	իսլամ	սուննի	հանեֆի
29	հայ	քրիստոնեայ	ուղղափառ	-
30	հայ	քրիստոնեայ	կաթողիկէ	-
31	հայ	քրիստոնեայ	բողոքական	-
32	համշէնցի	իսլամ	սուննի	-
33	հրեայ	մովսիսական	-	-
34	ղազախ	իսլամ	սուննի	հանեֆի
35	յոյն	քրիստոնեայ	ուղղափառ	-
36	յոյն	քրիստոնեայ	կաթողիկէ	-
37	յոյն	քրիստոնեայ	բողոքական	-
38	յոյն - պոնտացի	իսլամ	սուննի	-
39	ուզբեկ	իսլամ	սուննի	հանեֆի
40	չերքեզ	իսլամ	սուննի	հանեֆի
41	սերբ	քրիստոնեայ	ուղափառ	-
42	սուղանցի	իսլամ	շիա	ալեւի
43	վրացի	իսլամ	սուննի	հանեֆի
44	վրացի	քրիստոնեայ	ուղափառ	-
45	իւզուրս	իսլամ	սուննի	հանեֆի
46	քուրդ	իսլամ	սուննի	հանեֆի
47	քուրդ	իսլամ	սուննի	շաֆէյի
48	քուրդ	իսլամ	շիա	ալեւի
49	քուրդ	եզդի	-	-
50	օս	իսլամ	սուննի	-

Աղիւսակ 1

Այս աղիւսակից պարզուում է, որ Թուրքիան գերազանցապէս բազմազգ եւ այլատարր պետութիւն է: Այս այլատարրութեան վերացման ձգտումով միայն

կարելի է բացատրել Թուրքական տարբեր վարչա-կարգերի կողմից առգոյ էթնիկական խմբերի նկատմամբ պատմականօրէն կիրարկուած կրօնափոխութեան եւ ուժացման հարկադրութիւնը եւ համատարած քաղաքականութիւն: Կարելորն այն է, որ հակառակ ուժացման պետական ծրագրաւորումներին՝ ցարդ յայտնաբերելի են մնացել էթնոկրօնական այդ խմբերը, եւ արդիւնքում կարելի է ասել՝ կաթուածա-հար եւ անկատար վիճակում է Թուրքիայի ծուլման պետական քաղաքականութիւնը:

Յիշեցնենք, որ Լօզանի դաշնագրի տրամադրութիւններով ցարդ Թուրքիայի Հանրապետութիւնում միայն հայերը, յոյներն ու հրեաներն են պաշտօնապէս ճանաչուում որպէս «փոքրամասնութիւն»: Էթնոկրօնական միւս խմբերի մասին նոյնիսկ օրէնքով արգելուած է խօսելը:

Սակայն Թուրքիայի վարչապետարանի Մարդու իրաւունքների խորհուրդը, Թուրքիայի՝ Եւրոմիութեանն անդամակցելու թոյլ ու բոհի մէջ, 2004 թ. հոկտեմբերին հրապարակեց մի խիզախ տեղեկագիր, որում ընդգծում էր Թուրքիայի զանազան ազգերի ու էթնոկրօնական խմբերի գոյութեան հարցը: Վարչապետարան առաքուած տեղեկագիրը չհաստատուեց եւ չպաշտօնականացուեց երբեք, նոյնիսկ դատապարտուեց պետական պատասխանատուների կողմից, իսկ կառավարութեան կողմից նշանակուած հեղինակների դէմ դատական գործ յարուցուեց, այնուամենայնիւ այն մնաց որպէս Թուրքիայի իրական վիճակն արտացոլող փաստաթուղթ, ուր արձանագրուած է, որ «Այլեւս անցած է թուրքական վերին ինքնութեան ու միակ մշակոյթի մը ու լեզուի վրայ հիմնուած

պետականության շրջանը»¹⁰, եւ առաջարկում է, որ «թուրքական վերին ինքնության» մէջ ընդունուեն նաեւ մշակութային ու լեզուական բազմաթիւ ենթա-ինքնութիւնները:

Խիստ յատկանշական ենք համարում Թուրքիայի բազմազգ պետութիւն լինելու հանգամանքը հաստատող աննախադէպ այս տեղեկագրի առիթով «Ռադիկալ» թերթի վերլուծաբան Ադնան Քեսքինի հետեւեալ տողերը, որոնց տրամաբանութիւնն ուղղակի աղերս ունի մեր աշխատութեան ամբողջ իմաստի հետ. «Այսօրւան սահմանադրութիւնը, որուն առաջին յօդուածներէն մէկը կ'արգիլէ նոյնիսկ փոփոխութիւն առաջարկել երկրի ամբողջականութեան ու անբաժանելիութեան սկզբունքի մասին, այսօր ժամանակավրէպ դարձած է, որովհետեւ այդպիսի ամբողջականութեան մը մասին խօսիլը կը նշանակէ պնդել երկրի «մոնոլիթ» ըլլալու, այսինքն՝ միակտոր ու միահատուած ըլլալու կէտին վրայ ու ժխտել միւս փոքրամասնութիւններուն գոյութիւնը (ընդգծումը մերն է - Կ. Խ.)»¹¹:

Սոյն հետազօտութեան առարկայ հայութիւնը, կենցաղային-հասարակական ներքին յարաբերութիւնների տեսանկիւնից ուժացման ենթարկուելու իմաստով, ինչպէս նաեւ կրօնական, մշակութային եւ լեզուական յատկութիւնների պահպանման առումով այլատարր է եւ ներկայանում է նկարագրային տարբեր տիպերով:

¹⁰ Նոր Մարմարա, 2004, հոկտեմբերի 18:

¹¹ Նոյն տեղում:

Թուրքիայի հայոց պատրիարք Շնորհք արք. Գալուստեանը 1980 թ. Երուսաղէմում բանախօսութեան մէջ հետեւեալն է ասում գաւառներում ապրող հայութեան մասին. «Ձեզ կը ներկայացնեմ գաւառահայութեան չորս խաւերը, ինչպէս որ տեսել եմ նրանց.

«ա. Հայեր, որոնք գիտակցաբար եւ կամաւոր կերպով իսլամացել են, խզուել են հայութիւնից եւ ապրում են թուրքերի մէջ: Սրանք են, որ մինչեւ միլիոնի հասնում են իրենց թուով:

«բ. Հայեր, որոնք երեք սերունդ առաջ իսլամացել են եւ քրդական աշիրէթական ձեւերով ապրում են մեկուսի եւ չեն խառնում: Խնուսի շրջանում հարիւր ընտանիքներ կան այդպիսիներից, որ գիտեն, թէ հայ են, գիտակցաբար իրենց մէջ ամուսնանում են եւ փափագում են վերադառնալ իրենց պապերի կրօնին, եթէ իրենց պայմանները ներեն:

«գ. Կամայ թէ ակամայ իսլամացած հայեր, որոնք իրենց հայկական զգացումը պահել են եւ Պոլիս հաստատուելուն պէս՝ դատարանի միջոցով իրենց անձնագրի վրայի «իսլամ» գրութիւնը «էրմենի»-ով են փոխարինում:

«դ. Բուն գաւառահայերը, որ պատիւ իրենց՝ հակառակ բոլոր զգալի եւ անզգալի դժուարութիւններին՝ հայ են մնացել եւ այսօր Ստամբուլի հայութեան մեծագոյն մասը նրանցից է բաղկանում»¹²:

Թէեւ Շնորհք պատրիարքի այս տեղեկատուութեան համեմատ՝ ներկայիս կացութիւնը փոխուած կարելի է համարել, այնուամենայնիւ դա բաւարար

¹² Ալիք, Թեհրան, 1980, դեկտեմբերի 18:

հիմք է հանդիսանում «Անատոլիայի» հայութեանը տիպաբանական իմաստով երեք գլխաւոր խմբի բաժանելու համար.

ա) «Պաշտօնական» հայութիւն. այս տեսակը Հայ առաքելական, Կաթողիկէ կամ Աւետարանական եկեղեցիներին կապուող համայնքների տեսքով գոյատեւել է զանազան նահանգներում եւ աւաններում: «Պաշտօնական» հայութեան կապը Կ. Պոլսի կազմակերպուած համայնքի հետ քիչ թէ շատ պահպանուել է մանաւանդ պատմական Կիլիկիայում:

բ) «Իսլամացած» հայութիւն. այս տեսակը հիմնականում բաղկացած է պոնտահայ եւ համշէնահայ մանր ու խոշոր տոհմական խմբերից, որոնք բնակւում են սեւծովեան ափերիցում՝ պատմական Զանիկից (Սամսունից) մինչեւ հայ-վրացական սահմանները երկարող տարածքներում: «Իսլամացած» տիպն իր համեմատական լայն շրջագծում պարունակում է նաեւ «կէս-կէս» եւ «հայ-լազ» կոչուած խմբերին. «Այդ բնակչութիւնը, որը զգալի տեսակարար կշիռ ունէր Պոնտական լեռներին յարող գաւառներում (Սպեր, Թորթում, Բաբերդ, Համշէն եւ այլն) գրականութեան մէջ յայտնի է «կէս-կէս» անունով (այսինքն՝ կէս հայ քրիստոնէայ եւ կէս մահմեդական)... Լազիստանում եւ նրան յարող շրջաններում ռազմատենչ լազերի ճընշումներից խուսափելու նպատակով «կէսկէսների» մի մասն էլ հանդէս էր գալիս «հայ-լազ» անունով»¹³:

¹³ Մելքոնեան Ա., Հայ բնակչութեան էթնոկրօնական դիմախելման գործընթացներն Արեւմտեան Հայաստանում XVI-XVIII դա-

Պոնտահայ եւ համշէնահայ խմբերից բացի կան եւս այլ խմբեր, որոնց իսլամացման թուականի, այլ հանգամանքների վերաբերեալ պակաս են պատմական յստակ տուեալները: Այս տեսակին են պատկանում, օրինակ, հայ բոշաները, որոնց իսլամացման մասին կարելի է միանշանակ ասել, որ դա տեղի է ունեցել 19-րդ դարից առաջ:

«Իսլամացած» հայութեան տեսակի մասին պատմական, ազգագրական եւ սոցիալական տեղեկութիւններ հաւաքելու համար որոշ սիստեմատիկ քայլեր են նախաձեռնուել անցեալ դարի առաջին տասնամեակում: Ուշագրաւ է ՀՅ Դաշնակցութեան ղեկավար շաջանակների հետաքրքրութիւնն այս հարցում: Մինաս Վերածինը «Հայրենիք ամսագրում» հրատարակած իր մի յօդուածում ակնարկում է այս մասին՝ ասելով, որ «Սիմոն Զաւարեանը մի անգամ առաջարկեց արեւմտեան Փոքր Ասիոյ մէկ շրջանը ուսումնասիրել... Զաւարեանը ուրիշներու ալ դիմեց եւ ինչպէս տեղեկացայ, մարդ ղրկեց մինչեւ Դերսիմի քրտութիւնը ուսումնասիրելու: Գարեգին Խաժակը նմանապէս կը յանձնարարէր ինծի շարունակել Փոքր Ասիոյ նկատմամբ ուսումնասիրութիւններ Արեւմուտքէն դէպի Արեւելք ուղղութեամբ»¹⁴: Վերածինն ապանշում է նաեւ կուսակցական մէկ այլ ղեկավարի՝ Յարութիւն Շահրիկեանի կողմից տրուած յանձնարարութիւնները եւ աւելացնում հետեւեալը. «Գնչուներու ծագման նկատմամբ եւրոպական կամ ամերիկեան

րաշրջանում, գիտաժողովի հիմնադրոյթներ, Երեւան, 2004, էջ 44:

¹⁴ Հայրենիք ամսագիր, Բոստոն, 1931, ապրիլ, էջ 133:

գրադարաններու հարուստ գրականութիւնը լայնօրէն թղթատելու առիթը պակսած է ինծի, բայց 1908-էն մինչեւ 1921 թուականները դէպի Փոքր Ասիոյ զանազան գաւառներն ըրած իմ ուղեւորութեանցս կամ բընակութեանս ատեն՝ անձնապէս պատեհութիւն ունեցած եմ շփում ունենալու հայ հռոմէոներու, իսլամ հայ բոշաներու, քրիստոնեայ հայ բոշաներու, մահմեդական հայերու (պուրմա եւ հեմշինցի) եւ ծագումնին ինծի անծանօթ այլ տարրերու հետ (ընդգծումը բնագրինն է- Կ. Խ.)¹⁵:

Դաշնակցական ղեկավարութեան յանձնարարութեամբ «Անատոլիայի» խորքերում ապրող հայկական էթնոկրօնական զանազան խմբերը հետազօտողներից Մինաս Գասապեանը (Ֆարիատ, Վերածին), «Հայերը Նիկոմիդիոյ գաւառին մէջ» վերտառութեամբ աշխատութիւն է հրատարակել Պարտիզակում 1913 թ., Վիճակագրական հարուստ տուեալներով, քարտէզներով եւ որոշ ազգագրական պատկերներով: Այդ ընդարձակ եւ նշանակալից աշխատութեան հրատարակման առիթով Յարութիւն Շահրիկեանը (Ատոմ) չափազանց կարեւոր սկզբունք է մատնանշում. «Ֆարիատը Հայութիւնը չհասկնար մէկ եկեղեցիի, կամ քրիստոնեայ յարանուանութիւններու անձուկ սահմանին մէջ,- գրում էր Շահրիկեանը,- այլ աւելի ընդարձակ սահմաններու մէջ, այլակրօններն ալ միասին առնելով, փնտրելով հայութիւնը անոր երակներէն հոսող Հայ արիւնին մէջ, ընդունելով, ընդգրկելով Հայութիւնը՝ օտարացած, խորթացածնե-

¹⁵ Նոյն տեղում, էջ 134:

րով, որոնք աւելի շատ են երկրի, Մայր Հայաստանի մէջ (ընդգծումները մերն են- Կ. Խ.)»¹⁶:

Սոյն մէջբերումները կատարեցինք՝ ընդգծելու համար «իսլամացած» հայութեան պատմաքաղաքական նշանակութիւնը Հայկական Հարցի դիտանկիւնից: Այս նշանակութեան բացառիկ դրսեւորումն ի յայտ եկաւ Ադանայի հայութեան 1909 թ, ապրիլի կոտորածների ընթացքում, երբ ինքնապաշտպանական կռիւներում աչքի էին ընկնում իսլամացած հայ բոշաները: Այս մասին վկայում է Վերածինը. «Ատանայի մէջ ժողովրդի յոյսը Դաշնակցութեան վրայ էր.- գրում էր նա,- այս պատճառաւ ալ մօտ 500 հոգի գնաց խռնուեցաւ ակումբը (ՀՅԴ ակումբը, որ գտնուում էր յայտնի գործիչ սինիոր Արթինի բնակարանում- Կ. Խ.): Կոմիտէի վարչութիւնը ակումբի գէնքերը յանձնած էր հայ բոշաներուն, որոնք կռուի ծագելէն անմիջապէս ետք, սկսան կռուիլ տեղացի հայերուն կողքին՝ մինչեւ վերջը, առանց ընկրկելու կամ թուլնալու»¹⁷:

գ) «Թաքուն» հայութիւն. այս տեսակը բռնի կերպով եւ իր ֆիզիկական գոյութիւնը պահելու հարկադրանքի տակ դաւանափոխուել է հայկական պարբերական կոտորածների ժամանակաշրջանից (1896-1923 թթ.) սկսած եւ ներկայիս ապրում է աշխարհագրական մեր պայմանական չորս տարածաշրջանների բազմաթիւ առանձին, քրդաբնակ եւ թուր-

¹⁶ Գասապեան Մ. Գ., Հայերը Նիկոմիդիոյ գաւառին մէջ, Պարտիզակ, 1913, էջ I-II:

¹⁷ Նոյն տեղում, էջ 140:

քաբնակ գիւղերում ու գիւղակներում: Այս տեսակը վերոնշեալ «խլամացած» տեսակից տարբերում է իր իսլամացման ժամանակով եւ գործընթացով: Այլապէս՝ ընդհանուր օրինաչափ երեւոյթը եւ արդիւնքը մնում է նոյնը, ինչպէս բնորոշում է դոկտ. Աշոտ Մելքոնեանը. «Ֆիզիկական բնաջնջումից խուսափելու նպատակով հայ բնակչութեան մի հատուածը նախընտրում էր իսլամացումը: Դրանց մի մասը ժամանակի ընթացքում թուրքանում էր (հայկական աղբիւրներում նշում է «տաճկացած» բառը), միւսները, առերես ընդունելով մահմեդականութիւնը, շարունակում էին պահպանել ազգային դիմագծի բազմաթիւ կողմեր՝ լեզուն, սովորութիւնները: Շատ դէպքերում էլ նրանք ծածուկ դաւանում էին քրիստոնէական կրօնը»¹⁸:

Հայաստանի Հանրապետութեան առաջին շրջանում (1918-20 թթ.) Բարսեղ Սարգիսեան անունով հետազօտողը լուրջ փորձ է կատարել «խլամացած», «թաքուն», կամ իր բնորոշմամբ «խորթացած» հայութեան իրողութիւնը վերլուծել եւ իր այդ տեսութեան մասին իրազեկել լայն հասարակութեանը: Նա իր «Վիճակագրական նոր տեսութիւն մը ի նպաստ անկախ Հայաստանի» աշխատութիւնում գրում է. «Սակայն մի ուրիշ տեսակէտով կ'ուզէի հոս հրաւիրել հանրութեան ուշադրութիւնը Հայոց թուական առաւելութեան թիւրք կամ տաճիկ ազգաբնակչութեան վը-

¹⁸ Մելքոնեան Ա., Հայ բնակչութեան էթնոկրօնական դիմախելման գործընթացներն Արեւմտեան Հայաստանում XVI-XVIII դարաշրջանում, գիտաժողովի հիմնադրոյթներ, Երեւան, 2004, էջ 44:

րայ... Կ'ուզեմ ըսել բաւականաչափ այն հայ տարրը, որ իր նիւթական գոյութիւնը պահելու համար միայն, կամ ճնշող բռնութեան տեղի տալով՝ քան թէ յօժար կամօք՝ ի վաղ ժամանակաց հետէ մինչեւ այսօր ծածկուած կը մնայ թիւրքին, քուրդին եւ լազին մէջ մահմեդականութեան կեղծ դիմակի ներքեւ (ընդգծումը մերն է, -Կ.Խ.)»¹⁹:

Նկատի առնելով Սարգիսեանի վերլուծութիւններում առկայ Մեծ Եղեռնի մարդկային կորուստները, պարզում է, որ մեր ուսումնասիրութեան առարկայ հայութիւնը հայ քաղաքական մտքի ուշադրութեան կենտրոնում է եղել ցեղասպանութեան շրջանին յաջորդող տարիներում եւս:

Իսկ Յովհաննէս Լեւիսիւսն առաջին եւրոպացիներից է համարում, որ հայութեան բռնի իսլամացումն ուրուագծում է, որպէս հայասպանութեան առանցքներից մէկը: Նա իր «Գերմանիան եւ Հայաստանը 1914-1918 թթ.» աշխատութիւնում, ակնարկելով նախաեղեռնեան բռնի հաւատափոխութեան բազմաթիւ երեւոյթներին, ընդգծում է դրա սիստեմատիկ կիրարկման փաստը եղեռնի շրջանում. «Սակայն այս բոլոր միջոցառումները մինչեւ այժմ համատարած չէին, այլ հանդիսանում էին միայն առանձին գաւառական եւ տեղական պաշտօնեաների կամայականութիւնները: Այժմ դրանք կատարւում էին մեթոդապէս (ընդգծումը մերն է - Կ.Խ.)»²⁰: Ապա Լեւիսիւսը մանրամասնութեամբ յիշում է բազմաթիւ շրջան-

¹⁹ Սարգիսեան Հ. Բ. Վ., Վիճակագրական նոր տեսութիւն մը ի նպաստ անկախ հայաստանի, Վենետիկ- Ս. Ղազար, 1919, էջ 13:

²⁰ Նորք, Երեւան, 1990, ապրիլ, էջ 110:

ների եւ քաղաքների անունները, որտեղ իրականացուել է բազմահազար հայերի բռնի իսլամացումը:

Սակայն հաւատափոխութիւնը, որպէս բռնի ասիմիլիզացիայի մեթոդ, չի յանգել սպասուած արդիւնքների: Այս մեթոդի ազդեցիկութեան եւ «յուսալիութեան» բնոյթի վերաբերեալ էական մեկնաբանութիւն է տալիս գերմանական բանակի սպայ Վ. Հոֆֆմանը: Նա, որ հայոց կոտորածների կենդանի վկաներից է, Գերմանիայի դեսպանութեանն ուղղած իր 1916 թ. օգոստոսի 29-ի նամակում յայտնում է իր իւրօրինակ տեսակէտը կրօնափոխ հայութեան տեսակի մասին: «Այս ամէնից յետոյ,- գրում է Հոֆֆմանը,- եթէ մահմեդական հայերը ցայժմ իրենց մտածողութեամբ ու զգացողութեամբ հայ են մնացել (եւ վստահաբար ոչ միայն ներկայ իրենց սերունդներով), ապա որպէս այլակերպուած մահմեդականներ՝ աւելի վտանգաւոր են լինելու թուրք ժողովրդի համար հէնց իրենց նուազ բացայայտ լինելու պատճառով: Այսպիսով՝ գերմանացի ժողովուրդը կրկնակի վտանգաւոր թշնամի է ունենալու իր դէմ (ընդգծումը մերն է- Վ. Խ.)»²¹: Այստեղ յստակօրէն նկատելի է գերմանացի սպայի կանխատեսումը «նուազ բացայայտ» կամ «թաքուն» հայութեան գոյակերտման շուրջ:

Բռնի կրօնափոխութեան երեւոյթը, որպէս թուրքացման քաղաքականութեան ամենավաղեմի արգասիք, բնականաբար իր նշանակութիւնն է ունեցել ու թերեւս ունի հայութեան եւ Հայկական հարցի ճակատագրում:

²¹ http://www.armenocide.de/armenocide/armgende.nsf/0/CF7A3142040147_C3C1256AD70079AFBC?OpenDocument.

Իսկ հայութեան մօտ բռնի կրօնափոխութեան դէմ ծառանալը հանդիսացել է, ինչպէս ազգային արժանապատւութեան վերականգնման, այնպէս էլ ազգային-ազատագրական պայքարի հիմնահարցերից մէկը, որի դիպուկ արտայայտութիւններից մէկը կարելի է նկատել անուանի հայդուկ Սերոբ Աղբիւրին նուիրուած աշուղ Զիւանու յեղափոխական երգում.

Այս հինգ դար է մեզ կը սպանեն,
Բռնի կրօնքէ կը հանեն,
Մեր կին, աղջիկներ կը տանեն,
Պատիւ ունեցողը թող գայ...

Հիմք ընդունելով նշուած պատմաժամանակագրական հոլովոյթը՝ կը փորձենք աշխարհագրական չորս տարածքներում ներկայացնել եւ քննարկել հայ էթնիկական տարրի երեք տիպերի գոյութեան, գոյատեւման եւ վերակերպման գործընթացը:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Ա- 1923-38 թթ. ժամանակահատուած

Աթաթուրքեան այս շրջանում հայութիւնը գտնուել է յետեղեռնեան ծանր հոգեվիճակի մէջ եւ հիմնականում գոյատեւելու ելքեր է որոնել: Լօզանի դաշնագրի մի շարք տրամադրութիւններ Քեմալ Աթաթուրքին հարկադրում էին մեղմ եւ զգուշաւոր վերաբերմունք ցուցաբերել կրօնական փոքրամասնութիւնների հանդէպ:

1915 թուականից Օսմանական կայսրութեան տարածքներում բնակուած հայութեան բնաջնջումն ու տեղահանութիւնն իր լիակատար աւարտին չէր հասել. այդ տարածքներում դեռեւս բնակւում էին հայութեան բեկորներ: «Այգն» իր 1918 թ. դեկտեմբերի 16-ի համարում գրել է. «Ըստ վերջին ստոյգ տեղեկութիւնների՝ Տաճկաստանում ապրում են մէկ միլիոն հայ»²²: Նկատի առնելով, որ սրանց տեղահանութիւնը մասամբ շարունակուել է 1918-23 թթ. եւս, մէկ միլիոն թուաքանակին պէտք է որոշ վերապահութեամբ

²² Այգ, Թարիզ, 1918, դեկտեմբերի 16:

մօտենալ, եթէ յատկապէս հարցն առնելուն է «պաշտօնական» հայութեան:

«Իսլամացած» հայութեան թուաքանակի մասին նախնական տուեալների ենք հանդիպում Բարսեղ Սարգիսեանի նշուած աշխատութեան մէջ. «Իսկ մեր տեսութիւնը ամփոփելով,- գրում է Սարգիսեանը 1919 թ.,- կրնանք ըսել, թէ այսպէս կամ այն պէս, Յ. Ա. Տէրվիշեանի 4,550,000 հաշուած հայութենէ դուրս ունինք 800,000-էն մօտ 1,000,000 խորթացած հայ զանգուած մ'ալ, որոնք կ'ապրին դեռ, նամանաւանդ կրկնակի իսկ բազմացած ըլալու են ըստ ինքեան 200 տարիներու մէջ, Մեծ Հայքի եւ Փոքր Ասիոյ գաւառներու լազ, յոյն, թուրք եւ քուրդ խառնարանին մէջ (ընդգծումը մերն է,-Վ.Խ.)»²³: Սարգիսեանի հաստատումներից կարելի է եզրակացնել, որ 800,000-ից 1,000,000 թուաքանակը, իրականում, վերաբերում է համշէնահայ եւ «իսլամացած» միւս հայկական էթնոկրօնական խմբերին, որոնք գոյատեւել են Հայոց Ցեղասպանութիւնից յետոյ:

Պէտք է ասել, որ մնացորդների փրկութեան պայմաններից էր կախուած մնում նրանց յետնորդների ազգային պատկանելութեան ճակատագիրը: Ջարդերից ու տեղահանութիւններից փրկուելու պատճառները, ըստ էութեան, բազում են եղել եւ տարաբնոյթ: Սակայն կարելի է մի ընդհանրական օրինաչափութիւն մատնանշել. այն է՝ իսլամացումը ձեւական նախապայման է հանդիսացել գոյատեւման համար:

²³ Սարգիսեան Հ. Բ. Վ., Վիճակագրական նոր տեսութիւն մը ի նպաստը անկախ հայաստանի, Վենետիկ- Ս. Ղազար, 1919, էջ 13:

Այս կապակցութեամբ պրոֆ. Ռիչարդ Յովհաննիսեանն իր արժէքաւոր յօդուածում, 233 վերապրողների ֆիզիկական կործանումից փրկուելու մասին տրուած 183 բանաւոր վկայութիւնների քննութիւնից եւ դրանց վիճակագրական վերլուծութիւնից եզրակացնում է, որ զուտ տնտեսական դրդապատճառներով փրկուել է այդ վերապրողների 43.8 տոկոսը, իսկ մարդասիրական մղումներով՝ 51.5 տոկոսը, եւ միմիայն իսլամ ընդունելու համար փրկուածների թիւը կազմել է 4.3 տոկոս²⁴:

Այս տուեալները յանգեցնում են նրան, որ կրօնափոխութիւնն ինքնին չէր կարող անմիջական փրկութեան ելք լինել, քանզի փրկութեան ամբողջ ելքերն ու մեխանիզմները գտնուում էին փրկուածների կամքից գրեթէ դուրս: Եթէ փրկողների մօտ (որոնց 65.9 տոկոսը Յովհաննիսեանի ուսումնասիրութեան նմոյշներում թուրքեր են եղել) գոյութիւն չունենային նիւթատնտեսական դրդապատճառներ կամ բարոյա-մարդասիրական մղումներ, կրօնափոխութիւնը չէր կարող փրկութեան միանշանակ ազդակը հանդիսանալ:

«The Minneapolis morning tribune» թերթն իր 1920 թ. յունուարի 4-ի համարում բացայայտեց Թուրքիայի ներքին գործերի նախարարութեան մի շատ կարեւոր շրջաբերական՝ յղուած տեղական իշխանութիւններին: Հաւանաբար 1919 թ. նոյեմբերի 28 թուակիր սոյն գաղտնի շրջաբերականի հիման վրայ կարգադրուել էր, որ բոլոր հայերը, որոնք զերծ են մնացել տեղա-

²⁴ Hovannisian R. G., Intervention and Shades of Altruism During the Armenian Genocide, from The Armenian Genocide, History, Politics, Ethics; edited by St Martin's Press NY, 1992.

հանութիւնից կամ վերադարձել են իրենց բնակավայրերը, պէտք է անխտիր իսլամացուէին: Իսլամացուելու դէպքում միայն նրանք կը վերստանային իրենցից առգրաւուած ունեցուածքը: Շեշտուում էր նաեւ, որ մահմեդականների հետ ամուսնացած հայ կանանց եւ աղջիկներին են պատկանելու տեղահանուած հայերի բնակարանները եւ այլն²⁵:

Այսպէս՝ կրօնափոխութիւնը, որպէս պետական կարգավիճակ եւ պաշտպանութեան տանիք, մնացորդացին պարտադրուել է փրկութեան գործընթացից քիչ յետոյ եւ շարունակուել հանրապետական թուրքիայի պատմութեան ամբողջ ընթացքում: Այս հարցը շեշտուում ենք՝ կրօնափոխութեան առաւել ձեւական, քան էական բնոյթն ամրագրելու համար, որն էլ ուրուագծում է աշխատութեան մէջ դրսեւորուող մեր սկզբունքային համոզմունքը:

Հայկական աղբիւրների համաձայն՝ Արեւմտեան Հայաստանի (տարածք «ա») երգրում, Վան, Բաղէշ (Բիթլիս) եւ Տրապիզոն վիլայէթներում 1914 թ. աւելի քան 705 հազար հաշուող հայ բնակչութիւնից 1922 թ. հողի վրայ գոյատեւել են մօտաւորապէս 63 հազարը: Նոյն ժամանակահատուածում Տիգրանակերտի (Դիարբեքիր) եւ Խարբերդի (Էլազիզ) վիլայէթներում (տարածք «բ») 328 հազար բնակչից մնացել է 38 հազարը, պատմական Կիլիկիայում եւ Հիւսիսային Սիրիայում (տարածք «գ») 309 հազարից՝ 70 հազարը, իսկ Փոքր Հայքում եւ յարակից շրջաններում (տարածք «դ»)՝ Սեբաստիայի (Սվազ) վիլայէթում եւ

այլուր 596 հազարից՝ մօտաւորապէս 44 հազարը: Հայկական այս աղբիւրում ակնարկ չկայ իսլամացուած հայութեան թուաքանակի մասին²⁶: Այսպէս՝ կարելի է մօտաւոր կերպով ամփոփել նախնական պատկերը (տես՝ Աղ. 2).

Տարածաշրջան	1914	1922
Արեւմտեան Հայաստան	705,000	63,000 (9%)
Հարաւարեւմտեան Հայաստան	328,000	38,000 (12%)

²⁶ http://www.armenocide.am/genocide_museum.htm.

Այս թուերը բերուել են Հայոց Ցեղասպանութեան թանգարանի համացանցային կայքէջից, ուր Օսմանեան կայսրութեան հայ բնակչութեան 1914 թ. եւ 1922 թ. վիճակագրութեան պատկերները ներկայացուել են ըստ հետեւեալ աղիւսակի.

Շրջան	Բնակչութիւնը 1914 թ.	Սպանուած կամ տեղահանուած	Բնակչութիւնը 1922 թ.
Էրզրում	215,000	213,500	1,500
Վան	197,000	196,000	500
Դիարբեքիր	124,000	121,000	3,000
Խարբերդ	204,000	169,000	35,000
Բիթլիս	220,000	164,000	56,000
Սեբաստիա (Սվազ)	225,000	208,200	16,800
Տրապիզոն	73,390	58,390	5,000
Արեւմտեան Թուրքիա	371,800	344,800	27,000
Կիլիկիա եւ Հիւսիսային Սիրիա	309,000	239,000	70,000
Եւրոպական Թուրքիա	194,000	31,000	163,000
Ընդամենը	2,133,190	1,745,390	387,800

²⁵ The Minneapolis Morning Tribune, 1920, January 4.

Պատմական Կիլիկիա	309,000	70,000 (23%)
Փոքր Հայք եւ յարակից շրջաններ	596,000	44,000 (7%)
Ընդամենը	1,938,000	215,000 (11%)

Աղիւսակ 2

Թուում է՝ հայկական աղբիւրներին սկզբնաղբիւր են հանդիսացել Թեոդիկի տեղեկութիւնները, որոնք լոյս են տեսել նրա նշանաւոր «Տարեցոյցում» 1922 թ.²⁷:

Իսկ թուրքական մի աղբիւրից²⁸ քաղուած տղւեալներից կարելի է կազմել համապատասխան պատկեր (տես՝ Աղ. 3).

Տարածաշրջան	1914	1922
Արեւմտեան Հայաստան	675,000	17,000 (3%)
Հարաւ-արեւմտեան Հայաստան	338,000	45,000 (13%)
Պատմական Կիլիկիա	205,000	182,500 (89%)
Փոքր Հայք եւ յարակից շրջաններ	375,000	44,300 (12%)
Ընդամենը	1,593,000	288,880 (18%)

Աղիւսակ 3

Թուրքիայի «Հուրրիէթ» օրաթերթի 1990 թ. ապրիլի 24-ի համարում ասուած է, որ հակառակ հայկական կողմի պնդման, ըստ որի՝ «Անատոլիա»-ն պարպուել է հայութիւնից, սակայն «295,579 հայեր զերծ են մնացել տեղահանութիւնից»²⁹:

²⁷ Բանբեր Երեւանի համալսարանի, Երեւան, 1969, թիւ 2, էջ 107:

²⁸ <http://user.freenet.am/~gurun/turkce.htm>.

²⁹ Դրօշակ, Աթենք, 1990, յունիսի 6, էջ 39:

«Դէպի կախաղան» գրքի հեղինակը 1928 թ. Արեւմտեան եւ Հարաւարեւմտեան Հայաստանի (տարածքներ «ա» եւ «բ») հայութեան թուաքանակը հաշուում է 45 հազար³⁰:

Հետազօտական մի հաստատութիւն իր «The Armenian Christian» վերնագրով զեկուցագրում ասում է, որ բնաջնջումից ու տեղահանութիւնից փրկուած հայերի թուաքանակը շուրջ 200 հազար է եղել³¹: Այս տուեալը համապատասխանում է Հայկ Աճէմեանի խմբագրած «Բագին օրացոյցում» բերուած տուեալին, որը, մի շարք պաշտօնական աղբիւրների հիման վրայ, 1922 թ. «Անատոլիայի» հայութեան թուաքանակը ներկայացնում է 200,000 մարդ³²: Սակայն նոյն օրացոյցում առանձին շեշտադրմամբ «Անատոլիայի խորքերում այժմ գերի եւ իսլամացած հայերի» թիւը գնահակւում է՝ 150,000³³: Այս մօտեցումը հետաքրքրում է մեզ՝ «թաքուն» հայութեան թուաքանակը ճշգրտելու իմաստով: Իսկ Սիմոն Վրացեանը 1925 թ. գրում էր. «Չպէտք է մոռանալ, որ հայկական նահանգներում (առանց Տրապիզոնի) այժմ մնացել է ոչ աւելի քան 150,000 մարդ»³⁴: Թուում է, որ նա գիտակցաբար ամբողջական թուից հանել է «իսլամացած» պոնտահայերին, եւ սա եւս ապացուցում է, որ «իսլամացած» հայերի մասին որոշակի թուային պատկերներ գոյութիւն չեն ունեցել այս ժամանակահատուածում:

³⁰ Թափառական, Դէպի կախաղան, Բոստոն, 1932, էջ 876:

³¹ www.isic-centre.org/Bulletins/95_Oct_Nov.pdf.

³² Բագին օրացոյց, Թաւրիզ, 1923, էջ 117:

³³ Բագին օրացոյց, Թաւրիզ, 1923, էջ 120:

³⁴ Դրօշակ, Փարիզ, 1925, նոյեմբեր, էջ 137:

Մեր տրամադրութեան տակ գտնուող աղբիւրներում բերուած սկզբնական տուեալները յաճախ հակասում են միմյանց: Օրինակ՝ Հայոց Ցեղասպանութեան թանգարանի համացանցային կայքէջում Վանի հայ բնակչութեան թուաքանակը 1922 թ. նշում է 500, սակայն հայկական մի այլ աղբիւրից պարզուիմ է, որ միայն Վանից 1923 թ. Խորհրդային Հայաստան է ներգաղթել 953 հայ³⁵: Ամէն դէպքում նման տարբերութիւնները, եթէ նոյնիսկ փոքր են, մտածել են տալիս, որ մնացորդացի թուաքանակն աւելի շատ է, քան նշում է թուրքական կամ նոյնիսկ հայկական աղբիւրներում:

Մեզ հետաքրքրում է նաեւ այն հարցը, թէ որքան է եղել հայապատկան տարածքների ընդհանուր բնակչութիւնը Թուրքիայի Հանրապետութեան սկզբնական շրջանում: Այս առումով հետաքրքիր է թուրքական «Մեսլէք» թերթի թղթակցի վկայութիւնը, ըստ որի Վանի ընդհանուր բնակչութեան թիւը 2,800 մարդ է³⁶: Այսպիսով՝ պարզ է դառնում, որ դեռ Ցեղասպանութիւնից յետոյ էլ որոշ հայապատկան քաղաքներում, ինչպիսին է Վանը, վերապրած հայութիւնը կազմել է բնակչութեան զգալի մասը:

«Ակօս» շաբաթաթերթի նահատակուած խմբագրապետ Հրանտ Դինքն իր մի հարցազրոյցում հայ բնակչութեան թուաքանակը Թուրքիայի Հանրապետութեան հիմնադրման ժամանակ գնահատում է 130

³⁵ Մելիքսեթեան Հ. Ու., Արեւմտահայերի բռնազաղթը եւ սփիւռքահայերի հայրենադարձութիւնը Սովետական Հայաստան, Երեւան, 1975, էջ 171:

³⁶ Դրօշակ, Փարիզ, 1925, նոյեմբեր, էջ 141:

հազար՝ Ստամբուլում, աւելի քան 170 հազար՝ գաւառներում եւ շէշտում. «Ես չեմ հաշւում ծուլուած բնակչութիւնը, որի թիւն անյայտ է»³⁷:

Լօզանի կոնֆերանսի Ռազմատերիտորիալ յանձնաժողովի տասնչորսերորդ նիստում՝ 1922 թ. դեկտ. 13-ին, զեկուցաբեր Իսմէթ փաշային ուղղած իր հարցում Լորդ Քերզոնն ասում էր. «Փոքր Ասիայում ապրող երեք միլիոն հայերի թիւը նուազելով՝ հասել է 130 հազարի»³⁸:

Հայկազ Ղազարեանն իր «Ցեղասպան թուրքը» աշխատութիւնում «Թուրքիայում մնացած վերապրողների» թիւը գնահատում է 150 հազար մարդ³⁹: Իսկ ՀՀ եւ ազգային պատուիրակութեան «մօտաւոր հաշուեկշիռ»-ում (որ պատրաստուել էր Փարիզի խաղաղութեան վեհաժողովի համար, 1919 թ.) նշում է, որ 226 հազար հայեր չեն կոտորուել եւ չեն էլ տեղահանուել⁴⁰, այլ խօսքով՝ գոյատեւել են Թուրքիայում:

Թուրքիայում հրատարակուող «Ռադիկալ» թերթի աշխատակից Եահէթ Գոչօղլուն մի հետաքրքիր տեղեկութիւն է տալիս հայութեան մնացորդացի մասին: Նա հաստատուելով, որ տարիներից ի վեր Թուրքիայի հետազօտական շրջանակներում բանավէճի նիւթ է

³⁷ Armenians And Turkey: Shared history, http://www.turkishdailynews.com/old_editions/09_18_96/feature.htm.

³⁸ Կիրակոսեան Զ., Հայաստանը միջազգային դիւանագիտութեան եւ սովետական արտաքին քաղաքականութեան փաստաթղթերում, Երեւան, 1972, էջ 750:

³⁹ Ղազարեան Հ., Ցեղասպան թուրքը, Բէյրութ, 1968, էջ 420-421:

⁴⁰ Յատկացումներու եւ հատուցումներու մօտաւոր հաշուեկշիռ Թրքահայաստանի եւ Կովկասի Հայկական Հանրապետութեան մէջ հայ ազգային վնասներուն համար, 1919, Փարիզ:

եղել «տեղահանութեան» հետեւանքով մահացած հայութեան թուաքանակը՝ եզրակացնում է. «Մի բան ստոյգ է. տեղահանութիւնից յետոյ հայ բնակչութեան թիւը մօտաւորապէս 600 հազար է: Յայտնի չէ, թէ մահմեդական ընտանիքների կողմից որդեգրուած հայ երեխաների թիւն ինչ է, բայց ծանօթ է, որ այս թիւն էլ շատ բարձր մի թիւ է»⁴¹:

Թուրքիայի պատմութեան ակադեմիայի երբեմնի նախագահ պրոֆ. Եուսուֆ Հալաջօղլուն, մօտաւորապէս հաստատելով այդ թիւը, մի հարցազրոյցի ժամանակ ասում է. «Քննարկելով քաղաքից քաղաք կացութիւնը՝ ստուգեցինք, որ 1918 թ. Անատոլիայում 650 հազար հայեր կային»⁴²:

Ենթադրելի է, թէ 600 հազարանոց այս տուեալի բուն աղբիւրն է հանդիսանում Կ. Պոլսի պատրիարքը: Ըստ թուրք դիւանագէտ Քեամուրան Կիւրիւնի՝ պատրիարքն անգլիացիներին տուած իր վիճակագրական տեղեկագրում Սեւրի պայմանագրից առաջ Օսմանիայի սահմաններում բռնագաղթի ենթարկւած, ապա վերադարձած եւ վերաբնակուած հայերի թուաքանակը գնահատել է 625 հազար⁴³:

Ի միջի այլոց ասենք, որ մեր ուսումնասիրած փաստաթղթերում նկատելի է թուրք արդիական պատմագիտութեան կողմից յատուկ շեշտադրումը հանրապետական շրջանում «տեղահանուած» հայութեան, այսպէս ասած, «վերադարձի» վրայ: Թար-

մագոյն օրինակներից է հետեւեալը. «Հազարաւոր հայեր,- պնդում է թուրք պատմաբան Սոնէյ Չագապտայը,- որոնք թողել էին Անատոլիան, սկսեցին վերադառնալ»⁴⁴: Մեր կարծիքով այս դրոյթը թէեւ որոշ չափով համապատասխանում է պատմական իրականութեանը, այդուհանդերձ առաջ է քաշւում հետագայ տարիներին Քեմալի իշխանութիւնների միջոցով կազմակերպուած «անվերադարձ» բռնագաղթերի անմարդկային իրողութիւնը քողարկելու նպատակով:

Դոկտ. Հրաչիկ Սիմոնեանը, բերելով պրոֆ. Ա. Համբարեանի տուեալները, «թուրքացուած» հայութեան թուաքանակը ներկայացնում է 200 հազար⁴⁵: Մինչդէռ Մելբուռնի համալսարանի հետազօտող Գրեգ Բուրգեսը, հաւանաբար Քրիստոֆեր Վաքերի տուեալներից օգտուելով, իր աշխատութեան մէջ նշում է, որ 400 հազար մնացորդից շուրջ 40 հազար հայ կանայք եւ երեխաներ իսլամացուել են հարեմային կամ ճորտական աշխատանքների համար⁴⁶: Իսկ Զաւէն Մսրլեանը, յենուելով Թէոդիկի տարեցոյցի տուեալների վրայ, «թուրքերի ձեռքում» գտնուող կա-

⁴⁴ Suny G., Gocek F. M., Discussing Genocide: Contextualizing the Armenian Experience in the Ottoman Empire, The Journal of International Institute, Vol. 9, No. 3, Spring/Summer 2002.

⁴⁵ Սիմոնեան Հ. Լ., Թուրք-հայկական յարաբերութիւնների պատմութիւնից, Երեւան, 1991, էջ 274:

⁴⁶ Burgess G., Into the Protecting Arms: The League of Nations and the Extension of International Assistance to Unprotected Persons in the Middle East and Europe; 1926 – 1928, Copyright (c) Monash University, School of Historical Studies 2001, http://www.arts.monash.edu.au/eras/edition_1/burgess.htm.

⁴¹ Նոր Մարմարա, 2003, յունուարի 27:

⁴² Նոր Մարմարա, 2004, օգոստոսի 29:

⁴³ Նոր Մարմարա, 2005, փետրուարի 12:

նանց ու որբերի թուաքանակը ներկայացնում է 58 հազար հոգի⁴⁷:

Ալին Չզինեանն իր հետաքրքրական յօդուածաշարում ակնարկում է Պոլսոյ Պատրիարքարանի կողմից 1921 թ. պատրաստուած եւ նոյն թուականի ապրիլի 26-ին ԱՄՆ արտգործնախարարութեանը փոխանցուած կարեւոր մի փաստաթուղթ, ուր յետեղեռնեան հայ որբերի թիւը գնահակում է 58,500: Այդ «հաշուետուութեան» մէջ հայ որբերի ցրուածութեան պատկերը ներկայացւում է քաղաք առ քաղաք, որը մենք մեր ուսումնասիրութեան աշխարհագրական հիմունքներով վերադասաւորել ենք հետեւեալ կերպ⁴⁸.

- Արեւմտեան Թուրքիայում. Ստամբուլ՝ 6,000, Իզմիր, Բուրսա եւ Բալըքեսիր՝ 2,000, Ինքուլու՝ 1,500:

- Փոքր Հայք եւ յարակից շրջաններում. Գոնիա՝ 3,000, Գաստամունի՝ 500, Սվազ՝ 3,500, Կեսարիա՝ 3,500:

- Հարաւարեւմտեան Հայաստանում. Ղիարբեքիր՝ 25,000, Խարբերդ՝ 3,000:

- Արեւմտեան Հայաստանում. Տրապիզոն՝ 2,500, Էրզրում՝ 3,000, Բիթլիս եւ Վան՝ 5,000:

Իսկ Ամերիկեան ազգային արխիւի 1923 թ. յունուարի 10-ին հրատարակած զեկուցման մէջ նշւում է, որ «Թուրքիայում գտնւում են 95,000 հայեր, որոնք բռնի կերպով կրօնափոխ են եղել»⁴⁹: Այս թիւը հաս-

⁴⁷ Շիրակ, Բէյրութ, 1975, մարտ-ապրիլ, էջ 86:

⁴⁸ <http://www.newneighbors.am/am/news.php?cont=3&rg=2&date=16.02.2006&month=3&year=2006>

⁴⁹ Նոյն տեղում:

տատում են որոշ թուրքական աղբիւրներ, որոնց ենթադրութեամբ «տեղահանութեան հետեւանքով իսլամացած հայերի թիւը կազմել է շուրջ հարիւր հազար»⁵⁰:

Այնուամենայնիւ թւում է, թէ իսլամացած հայերի թուաքանակի վերաբերեալ անորոշութիւնն աւելին է «պաշտօնական» հայութեան պարագայի համեմատութեամբ: Այս անորոշութեան կարեւոր պատճառներից է այն, որ իսլամացման քաղաքականութիւնը սիստեմատիկ կերպով շարունակուել է եղեռնի հետագայ տարիներին եւ Իսմէթ Ինոնիւի ժամանակ, «վարլըկ վերգիսի կանունու» հարկային օրէնքի տեսքով կիրառուել է «պաշտօնական» հայութեան նըկատմամբ: Այս հարցին դեռ անդրադառնալու ենք յաջորդ գլուխներում:

Նման հանգամանքներ հաշուի առնելով եւ գիտակցելով, որ այս զգայուն հարցում չի կարելի վիճակագրական սկզբունքներով ու մաթեմատիկական հաշուարկներով առաջնորդուել, այնուամենայնիւ բերուած թուաքանակների պարզ միջինը մեզ յանգեցնում է 330 հազար մօտաւոր թուին: Եթէ նկատի առնենք այն, որ նշուած աղբիւրներից գրեթէ բոլորն էլ մատնանշում են «իսլամացած»-ների բարձր թուի առկայութիւնը եւ որ դա չեն արտացոլում իրենց ներկայացրած թուերում, կարելի է ամենայն չափաւորութեամբ եզրակացնել, որ մօտ 330 հազար թիւը համարւում է «Անատոլիա»-ի վերապրած հայութեան կլոր թիւը (մեր տիպաբանութեան առումով եւ «թա-

⁵⁰ <http://www.hri.org/news/cyprus/tcpr/2005/05-12-30.tcpr.html#09>

քուն», եւ «պաշտօնական» հայութեան թուի սկզբնական հանրագումարը):

Թ. Խ. Յակոբեանը «Պատմական Հայաստանի քաղաքները» աշխատութեան մէջ մի քանի քաղաքների եւ գիւղակների պարագայում ակնարկել է եղեռնից վերապրած հայութեանը: Այսպէս՝ Ակնում (Էգին կամ Քեմալիէ) 1915 թ. աւարտին եղել է 400 հայ⁵¹, Ամասիայում 1929 թ.՝ 400⁵², Արաբկիրում 1922 թ.՝ 800⁵³: Բալուում (Պալու)՝ մի քանի հարիւր հայեր⁵⁴: Խարբերդում (Էլազիգ) 1915 թ. աւարտին փրկուել է 2,000 հայ⁵⁵, նոյն թուականին Խնուսում՝ 200⁵⁶:

Կամախի (Քեմախ) հայութեան շատ փոքր մասն է ազատուել, որը ժամանակաւորապէս ապաստան է գտել Դերսիմի եւ Երզնկայի ալեւիների եւ քրդերի մօտ. 1917-18 թթ. Կամախում միայն 100 հայ է եղել⁵⁷: Որոշ քանակութեամբ հայութիւն է վերապրել Հագրոյում⁵⁸ եւ Շապին-Գարահիսարում⁵⁹: Շատախում վերապրող հայութեան թիւն, ըստ երեւոյթին, աւելին է եղել⁶⁰: Չմշկածագում (Դերսիմի մօտակայքում) 1930

⁵¹ Յակոբեան Թ. Խ., Պատմական Հայաստանի քաղաքները, Երեւան, 1987, էջ 32:

⁵² Նոյն տեղում, էջ 36:

⁵³ Նոյն տեղում, էջ 51:

⁵⁴ Նոյն տեղում, էջ 88:

⁵⁵ Նոյն տեղում, էջ 135:

⁵⁶ Նոյն տեղում, էջ 144:

⁵⁷ Նոյն տեղում, էջ 155:

⁵⁸ Նոյն տեղում, էջ 174:

⁵⁹ Նոյն տեղում, էջ 205:

⁶⁰ Նոյն տեղում, էջ 207:

թ. եղել են չնչին թուով հայեր⁶¹: Սղերդի (Սիիրտ) հայերից թուրքերը պահել են միայն 100 արհեստաւորներ՝ իրենց ծառայեցնելու համար⁶²: Իսկ Քղիի հայութեան թուաքանակը 1929 թ. 500 է եղել⁶³:

Համաձայն Թ. Խ. Յակոբեանի բացատրութեան՝ Կարինում Եղեռնից յետոյ այլեւս հայախօս հայ չէր մնացել⁶⁴: Այս հանգամանքն ինքնին կարելոր ենք նկատում մեր աշխատութեան մէջ հիմնաւորուած տիպաբանութեան առումով, որն առկայ է գրեթէ բոլոր հայահոծ քաղաքներում եւ աւաններում: Կեսարիայի պարագայում էլ (ներառեալ Թալաս եւ միւս շրջաններ), ըստ Գրիգորիս ծայրագոյն վարդապետ Պալաքեանի, եղեռնից յետոյ մնացել են «միայն 260 տուն՝ իսլամացած հայ ընտանիքներ»⁶⁵, մօտաւորապէս 1,200-ից 1,500 մարդ, որոնք աստիճանաբար ձեւաւորում են որպէս «թաքուն» հայութիւն:

Պէտք է նշել, որ «թաքուն» հայութեան տեսակն այդ ժամանակահատուածում դեռեւս իր լիարժէք տեսքով կերտուած չի եղել, սակայն բազմաթիւ հայ կանայք եւ որբեր գտնուել են թուրք կամ քուրդ ընտանիքների տիրապետութեան տակ: Եղել են նաեւ շօշափելի թուով հայեր, որոնք, իրենց իսլամ կամ արտասահմանցի ներկայացնելով, փրկուել են ստոյգ մահից:

Հետեւաբար այս ժամանակահատուածում հայու-

⁶¹ Նոյն տեղում, էջ 213:

⁶² Նոյն տեղում, էջ 227:

⁶³ Նոյն տեղում, էջ 250:

⁶⁴ Նոյն տեղում, էջ 165:

⁶⁵ Պալաքեան Գ., Հայ Գողգոթան, Վիեննա, 1922, էջ 278:

թին ասելով դեռ պետք է հասկանալ վերապրող հայության խզում, կտրուած եւ բարոյահոգեբանական իմաստով քայքայուած մի ընդհանրական զանգուած, մի կոնգլոմերատ՝ ցրուած ամբողջ հանրապետութեան տարածքով մէկ:

Մի շարք վկայութիւններ խօսում են այդ զանգուածի առօրեայ կեանքի մասին Փոքր Հայքում եւ յարակից շրջաններում (տարածք «դ»): «Գաւառներից ստացած հատուկտոր լուրերը մխիթարական ոչինչ չեն պարունակում, եթէ չհաշուենք Կեսարիայի որբանոցի խնդիրը: Եղած դիմումները՝ նպաստ հաւաքելու մասին, բաւական լաւ արձագանգ գտան հայերի մէջ, եւ թերթերն օրը օրին ցուցակագրում են զանազան ազգայինների՝ յօգուտ Կեսարիայի որբերի նուիրած լումաները»⁶⁶:

Ուր որ գոյութիւն չեն ունեցել կոշտ արգելքներ, այնտեղ նկատելի են նախկին իներցիայով ընթացող հաւաքական մտածողութեան, հաւաքական աշխատանքի եւ հաւաքական հոգածութեան երեւոյթներ: Նման երեւոյթներ յատկապէս նկատելի են Փոքր Հայքի եւ յարակից շրջանների քաղաքներում (տարածք «դ»), որոնք ուղղակիօրէն գտնուել են եւրոպական դիւանագիտութեան տեսադաշտում:

Կեսարիայում հայերի համայնքային կեանքը նոյնիսկ որոշակիօրէն կազմակերպուած է եղել, եւ քաղաքը փաստօրէն հանդիսացել է գաւառահայութեան հոգեւոր կենտրոնը: Այս մասին տեղեկութիւններ է տալիս նաեւ Կեսարիայի առաջնորդական փոխա-

նորդ Տ. Սերովբէ քահանան, որ 1931 թ. սեպտեմբերին այցելութեան է գնացել ներքին գաւառները (Եօզգաթ, Գոնիա, Էրէլլի, Դիարբեքիր եւ Կարս): Համաձայն Սերովբէ քահանայի տեղեկութիւններին Եօզգաթում, օրինակ, «հայոց թիւը այժմ 600 է»⁶⁷: Սերովբէ քահանայ Բուրմայեանի Եօզգաթի այցելութեան մասին հանդիպում ենք նաեւ Լոնդոնի՝ անգլերէնով հրատարակուող «Մասիսում»⁶⁸, ուր պարզուում է, որ քահանան այցելել է շուրջ երեսուն գիւղաքաղաք, գիւղ եւ գիւղակ Եօզգաթի մօտ 60 կիլոմետրանոց շրջակայքում: Նա ամէնուր փորձել է բաւարարել գիւղացիութեան կրօնական եւ հոգեւոր պահանջները՝ «հարիւրաւոր երեխաների մկրտելով որպէս քրիստոնէայ եւ հարիւրաւոր ամուսնական արարողութիւններ կատարելով»⁶⁹ եւ այլն...

Անդրանիկ Ղակեսսեանն իր «The Armenians in Post-WW I Turkey» ուշագրաւ աշխատութեան մէջ, հիմնուելով հայկական մամուլի օրուայ տեղեկատւութեան վրայ, մանրամասնութեամբ ճշտում է հայութեան թուաքանակը Փոքր Հայքի եւ յարակից շրջանների մի քանի քաղաքներում. «1920-ականների զեկոյցները հաստատում են, - գրում է Ղակեսսեանը, - որ Սեբաստիայում եղել են երկու հազար հայեր, մօտ 800-ը տեղացի, 750-ը Կարայից եւ 450-ը շրջակայ գիւղերից եկած»⁷⁰: Նա նոյնպէս վկայում է, որ Ամասիայում 1925 թ. եղել է հազար, իսկ 1927 թ.՝ 1,830 հայ,

⁶⁶ Հայրենիք ամսագիր, Բոստոն, 1928, մարտ, էջ 172:

⁶⁷ Հայրենիք ամսագիր, 1931, սեպտ., էջ 168:

⁶⁸ Masis, London, 1931, August-October, pp.234.

⁶⁹ Նոյն տեղում, էջ 235:

⁷⁰ Հայկազեան հայագիտական հանդէս, Բէյրութ, 1995, էջ 418:

որից 1,200-ը բնակուած է եղել Ամասիայում եւ 630-ը գիւղերում⁷¹: Քննելով Թոքատի պարագան՝ Դակեսսեանը նշում է, որ այդտեղ 1928 թ. 1,600 հայ է եղել, ընդորում՝ 330-ը գիւղերում⁷²:

Սուրբ Փրկիչ ազգային հիւանդանոցի 1927 թ. «Ընդարձակ տարեցոյցում» լայն տեղ է յատկացուել «ներքին գաւառներու մէջ» ապրող հայութեանը: Կարելոր մանրամասնութիւններ պարունակող սոյն տեղեկատուութիւնից պարզուում է, որ այդ ժամանակ Կեսարիա կուսակալութեան տարածքում բնակուել է 4,313, Գաստամոնիում՝ 3,600, Գոնիայում՝ 289 հայ: Սեբաստիայում եղել է 438, Եօզգաթում՝ 375 եւ Թոքատում՝ 150 հայ ընտանիք⁷³: Տեղեկագրից պարզուում է նաեւ, որ Կեսարիայի Ս. Կարապետ Վանքի որբանոցը հիմանադրուել է Էլերեկ-Ֆենեսէ նահիյէում (վարչատարածքային միաւոր) 1918 թ.: Որբանոցը, որ ամբողջապէս ֆինանսաւորուել է ազգային (ոչ պետական) աղբիւրներից, 1927 թ. դրութեամբ ունեցել է շուրջ 100 որբ, ընդ որում՝ 40-ից 50-ը պատսպարեալի կարգավիճակով⁷⁴:

Հարաւարեւմտեան Հայաստանում (տարածք «բ») գտնուող հայութեան մասին դարձեալ կարդում ենք «Հայրենիք ամսագրի» էջերում, ուր ասուում է, որ Մեզրէում, Խարբերդում ու շրջակայ գիւղերում ապրում է մօտ 1,000 շունչ հայ, որոնց մեծ մասը սոցիա-

⁷¹ Նոյն տեղում, էջ 422:

⁷² Նոյն տեղում, էջ 424:

⁷³ Ընդարձակ տարեցոյց, կազմեցին՝ Զուհաճեան Մ. եւ Ազատեան Թ., Կ. Պոլիս, 1927, էջ 337-346:

⁷⁴ Նոյն տեղում, էջ 340-341:

լապէս բարեկեցիկ վիճակ ունի: Ազգային կեանքն այնտեղ, սակայն, այնքան էլ լաւ դրութեան մէջ չէ: Մի քանի տարի է, որ փակ է եղել ազգային վարժարանը, եւ դրա հետեւանքով 200-ից 300 հայ աշակերտներ գրկուել են ուսումից: Դրա մի փոքր մասը միայն՝ 40-50 հոգի, ստիպուած յաճախել են թուրքական դպրոցներ: Մեզրէում պահպանուել են եկեղեցին եւ դրա թաղային խորհուրդը: «Հայութեան հոգածութեան առարկայ է մի ծերանոց, որտեղ պատսպարուած են 25-30 ծերունիներ»:

«Դրօշակը» եւս հաստատում է այս թիւը՝ գրելով, որ. «Ժիշտ է, ջարդ չկայ առայժմ, քանի որ համրանքով ժողովուրդ մնացել է իրենց թաթին տակ: Մաքրուեցան հայերը. հազիւ երկու տասնեակ հազար հոգի կը շնչեն Անատոլիոյ խորերը, իբրեւ հասարակ ռայաներ»⁷⁵:

Տեղական այս կիսակազմակերպուած կեանքը, սակայն, չի կարելի համատարած համարել: «Հայրենիք ամսագրի» վերոյիշեալ լրագրութեան շարունակութեան մէջ կարդում ենք. «Գաւառների վիճակը գնալով վատթարանում է: Այնտեղ եղած հայութեան թիւը «Ազդարար»-ի թղթակիցներից մէկը հաշուում է 22-ից 25 հազար: Թղթակցի ասութեամբ՝ 3,500-ից աւելի երկսեռ մանուկներ փողոց են նետուած»⁷⁶:

Ա. Համբարեանը «Արեւմտահայերի թուաքանակի հարցի շուրջը» յօդուածում յստակ պատկեր է տալիս խնդրոյ առարկայ «բ» տարածքի որոշ քաղաքներում

⁷⁵ Դրօշակ, ժնեւ, 1925, յուլիս, էջ 17:

⁷⁶ Հայրենիք ամսագիր, 1928, մարտ, էջ 172:

1927 թ. ապրող հայութեան թուի մասին: Այսպէս, օրինակ, նա Դիարբեքի հայութեան համար նշում է 955, Խարբերդի համար՝ 2,399, Սղերդի համար՝ 265 թուերը⁷⁷:

Յենուելով Ա. Դակեսսեանի մէջբերումների վրայ՝ հաստատում է, որ Խարբերդում եւ շրջակայ գիւղերում 1930-ականներին 200 հայ ընտանիք է եղել, մեծ մասամբ՝ արհեստավորներ: Այդ թիւը 1938 թ. հասել է 1,500-ի, որը ներառում է ինչպէս առաքելական, այնպէս էլ կաթողիկէ հայերի թուաքանակը⁷⁸: Այստեղում եւս յաւելեալ բացատրութիւններ՝ չկան կրօնափոխ հայերի համար:

Ա. Դակեսսեանը նաեւ արժէքաւոր տեղեկութիւններ է փոխանցում Արեւմտեան Հայաստանի (տարածք «ա») հայութեան մասին: «Աղբիւրները հաստատում են, - գրում է նա, - որ 1931 թ. շուրջ հազար հայեր են ապրել Էրզրումում, Երզնկայում եւ Բիթլիսում»⁷⁹: Այդտեղ բերում են մանրամասնութիւններ Բիթլիսի մասին, որի գիւղերից Ուսնակում ապրել են երեք, Ճերմուկում՝ հինգ, Օլմեզում՝ վեց, Զէյնաբում՝ երեք, Ծաղկաձորում՝ մէկ եւ Աղուենիկում՝ երկու հայ ընտանիքներ՝ բոլորն էլ ընչազուրկ պայմաններում⁸⁰: Դակեսսեանի ուսումնասիրութիւնները նոյնպէս ցոյց են տալիս, որ Մուշում 1930 թ. եղել է 85 հայ, ութը՝ Տեւնիկում, հինգը՝ Փակարիչում, չորսը՝ Վիժանում,

⁷⁷ Բանբեր Երեւանի համալսարանի, 1969, թիւ 2, էջ 112:

⁷⁸ Հայկազեան հայագիտական հանդէս, 1995, էջ 413-414:

⁷⁹ Նոյն տեղում, էջ 405:

⁸⁰ Նոյն տեղում:

11-ը՝ Կոթերում, 29-ը՝ Խարխինում, 23-ը՝ Մամուկխաթումում եւ այլն⁸¹:

«Պայքարը» 1937 թ. օգոստոսի 31-ի համարում նշում է, որ Ադիեամանի ամենամեծ գերդաստանը՝ Մուլլազադէ ընտանիքը, իրականում հէնց Յակոբեան ընտանիքն է եղել, որը բռնի իսլամացուել է ջարդերից յետոյ⁸²:

Ա. Համբարեանի յօդուածից կարելի է մէջ բերել լրացուցիչ պատկեր՝ Արեւմտեան Հայաստանի (տարածք «ա») վերաբերեալ. 1927 թ. տուեալների հիմամբ Բիթլիսի հայութեան թուաքանակը գնահատում է 285, Կարսի հայութեանը՝ 21 եւ Տրապիզոնի հայութեանը՝ 98 մարդ⁸³: Նա շեշտում է, որ սրանք այն հայերին են, «որոնք դեռ շարունակում են խօսել մայրենի լեզուով»⁸⁴:

Հայախօսութեան առանձին դէպքեր են գրանցուել նաեւ Մարաթուկ լեռան ստորոտում բնակուող «իսլամացած» հայերի մէջ: Արշակ Ալպոյաճեանն այս մասին ակնարկել է «Քրդական ազգութեան նկարագիրը եւ ցեղակցական յարաբերութիւններ Հայոց հետ» յօդուածում, ուր նշելով պալաքցիների, պտըրցիների եւ շեկօցիների պարագան՝ շեշտում է, որ նրանք «երկու լեզու ունին միայն, զոր կը գործածեն հաւասարապէս, հայերէն եւ աղճատ արաբերէն մը, ուրիշ լեզու չեն գիտեր (ընդգծումը բնագրինն է-

⁸¹ Նոյն տեղում, էջ 406:

⁸² <http://www.geocities.com/cryptoarmenians/Adiyaman.html>.

⁸³ Բանբեր Երեւանի համալսարանի, 1969, թիւ 2, էջ 112:

⁸⁴ Նոյն տեղում:

Կ.Խ.)»⁸⁵: Նոյն աղբիւրից պարզւում է, որ այս ժամանակահատուածում Վանի, Դերսիմի եւ Խարբերդի շրջակայքում բնակուող ու «քրդական» համարուող բազմաթիւ գերդաստաններ եւս ունեցել են հայկական ծագում եւ պահպանել են իրենց հայկական ազգանունները⁸⁶:

Քրդական մի շարք գերդաստանների եւ աշիրէթների հայկական ծագումը հաստատուում է, Տիգրանակերտում բրիտանական փոխհիւպատոս, Թովմաս Գ. Մկրտիչեանի հեղինակած գրքի («Տիգրանակերտի նահանգին ջարդերը») յաւելուածում⁸⁷: Տուեալ յաւելուածում, որը վերնագրուած է՝ «Քրդացած եւ տակաւին հայ մնացած աշիրէթներ», նշում է տասներեք «քրդական» աշիրէթ (Ռշտունիք, Մամիկոնեանք, Ալանք, Մոդկայ, Մուհալեմի, Հաուերքի, Եկեղեաց, Հուն, Սօրա, Կեսան, Թաեան, Դերսիմ, Խալդա), որոնք, 1919 թ. դրութեամբ, ամբողջապէս կամ մասնակիօրէն բաղկացած են եղել, հիմնականում, համիդեան ջարդերից յետոյ դաւանափոխ դարձած այլալեզու հայերից:

1920-ականների աւարտին պայթեց Արարատեան ապստամբութիւնը՝ սասանելով քեմալական Թուրքիայի հիմքերը: Շէյխ Սայիդ փաշայի 1925 թ. գլխաւորած ընդվզման իներցիայով ընթացող այդ նոր ապստամբութեան երեք գլխաւոր ղեկավարներն էին Իբրահիմ Հըսգէ Թելի փաշան, Իսսան Նուրի փա-

⁸⁵ Հայրենիք ամսագիր, 1931, օգոստոս, էջ 90:

⁸⁶ Նոյն տեղում:

⁸⁷ Մկրտիչեան Թ. Գ., Տիգրանակերտի նահանգի ջարդերը, Գահիրէ, 1919, էջ 111-125:

շան եւ Զիւլան բէյը (վերջինս Խնուսի Հարամիկ գիւղի բնակիչ նոյնինքը՝ Արտաշէս Մուրադեանը)⁸⁸:

Արարատեան ապստամբութեան կազմակերպման գործում հայ-քրդական համագործակցութիւնը Թուրքիայի իշխանութիւնների աչքից չէր վրիպում: Ինչպէս Սայիդ փաշայի ապստամբութեան, այնպէս էլ հոյբունական այս շարժման մղիչ ուժն ու շունչ տուող ոգին, թուրք իշխանութիւնների համոզմամբ, հայութիւնն էր՝ իր վերապրող զանգուածներով:

Հետեւաբար՝ այս անգամ էլ նրանք հարցի լուծումը գտնում էին հայութեան տեղահանման մէջ, որի պայմանները, ի տարբերութիւն անցեալի, պէտք է գոյանային առաւելաբար տնտեսական, հասարակական ճնշումներով եւ կենցաղային անտանելի պայմանների ստեղծմամբ: Այս ուղղութեամբ կառավարութիւնը եւ տեղական իշխանութիւնները ծրագրուած կերպով լայն քարոզարշաւ են սկսում. «Տիգրանակերտի թուրք օջախը,- գրում է «Հայրենիք ամսագիրը», - ժողով է գումարել եւ հայերի նկատմամբ ընդունել հետեւեալ որոշումները. 1- Հայերի հետ առեւտուր չանել, 2- Հայ գործաւորներ եւ արհեստաւորներ բացարձակապէս չգործածել», ...բռնի կերպով փողեր գանձել, պարտքեր չեղեալ յայտարարել, գոյքեր առգրաւել եւ այլն⁸⁹:

Իսկ Արեւմտեան Հայաստանում Սղերդի եւ Ռադուանի հայերն ու եզդիները հաշտ ու խաղաղ էին ապրում միմեանց հետ եւ կենտրոնական իշխանութիւն-

⁸⁸ Դրօշակ, Երեւան, 1999, յունիսի 28, էջ 36:

⁸⁹ Հայրենիք ամսագիր, 1931, մայիս, էջ 170:

ներին չէին ենթարկում: Բաղեշի (Բիթլիս) կառավարիչը 1926 թ. 30 հազարանոց բանակով յարձակում է հայերի եւ եզդիների վրայ: Վտանգը կանխելու համար ստեղծվում է հայ-եզդիական 10 հազարանոց միացեալ բանակ, որին յաջողւում է թշնամուն յետ մղել⁹⁰:

Պատմական մի այլ վկայութեան համաձայն՝ 1929-30 թթ. միայն խարբերոյից (Էլազիզ), Տիգրանակերտից (Ղիարբեքիր) եւ Մարդինից տեղահանուել է աւելի քան 30 հազար հայ: Դոկտ. Հոֆմանի «Armenians In Turkey Today» (Հայերը Թուրքիայում այսօր) արժէքաւոր աշխատութեան մէջ հանդիպում ենք անգլիացի պատմաբան Քրիստոֆըր Վաքըրի հետեւեալ մէջբերմանը. «Պոնտացի յոյները (Տրապիզոն գաւառում) դաժանօրէն հալածուում էին 1922-24 թթ.: Համայնքը բնաջնջուեց, եւ այդ շրջանում հայերը նորանոր յարձակումների ենթարկուեցին: 1929 թ. ամրանը եւ յաջորդ ամիսներին սկսուեց հայ գիւղացիների եւ արհեստաւորների մնացորդների տխուր տեղահանութիւնը:

«Այդ ժամանակ 30 հազար հայեր աքսորուեցին», - ըստ բրիտանական հիւպատոս Մուք Մէյսոնի՝ զեկուցում է՝ 1929 թ. նոյեմբերի 14-ին Հալէպից գրուած մի ճեպագրում: Յաջորդող վեց ամիսներին Փախըստականներ էին ժամանում խարբերոյից, Ղիարբեքիրից եւ Մարդինից: Ըստ ճեպագրի՝ թուրքական կառավարութեան մշակած քաղաքականութիւնը ջարդերի միջոցով բոլոր քրիստոնէական տարրերից «Ա-

⁹⁰ Պողոսեան Ս. Կ., Քրդերը եւ Հայկական Հարցը, Երեւան, 1991, էջ 278:

նատուիլիա»-ի գաւառներն ազատելն է: Մէյսոնն ակնարկելով, որ հայ ընտանիքների անդամները վարակուած են եղել մահացու հիւանդութիւններով եւ այս մասին տալով տխուր պատկերներ մէջ է բերում մի խարբերոյցի հայի խօսքերը. «Թուրքիայում այսօր մենք գոյութեան միջոցներ չունենք, մեզ հալածում են, թալանում, նետում բանտերը, եւ եթէ բախտներս բերի՝ արտաքսում: Ումբ են գցում հայկական եկեղեցիներից ներս»⁹¹: Ըստ նոյն աղբիւրի՝ Տիգրանակերտը մինչ այդ ունեցել է իր կրօնական հովուապետ եպիսկոպոսը, որին սպանել են եօթ թուրք հարբած զինուորներ: 1929-30 թթ. տեղահանուածների մօտաւոր թիւը կազմում էր 30 հազար⁹²:

Պրոֆ. Շաւարշ Թորիկեանը, «Հայկական Հարցը եւ միջազգային օրէնքը» աշխատութեան մէջ հաստատելով 1929 թ. աշնան 30 հազարանոց բռնազաղթը, մի իրաւական մանրամասնութիւն է տալիս այդ կապակցութեամբ, ըստ որի բռնազաղթի ենթարկուած հայերի թուրքական անցագրերում դրուել է «Թուրքիա վերադարձը արտօնուած չէ» գրութեամբ կնիք⁹³:

Իսկ Երուանդ Խաթանասեանը նշում է, որ սոյն գաղթի ենթակաների գրեթէ կէսը «քրդախօս հայեր էին»⁹⁴: Այդտեղից կարելի է եզրակացնել, որ բռնազաղթը համընդհանուր բնոյթ է կրել եւ իրականացուել է ինչպէս «պաշտօնական», այնպէս էլ արդէն ձեւա-

⁹¹ Hofmann T., Armenians in Turkey today, October 2002, p. 15.

⁹² Նոյն տեղում:

⁹³ Թորիկեան Շ., Հայկական Հարցը եւ միջազգային օրէնքը, Բէյրութ, 1976, էջ 184:

⁹⁴ Խաթանասեան Ե., Հայոց թիւը, Բոստոն, 1965, էջ 27:

տրուող «թաքուն» հայութեան նկատմամբ: Այսու կարելի է եզրակացնել նաեւ, որ կրօնափոխութիւնը «թաքուն» հայութեան համար հակահայ հալածանքներից, տուեալ դէպքում՝ բռնագաղթից բաւարար պաշտպանութիւն չի ապահովել:

Աւելացնենք նաեւ, որ որոշ փաստեր հիմք են տալիս եզրակացնելու, որ «Թուրքիայից անվերադարձ» հեռանալու պարտադրանքը չի սահմանափակուել միայն 1929 թ. գաղթի պարագայով: «Դրօշակի» լրագրութիւններից պարզուում է, որ Սեբաստիայի առաջնորդ Սարգիս վարդապետը եպիսկոպոսական տիտղոս ստանալու նպատակով 1924 թ. էջմիածին գնալուց յետոյ գրկուել է Թուրքիա վերադառնալու իրաւունքից⁹⁵:

Կոտորածից հազիւ փրկուած հայութեան անդորրը հերթական անգամ խանգարելու մասին վկայում է նաեւ Դերսիմի գիւղերից (Խարբերդի վիլայէթ, մեծամասնութեամբ քրդաբնակ) Խոզատ գիւղում (ներկայիս Հոզաթ կոչուող գիւղաքաղաքը) 1909 թ. ծնուած Ալեքսան Սեւակեանը. «Մուստաֆա Քեմալը հրաման հանեց, որ հայերը չպէտք է ապրեն գիւղերում, այլ միայն քաղաքներում: Հայասէր մեր գիւղապետի կարգադրութեամբ մենք մնացինք գիւղում, բայց ամիսը մի անգամ քաղաք էինք գնում եւ ներկայանում փաստելու համար, որ բնակւում ենք քաղաքում: Այսպէս շարունակուեց մինչեւ 1929 թ., եւ մի օր էլ գիւղի աղան մեզ ասաց. «Այստեղից պէտք է հեռանաք...»⁹⁶:

⁹⁵ Դրօշակ, Ժնեւ, 1925, յուլիս, էջ 18:

⁹⁶ Արմենիա, Սիդնէյ, 2003, ապրիլի 23, թիւ 394:

Նոյն ճակատագրին են ենթարկուել Դերսիմի (Թունջելի) Չմշկածագ քաղաքի հայկական գիւղերը: Քաղաքի ոստիկանապետը 1930 թ. սկիզբներին կանչել է Չմշկածագի անուանի հայերից մէկին եւ նրան փոխանցել հետեւեալը. «Սարգի'ս աղա, Մուսթաֆա Քեմալ Փաշայէն մեզ հրաման է եկեր, որ Եփրատ (Գարա Սու) եւ Արածանի գետերուն եզերքի եւ միւս գիւղերուն մէջ ոչ մէկ հայ պէտք է մնայ. բոլորը պէտք է հաւաքուին Չմշկածագ»⁹⁷:

Ի միջի այլոց այստեղ արձանագրենք եւս մի այլ հաստատում՝ ցեղասպանութիւնից փրկուած հայերի նկատմամբ դերսիմցի ալեւիների ցուցաբերած բարեացակամութեան մասին⁹⁸, ինչը, ի հարկէ, չէր կարող հիմնական խանգարում առաջացնել պետական ծրագրերում: Դերսիմի փրկուած հայերի թուաքանակը, ըստ որոշ աղբիւրների, վեց հազար է եղել, իսկ ըստ այլ աղբիւրների՝ տաս հազար⁹⁹:

Պարզուում է, որ 1929-30 թթ. տեղահանութիւնները եղել են պետականօրէն ծրագրուած, կազմակերպւած ու լայնամասշտաբ միջոցառումներ, եւ գաղթի պայմանները ստեղծուել են ամէնուրեք. «Սուլթան Համիդի շրջանի պէս, - նկարագրուում է «Հայրենիք ամսագրի» 1931 թ. համարներից մէկում, - հիմա էլ հայերին անվարան «գեաւոր» են կոչում»¹⁰⁰: Ըստ

⁹⁷ Գասպարեան Հ. Յ., Չմշկածագ եւ իր գիւղերը, «Պայքար» տպարան, 1969, էջ 457:

⁹⁸ <http://members.tripod.com/~TurkKurd/kurdistan.html>.

⁹⁹ Գասպարեան Հ. Յ., Չմշկածագ եւ իր գիւղերը, «Պայքար» տպարան, 1969, էջ 448:

¹⁰⁰ Հայրենիք ամսագիր, 1931, մայիս, էջ 170:

«Հայրենիք ամսագրի» այս տեղեկութեան՝ «գեաւոր» հայերը բացարձակապէս զուրկ են եղել իրենց գիւղերից կամ քաղաքներից դուրս գալու իրաւունքից, եւ, փաստօրէն, ոչ ոք ճամբորդելու արտօնութիւն չի ստացել՝ բացի «Թուրքիայից անվերադարձ դուրս գալու համար» պարտադրանքն ընդունածներից:

Ըստ թուրքական 1928 թ. «Դելեթ սալնամէի» («Կառավարական տարեգիրք»)՝ ասիական Թուրքիայում ապրում էին 29 հազար հայախօսներ¹⁰¹: Տարեգրքի տուեալները, որոնք, փաստօրէն, արտացոլում են 1927 թ. թուրքական մարդահամարի պետական վերարտադրումները, ցոյց են տալիս, որ այդ թուականներին Բայազիդում եղել է ընդամենը մէկ, իսկ Էրզրումում՝ 12 «գրիգորեան հայ»¹⁰²: Հայախօս կամ գրիգորեան լինելու շեշտադրումը, որ առկայ է հանրապետական Թուրքիայի պարբերական բոլոր մարդահամարներում, պատահականութեան արդիւնք չէ, եւ դա պէտք է կարելորել «պաշտօնական» հայութեան թուաքանակի ճշտորոշման իմաստով: Այս մասին եզրակացութիւնների ենք յանգելու հետագայում:

Հակահայ հալածանքների պայմաններում, այնուամենայնիւ, Կ. Պոլսի պատրիարքութեան կողմից որոշ փորձեր արուել են վիճակը մեղմացնելու եւ սրտերը մխիթարելու ուղղութեամբ. «Պոլսոյ Կրօնական Ժողովը որոշել է մի եպիսկոպոս ուղարկել Կեսարիա, - գրում էր «Հայրենիք ամսագիրը», - յիշեալ

շրջանների համար քահանաներ ծեռնադրելու համար...»¹⁰³:

Գտնուելով ֆրանսիական ռազմաքաղաքական ազդեցութեան գօտում՝ պատմական Կիլիկիայի (տարածք «գ») հայութիւնն ունեցել է քաղաքական եւ հասարակական հետաքրքրական ճակատագիր: Ֆրանսիական իշխանութիւններն իրենց աշխարհաքաղաքական եւ ռազմական նպատակների իրագործման համար զինում էին հայերին եւ համագործակցում նրանց հետ: Թուրքական «Ենի Ադանա» թերթն իր 1925 թ. հոկտեմբերի 31-ի համարում, ակնարկելով Կիլիկիայի քաղաքական անցուդարձերները, գրում է. «Վերջերս Բէյրութի հայ կոմիտէն ժողովներ գումարելով՝ որոշել է հայերից միլիցիա ուժեր կազմել եւ օգնել ֆրանսիացիներին: Հայ կոմիտէների ժողովներին մասնակցում էին նաեւ Ադանայի կողմերի հայ կոմիտէների պետերը (ընդգծումը մերն է - Կ.Խ.)»¹⁰⁴:

Ի հարկէ, պէտք է ասել՝ միշտ չէ, որ համընկնում էին հայկական եւ ֆրանսիական շահերը: Ֆրանսիական իշխանութիւնների դժգոհութիւնները երբեմն յանգեցնում էին «զէնքերը յետ վերցնելու» սպառնալիքների եւ զգուշացումների: Թուրքական նոյն աղբիւրը գոհունակութեամբ էր արձանագրում, որ «հայերը ֆրանսիացիներին էլ դէմ են գնում»¹⁰⁵:

Յամենայն դէպս՝ պատմական Կիլիկիայի մնացորդացը Հաթայի կիսանկախ մարզում թուրք իշխանութիւնների անմիջական ճնշումներից զերծ մնաց

¹⁰¹ Խաթանասեան Ե., Հայոց թիւը, Բոստոն, 1965, էջ 27:

¹⁰² <http://www.did-dpa.org/Html/engarmenianQ6.htm>.

¹⁰³ Հայրենիք ամսագիր, 1931, նոյեմ., էջ 169:

¹⁰⁴ Դրօշակ, Փարիզ, 1925, նոյեմբեր, էջ 151:

¹⁰⁵ Նոյն տեղում:

մինչեւ 1939 թ. ամառը, երբ թուրք-ֆրանսիական համաձայնութեան լոյսի տակ հետեւողական քայլեր առնուեցին պատմական Կիլիկիան վերջնականապէս հայաթափելու ուղղութեամբ, այս անգամ դարձեալ ոչ թէ վայրագ սպանդների, այլ գերազանցապէս բռնագաղթի ճանապարհով:

«Զուտ հայաբնակ գիւղը՝ Վազըֆ» յօդուածի հեղինակ Թադէոս Պապիկեանն այսպէս է բնութագրում Կիլիկիայի հայաթափումը. «Այս օրերում Իսկենդերուն՝ Հաթայի շրջանի հայ եկեղեցիները եւ հայութիւնը նիւթ են դարձել մամուլի եւ հեռուստատեսութեան, ի մասնաւորի Վազըֆ գիւղը, որ այսօր աշխարհի վրայ, բացի ներկայ Հայաստանից, միակ զուտ հայաբնակ գիւղն է: Վազըֆ զուտ հայաբնակ գիւղը Սուէտիայի (Սամանտաղ) Մուսա Լեռան ստորոտին շարուած վեց զուտ հայաբնակ գիւղերից ամենափոքրն էր... Զուտ հայաբնակ այս վեց գիւղերը շարունակել են իրենց կրօնը, ազգութիւնը եւ աւանդոյթները՝ առանց ժամանակուայ իշխանութիւններին եւ անձերին գլխացաւ պատճառելու: Նրանք միշտ բարձր են պահել իրենց արժանապատուութիւնը, լաւ ու բարեկամական յարաբերութիւններ մշակելով շրջանում գտնուող բոլոր ժողովուրդների հետ: Հետեւեալ տեղեկութիւնները գաղափար են տալիս այս վեց հայաբնակ գիւղերի մասին՝ քաղուած 1919 թ. արձանագրութիւններից.

- 1-Պիթիաս (Պաթըայազ)՝ 195 ընտանիք՝ 1,050 անձ,
- 2- Հաճի Հապիպլի (Էրիր Քէոյ)՝ 257 ընտանիք՝ 1,284 անձ,
- 3- Եօղունօլուզ՝ 255 ընտանիք՝ 1,233 անձ,

4- Խտր Պեկ՝ 145 ընտանիք՝ 1,149 անձ,

5- Վազըֆ՝ 82 ընտանիք՝ 470 անձ եւ

6- Քեպուսիէ՝ 251 ընտանիք՝ 1,125 անձ:

1924 թուականին այս վեց հայաբնակ գիւղերը բաժանուեցին Սուէտիա գաւառակից: Մի գաւառակ կազմուեց ֆրանսիական իշխանութիւնների ծրագրի համեմատ, որն աւելի անկախ էր համեմատաբար եւ, սակայն, երբեմն գործածուեց ֆրանսիական շահերի եւ հաշիւների համար:

Հասաւ 5 յուլիսի 1938 թ.: Թուրք բանակը, համաձայնութեամբ ֆրանսիական իշխանութիւնների, զօրավար Շիւքրի Գանաթլի հրամանատարութեամբ հասաւ Անթաքիա, կազմուեցին Հաթայի Հանրապետութիւնն ու խորհրդարանը... 23 յուլիսի 1939 թ. 32,500 հայերու գաղթից յետոյ, մնացողների մեծամասնութիւնը Վազըֆ գիւղից էր...»¹⁰⁶:

Իսկ Արեւմտեան Հայաստանում հայ-եզդիական դիմադրութիւնը ճգնելու եւ շրջանը հայաթափման ենթարկելու նպատակով, փաստօրէն, ռազմական երկրորդ փորձն է կատարուում. 40 հազարանոց թուրքական բանակը 1934 թ. գրոհում է Սղերդ եւ ահաւոր խոշտանգումների ենթարկում տարածաշրջանի հայերին եւ եզդիներին¹⁰⁷:

Այս հակահայ գործողութիւններին առընթեր՝ պատերազմական թէժ գծերից հեռու, երեւան էին գալիս

¹⁰⁶ Պապիկեան Թ., Զուտ հայաբնակ գիւղը՝ Վազըֆ, Քուլիս, Ստամբուլ, 1990, փետր., թիւ 1022, էջ 22-24 եւ 1990, մարտ, թիւ 1023, էջ 38-41:

¹⁰⁷ Պօղոսեան Ս. Կ., Քրդերը եւ Հայկական Հարցը, Երեւան, 1991, էջ 278:

Քենալի երկդիմի քաղաքականության հերթական դրսևորումները՝ բիրտ հալածանքներին յաջորդող «մեծահոգի» մեղմութիւնները: Ահա այսպիսի «մեծահոգութեան» մի երկու ակտի մասին կարդում ենք «Հայրենիք ամսագրի» 1937 թ. էջերում, որով պարզւում է, որ Դիարբեքի Ս. Կիրակոս եւ Ս. Սարգիս եկեղեցիների սեփականութեան փաստաթղթերը (կոչւում են թափու սենեղի) ձեւաւորուել են ի նպաստ հայութեան, եւ դրանք պաշտօնապէս գրանցուել են որպէս տեղի հայ համայնքի ունեցուածք¹⁰⁸:

Փոքր Հայք եւ յարակից շրջանների (տարածք «դ») հայութեան սոցիալական կեանքի աննպաստ եւ անմխիթար պայմանների մասին նոյնպէս կարդում ենք «Հայրենիք ամսագրում»: Պարզւում է, որ Կեսարիայի առաջնորդական տեղապահը, նկատի առնելով այնտեղի որբերի թշուառական վիճակը, դիմում էր կատարել՝ մի քանի սաների Սկիւտարի որբանոց ուղարկելու համար: Սակայն որբանոցի խնամատարութիւնն ի վիճակի չի եղել բաւարարելու դիմումը: Իսկ Սեբաստիայից մի քանի ընտանիք դիմել էր պատրիարքարանին՝ Պոլիս տեղափոխուելու ցանկութեամբ, եւ պատրիարքարանը պատասխանել էր նրանց «չշարժուել տեղերից»՝ պատճառաբանելով, որ դրանից առաջ Եօզգաթից Պոլիս եկածներն ամիսներ շարունակ գտնուել են գործազրկութեան եւ թշուառութեան պայմաններում¹⁰⁹:

Քենալի իշխանութեան վերջին տարիներին, երբ

¹⁰⁸ Հայրենիք ամսագիր, 1937, օգոստոս, էջ 174:

¹⁰⁹ Հայրենիք ամսագիր, 1937, դեկտեմբեր, էջ 156:

արդէն աստիճանաբար զգալի էր դառնում Ինոնիւի ազդեցութիւնը, որոշ թուով դերսիմցի հայեր Հալէպից ծածուկ վերադարձել են Դերսիմ (Թունջելի), որը վերածուել էր ալեւի ցեղախմբերի բնակավայրի: 1937-38 թթ. Դերսիմի ալեւիական ապստամբութիւնների ընթացքում գործուն դեր է ունեցել այնտեղ վերապրած եւ վերաբնակուած հայութիւնը:

Հոլանդացի արեւելագէտ Մարտին Վան Բրոյնստէնի «Genocide In Kurdistan? The suppression of the Dersim rebellion in Turkey (1937-38) and the chemical war against the Iraqi Kurds» (Ցեղասպանութիւն Քըրդըստանում, Դերսիմի ապստամբութեան ճնշումը Թուրքիայում (1937-38 թթ.) եւ քիմիական պատերազմ Իրաքի քրդերի դէմ) աշխատութեան մէջ կարելի է տեղեկութիւններ կան դերսիմցի հայերի վերադարձի մասին. «Հիմնուելով իրադրութեան մանրամասն ռազմական ուսումնասիրութիւնների վրայ՝ դերսիմահայերը, որոնք վերապրել էին հայոց ջարդերը եւ ապրում էին Սիրիայում, քուրդ ազգայնականների հետ վերադարձան տարածաշրջան եւ յաջողութեամբ ցեղախմբերին հրահրեցին ապստամբութեան»¹¹⁰:

Դերսիմը լեռնային անմատչելի մի վայր է: Այն բնակեցուած է մեծ թուով փոքր ցեղախմբերով, որոնց հիմնական զբաղմունքն անասնապահութիւնն է:

¹¹⁰ Bruinessen M. Van, Genocide In Kurdistan? The suppression of the Dersim rebellion in Turkey (1937-38) and the chemical war against the Iraqi Kurds (1988), in: George J. Andreopoulos (ed), Conceptual and historical dimensions of Genocide. University of Pennsylvania Press, 1994, pp. 141,170.

Նրանց ընդհանուր թիւը 1930-ականներին կազմում էր 65-ից 70 հազար: Մի մասը խօսում է քրդերէն, բայց մեծամասնութիւնը՝ զազա կոչուող լեզուով: Բոլորը յարում են ալեւի աղանդին, որը նրանց առանձնացնում է արեւելքում եւ հարաւում ապրող քուրմանջերէն խօսող քրդերից:

Սայիդ Ռիզայի ղեկավարած 1937-38 թթ. Դերսիմի ապստամբութիւնն արեան մէջ խեղդուեց Թուրքիայի բանակի, այդ թւում՝ օդուժի կողմից: Հետաքրքիր է իմանալ, որ այդ գազանային արարողութեանն ակտիւօրէն մասնակցել է Մ. Քեմալի հոգեւորդի Սաբիհա Գէոքչէնը, որը, ըստ Ս. Պօղոսեանի ակնարկած աղբիւրների, «Փնտրում էր խռովարարների որջերը եւ նրանց գնդակահարում գնդացիւրով»¹¹¹:

Թուրքական եւ թուրքահայ մամուլի բացայայտումների հիման վրայ (2004 թ. փետրուարին) Սաբիհա Գէոքչէնը, բուն անունով Խաթուն Սիպիլճեանը, եղել է Ուրֆայի որբանոցի սան, որին Քեմալը որդեգրել է 1920-ականների սկզբին: Գէոքչէնը, շնորհիւ Քեմալի հոգատարութեան, ստացել է բարձրագոյն կրթութիւն եւ դարձել է Թուրքիայի առաջին կին օդաչուն:

¹¹¹ Պօղոսեան Ս. Կ., Քրդերը եւ Հայկական Հարցը, Երեւան, 1991, էջ 283:

Բ- 1938- 50 թթ. ժամանակահատուած

Աթաթուրքական շրջանի համեմատութեամբ այս փուլում հայութիւնը գտնուել է քաղաքական եւ հասարակական առաւել անտանելի ճնշման մթնոլորտում: Փաստօրէն Աթաթուրքի եւ Ինոնիւի ժամանակահատուածների հիմնական տարբերութիւնը կայանում է այն հարցում, որ Քեմալի օրօք գոնէ պոլսահայութիւնը համեմատական խաղաղ կեանքով էր ապրում: Ինոնիւի օրօք պոլսահայութեան դէմ եւս ճնշումներ կիրառուեցին: Իսկ գաւառահայութեան դէմ հալածանքի քաղաքականութեան հարցում էական տարբերութիւններ չեն ուրուագծուում:

Իսմէթ Ինոնիւն 1943 թ.՝ Երկրորդ աշխարհամարտի թոհ ու բոհին, Թալէաթի աճիւնը Գերմանիայից Թուրքիա բերել տուեց եւ ամփոփեց Ազատութիւն անուանուող բլրի վրայ՝ թերեւս որպէս իր կատաղի հակահայ քաղաքականութեան խորհրդանիշ (ի դէպ նշենք, որ Իսմէթ Ինոնիւն Թալէաթի քրոջ ամուսինն էր):

Նացիստական գաղափարներով ու յաղթանակներով ոգեւորուած թուրքական ցեղապաշտութիւնը՝ պանթուրքիզմը, այս ժամանակահատուածում վճռականօրէն շարունակեց իթթիհատական քաղաքականութիւնը՝ հայութեան ոչնչացման ուղղութեամբ: «Նորից հանրամատչելի դարձան Զիա Գէոք Ալփի գըր-

ուածքները,- վկայում է Հրաչեայ Սիմոնեանը,- որոնք բազմաթիւ նոր հրատարակութիւններ ունեցան»¹¹²:

Յետպատերազմեան ժամանակաշրջանում թուրք-սովետական յարաբերութիւնների բարդացման ու լարման հետեւանքով նկատելի են դառնում ճնշումների սաստկացման երեւոյթներ: Յատկապէս Կարսի եւ Արդահանի պահանջատիրութեան ուղղութեամբ սովետական արտաքին քաղաքականութեան ակտիւութիւնը Ինոնիւի կառավարութեան հակահայ քաղաքականութեանը նոր լիցք հաղորդեց եւ նրան մղեց այս անգամ թուրքահայութեան անունից «կոչեր» հրապարակելու հայապատկան հողատարածքների պահանջատիրութեան դէմ:

Թուրքահայ մամուլից ի յայտ են գալիս սահմանափակ տեղեկութիւններ՝ գաւառների հայութեան հասարակական կեանքի վերաբերեալ: Մեծ ոգեւորութեամբ է նշում, օրինակ, Դիարբեքիրում Ս. Ջատկի արարողութիւնը, ուր ներկայ է եղել հաւատացեալների խումբ բազմութիւն¹¹³: Նոյն առիթով լուրեր են հաղորդուել նաեւ Կեսարիայի գատկական հանդիսութիւնների եւ այն մասին, որ Աւագ շաբաթուայ ամբողջ տեւողութեամբ դարձեալ խումբ բազմութեամբ լցուած է եղել Կեսարիայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին¹¹⁴:

Գաւառներում ստուար թուով «պաշտօնական» հայութեան գոյութեանն մասին է ակնարկում, թերեւս,

¹¹² Սիմոնեան Հ. Լ., Թուրք-հայկական յարաբերութիւնների պատմութիւնից, Երեւան, 1991, էջ 478:

¹¹³ Ալիք, 1946, մայիսի 28:

¹¹⁴ Ալիք, 1946, յունիսի 5:

թուրքական «Սոն թելեգրաֆի» լրագրող Նիզամէդդին Նազիֆի յօդուածի այն բաժինը, ուր ասում է. «Բովանդակ Թուրքիայում լրագրավաճառները գոռում են՝ «Մարմարա», «Նոր Լուր», «Ժամանակ»... (ընդգծումը մերն է,- Կ.Խ.)»¹¹⁵:

Իշխանութիւնների յատուկ կարգադրութեամբ 1942 թ. նոյեմբերի 11-ին փոքրամասնութիւնների համար ճշտուեց «վարլըկ վերգիսի կանունու» կոչուող հարկային մի օրէնք (բառացիօրէն՝ «կապտալ հարկ», «ունեւորութեան հարկ»): Ըստ Շնորիք արք. Գալուստեանի՝ «Այդ օրերում հայերի «վարլըկ վերգիսի» տուրքը հարիւր քսան տոկոսի էր հասել, այսինքն՝ պետութիւնը հայի ամբողջ եկամուտը գանձում, ապա նրա տան կահկարասիները ծախել էր տալիս՝ մնացած քսան տոկոսը ստանալու համար...»¹¹⁶:

«Վարլըկ վերգիսի» հարկային օրէնքի մասին թերեւս առաւել ճշգրիտ տուեալներ եւ համեմատական պատկեր է նշում Ս. Վ. Գեղամեանը «Թուրքիայի ազգային բուրժուազիան երկրի տնտեսական եւ սոցիալ-քաղաքական կեանքում՝ 1945-50 թթ.» աշխատութեան մէջ. «Թուրքական իշխանութիւնների կամայականութիւնների պայմաններում,- գրում է Գեղամեանը՝ մէջ բերելով Մ. Ա. Հասրաթեանից,- թուրք առեւտրականը պէտք է վճարէր իր տարեկան եկամըտի 4.74 տոկոսը, յոյնը՝ 150 տոկոսը, հրեան՝ 179 տոկոսը, իսկ հայը՝ 232 տոկոսը. այսինքն՝ յոյները, թուրքերի համեմատութեամբ, վճարում էին 31 ան-

¹¹⁵ Ալիք, 1945, օգոստոսի 22:

¹¹⁶ Ալիք, 1980, դեկտեմբերի 18:

գամ աւելի, հրեաները՝ 36 անգամ, հայերը՝ 47 անգամ»¹¹⁷:

Հարկային այս քաղաքականութեան խստապահանջ գործադրումը մէկ կողմից՝ հայութեան արտահոսքի, իսկ միւս կողմից՝ նրա՝ ազգային ինքնութիւնից ձեւականօրէն հրաժարուելու գլխաւոր պատճառ դարձաւ: Այս մասին վկայութիւններ է տալիս Արսլան Գոթան անունով խարբերոցի «թաքուն» հայը «Ջուն-հուրիէթի» թղթակից Գիւլդեմիրին տուած հարցազրոյցում (տպագրուած՝ 1981 թ. օգոստոսի 12-16) պատմում էր, թէ ինչպէս նրա ընտանիքի վրայ դրել էին հազար ոսկիանոց «ունեւորութեան տուրք»: Նրա հայրը, որ չէր կարողացել ամբողջ ունեցուածքը ծախելով հանդերձ վճարել տուրքը, ստիպուած ընտանեօք ընդունել էր իսլամ¹¹⁸:

Մի շարք աշխատութիւններում կատարուած վերլուծութիւններից պարզուում է, որ թէւեւ իսլամացումն ամբողջապէս չէր փրկում կացութիւնը, սակայն զգալի չափով իջեցնում էր «ունեւորութեան տուրքի» հարկային պարտաւորութիւնները: Հիմնուելով անգլիական հեղինակ Բ. Լիւիսի տուեալների վրայ՝ Գեղամեանը բացատրում է, թէ ինչպէս, օրինակ, մահմեդական հրեաները (դէոնմէներ) պէտք է վճարէին ընդամենը երկու անգամ աւել, մինչդեռ ոչ իսլամները, ինչպէս ասուեց, տասնեակ անգամ աւել¹¹⁹:

Այս ժամանակահատուածում թուրքացման անմարդկային քաղաքականութեան մասին վկայութիւն-

ների ենք հանդիպում «Ալիքի» էջերում. յենուելով «Էգիպշըն գազէթ» եգիպտական թերթի հաղորդումների վրայ՝ թերթը գրում է. «Փոքրամասնութիւններին պատկանող փաստաբանները դժուարութիւն են կըրում դատեր վարելու: Որեւէ պարագայում դատաւոր լինել չեն կարող: Երբ հանրապետութիւնը նոր էր հաստատուել, թուրքերը շատ գործածեցին «Չուլ-ուլէք» նշանաբանը: Փոքրամասնութիւններին պատկանող շատ ընտանիքներ թուրքական անուններ որդեգրեցին: Նրանք իրենց զաւակներին թուրքական տիպար անուններ տուեցին եւ մեծամասնութեան մշակոյթով ու լեզուով կրթեցին նրանց»¹²⁰:

Թուրքահայ գրող Մկրտիչ Մարկոսեանն իր գիւղագրական երկերում՝ «Տիգրիսի ափերէն» (1999 թ.) եւ «Մեր այդ կողմերը» (1988, 1994, 1995 եւ 2001 թթ.), պատկերաւոր կերպով նկարագրում է Տիգրանակերտի հայութեան հասարակական կեանքը՝ 1940-ականներին. եկեղեցական արարողութիւններ, հարսանեաց հանդէսներ եւ այլն: Նա շեշտում է, որ այնտեղ աստիճանաբար դժուարացել են պարզ գոյապրոստի կենցաղային պայմանները. «Հայերը միայն արհեստաւոր էին, - վկայում է նա, - որովհետեւ անելու այլ գործ չէր մնացել: Նախ իրենց հողամասերը կորցրել էին, ապա պաշտօնեայ կամ զինուորական դառնալ էլ չէին կարող...»¹²¹:

Թուրքացման քաղաքականութեան հակահայ կոպիտ երեսն ու ուղղուածութիւնը չի վրիպել նոյնիսկ

¹¹⁷ Դրօշակ, Աթենք, 1989, փետրուարի է, էջ 31:

¹¹⁸ Ալիք, 1981, դեկտեմբերի 9:

¹¹⁹ Նոյն տեղում:

¹²⁰ Ալիք, 1946, յունիսի 17:

¹²¹ Նոր Մարմարա, 2001, նոյեմբերի 21:

իրանական մամուլի տեսադաշտից: «Իրանէ մա» թերթը, մանրամասնութեամբ վերլուծելով Ինոնիւի ցեղապաշտական քաղաքականութեան արմատներն ու թողած հետքերը, շեշտում էր. «Թուրքիայում գըտնըող բոլոր փոքրամասնութիւնների մէջ ամէնից ծանր վիճակում են ապրում հայերը»¹²²:

Հետեւաբար կարելի է եզրակացնել, որ թուրքացման քաղաքականութեան համատարած արդիւնքները երեւան են եկել այս ժամանակահատուածում եւ մանաւանդ գաւառներում ստեղծել «թաքուն» հայի կերպարը:

Յ. Ք. Հաճեանը 1940-ականներին «Կարսի շրջան կամ Վանանդի նահանգ» ընդարձակ ուսումնասիրութեան վերջին բաժնում կարելոր հաստատման է յանգում «թաքուն» հայութեան ձեւաւորման կապակցութեամբ. «Մենք դժուար պէտք է կարողանայինք աշխարհին հասկացնել եւ հաւատացնել,- գրում է նա,- որ Պոլսի, Իզմիրի եւ այլ շրջանների 100-ից 150 հազար հայութիւնից բացի, որոնք լաւ հայերէն գիտեն ու այսօր էլ այդ լեզուով են խօսում, այնտեղ, Արեւմտեան Հայաստանում եւ հարեւան նահանգներում, մի քանի հարիւր հազարի հասնող հայեր կան, որոնք մէկ միլիոն զոհերի եղեռնի օրերին բնաջնջման երկիւղից իրենց եւ իրենց զաւակների կեանքերն ազատելու համար՝ ակամայից կրօնաւիժու են եղել եւ սկսել են թուրքերէն խօսել եւ թուրք ձեւանալ (ընդգծումները մերն են,- Կ.Խ.)»¹²³: Հաճեանը հաստա-

տում է նաեւ, որ «Այդ մասին եթէ գիտեն թուրքն ու թուրք մամուլը, գիտենք նաեւ մենք, որ այդ կատարեալ ճշմարտութիւն է...»¹²⁴:

Թուրքացման քաղաքականութեան ծիրում հարցստահարման եւ սոցիալական ծանր ու աննպաստ պայմանների մասին է վկայում մի պոլսահայ մտաւորական. «Ընդհանուր թշուառութեան մէջ,- գրում է նա,- կարելի չէ քանի մը խօսք չգրել Կեսարիոյ մէջ ապրող 500 մանուկների մասին, որոնք բոլորովին զրկուած են տոհմիկ դաստիարակութիւնից: Ասիկա մէկ պատկերն է Կեսարիոյ հայութեան: Վստահ եղէք, թէ ուրիշ շրջաններու մէջ կացութիւնն աւելի վատ է»¹²⁵:

Սոյն ժամանակահատուածի սոցիալական կացութեան մասին հետաքրքրական պատկերներ կան Փոքր Հայքի եւ յարակից շրջանների «պաշտօնական» հայութեան կապակցութեամբ. օրինակ՝ Կեսարիայի Էւերեկ-Ֆենեսէի հայութեան սոցիալական կեանքըն այս ժամանակահատուածի սկզբնական տարիներին, քիչ թէ շատ, գտնուել է բնականոն վիճակում: Գիւղաքաղաքի աւելի քան հարիւր ընտանիք հիմնականում զբաղուած է եղել արհեստներով (կօշկակար, հիւսն, երկաթագործ) եւ ապահովել որոշ կայուն վիճակ. «15 տուն չքաւորների,- գրում է «Հայրենիք ամսագիրը», 1938 թ.,- դրամական օգնութիւն են հասցընում բարեսէր հայրենակիցները»¹²⁶:

Հետագայ տարիներին «ունեւորութեան» տուրքի

¹²² Ալիք, 1946, յուլիսի 11:

¹²³ Ալիք, 1945, սեպտեմբերի 21:

¹²⁴ Նոյն տեղում:

¹²⁵ Ալիք, 1946, յուլիսի 28:

¹²⁶ Հայրենիք ամսագիր, 1938, օգոստոս, էջ 170:

բացասական հետեւանքներն ակներեւ են դառնում. ինչպէս ազգային կեանքը, այնպէս էլ սոցիալական իրավիճակը կտրուկ անկում է ապրել «պաշտօնական» հայութեան մօտ: Մամուլից պարզուրում է, որ Կեսարիա քաղաքում հարիւրաւոր հայ բանուորներ աշխատել են ապուխտի գործարաններում, եւ ժողովրդի մեծ մասը, զուրկ լինելով անձնական սեփականատիրութիւնից, վարձկալի կարգավիճակ է ունեցել¹²⁷: Որոշ տուեալներով Կեսարիայի ապուխտագործ հայ բանուորները եղել են շուրջ 500 հոգի, որոնք աշխատել են քաղաքից երկու ժամ հեռաւորութեան վրայ գտնուող «Ղարբուզաթան» ագարակում¹²⁸: Տէր Հայկազուն Կարապետեանի վկայութեամբ Կեսարիայի ժողովուրդն աղքատ է, եւ 450 հայ ընտանիքից միայն տասը սեփական բնակարան ունի¹²⁹:

Ազգային եւ սոցիալական դառն իրողութեանն ի տես Կեսարիայի ազգային գիտակից տարրի մօտ ի յայտ է գալիս ազգապահպանական առողջ ձգտումը՝ քաղաքի հայկական վարժարանի վերաբացման հարցում¹³⁰, որն, ի հարկէ, չիրականացաւ երբեք: Իսկ Կեսարիայի եկեղեցու վերաբացման կապակցութեամբ «բաժնապատ լուծում» էր սպասուում. «Տեղի հայ բնակչութիւնը, - գրում էր «Հայրենիք ամսագիրը» 1940 թ., - դիմել է վարչապետութեան եւ խնդրել, որպէսզի իրենց եկեղեցին չգրաւուի ու մթերանոցի չվերածուի: Վարչապետութիւնը հրահանգել է ներքին գործակա-

րութեան միջոցով, որ առաջին առիթով եկեղեցու շէնքը պարպուի եւ յանձնուի հայերին»¹³¹: Երեւոյթը կարելի է օրինաչափ համարել նաեւ միւս շրջանների եւ հետագայ ժամանակահատուածների համար. մասամբ արտօնել եկեղեցիների, բայց ընդհանրապէս չարտօնել դպրոցների վերաբացումը...

Յատկանշական է, որ այդ շրջանում գաւառի «պաշտօնական» հայութիւնն ունեցել է ծխատէր քահանաներ Փոքր Հայքում եւ յարակից շրջաններում՝ Օրդուում, Կեսարիայում, Էւերէկ-Ֆենեսէում եւ Հարաւարեւմտեան Հայաստանի Տիգրանակերտ քաղաքում¹³²: Միջոցների սղութեան պատճառով բաւական դժուարութեամբ է կրօնական սպասարկութիւն տըրուել գաւառահայութեանը, որը լայն ցրուածութեամբ բնակւում էր զանազան մանր ու խոշոր գիւղակներում ու գիւղաքաղաքներում:

Այս ժամանակահատուածում Էւերէկ-Ֆենեսէ գիւղաքաղաքում, ուր ապրում էր շուրջ 1,000 հայ (100 ընտանիք), գործել է Ս. Թորոս եկեղեցին՝ իր թուրքախօս քահանայով¹³³: Նոյն քահանայի միջոցով հոգեւոր սպասարկութիւն է տրուել Կեսարիայի միւս գիւղաքաղաքին՝ 20 տուն հայութիւն ունեցող Թալասին, որն ունեցել է կիսաւեր եկեղեցի¹³⁴:

Ս. Մարկոսեանը «Մեր այդ կողմերը» գրքում գրում է. «Տէր Արսէնը Տիգրանակերտի միակ հայ քահանան էր հայոց: Ուրիշ մը չկար: Ղերիկի, Լիչէի, Էլա-

¹²⁷ Ալիք, 1946, նոյեմբերի 21:

¹²⁸ Ալիք, 1945, նոյեմբերի 30:

¹²⁹ Ալիք, 1947, յունիսի 12:

¹³⁰ Ալիք, 1945, նոյեմբերի 28:

¹³¹ Հայրենիք ամսագիր, 1940, մարտ, էջ 161:

¹³² Հայրենիք տարեգիրք-Տօնացոյց, Բոստոն, 1945, էջ 263:

¹³³ Հայրենիք ամսագիր, 1938, օգոստոս, էջ 170:

¹³⁴ Նոյն տեղում:

գիզի, Մալաթիայի ալ քահանան էր: Տարին մէկ երկու անգամ այդ կողմերն ալ կ'երթար, հաւաքաբար մկրտութիւն կամ պսակ կը կնքէր կու գար (ընդգծումները մերն են- Կ.Խ.)»¹³⁵:

Բացառիկ կամ, ինչպէս բնորոշում է «Հայրենիք ամսագիրը» 1939 թ., «բախտաւոր իրադարձութեան» հանգամանք կարելի է համարել Հմայեակ ծայրագոյն վարդապետի այցելութիւնը Անկարայի հայութեանը: Նրան տարել են հայկական երկու գերեզմանոցներ, ուր հայ բարեպաշտների ներկայութեամբ կատարուել է հոգեհանգստեան արարողութիւն: Վարդապետը նաեւ կատարել է մի հանդիսաւոր պսակադրութեան կարգ՝ 200 հայերի ներկայութեամբ, եւ մկրտել մի քանի երիտասարդների¹³⁶:

«Սվազի, Ամասիայի, Թոքատի, Անկարայի, Եօզգաթի, Գոնիայի, Խարբերդի եւ Մալաթիայի մէջ ապող Հայ Առաքելական Եկեղեցու զաւակները,- կարդում ենք «Ժամանակի» 1945 թ. համարներից մէկում,- հոգելոյս Նարոյեան պատրիարքի օրերից սկսեալ մնացել են առանց հոգեւոր մխիթարութեան»¹³⁷: Հեղինակը, շարունակելով իր բուռն քննադատութիւնները պատրիարքարանի հասցէին, արժարժում է հետեւեալ տրամաբանութիւնը. «Ինչպէս որ Կեսարիայում, Տիգրանակերտում, Էւերեկ-Ֆենեսէում եւ Օրդում ցարդ հնարաւոր է եղել քահանաներ պահել եւ այդ շրջանների հօտի հոգեւոր մատակարարութիւն

ապահովել, այնպէս էլ հնարաւոր է գլուխ բերել, քիչ վերում յիշուած, վայրերի մատակարարութիւնը»¹³⁸:

Պոլսահայ մամուլի նմանօրինակ քննադատութիւնները բխում էին ուծացման մտահոգութիւններից: Հարկ է նշել, որ ուծացման վտանգը չէր սահմանափակուում միայն պետական քաղաքականութեամբ: Հոգեւոր մատակարարման ուշացման հետեւանքով, թուրքացմանն առընթեր, առկայ էր նաեւ յունացման վտանգը. «Սվազի մէջ ժողովուրդը մնացել է անտէր,- գրում է «Ժամանակը», - մինչեւ օրս յոյն կրօնաւորներն են թաղում մեր մեռելներին եւ մկրտում մանուկներին: Բնական է, որ այնտեղի հայութիւնը սկսի յաճախել յունական եկեղեցի եւ դաւանել օրթոդոքս դաւանանքը»¹³⁹:

Որոշ փաստերից էլ պարզուում է հոգեւոր մատակարարման գործին սատարելու ուղղութեամբ հայութեան բուռն ցանութիւնը: Այս երեւոյթը, որ բխում է հայկական նկարագրին յատուկ ինքնակազմակերպման ոգուց, լաւապէս դրսեւորուում է հետեւեալ տեղեկատուութեան մէջ. «Հմայեակ ծ. վարդապետը ժողովրդի ջերմ փափաքի համաձայն խնդրել է, որպէսզի պետական լեզուին հմուտ մի եկեղեցական ուղարկելի Անկարա: Հոգեւոր հովիւի սնունդը խոստացել է հայթայթել մի հայ ճաշարանատէր... (ընդգծումը մերն է- Կ.Խ.)»¹⁴⁰:

Պէտք է ասել, որ այս ժամանակահատուածի մասին վիճակագրական տեղեկութիւնները պակաս են:

¹³⁵ Տեմիրճեան Ս. Ծ., Սփիւռքահայ արդի գրականութիւն, հատոր Ա, Միջիգան, 1994, էջ 398:

¹³⁶ Հայրենիք ամսագիր, 1939, մայիս, էջ 168:

¹³⁷ Ալիք, 1945, նոյեմբերի 21:

¹³⁸ Նոյն տեղում:

¹³⁹ Ալիք, 1945, նոյեմբերի 29:

¹⁴⁰ Հայրենիք ամսագիր, 1939, մայիս, էջ 168:

Կեսարիայի հոգեւոր հայր Հայկազուն աւագ քահանայ Կարապետեանը գաւառի հայութեան մասին տալիս է վիճակագրական հետեւեալ պատկերը¹⁴¹ (տես՝ Աղ. 4).

	Տեղանուն	ընտանիք	թուաքանակ
1	Կեսարիա	450	2250
2	Թալաս	20	77
3	Կիւնան	10	50
4	Մունճուսան	25	110
5	Րումտիզին	5	30
6	Ջինճիտէրէ	1	4
7	Էւերեկ-Ֆենեսէ	130	640
8	Կիկի (զուտ հայ)	25	120
9	Պունարպաշը	12	60
10	Սվազ	250	1250
11	Կեմերեկ	40	245
12	Թրքմէն	20	100
13	Շարգըշլա	15	80
14	Եէնի Խան	80	400
15	Ուլաշ	40	240
16	Ջառա	50	240
17	Գոչիիսար (Չայեիք)	20	100
18	Արաբկիր	250	1250
19	Խարբերդ	150	750
20	Տիարպէիքիր	200	1000
21	Մալաթիա	100	500
22	Օրտու	40	200

¹⁴¹ Հայրենիք տարեգիրք-Տօնացոյց, 1947, էջ 242-244:

23	Սամսուն	10	50
24	Գոնիա	25	100
25	Տեստրոյ	25	100
26	Գոնիա-Էրէյլի	74	250
27	Ադանա	5	20
28	Ակն	30	150
29	Մէրսին	8	25
30	Յուք	1	6
31	Անկարա	260	1500
32	Խիմոպ	30	150
33	Գարաքէոսէ	1	6
34	Էլազիզ	150	700
35	Եօզգաթ	50	260
36	Պողազլըխան	25	130
37	Ուզունլու	12	75
38	Սարայր	30	150
39	Ինճիրլի	25	130
40	Քէտիլէր	10	60
41	Գարապըլըք	6	30
42	Գում Գույու	15	75
43	Էյլէնճէ	12	60
44	Պէպէք	5	40
45	Գարա Եաղուշ	5	75
46	Չաթ	15	80
47	Թերզիլի	30	220
48	Խորկուն	10	50
49	Սատրիամզա	1	5
50	Մէլէզ	15	70
51	Պուրունգըշլա	15	75
52	Խունկուրլա	10	50

53	Այլեւայլ գիւղերում	25	100
54	Թոքատ	70	350
55	Թահտըպա	4	15
56	Զիֆթլիկ	3	15
57	Զիլե	4	12
58	Մորում	3	16
59	Մեճիտ Եոզլի	5	25
Ընդամենը		2957	15906

Աղյուսակ 4

Որոշ տուեալների լոյսի տակ թուում է, թէ Տէր Հայկազունի այս մանրամասն պատկերն ամբողջապէս չի ընդգրկում նոյնիսկ նշուած տարածքներում ցըրուած հայութեանը: Օրինակ՝ Հարաւարեւմտեան Հայաստանում (տարածք «բ») գտնուող Արաբկիր քաղաքը, որը, ըստ Թ. Խ. Յակոբեանի, 1922 թ. ունէր 800 հայ բնակիչ, այս ժամանակահատուածում՝ 1945 թ., ունեցել է 600 հայ բնակիչ. այս թուաքանակը յաջորդ տարում իջել է 200-ի¹⁴²: Իսկ Բալու քաղաքում 1940 թ. եղել են աւելի քան 750 հայեր¹⁴³: Ակնի վերաբերող մի տեղեկութիւն, հաստատելով 30 ընտանիքի գոյութեան փաստը, յիշատակում է նաեւ Արեւմտեան Հայաստանի (տարածք «ա») ծայրամասում գտնուող Ակնի (ներկայիս՝ Էգին կամ Քեմալիէ) շրջակայ հայկական գիւղերից Կամտրակապը եւ Ապջուղայն, ուր 1946 թ. բնակւում էին յաջորդաբար 2 եւ 3 ընտա-

¹⁴² Յակոբեան Թ. Խ., Պատմական Հայաստանի քաղաքները, Երեւան, 1987, էջ 51:

¹⁴³ Նոյն տեղում, էջ 88:

նիք¹⁴⁴: Նկատելի է նաեւ այն հանգամանքը, որ Տէր Հայկազունի տուեալների մէջ տեղ չեն գտել Արեւմըտեան Հայաստանի եւ պատմական Կիլիկիայի (տարածք «գ») հայաշատ քաղաքներն ու գիւղերը:

Նշենք նաեւ այն փաստը, որ Տէր Հայկազունը հետագա (հաւանաբար՝ 1947 թ. վերջերին), այցելութիւնների արդիւնքում «Անատոլիա»-ի հայութեան թուաքանակը ներկայացրել է 20 հազար¹⁴⁵: Այս յաւելումը, բնականաբար, բնակչութեան բնական աճից չէ. հաւանաբար նա յայտնաբերել է նորանոր հայ ընտանիքներ եւ հայաբնակ գիւղեր: Օրինակ՝ Մալաթիայի նահանգի Դերենդէ գիւղի անունը չկայ նրա 1945 թ. ցուցակում, սակայն այնտեղ փաստօրէն ապրել են հայեր: Սա հաստատում է Դերենդէ գիւղի երեք հայ երիտասարդների մկրտութիւնը, որը կատարուել է Տիգրանակերտի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում 1946 թ.¹⁴⁶: Այդուհանդերձ՝ Տէր Հայկազունի կազմած ցուցակը չի կորցնում իր տեղեկատուական նշանակութիւնը եւ պատմական արժէքը:

Տէր Հայկազունը բազմիցս շօշափել է «թաքուն» հայութեան իրականութիւնը: «Ժամանակին» առաքած նրա թղթակցութիւններում կարդում ենք. «Հանդիպեցինք գետառի Գրիգորների, պատանի Մելքոնների կամ նորահաս Ովսաննանների, որոնք ի տես Ստամբուլի Կարապետի կամ Լեւոնի, երանութեան

¹⁴⁴ Ալիք, 1946, օգոստոսի 12:

¹⁴⁵ Ալիք, 1948, փետրուարի 23:

¹⁴⁶ Ալիք, 1946, նոյեմբերի 21:

հառաջանքն իրենց շուրթերին, հազիւ թէ մի «ախպարիկ» էին թոթովում»¹⁴⁷:

Նման հրապարակումներում թուրքացման քաղաքականությունը քողազերծելու եւ քննադատելու «յանցանքով» հալածուել, կալանքի տակ առնուել եւ մինչեւ իսկ կտտանքների են ենթարկուել մի շարք պոլսահայ մտաւորականներ, գործիչներ եւ լրագրողներ, որոնց խիզախ տեղեկատուությունների շնորհիւ է այսօր լոյս սփռուում խնդրոյ առարկայ իրադարձութիւնների վրայ:

Հաշուի առնելով նախկին ժամանակահատուածում Կիլիկիայի հայաթափման ծաւալը (միջին հաշուով 130 հազար մարդ), ինչպէս նաեւ Խարբերդ-Տիգրանակերտ-Դերսիմի հայութեան մասնակի բռնագաղթը (շուրջ 30 հազար մարդ), կարելի է պնդել, որ Իսմէթ Ինոնիւի իշխանութեան այս ժամանակահատուածում հայերի թիւը եղել է առնուազն 170 հազար: Սոյն տուեալը Տէր Հայկազունի թուերի հետ համեմատելով՝ կարելի է կռահել, որ «թաքուն» հայութիւնը սկսել է ձեւաւորուել այս ժամանակահատուածում, որի գործընթացում, ի թիւս սոցիալ-քաղաքական ճնշումների, ազդեցիկ եւ ճակատագրական գործօն է հանդիսացել, ինչպէս նշուեց, «վարլըկ վերգիսի» հարկային-տնտեսական քաղաքականութիւնը:

Այսպիսով՝ ներկայացուած 58 քաղաքների եւ շրջակայ գիւղերի մասին տուեալները, փաստօրէն, վերաբերում են «պաշտօնական» հայութեան թուաքանակին. 13,300-ը՝ Փոքր Հայքում եւ յարակից շըր-

¹⁴⁷ Ալիք, 1945, նոյեմբերի 21:

ջաններում (տարածք «դ»), եւ 2,600-ը՝ Հարաւարեւմըտեան Հայաստանում (տարածք «բ»):

«Պաշտօնական» հայութեան առաւել մեծ թուի մասին է վկայում Կ. Պոլսից Բաղդադ ժամանած «մի ազգային», որը Բաղդադի «Գոյամարտ» թերթի հետ իր ասուլիսում գաւառի հայութեան թիւը ներկայացնում է 40 հազար: Այդ յատկանշական ասուլիսում ասւում է, որ ամենախիտ հայ բնակչութեամբ վայրեր են Տիգրանակերտը, Կեսարիան, Էւերեկը, Օրդուն, Մալաթիան, Ամասիան եւ Սվազը: «Վան բնաւ չկայ, Էրզրում շատ քիչ, Խարբերդ չկայ, Հաթայ ալ քիչ մը», - ասւում է պոլսահայ ազգայինը¹⁴⁸: Վանի եւ մանաւանդ Խարբերդի մասին նրա ակնարկներից երեւում է, որ խօսքը միմիայն «պաշտօնական» հայութեան մասին է եւ ոչ թէ՝ կրօնափոխ կամ այլախօս հայերի:

Նման մօտեցմամբ «Ալիքը», հիմնուելով Կ. Պոլսի հայկական մամուլի տուեալների վրայ, սոյն ժամանակահատուածի գաւառահայութեան թուաքանակը ներկայացնում է 50 հազարից պակաս¹⁴⁹ եւ նշում, որ բազմաթիւ հայ ընտանիքներ են գաղթում դէպի Կ. Պոլիս:

«Արարատը» 1950 թ. յունուարի 30-ի համարում հաղորդում է յատկանշական մի լուր, ըստ որի 1945 թ. դեկտեմբերին Անկարայից աւելի քան 200 հայ ընտանիք է աքսորուել անյայտ ուղղութեամբ¹⁵⁰: Այս բացայայտ բռնարարքի մոտիւները, անտարակոյս,

¹⁴⁸ Ալիք, 1951, յունուարի 25:

¹⁴⁹ Ալիք, 1951, սեպտեմբերի 10:

¹⁵⁰ Արարատ, 1946, յունուարի 4:

պէտք է փնտրել Ինոնիւի կառավարութեան վարած հակահայ քաղաքականութեան համատեքստում, բայց նաեւ՝ Թուրքիայի յետպատերազմական շրջանի քաղաքական բարդ իրավիճակում, ընդ որում՝ ծայրայեղ աջերն իրենց նպատակներին հասնելու համար յաճախ անկանխատեսելի իրավիճակներ էին ստեղծում եւ իշխանութիւններին կանգնացնում փաստի առջեւ: Յիշենք, որ այդ ժամանակ ծայրայեղ աջերը մեծ աղմուկ էին բարձրացրել՝ դէպի Խ. Հայաստան «արտագաղթի» ակցիան ձախողեցնելու համար:

Իսմէթ Ինոնիւի նախագահութեան շրջանի վերջում նաեւ լայնամասշտաբ ծերբակալութիւններ սկսուեցին: Ձերբակալուեցին բազմաթիւ պանթուրանականներ, այդ թւում՝ Ալփարսլան Թուրքեշը, որը հետագայ տարիներին «Գորշ գայլերի» ամենաառանցքային դէմքը դարձաւ: Ձեւական դատավարութիւնից յետոյ՝ 1947 թ., նրանք անպարտ յայտարարուեցին: Հետաքրքիր է, որ նրանց դատավճիռներում շեշտուած էր. «Ցեղապաշտութիւնը, ըստ օրէնքի (իմա՝ Թուրքիայի օրէնքը), պատժապարտ բան մը չէ»¹⁵¹:

Յետպատերազեան շրջանում Խ. Միութեան արտաքին քաղաքականութեան օրակարգ մտցուեց Կարս-Արդահան-Օլթիի պահանջը, որն ինչպէս Թուրքիային, այնպէս էլ արեւմտեան ամբողջ ճամբարին նոր մարտահրաւերներ ներկայացրեց եւ կտրուկ սրեց իրավիճակը:

¹⁵¹ Ալիք, 1947, մայիսի 22:

Թերեւս սրա ազդեցութեան տակ ամերիկեան «Քլիուենդ փլէյն դիլըրի» վերլուծաբան Սպենսեր Դ. Էրուինը փորձում էր թերագնահատել «հպարտ ու հզօր հայ ժողովրդի» թուաքանակը խնդրոյ առարկայ շրջաններում. «Այսօր հայերի թիւը փոքր է Կարսի եւ Արդահանի շրջաններում, Թուրքիայից բոլոր օտար տարրերին ջնջելու թուրքական քաղաքականութիւնը յաջողել է»¹⁵²:

«Նիւ Եօրք Ուորլդ թելեգրամ»-ի աշխատակից եւ Թուրքիայի ու թուրքական հարցերի մասնագէտ Դենինը, սակայն, իր պրօթուրքական յօդուածներից մէկում (կոչւում է «Թուրքիան վտանգի տակ»), վերլուծելով Թուրքիայի պետական, տնտեսական եւ ռազմական տկարութիւնները թուրք-սովետական յարաբերութիւնների ոլորտում, մտահոգութիւն էր յայտնում, թէ Թուրքիայի պետականութեան տկարացման մեթոդներից մէկը կարող էր լինել թուրքերի դէմ փոքրամասնութիւնների լարումը, եւ շեշտում, որ «Արեւելեան շրջաններում ապրում են քրդեր, հայեր եւ կովկասեան ցեղեր (ընդգծումը մերն է- Կ.Խ.)»¹⁵³:

Իսկ Կահիրէի «Մասրի» թերթի լոնդոնեան թղթակիցը 1948 թ. սեպտ. 10-ի համարում մանրամասնութիւններ է տալիս Անկարայում կայացած թուրք-ամերիկեան գաղտնի տեսակցութեան մասին, որի նպատակն է եղել «պաշտպանութեան» գօտի ստեղծել Դարդանէլից մինչեւ իրանական Ատրպատականը: Այդ հրապարակումից մէջբերում է կատարել «Յուսաբերը». «Ամերիկեան առաքելութեանը մտահոգող

¹⁵² Ալիք, 1945, հոկտեմբերի 22:

¹⁵³ Ալիք, 1947, օգոստոսի 25:

երկրորդ պատճառն է ոչ-թուրք փոքրամասնությունների պարագան, որոնք բնակվում են Կարսի, Արդահանի եւ Արդուիկի սահմանամերձ շրջաններում, այսինքն՝ քրդերը եւ հայերը: Այս վերջինները մտադիր են ծառայելու սովետներին եւ անկարգություններ ստեղծելու (ընդգծումը մերն է- Կ.Խ.)»¹⁵⁴: Թույլ է, թէ այս վկայությունն առնչվում է «խլամացած» հայութեանը՝ համշինահայերին: Ամեն դեպքում փաստն ուշագրավ է ոչ միայն Արեւմտեան Հայաստանում հայութեան շօշափելի թուաքանակի առկայութեան իմաստով, այլ նաեւ նրան օրուայ քաղաքական հաշուարկներում եւ գաղտնի բանակցությունների օրակարգում ներառելու առումով, որը լաւագոյնս ապացուցում է խնդրոյ առարկայ հայութեան աշխարհաքաղաքական նշանակությունն ու դրա ներուժ դերակատարութեան հաւանականությունը:

Այս առումով «Ալիքում» հանդիպում ենք եւս մի ուշագրավ փաստի, ուր, ըստ արաբական լրատուական գործակալութեան Նիւ Եօրքից ուղարկած հեռագրի, տեղեկություններ են տրւում Բաթումում գումարուած՝ Արեւելքի կոմունիստական կազմակերպությունների համագումարի մասին¹⁵⁵: Խ. Միութեան Կոմկուսից բացի՝ համագումարին «ներկայ են եղել նաեւ Թուրքահայաստանի, քրդերի, Իրանի Ատրպատականի անջատողական շարժումների, Եգիպտոսի «Ախաուան-էլ-մոսլեմին» կազմակերպութեան, Սուդանի որոշ հոսանքների, Իրանի «Թուդէ» կուսակցութեան եւ հրէական «Իրգուն զուայլում» ահաբեկ-

չական կազմակերպութեան ներկայացուցիչները: «Համագումարը,- շարունակում է արաբական գործակալութիւնը,- հանել է հետեւեալ որոշումները.

1. Ճամբայ հարթել կեանքի կոչելու այնպիսի շարժումներ, որոնք կը յանգեն Ատրպատականի եւ Հայաստանի կառավարութեան ստեղծման (ըստ երեւոյթին Հայաստան ասելով,- գրում է «Ալիքը»,- հասկացւում է Թուրքիայի հայապատկան շրջանները):

2. Միջոցներ խորհել՝ թուլացնելու համար Խ. Միութեան հարեւան երկրներին, յատկապէս Թուրքիային եւ Իրանին (ընդգծումները մերն են, Կ.Խ.)»¹⁵⁶:

Թէ ովքեր են եղել «Թուրքահայաստանի անջատողական շարժման ներկայացուցիչները», թէ ինչպիսի շարժումներ պէտք է կեանքի կոչուէին, կամ ինչ ատրիբուտներով պէտք է առաջնորդուէին դրանք, մեզ դեռ պարզ չէ: Սակայն համագումարին մասնակցողների լայն սպեկտրն ինքնին բնութագրում է օրուայ քաղաքական ուժերի խոշոր շահակցութիւնը հայապատկան տարածքների անջատման հարցում, որը դարձեալ հիմնաւորում է խնդրոյ առարկայ հայութեան եւ տուեալ տարածքների աշխարհաքաղաքական նշանակութիւնը:

Պետական-պաշտօնական մարդահամարի տրւեալները ցոյց են տալիս, որ այս ժամանակահատուածում Թուրքիայում ապրող «պաշտօնական» հայերի թիւը եղել է 57,559, որից 31,617-ը՝ կանայք¹⁵⁷: Աղբիւրում շեշտւում է «ոչ իսլամ» լինելու հանգամանքը:

Արշակ Ալպոյաճեանը, իր «Մալաթիայի հայոց

¹⁵⁴ Յուսաբեր, Կահիրէ, 1948, սեպտեմբերի 13:

¹⁵⁵ Ալիք, 1951, յունուարի 3:

¹⁵⁶ Նոյն տեղում:

¹⁵⁷ Ալիք, 1948, յունուարի 13:

պատմությունը» աշխատության մեջ, յենուելով «Իսլամի հանրագիտարանի» տեղեկությունների վրայ, նշում էր, որ այս ժամանակահատվածում Ադիեամանի բնակչության մեծամասնությունը բաղկացած է եղել հալապլիկա կամ, մեր բնորոշմամբ, «թաքուն» հայերից¹⁵⁸:

Մեջ բերելով «Պայքարի» 1950 թ. մարտի 30-ի համարից, այստեղ կարելի է արժարժեք բուն ադիեամանցի Սարգիս Դեմիրճեանի տեսակետը, ըստ որի՝ շրջանի թուրքերը հայերի նկատմամբ «լայնախոհ եւ բարեկամական» են եղել¹⁵⁹:

Ըստ 1958 թ. հրատարակուած «Հայաստանի մի պատմություն» գրքի հեղինակ Վահան Քուրքչեանի՝ 1890-ականների եւ 1915 թ. ֆիզիկական բնաջնջումից խուսափելու նպատակով իսլամացած հայերի մի մեծ համայնք է գոյություն ունեցել այդ ժամանակահատվածում: «Նրանք առհասարակ,- գրում է Վ. Քուրքչեանը,- ցայժմ պահպանել են իրենց հայկական բարքերն ու աւանդութիւնները»¹⁶⁰: Այս շարքին, անշուշտ, պէտք է գումարել Ինոնիւի հակահայ քաղաքականութեան արդիւնքում իսլամացած հայերին եւ դրանց ամբողջութիւնը ներառել «թաքուն» հայութիւն հասկացութեան ընդհանուր շրջագծում:

¹⁵⁸ <http://www.geocities.com/cryptoarmenians/Adiyaman.html>.

¹⁵⁹ Նոյն տեղում:

¹⁶⁰ http://penelope.uchicago.edu/Thayer/E/Gazetteer/Places/Asia/Armenia/_Texts/KURARM/39*.html

Գ. 1950- 60 թթ. ժամանակահատված

Մի շարք վկայություններ բաւարար հիմք են հանդիսանում եզրակացնելու, որ այս տասնամեակում՝ Բայարի նախագահութեան եւ Մենդերէսի վարչապետութեան օրօք, հայութիւնը հասցրել է փոքր-ինչ շունչ քաշել՝ գոյատեւելու համար: Եթէ բացառենք ծայրայեղական աջ ուժերի կողմից հրահրուած 1955 թ. սեպտ. 6-ի եւ 7-ի հակայոյն եւ հակահայ ամբոխային բռնարարքները՝ Կ. Պոլսում եւ Իզմիրում հայութիւնն այս ժամանակահատվածում գտնուել է համեմատաբար տանելի պայմաններում՝ իր համայնքային քայքայուած կեանքը վերակազմակերպելու առումով: Շնորհիք արքեպիսկոպոսը նոյնիսկ «իսկական ժողովրդավարութեան» եւ «փոքրամասնութիւնների ոսկեդար» է անուանել այս ժամանակահատվածը¹⁶¹:

«Մինչեւ 1950 թ.,- գրում է «Ալիք» օրաթերթը,- Անատոլիայի հայերը Պոլսի հայերի հետ յարաբերութեան միջոցներ չունէին՝ տիրող սարսափի եւ միջոցների չգոյութեան պատճառով»¹⁶²: Սահակ Ծայրագոյն վարդապետ Փափագեանը 1952 թ. յուլիսին կատարած հովուապետական այցելութեան տպաւորութիւններում, ակնարկելով Եօզգաթի 20 հայ ընտա-

¹⁶¹ Ալիք, 1980, դեկտեմբերի 18:

¹⁶² Ալիք, 1973, սեպտեմբերի 23:

միջքների վիճակը, ընդգծում է նաեւ, որ 30 տարուց աւելի հոգեւորական չի գնացել այնտեղ¹⁶³:

Կ. Պոլսի հայոց պատրիարք Մեսրոպ արք. Նարոյեանի մահուանից (1944 թ.) աւելի քան եօթ տարի յետոյ միայն Թուրքիայի հայութեանը նոր պատրիարք ընտրելու հնարաւորութիւն տրուեց 1951 թ.: Ընտրուեց Գարեգին արք. Խաչատուրեանը, որի ընտրութեամբ աշխուժութեան լիցք հաղորդուեց Թուրքիայի հայութեան ազգային-հասարակական կեանքին: «Պոլսոյ պատրիարքարանը,- գրում է «Հայրենիք ամսագիրը»,- խոհեմ քայլերով ջանում է օգտուել Դեմոկրատ կառավարութեան միջոցով տրուած մի շարք թեթեւ «շնորհ»-ներից, ինչպէս տեղ-տեղ սակաւաթիւ հայկական եկեղեցիների վերադարձը եւ կրօնական պաշտամունքի ազատութիւնը: Դեռ շատ թոյլ այս քայլերը պէտք է ծառայեն մեր բեկորներին, որոնք իրենց ազգային գոյութիւնը պահպանելուց բացի, այլ ձգտում չունեն»¹⁶⁴:

Այդ թեթեւ «շնորհ»-ների առաջին արդիւնքներից կարելի է համարել Հաթայի երկու եկեղեցիների բացումը 1950 թ. սկզբին¹⁶⁵: Նոյն շարքը պէտք է դասել Բողազլեան եւ Էրէլի քաղաքների հայ համայնքներին գերեզմանոցային նոր տարածքների յանձնման փաստը 1951 թ.¹⁶⁶: Սրա վերաբերեալ հետաքրքրական տեղեկութեան ենք հանդիպում Բէյրութի «Մասիս» շաբաթաթերթում, ուր ասում է, որ Ամերիկայի սե-

¹⁶³ Ալիք, 1952, օգոստոսի 14:

¹⁶⁴ Հայրենիք ամսագիր, 1952, հոկտ., էջ 111:

¹⁶⁵ Ալիք, 1951, յունուարի 25:

¹⁶⁶ Ալիք, 1951, փետրուարի 1:

բաստացիների հայրենակցական միութիւնը 1952 թ. յատուկ մի պատուիրակ է ուղարկել Սեբաստիա՝ այնտեղի եկեղեցին վերանորոգելու եւ հնարաւորութեան դէպքում այնտեղ դպրոց բացելու նպատակով¹⁶⁷: Պատուիրակը «արտօնութիւն ստացած է թէ՛ եկեղեցին կառուցանելու, եւ թէ՛ դպրոց բանալու,- գրում է «Մասիսը»,- տէրտէր մը պահելու իրաւունքն ալ ստացած է: Տեղական իշխանութիւնները ֆրանսական քուլեջը տրամադրած են սեբաստացի հայուն, վերջինս մերժել է՝ ակնարկելով, թէ ֆրանսացիներն օր մը կրնան տէր կանգնիլ անոր»¹⁶⁸:

Կեսարիայի հայկական վարժարանի բացման համար եւս լաւատես է եղել Տէր Հայկազունը եւ հաւաստիացրել, որ վարժարանն աշխատանքը պաշտօնապէս սկսելու է 1952 թ. աշնանը¹⁶⁹:

Մեզ դեռ յայտնի չեն մանրամասնութիւնները, թէ ինչու չբացուեցին Սեբաստիայի եւ Կեսարիայի հայկական վարժարանները, սակայն կռահելի է, որ Թուրքիայի անգամ դեմոկրատական կոչուած իշխանութիւնները չէին ուզում արտօնել «Անատոլիա»-ի խորքում հայկական վարժարանների վերաբացումը: Այնուամենայնիւ, ի տարբերութիւն Ինոնիւի բռնատիրութեան, «դեմոկրատ»-ներն այս ժամանակահատուածում ընթացք էին տալիս սահմանափակ թուով եկեղեցիների վերաբացմանն ու օծմանը, գերեզմանոցների եւ միւս վագիֆների իրաւական հարցերի դրական լուծմանը եւ, ի հարկէ, խօսքի սահմանե-

¹⁶⁷ Ալիք, 1952, օգոստոսի 14:

¹⁶⁸ Նոյն տեղում:

¹⁶⁹ Ալիք, 1952, սեպտեմբերի 11:

րում արտօնում էին դպրոցների վերաբացումը...

Համեմատական ազատ ու խաղաղ այս պայմաններում, թեթև անդորրի պահերն օգտագործելով, հայ բեկորները նուիրում էին մշակութային ստեղծարար աշխատանքի: «Զումհուրիէթ» օրաթերթի աշխատակից, անուանի մտաւորական-գրող Եաշար Քեմալը գրում էր. «Մի շատ քաղցր բան ասեմ ձեզ. Անատոլիայի ժողովրդական բանաստեղծներից շատերը հայ են: Այս իմացայ, երբ աշխատանք էի կատարում ֆոլկլորի վրայ...»¹⁷⁰:

Այս հարցում մենք եւս հանդիպեցինք հետաքրիր տեղեկութիւնների թուրքական «venk.info» կայքէջում, ուր «անատոլեան» եւ արեւելեան տասնեակ ֆոլկլորիկ երգերի շարքում նշուել են տասից ավելի հայկական տոհմիկ երգերի անուններն ու հայերէն բովանդակութիւնը՝ թուրքերէնով: Այսպէս՝ «Այ Նարէ»-ն ու «Հայ Նիրիրնա»-ն այնտեղ ներկայացուել են որպէս Սասունի, «Պուրմա տիկինն եկել էր»-ը՝ Բալուի, «Դելէ Եաման»ը՝ Վանի, «Հլը, հլէ, հլէ Նինոյի»-ն՝ Վազըֆ գիւղի, «Սարի գեալին»-ն՝ Էրզրումի եւ «Հալայի պար»-ն՝ Այնթապի հայկական երգեր¹⁷¹:

Համեմատական ազատ ու խաղաղ պայմանների արգասիքները երեւան են գալիս ամենատարբեր վկայութիւններում: Այսպէս, օրինակ, 1951 թ. Կ. Պոլսից ուղարկուած քահանան Էրէյլիում կատարել է օրինութեան արարողութիւն, պսակել վեց զոյգերի եւ մկրտել 45 մանուկ¹⁷²: Կամ, օրինակ, «Նոր Մարմարային» հաղորդած տեղեկատուութեան մէջ նշուում է Էւերեկ-

Ֆենեսէում (Կեսարիայի մօտակայքում) Ծաղկազարդ, Աւագ հինգշաբթի եւ Ս. Զատիկ տօների առթիւ կատարուած առանձին արարողութիւնների եւ եկեղեցու՝ «խումն բազմութեամբ» լցուած լինելու մասին¹⁷³:

Զառայում նոյնպէս (Սեբաստիայի նահանգի ծայրամասում՝ Արեւմտեան Հայաստանին սահմանակից) առաքուած քահանայի ձեռամբ 1951 թ. պսակուել են հինգ զոյգեր եւ մկրտուել 30 մանուկ¹⁷⁴ եւ այլն:

Սոյն ժամանակահատուածի մամլոյ լրատուութիւնից պարզուում է նաեւ, որ կանոնաւոր եւ ակտիւ թղթակցական կապ է գոյութիւն ունեցել գաւառների (օրինակ՝ Կեսարիա, Սեբաստիա, Զառա, Էրէյլի եւ այլն) եւ Կ. Պոլսի հայկական թերթերի, յատկապէս «Նոր Մարմարա» եւ «Ժամանակ» օրաթերթերի հետ, ինչն ընդգծելի է եւ նկատառման արժանի: Այս կապի անմիջականութիւնը շօշափելու համար հետաքրքրական ենք համարում 1951 թ. «Ժամանակ» օրաթերթից մէջբերուած մի թղթակցութիւն, ուր ասուում է. «Մարտի 14-ին իրիկուն, աղօթելու համար երբ եկեղեցի կ'երթայինք, զարմանքով տեսանք, թէ Ս. Կիրակոսի մատռան ներսի ապակիները խորտակուած եւ գողութիւն պատահած է»¹⁷⁵: Թղթակցութիւնների բովանդակութիւնից եւ անմիջականութիւնից կարելի է եզրակացնել, որ Պոլսի հայկական թերթերի թղթակիցների մի մասը գաւառաբնակներ են եղել: Օրինակ՝ «Ժամանակում» յաճախ ենք հանդիպում թղթակցու-

¹⁷⁰ Նոր Մարմարա, 1960, սեպտեմբերի 11:

¹⁷¹ <http://www.venk.info/default.asp>.

¹⁷² Ալիք, 1951, փետրուարի 1:

¹⁷³ Ալիք, 1951, ապրիլի 23:

¹⁷⁴ Ալիք, 1951, օգոստոսի 13:

¹⁷⁵ Ալիք, 1951, ապրիլի 11:

թիւները, որ սկսում են այսպէս. «Սվազի մեր թղթակիցը, Ա. Նուբարը, կը գրէ...»¹⁷⁶ եւ այլն:

Գարեգին արք. Խաչատուրեանի ջանքերով 1953 թ. հիմնադրուեց «Սուրբ Խաչ դպրեվանքը»: Օշին Չիլինկիրը, ուշագրաւ մանրամասնութիւններ ներկայացնելով Գարեգին արք. Խաչատուրեանի կենսագրութիւնից¹⁷⁷, պատմում է, թէ ինչպէս 1950-ականների «ժողովրդավարութեան անցքից» օգտուելով, տրապիզոնցի պատրիարքը մինչեւ իր կեանքի վերջին օրերը գերմարդկային նուիրութեամբ հետամուտ էր գաւառի հայ պատանիներին Կ. Պոլիս տեղափոխելու եւ նրանց հայեցի դաստիարակութիւն տալու ծանր, պատասխանատու եւ յաճախ վտանգաւոր գործին:


Կ. Պոլիս բերուած սաների կենսագրութիւնները քննելիս¹⁷⁸ պարզուում է, որ այդ ժամանակահատուածից սկսեալ, սկզբում՝ Գարեգին արքեպիսկոպոսի, իսկ հետագայում՝ Շնորհք արքեպիսկոպոսի կողմից ղեկավարուած «Դէպի գաւառներ եւ գաւառներից դէպի Պոլիս» աշխատանքը սկսուել է Կեսարիա-Սեբաստիայից, անմիջապէս տարածուել Խարբերդ-Տիգրանակերտ-Շիրնաքի, ապա՝ Կիլիկիայի, իսկ վերջին շրջանում միմիայն շարունակուել է Սասունի (Արեւմտեան Հայաստան) ուղղութեամբ ու երբեք չի ծաւալուել Էրզրում-Կարս-Տրապիզոնի եւ բուն Արեւմտեան Հայաստանի միւս քաղաքների եւ շրջանների ուղղութեամբ (տես՝ Նկ. 3):

¹⁷⁶ Ալիք, 1952, օգոստոսի 14:


¹⁷⁷ Գիշերը առաւօտը իր մէջ կը կրէ, Ստամբուլ, 2003, էջ 27-45:

¹⁷⁸ <http://www.surphac-tbrevank.org/sht/okul/arama.asp>.


ա. Սասունից բերուած սաների քանակը՝ ըստ ծննդեան թուականի




բ. Տիգրանակերտից բերուած սաների քանակը՝ ըստ ծննդեան թուականի



գ. Սամաղաղից բերուած սաների քանակը՝ ըստ ծննդեան թուականի



դ. Կեսարիայից բերուած սաների քանակը՝ ըստ ծննդեան թուականի



Նկար 3

Նկատի առնելով դարեվանքի՝ միջնակարգ հաստատություն լինելու հանգամանքը եւ ուսման տեղություն շրջանը՝ գծագրից կարելի է կռահել, որ կեսարացի սաներին Պոլիս բերելու գործընթացն սկսւում է գրեթէ դարեվանքի հիմնադրութեան ժամանակ եւ շարունակուել մինչեւ 1970-ականները, Հարաւարեւմտեան Հայաստանի տիգրանակերտցի սաների դէպքում՝ մինչեւ 1980-ականները: Պատմական Կիլիկիայի Սամանդաղ քաղաքից սահմանափակ թուով սաներ են բերուել միայն 1970-ականներին:

Իրավիճակը միանգամայն տարբեր է Արեւմտեան Հայաստանի համար, որտեղից սասունցի սաներ են բերուել աւելի ուշ՝ 1990-ականներին, եւ գործը, թերեւս, շարունակուում է նաեւ այժմ:

Ինչն է եղել այս գործի ծաւալման անհամաչափութեան բուն պատճառը: Դժուար է սրա պատասխանը փնտրել զուտ փաստագրական ուղորտներում, բայց որոշ փաստերից կարելի է եզրակացնել, որ Թուրքիայի հերթական իշխանութիւնները զգայնութիւն են ունեցել ուիլսոնեան սահմանների նկատմամբ եւ հաւանաբար հայ ազգային-եկեղեցական գործիչների առջեւ գծել են «կարմիր սահմաններ», որի հետեւանքով գործնականում դժուարացել է նըրանց մուտքը Արեւմտեան Հայաստան:

Դարեվանքի կայքէջի տուեալներն ի մի բերելով՝ կարելի է ճշտել գաւառացի սաների ծննդավայրերը, որն արտացոլում է այդ «կարմիր սահմանների» առկայութեան փաստը (տես՝ Նկ. 4: Նկարում տեղանունն աջ կողմի փակագծում նշուել է տուեալ վայրում ծնուած սաների թիւը):

«Կարմիր սահմանների» առկայութիւնը կարելի է



Նկար 4

նկատել նաեւ Տէր Հայկազուն Կարապետեանի տըւած զեկուցման մէջ, որի մասին ակնարկուեց նախորդ գլխում:

Ի թիւս Պոլսոյ ազգային հաստատութիւնների՝ «Սուրբ Փրկիչ» ազգային հիւանդանոցի վերաշխուժացումը եւս կարելի է համարել այս ժամանակահատուածի կարեւոր ձեռքբերում: Վարուժան Քէոսէեանը նշում է, որ 1950 թ. հիւանդանոցի հոգաբարձութիւնը նոր եռանդով է նուիրուել աշխատանքի եւ նախաձեռնել ժողովրդական հանգանակութեան շարաններ: Եւ ժողովուրդը, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի արհաւիրքից եւ «վարլըկ վերգիսի» (ունեւորութեան) հարկային կապանքներից ազատուել էր արդէն եւ վերագտել առեւտրական կեանքի բնականոն ընթացքը, աւելի ուշադրութիւն էր դարձ-

նում հիւանդանոցի նիւթական կարիքներին¹⁷⁹: Հիւանդանոցի նիւթական բացը ծածկելու նպատակով կազմակերպուած ժողովրդական հանգանակութեան մնայուն գործին իր համեստ մասնակցութիւնն է բերել նաեւ գաւառահայութիւնը¹⁸⁰:

Կեսարիան՝ իր հայահոծ գիւղերով, այս ժամանակահատուածում շարունակել է մնալ որպէս Փոքր Հայքի եւ յարակից շրջանների (տարածք «դ») հայութեան հոգեւոր կենտրոնը: Որոշ տուեալներով Կեսարիա քաղաքի հայ բնակչութեան թիւը 1952 թ. կազմել է 2,020, իսկ գիւղերինը՝ 2,000 մարդ¹⁸¹: «Ըստ իմ քաղած ստույգ տեղեկութիւնների,- գրում է մի լիբանանահայ ուղեւոր,- Կեսարիոյ բոլոր գիւղերուն մէջ ալ հայեր կան»¹⁸²: Էւերեկ-Ֆենեսէն՝ իր ծխատէր քահանայով, եւ Թալասը՝ իր 15 տնուոր հայութեամբ¹⁸³ հանդիսացել են Կեսարիայի կարեւոր աւաններից:

¹⁷⁹ Զէնսէեան Վ., Յուշամատեան 160-ամեայ Ս. Փրկիչ հայոց հիւանդանոցի, Ստամբուլ, 1994, էջ 180 եւ 181:

¹⁸⁰ Ս. Փրկիչ, Ստամբուլ, 1953, մայիս, դ տարի, թիւ 45, էջ 28 եւ 1953, յունիս, թիւ 46, էջ 27:

Ստամբուլի «Ս. Փրկիչ» ազգային հիւանդանոցի նոյնանուն պաշտօնաթերթի վերոյիշեալ երկու համարներում, նուիրատուութիւնների սիւնակում, ի շարս այլոց գրուած է «ՄԱՐՏԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԸՆԴՈՒՆՈՒԱԾ ՆՈՒԷՐՆԵՐ- Կեսարիայից Տէր Հայկազունի ծեռամբ 98 կիլօ ծաւար», «ԱՊՐԻԼԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԸՆԴՈՒՆՈՒԱԾ ՆՈՒԷՐՆԵՐ- Կեսարիայի քինյ. ծեռամբ Փիլիպոս Արզումանեանից 80 կիլօ ծաւար, 100-ական լիրա նուիրել են տկն. Երանուհի խաչատուրեանը, Կոմաշապուհ Ֆրանկիլը եւ տկն. Ատրինէ Ֆրանկիլը, դոկտ Ա. Լոթիկեանի ծեռամբ՝ Զատկի առաւօտեան Անկարայի մէջ հաւաքուած պնակի հասոյթը»:

¹⁸¹ Ալիք, 1952, սեպտեմբերի 11:

¹⁸² Նոյն տեղում:

¹⁸³ Ալիք, 1952, փետրուարի 18:

Կեսարիայի եկեղեցին, որ մինչ այդ իշխանութիւնների միջոցով առգրաւուել եւ օգտագործուում էր որպէս մթերանոց, գլխաւորաբար Տէր Հայկազունի ջանքերի շնորհիւ վերադարձուել էր հայութեանը եւ անցել բնականօրէն աշխատանքի¹⁸⁴:

Կեսարիայի հայութեան սոցիալական կեանքում «դեմոկրատական» իշխանութիւնների օրօք ուրուագծելի են որոշ տեղաշարժեր: Վերոնշեալ լիբանանահայի ուղեգրութիւնից պարզուում է, որ Կեսարիայի հայերի մի մասն այս ժամանակահատուածում զբաղուել է երկրագործութեամբ: Ինոնիւի իշխանութիւնները մասնաւոր որոշմամբ արգելել էին հայերին առեւտրով զբաղուել: «Դեմոկրատ» Մենդերէսի իշխանութիւնը վերացրել էր այդ արգելքը, եւ Կեսարիայի հայերն արդէն զբաղուում էին նաեւ վաճառականութեամբ: «Առհասարակ ինքնապահ, աշխատասէր եւ հաւատարիմ քաղաքացիներ են,- գրում է ուղեգրութիւնում,- եւ միեւնոյն ատեն շատ լաւ հայեր են»¹⁸⁵:

Մի հետաքրքրական փաստի լոյսի տակ եւս հաստատուում է, որ Կեսարիայում 1950-ականներին շարունակուել է թեմական դրուածքն ու համայնքային կեանքը՝ իր առաջնորդական պաշտօնով. «Սուրբ Փրկիչ» ազգային հիւանդանոցի արտաքին բաժնի օգնական բժիշկ Վարուժան Բագինը, իր մասնագիտական մի գեկուցման մէջ, ի միջի այլոց գրում է. «Լ. Բ. անունով եօթ տարեկան մի աղջիկ, Կեսարիայից, տեղի առաջնորդի յանձնարարական նամակով, ազ-

¹⁸⁴ Ալիք, 1952, սեպտեմբերի 11:

¹⁸⁵ Նոյն տեղում:

գային հիւանդանոց էր ուղարկուել (ընդգծումը մերն է- Կ.Խ.)»¹⁸⁶:

Սեբաստիայի հայութեան վիճակը, ընդհանուր գծերով, նմանում էր Կեսարիային: 3,000 հայ բնակչութիւն ունեցող այս շրջանի գիւղերում դեռ 1952 թ. ապրել են հայ ընտանիքներ. Գաշիսարում՝ 10 տուն, Բրաբերդում՝ 5, Խորասանում՝ 4, Տուղասարում՝ մէկ տուն: Մուրադի գիւղում՝ Կովտունում, մնացած է եղել մէկ հայ ընտանիք, իսկ Դանիէլ Վարուժանի ծննդավայրում՝ Բրգնիքում, ընդամենը մէկ հայ ջաղացպան, որի օգնութեամբ էլ լիբանանահայ ուղեւորին յաջողուել է կէս գիշերին մի բուռ հող վերցնել Վարուժանի պապենական կիսաւեր տնից¹⁸⁷: «Մուլեռանդ թուրքեր են Բրգնիքի բնակիչները,- ասել է «թաքուն» հայ ջաղացպանը,- եւ Վարուժանի անունը լսել չեն ուզեր»¹⁸⁸:

Ազգային գիտակցութեան պահպանման առումով այստեղ կարելոր ենք համարում կանգ առնել Կովտունի միակ «թաքուն» հայ ընտանիքի պարագայի վրայ: Ըստ լիբանանահայ ուղեւորի՝ այնտեղ բնակուող բուն անունով Միքայէլը, որ կոչւում էր «քուրդ Ահմադ» եւ 30 տարուց ասել չէր հանդիպել ոչ մի հայի, ունէր հայ կին եւ երեք աղջիկ: Միքայէլը, թուրքերից ու քրդերից գաղտնի, գիշերները մի քանի հին դասագրքերով «գաղտնօրէն եւ կանոնաւոր կերպով» հայերէնի եւ հայոց պատմութեան դասեր է պարապել իր զաւակների հետ եւ խնամքով նրանց սովորեցրել մայրենի լեզուն: «Միքայէլի ամենամեծ մխիթարու-

¹⁸⁶ Ս. Փրկիչ, 1950, մայիս, ա տարի, թիւ 9, էջ 20:

¹⁸⁷ Ալիք, 1952, սեպտեմբերի 14-17:

¹⁸⁸ Նոյն տեղում:

թիւնն ալ այս պարագան է,- ասում է ուղեգրութիւնում,- ուրախ է, որ զաւակները հայ մնացած են»¹⁸⁹:

«Թաքուն» հայութեան նմանօրինակ տրամադրութիւններն էապէս ամրագրում են տեսաբան Լեւոն Մկրտչեանի՝ վերում նշուած տեսակէտը, ըստ որի՝ «...ամէն ինչ կորցնելուց եւ մերկանալուց յետոյ, մինչեւ վերջին շունչը փչելն իր հետ է ունենում բացառապէս «ազգային գիտակցութիւնը», նրանով պայքարում մահաբեր ալիքների դէմ...»: Իսկ եթէ այլեւայլ պատճառներով լեզուի ուսուցման պայմանը չի լրացուել նրանց մօտ, ապա ազգային գիտակցութիւնը պահպանուել եւ դրսեւորուել է այլ եղանակներով: Օրինակ՝ Կեսարիայի գիւղերում այլախօս «թաքուն» հայերի մասին այսպիսի բնորոշում կայ նոյն աղբիւրում. «Թէեւ թուրքախօս, սակայն հաւատացեալ է ժողովուրդը»¹⁹⁰:

Սեբաստիայի նահանգում գտնուող Կեմերեկ գիւղի մասին իր 1950-ականների յուշերում հետաքրքրական մի տեղեկութիւն է հաղորդում թուրքահայ գրող Յակոբ Արսլանեանը. «Երբ «վարպետ» (ուսթա) ըսուի, անպայման հայ կը հասկցուի,- գրում է նա,- որովհետեւ Անատոլուի գիւղերում մէջ հայերն են, որ կը զբաղին արհեստներով եւ վարպետ կը յորջորջուին»¹⁹¹:

Համբարձում Գասպարեանի «Չմշկածագ եւ իր գիւղերը» աշխատութեան մէջ ճշգրիտ տեղեկութիւն-

¹⁸⁹ Նոյն տեղում:

¹⁹⁰ Ալիք, 1952, սեպտեմբերի 11:

¹⁹¹ Տեմիրճեան Ս. Ծ., Սփիւռքահայ արդի գրականութիւն, հատոր Ա, Միջիգան, 1994, էջ 425:

ներ են հաղորդում 1950-ականների վերջերին Դերսիմի Չմշկածագ քաղաքի «թաքուն» հայութեան մասին. «1955 թիվն ետք տեղեկություն ստացանք,- գրում է Գասպարեանը,- որ թուրքերու հետ ամուսնացածներն զատ հոն եղել են բնիկ չմշկածագցիներ, Տոնիկեան Արշալոյս եւ Հայկանոյշ քոյրերը եւ անոնց եղբայրը՝ Տոնապետը»¹⁹²: Ըստ նրա՝ Տոնապետն ունեցել է տաս զաւակ, բնակուել է Վասկաւանում եւ զբաղուել հողագործութեամբ: «Արշալոյսն ալ հոն ամուսնացեր է Քեմախցի (Կամախցի) հայու մը հետ,- շարունակում է նա,- բայց կ'ապրի թուրք անունով...»¹⁹³: Այստեղ եւս, որպէս օրինաչափութիւն, ակներեւ են նախ՝ թուրքական անուան ներքոյ թաքնուելու, եւ ապա՝ միւս «թաքուն» հայերին ճանաչելու, նրանց հետ հաղորդ լինելու երեւոյթները «թաքուն» հայութեան մօտ:

Պատմական Կիլիկիայում (տարածք «գ») գտնուող Հաթայի երկու եկեղեցիների օծման մասին արդէն նշել ենք: Դրանցից Ալեքսանդրէթի եկեղեցու օծումը կատարուել է պատրիարքական փոխանորդ Տէր Արամ քահանայ Պասմաճեանի ձեռամբ 1952 թ. ապրիլի 26-ին¹⁹⁴: Այս երեւոյթը կարելի է բացառիկ հայանպաստ երեւոյթներից համարել խնդրոյ առարկայ հայութեան կեանքում:

Եկեղեցական սպասարկութիւնների իմաստով հոգեւոր կեանքը տարբեր է եղել Հարաւարեւմտեան Հայաստանում (տարածք «բ»): «Խարբերդի եւ Տիգ-

րանակերտի շրջաններում ապրող մեր փոքրաթիւ հայրենակիցները,- գրում է «Հայրենիք ամսագիրը», - երկար ժամանակ է, որ փափագում են մի հոգեւոր հովիւ ունենալ, սակայն պատրիարքարանն ընթացք չի տալիս դիմումներին»¹⁹⁵:

Այդուհանդերձ Տիգրանակերտն այս ժամանակահատուածում ունեցել է Ս. Կիրակոս եկեղեցու ընտրովի խորհուրդ¹⁹⁶:

Խարբերդի մօտակայքում գտնուող պատմական Դերիկում (Դիվրիկի), համաձայն 1955 թ. տուեալների, եղել է հինգ հայ ընտանիք¹⁹⁷:

Թերեւս նշուած պատճառներով Արեւմտեան Հայաստանի (տարածք «ա») մասին տեղեկութիւնները համեմատաբար աւելի պակաս են եւ կցկտուր: Գիտենք, որ 1950-ականներին թուրք-խորհրդային յարաբերութիւնների լարուածութեան պայմաններում տեղի է ունեցել արտահոսք, յատկապէս սահմանամերձ շրջաններից: Սոյն արտահոսքի լոյսի տակ տեղեկացւում ենք նաեւ Արեւմտեան Հայաստանում բնակուող հայութեան մասին. «Կարսի, Արդահանի եւ ընդհանրապէս սահմանամերձ շրջաններու թուրք բռնակցութիւնը,- գրում է ամերիկահայ ուղեւորը,- կը գաղթէ դէպի արեւմտեան, կեդրոնական Անատոլու, մօտալուտ պատերազմի վախէն մղուած, իսկ հայերը կը նախընտրեն Կ. Պոլիս կեդրոնանալ»¹⁹⁸:

¹⁹⁵ Հայրենիք ամսագիր, 1952, փետրուար, էջ 109:

¹⁹⁶ Ալիք, 1951, փետրուարի 1:

¹⁹⁷ Յակոբեան Թ. Խ., Պատմական Հայաստանի քաղաքները, Երեւան, 1987, էջ 240:

¹⁹⁸ Ալիք, 1952, օգոստոսի 14:

¹⁹² Գասպարեան Հ. Յ., Չմշկածագ եւ իր գիւղերը, «Պայքար» տպարան, 1969, էջ 458:

¹⁹³ Նոյն տեղում:

¹⁹⁴ Ալիք, 1952, մայիսի 21:

Պէտք է ասել, որ վերոյիշեալ արտահոսքից զատ, հիմնականում սոցիալական մղումներով, այս ժամանակահատուածում սկզբնաւորուել է «պաշտօնական» հայութեան գաղթը գիւղերից դէպի քաղաքներ: Ըստ Օշին Չիլինկիրի՝ «առաւելաբար փոքր քաղքեական նկարագիր պարզող»¹⁹⁹ հայութեան այս հատուածը, որ մայրենի լեզուի ուսումնառման հնարաւորութիւնից զուրկ էր, նախ գաղթում էր մեծ քաղաքներ, ապա աստիճանաբար կենտրոնանում էր Կ. Պոլսում:

Այս իմաստով կարելի է նշել Հարաւարեւմտեան Հայաստանում (տարածք «բ») գտնուող Արաբկիրի պարագան, որի մասին նշում է «Ազդակի» 1952 թ. համարներից մէկում. «Ներկայիս Արաբկիրի մէջ, գրում է 40 օր թուրքիայում օթեւանած մի բէյրութահայ, - 120 հայ ընտանիք կը գտնուի: Այս թիւը քանի մը տարի առաջ աւելի մեծ է եղած: Սակայն, հետըզհետէ մեր հայրենակիցները փոխադրուած են Պոլիս, Մալաթիա եւ այլ շրջաններ»²⁰⁰: Նոյն աղբիւրն ակնարկում է նաեւ Մալաթիայի 400 հայ ընտանիքների մասին՝ շեշտելով, որ «Ըստ որոշ տեղեկութիւնների՝ հեռաւոր գիւղերում եւս բազմաթիւ հայեր են գտնուում (ընդգծումը մերն է - Կ.Խ.)»²⁰¹:

Արդէն այս ժամանակահատուածում, բնական օրինաչափութեամբ, մէջտեղ է դրում «թաքուն» հայութեան երկրորդ սերնդի ազգային դիմագծի պահ-

¹⁹⁹ Գիշերը առաւօտը իր մէջ կը կրէ, Ստամբուլ, 2003, էջ 35

²⁰⁰ Ալիք, 1952, հոկտեմբերի 2:

²⁰¹ Նոյն տեղում:

պանման երկընտրանքը: Ո՞րոնք էին այդ երկընտրանքի բաղադրամասերը.

- Շարունակել մնալ «թաքուն»՝ պատմական յիշողութեան հիման վրայ կիրառելով համապատասխան պաշտպանութիւն: Ահմեդ անունով (բուն անունով՝ Անդրանիկ) մի հայ այսպէս է նկարագրում 1950-ականների Սեբաստիան. «Ամբողջ նահանգի 200 հազար հայութիւնից մնացել են ընդամենը 2,500-ից 3,000 հայեր... 1920 թ. Տիգրանակերտից քայլելով վերադարձայ Սվազ (Սեբաստիա), յոգնած, հալումաշ: Ծառայ մտայ պապիս գործակատար թուրքի մօտ... Ահա 30 տարուց ի վեր ծառայում եմ: Հիմա անունս Ահմեդ է, իմ կինը՝ Զարուհին՝ Էմինէ, զաւակս՝ Եղիշէն, Արիֆ է կոչւում: Մոռացել ենք մեր հին կրօնքը, ազգութիւնը, Վարուժանից սովորած հայերէնը... Տղաս երբ բարկանում է, հայերէն է նախատում...»²⁰²:

- Կամ «թաքուն»-ի կարգավիճակից վերակերպուել «պաշտօնական»-ի, ապա երկար սպասել ուժացման դառն ճակատագրին: Մի ուխտաւոր այսպէս է պատմում իր տեսած Սեբաստիայի մասին, ուր «այժմ 3,000 հայեր են ապրում, որոնք զարմանալի կերպով հայախօս են, բայց հայերէն գրել-կարդալ չգիտեն: Հազարաւոր հայեր դեռ մնացել են գաւառի գիւղերում, եւ դատապարտուած անշուշտ կորսուելու, եթէ մի նոր կեանք չսկսի նրանց համար»²⁰³:

Թւում է, թէ երրորդ անմիջական ճանապարհ, այսինքն՝ թուրքանալ կամ քրդանալ բացառուած է եղել: Իրականում թուրք ու քուրդ զանգուածներն էլ

²⁰² <http://usersfreenet.am/~sivas/Sepasdian1950in.htm>.

²⁰³ Հայրենիք ամսագիր, 1952, հոկտ., էջ 111:

հոգեբանօրէն պատրաստ չէին դրան: Նուբար Չաքմաքչեան անունով մի շիրնաքցի հայ, 1982 թ. Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան արտաքին գործերի նախարար Զոն Կիրակոսեանին ուղղած իր նամակում բնութագրելով հայութեան ծանր վիճակը Թուրքիայում, բացատրում է, թէ ինչպէս գաւառներում մնացող «թաքուն» հայութիւնը բառի բուն իմաստով ստրուկի կարգավիճակում էր: Կատարելապէս ստրկացած այդ հայերն աշխատում էին աղաների համար, պահանջուած ժամին փող էին հրամցնում եւ այլն: Այնուամենայնիւ, այդ «դժբախտութիւնն ունէր մի բարեբախտութիւն, որն էր՝ տեղային թուրք բնակչութիւնը հայերին անուանում էր ֆլայ կամ էրմենի: Տեղային հասարակութեան այս դիրքորոշումը մեր կիսահայ գոյատեւման գլխաւոր պատճառներից մէկն էր կազմում (ընդգծումը մերն է- Կ.Խ.)»²⁰⁴:

Մի հայ լրագրողը եւս 1958 թ. այսպէս է նկարագրում կացութիւնը. «Անոնք ճակատագրի անիծապարտութեամբ ենթակայ կը գտնուին առհաւօրէն թշնամի մշակոյթի անհաղորդ տիրակալներու հանապազօրեայ քամահրանքին: Անոնք մեծաւ մասամբ զուրկ են մայրենի եկեղեցու հոգեւոր մխիթարութենէ իսկ: Աւելորդ է խօսիլ մանուկ սերնդեան մայրական լեզուով ուսումի թէ դաստիարակութեան պայմաններու մասին... Օր կը լուսացնեն սրտերէ, մտքերէ հեռու, մոռացուած»²⁰⁵:

Այս ժամանակահատուածում յատկապէս նշելի

²⁰⁴ Ալիք, 1989, նոյեմբերի 19:

²⁰⁵ Ալիք, 1958, դեկտեմբերի 23:

են 1955 թ. սեպտեմբերի 6-7-ի հակայոյն եւ հակահայ բռնարարքները: Թէեւ հետագայում՝ յատկապէս գեներալ Գուրսէլի իշխանութեան օրօք, պետականօրէն ճիգ էր գործ դրում դէպքի ամբողջական պատասխանատուութիւնը Բայար-Մենդերէսի «դեմոկրատական» իշխանութիւններին վերագրելու ուղղութեամբ, այնուամենայնիւ այսօր մի շարք ապացոյցներից եւ կենդանի վկայութիւններից պարզւում է, որ բռնարարքների իսկական հեղինակը եղել է օրուայ պանթուրքիստական-յետադիմական ընդդիմութիւնը:

Այս իրադարձութիւնների մանրամասնութիւնները եւ պարզաբանումները թէեւ ուղղակի կերպով չեն առընչւում մեր նիւթին, սակայն դրանք արծարծում ենք՝ հիմնաւորելու համար սոյն ժամանակահատուածում իշխանութիւնների դէմ պանթուրքիստական-յետադիմական ընդդիմութեան վարած քաղաքականութիւնը, որի կարեւոր առանցքներից էր հանդիսանում հակայոյն եւ հակահայ բռնարարքների ճամբով ներքին ապակայունացման եւ արտաքին վարկաբեկման տեսարանների սարքումը:

Քաղաքական այս տխուր թատերգութիւնից անմասն չմնացին նաեւ հայերը: Թուրք-կիպրական ընդհարումների ժամանակ հրահրուած պանթուրքիստական-հակահայ քարոզչութեան հետեւանքով 1958 թ. Կեսարիայի Քէոհնէ գիւղում եօթ հայ ընտանիք ամբողջապէս բնաջնջուեց²⁰⁶: Մեր նորագոյն պատմագիտութեան մէջ թերեւս լիարժէքօրէն չարձանագրուած այս վանդալիզմի մասին կենդանի վկայութիւններից պարզւում է, որ դէպքի հեղինակները, որոնք Կեսար-

²⁰⁶ Նոյն տեղում:

իայի հայութեան յարուցած դատի հիմամբ ծերբակալուել եւ մեկուսացուել էին Անկարայում, բացառապէս են Քէօհնէ գիւղի մուխթարի (գիւղապետ) պատասխանատու դերը՝ եօթ անմեղ հայ ընտանիքի անդամների սպանութեան գործում: «Գիւղի մուլեռանդ տարրերը,- ասում է Կեսարիա մեկնած հայ շրջիկը,- դաշոյններով, բիրերով, սովաներով ջարդի մատնեցին հողի աշխատաւոր եօթ հայ ընտանիքներին»²⁰⁷: Ձեռագիրն, ըստ էութեան, պարզ է, որոշ եւ հայութեանը լաւապէս ծանօթ...

«Պայքարի» աշխատակից Ս. Գասպարեանը իր 1959 թ. հոկտեմբերի 27-ի եւ 28-ի համարներում հրապահատուած տուեալներով մեր հետազօտութեան առարկայ տարածքներում ապրող հայերի քանակական կազմի մասին հետեւեալ պատկերն է ներկայացնում²⁰⁸ (տես՝ Աղ. 5).

Տարածք	Քաղաք	Թուաքանակ
Արեւմտեան Հայաստան	Էրզրում	390
	Բիթլիս	390
	Գիւմուշխանէ	300
	Վան	68
	Տրապիզոն	50
Հարաւ-արեւմտեան Հայաստան	Խարբերդ	5860
	Տիգրանակերտ	5100
Պատմական Կիլիկիա	-	1080
	Սեբաստիա	9500
	Կեսարիա	3000

²⁰⁷ Նոյն տեղում:

²⁰⁸ Գասպարեան Ս., Սփիւռքահայ գաղթօջախներն այսօր, Երեւան, 1962, էջ 69:

Փոքր Հայք եւ յարակից շրջաններ	Անկարա	2000
	Գաստամոնու	2000
	Գոնիա	1000
	Սինոպ	1000
	Սամսուն	500
	Էրէլի	300
	Օրդու	250
	Քեօքաիա	120

Աղիւսակ 5

Ս. Գասպարեանի մեկնաբանութեան եւ այլ ապացոյցների հիման վրայ պէտք է ասել, որ նշուած թուերը դարձեալ առընչում են «պաշտօնական» հայութեանը (ներառեալ նաեւ Մարդինի կաթողիկէ եկեղեցու հետեւորդ հայութիւնը): Այս տուեալների լոյսի տակ կարելի է եզրակացնել, որ սոյն ժամանակահատուածում «պաշտօնական» հայութիւնը Արեւմտեան Հայաստանում (տարածք «ա») կազմել է ընդամենը 1,198, Հարաւարեւմտեան Հայաստանում (տարածք «բ»)՝ 10,960, Պատմական Կիլիկիայում (տարածք «գ»)՝ 1,080, Փոքր Հայքում եւ յարակից շրջաններում (տարածք «դ»)՝ 19,770 մարդ:

Մարդինի եւ Տիգրանակերտի հայ կաթողիկէ բնակչութեան վերաբերեալ տեղեկութիւնների հանդիպում ենք Ներսէս արք. Թայրոյեանի ուղեգրութեան մէջ, որը տպուել է Բէյրութի «Մասիս» շաբաթաթերթի 1952 թ. համարներից մէկում: Սրանից պարզում է, որ 1950-ականների սկզբում Մարդինում եղել է 80 եւ Տիգրանակերտում՝ 12 հայ կաթողիկէ ընտանիք²⁰⁹:

²⁰⁹ Ալիք, 1952, յունուարի 14:

1960 թ. Թուրքիայի պաշտոնական մարդահամարի համաձայն տուեալ ժամանակահատուածում Մարդինում ապրում էր 10,232, Գաստամոնիում՝ 1,204 եւ Սեբաստիայում՝ 565 հայ²¹⁰: 1960 թ. Թուրքիայի մարդահամարի ամբողջական տուեալները տալիս է Աբդուլլահ Եամանը՝ «Անատոլիա»-ի նահանգներում ապրող հայերի թուաքանակը ներկայացնելով 53,173²¹¹: Պոլսահայ աղբիւրները մօտաւոր կերպով հաստատում են սոյն տուեալը. Տիգրանակերտի, Կեսարիայի, Էւերեկ-Ֆենեսէի, Մալաթիայի եւ Ալեքսանդրէթի հայութեան թուաքանակը նշում են 40 հազար, իսկ Գաստամոնիի եւ Սեւ ծովի հայութեան թուաքանակը՝ 10-ից 15 հազար²¹² (ընդամենը՝ 50-ից 55 հազար):

Սոյն ժամանակահատուածի տուեալների անորոշութիւնը եւ դրանց միջեւ հակասութիւնն ակնյայտ է դառնում յատկապէս Հարաւարեւմտեան Հայաստանի պարագայում: Օրինակ՝ ըստ մէկ աղբիւրի՝ հայութեան կարելի էր կենտրոններից հանդիսացող Խարբերդը 1960 թ. ունեցել է միայն 1,000 հայ բնակիչ²¹³, սակայն «Պայքարի» տուեալներում շուրջ վեց հազար թիւն է բերում:

Հակասութիւնների մի մասը, անշուշտ, պէտք է վերագրել «պաշտոնական» եւ «թաքուն» հայութեան

²¹⁰ Դրօշակ, Աթենք, 1989, օգոստոսի 30, թիւ 1231, էջ 89:

²¹¹ Կիրակոսեան Ջ., Երիտթուրքերը պատմութեան դատաստանի առաջ, Երեւան, 1983, էջ 445:

²¹² Ալիք, 1959, սեպտեմբերի 6:

²¹³ Յակոբեան Թ. Խ., Պատմական Հայաստանի քաղաքները, Երեւան, 1987, էջ 135:

բնորոշման հարցին: Ահա այս նոյն տեսակէտն ունի «Դրօշակի» խմբագրապետ Նազարէթ Պերպերեանը: Նա իր «Հայասպանութիւնը տեղի չունեցաւ միայն 1915-1917 թուականներուն» յօդուածում, ի մի բերելով մի շարք հետազօտողների տուեալները, եզրակացնում է, որ 1960 թ. Թուրքիայի պաշտոնական մարդահամարում «դիտմամբ է անտեսուել ոչ-հայախօս հայերի համրանքը»²¹⁴:

Այս ժամանակահատուածում «պաշտոնական» եւ «թաքուն» հայութեան թուաքանակն առաւել իրատեսական կարելի է համարել 200,000 մարդ, որը եւ մատնանշում է մի շարք աղբիւրներում²¹⁵:

²¹⁴ Ազդակ շաբաթօրեակ, Բէյրութ, 1984, մայիսի 5, էջ 279:

²¹⁵ Ալիք, 1952, սեպտեմբերի 14:

Դ- 1960- 71 թթ. ժամանակահատուած

Այս շրջանը հանրապետական թուրքիայի պատմութեան մէջ կարելի է համարել զինուորական խումտայի բռնատիրութեան շրջան՝ զօրավար Գուրսէլի գլխաւորութեամբ: Մենդերէսի շրջանի համեմատական ազատ պայմաններին յաջորդող այս շրջանում հայութիւնն առաւել դանդաղ կշռոյթներով շարունակել է իր խիստ սահմանափակ կեանքը:

Թուրքահայ կեանքին քաջածանօթ Մինաս Թէոփօլեանը «Արեւմար մը՝ թուրքիոյ հայոց հանրային եւ մշակութային հորիզոններու վրայ» յօդուածում, բընութագրելով 1960 թ. յեղաշրջումից առաջ եւ յետոյ թուրքիայի իշխանութիւնների վարած քաղաքականութիւնն ու կեցուածքը հայութեան նկատմամբ, հիմնաւորում է, որ թէեւ հայամերժութիւնն առաջ էլ գոյութիւն է ունեցել, սակայն յեղաշրջումից սկսեալ «այդ բարդոյթը շատ աւելի խորացաւ»: «Մենդերէսեան իշխանութեան հաշուեյարդարից, ապա դեմիրէլեան կառավարութեան հարթումից եւ երեք պետական հարուածներից յետոյ (1960-1980 թթ.),- գրում է Մինաս Թէոփօլեանը,- օղակը տարուց տարի աւելի է սեղմըւում թուրքիայի հայկական մնացորդացի հանրային-մշակութային կեանքի բոլոր նահանգներում»²¹⁶:

²¹⁶ Դրօշակ, Աթենք, 1988, յուլիսի 6, էջ 11:

Այս հարցում նա, ի թիւս էական պատճառների, կարելորում է արտասահմանում մնացորդացի կազմակերպուելն ու ակտիւացող հայկական պահանջատիրական շարժումներին մասնակցելը: Այս հանգամանքն ընդգծում ենք երկու նկատառմամբ. նախ՝ հաստատելով խնդրոյ առարկայ հայութեան ազգային գիտակցութեան արտացոլումն անկաշկանդ պայմաններում, ապա՝ դրա նկատելի արտահոսքն այս ժամանակահատուածում:

Ազգային գիտակցութեան եւ ինքնագիտակցութեան առկայութեան մասին հետաքրքիր կարող է լինել «Հայրենիքի ծայնում» բերուած իրական կեանքի մի դրուագ, համաձայն որի՝ Եօզգաթում 1915 թ. ոչնչացուած մի հայ ընտանիքի գերդաստանից 12-ամեայ Կարապետ Մելիտոնեանը «գթասէր թուրքի շնորհիւ» փրկուել, որդեգրուել եւ վերանուանուել է Թոյ Ջելալ Մամեդօղլու: Հայ պատանին, ապրելով օտար յարկի տակ, մոռանալով իր մայրենի լեզուն, միմիայն յիշել է իր բուն անուն-ազգանունը եւ 50 տարի շարունակ երագել, որ մարդիկ նորից իրեն կոչեն բուն անունով: Այս ինքնագիտակցութեամբ նա ի վերջոյ բնակութիւն է հաստատել Ս. Հայաստանում եւ վերականգնել անունը...²¹⁷

Թուրքահայ կեանքի վերաբերեալ հետաքրքրական տեղեկութիւններ հաղորդող վաստակաշատ մտաւորական Հրանտ Սամուէլը 60-ականների մասին գրում է. «Ցիր ու ցան հայեր են ապրում մի շարք գլխաւոր քաղաքներում - Կեսարիա, Անկարա, Դիար-

²¹⁷ Ջանասէր, Բէյրութ, 1968, ապրիլի 15, էջ 172:

բեքիր, Խարբերդ, Սեբաստիա, Մալաթիա եւ այլն, մի մասն էլ գիւղերում»²¹⁸։

Այդ ժամանակահատուածում Ս. Խաչ դպրեւանքի աշակերտութեան ճնշող մեծամասնութիւնը բաղկացած է եղել գաւառներից բերուած սաներից²¹⁹։ Դպրեւանքը 1961-62 ուսումնական տարում ունեցել է 18 միջնակարգի շրջանաւարտ, որոնցից ընդամենը երեքն են եղել Կ. Պոլսից, իսկ 7-ը՝ Տիգրանակերտից, 2-ը՝ Կեսարիայից եւ մէկական՝ Գաստամոնիից, Սվազից, Մուշից, Թոքատից ու Զիլէից²²⁰։ Սրանից կարելի է պատկերացում կազմել այդ ժամանակահատուածի «պաշտօնական» հայութեան ցրուածութեան չափի մասին։

1961 թ. Կ. Պոլսի հայոց պատրիարք ընտրուեց Շնորհք եպիսկոպոս Գալուստեանը, որի 29-ամեայ պատրիարքութեան շրջանում թուրքահայ ազգային-հասարակական կեանքում տեղի ունեցան բաւական լուրջ ու բախտորոշ բարեփոխումներ։

Շնորհք պատրիարքը 1970 թ. սեպտեմբերի 15-ին Բուէնոս Այրեսում ասում էր. «Թուրքիայի ներքին գաւառներում բնակուող հայերի ընդհանուր թիւը շուրջ 25 հազար է։ Նրանք թէեւ հայերէն չեն խօսում եւ կրթական հաստատութիւն անգամ չունեն, սակայն իրենց հայ են զգում եւ հաւատարիմ են մնում իրենց կրօնին, անուանը եւ աւանդութիւններին... Դժուար պայմանների տակ են ապրում նրանք եւ եթէ անհրաժեշտ միջոցների չդիմուի, նոր սերնդին, որ բաւական

մեծ թիւ է կազմում, հայութեան համար խալառ կորսուած պէտք է նկատել (ընդգծումները մերն է - Կ.Խ.)»²²¹։

Շնորհք պատրիարքը, ինչպէս ասուեց, յստակ կերպով գանազանում էր Թուրքիայի հայութեան գանազան խմբերն ու տիպերը, հետեւաբար նա 25 հազար թուաքանակը գիտակցաբար է վերագրում կրօնին հաւատարիմ մնացած (մեր սահմանած՝ «պաշտօնական») խմբին։ Նման խմբաւորման գիտակցումը նոյնպէս կարելի է տեսնել «Յառաջ»-ի 19 յունւարի 1969 թ., համարում, ուր ասւում է. «Թուրքիայի ներքին գաւառներում ապրում են շուրջ քսան հազար հայեր... Նրանց վիճակը ողբալի է։ Սրանցից բացի՝ տակաւին կան թուրքացած հայեր, որոնց թիւը յայտնի չէ (ընդգծումը մերն է - Կ.Խ.)»²²²։

Ուժացման ողբալի վիճակը դարմանելու մտադրութեամբ Կ. Պոլսում կազմուել էր մի յանձնախումբ, որի պարտականութիւնն էր ընդհանրապէս զբաղուել ներքին գաւառների հայութեան հարցերով եւ մասնաւորաբար՝ նոր սերնդով²²³։

Յատկանշական է, որ պետական մարմիններն էլ, իրենց հերթին, «մտահոգուել» են այս նոյն հարցերով, ինչը ստիպել է նրանց 1962 թ. կեանքի կոչել «փոքրամասնութիւնների հարցերով զբաղուող» յատուկ ենթայանձնախումբ, որն ի վերջոյ լուծարուեց քառասուն տար անց՝ 2004 թ. փետրուարին։

²¹⁸ Ալիք, 1970, յունւարի 12։

²¹⁹ Ալիք, 1970, նոյեմբերի 10։

²²⁰ Ամենուն տարեգիրք, Բէյրութ, 1963, էջ 741։

²²¹ Ալիք, 1970, նոյեմբերի 10։

²²² Պատմա-բանասիրական հանդէս, Երեւան, 1969, թիւ 3, էջ 257։

²²³ Ալիք, 1970, նոյեմբերի 10։

1969 թ. կիսաթույլատրելի պայմաններում պատրիարքին յաջողուել է այցելել Կեսարիայի, Մալաթիայի, Տիգրանակերտի, Ալեքսանդրիթի (Իսկենդերուն) եւ Մուսա Լեռան հայաբնակ գիւղ՝ Վազըֆի համայնք: Այնուամենայնիւ պատրիարքը հնարաւորութիւն չի ունեցել այցելելու Կարինի (Երզրում), Սեբաստիայի, Խարբերդի, Մուշի եւ այլ վայրերում ապրող հայ բեկորներին²²⁴, որոնց թուաքանակն այդ ժամանակ, համաձայն որոշ տուեալների, հաշուում էր շուրջ 250 հազար²²⁵:

Սա հէնց այն ականարկուած արգելքներից, «կարմիր սահմաններից» է, որով ականյայտ է դառնում պետական զգայնութիւնը Արեւմտեան Հայաստանի եւ յարակից նահանգների նկատմամբ:

Սոյն ժամանակահատուածի գաւառահայութեան հասարակական կեանքի մասին կան հետաքրքրական վկայութիւններ: Օրինակ՝ Կ. Պոլսի պատրիարքարանից Տիգրանակերտ ուղարկուած Տ. Շաւարշ Պալըմեանը մամուլում եւ առանձին տեղեկագրերում

²²⁴ Բաֆֆի տարեգիրք, Թեհրան, 1970, Բ տարի, էջ 511:

²²⁵ Հայրենիք ամսագիր, 1961, ապրիլ, էջ 80:

«Հայրենիք ամսագրի» սոյն համարում կարդում ենք «Պոլսոյ «Մարմարա» թերթի աշխատակից Կ. Մուրադեանը, որ վերջերս շրջագայել է Անատոլիայի հայաբնակ վայրերը, մօտ 250,000 է հաշուում մեր հայրենակիցների թիւը՝ հիմնուելով մի շարք տրուեալների վրայ»: Յօդուածագիրը չի նշել այդ տուեալները, սակայն Թուրքիայի բազմաթիւ քաղաքների հայ բնակիչների մասին տալիս է հետաքրքրական տեղեկութիւններ «Ընդհանուր երեւոյթն այն է, որ մեր այդ ցրուած հայրենակիցները շատ քիչ տեղերում միայն եկեղեցի ունեն, իսկ ոչ մէկ տեղում հայկական դպրոց: Հետեւաբար, այսօրուայ կացութեամբ, նրանք դատապարտուած են կորցնելու իրենց լեզուն եւ ազգային գիտակցութիւնը»:

ներկայացնում է իր մանրամասն տպաւորութիւնները: Դրանցից մէկում մասնաւորաբար պատկերում է այն ազգային ոգին, որ նա նկատել է Տիգրանակերտում մնացած երկու հազար հայերի մօտ²²⁶: «Նրանք ընդհանրապէս պահել են իրենց հին, աւանդական սովորութիւնները, - նկարագրում է Շաւարշ Պալըմեանը, - օրինակ՝ նախ տղամարդիկ են ճաշում, ապա կանայք՝ գետնին լայն սփռոց փռելով»: Պալըմեանը, անդրադառնում է նաեւ նրանց տխուր ճակատագրին. «Ազգային մասնաւոր կրթութիւն ստանալու հնարաւորութիւնից զուրկ՝ այդ դժբախտները գիտակցում են միայն, որ հայ են, սակայն կարօտ՝ ազգային եւ կրօնական կեանքի»²²⁷:

Փաստօրէն սա վերապրածների երկրորդ սերնդի մէջ ազգային ինքնագիտակցութեան առկայութեան մասին լաւագոյն վկայութիւններից մէկն է: Սրանից թերեւս պարզուում է, որ ծուլման, ուժացման եւ այլասերման երեւոյթներն աւելի քիչ են կշռել, քան սոցիալական բարդութիւններն ու ֆիզիկական սպառնալիքները:

Շաւարշ քահանայ Պալըմեանը 1960-ականներին, «այցելու քահանայի» կարգավիճակով բազմաթիւ անգամներ եղել է գաւառահայութեան մէջ: Այդ առընչութեամբ նրա յուշերն ու տպաւորութիւնները՝ «Ու ես կ'երթամ», առանձին հատորով. լոյս են տեսել Պոլսում 2005 թ. ուր չափազանց հետաքրքիր դրուագներ կարելի է գտնել գաւառահայութեան կեանքի մասին:

²²⁶ Հայրենիք ամսագիր, 1963, ապրիլ, էջ 80:

²²⁷ Նոյն տեղում:

Այդ հատորից պարզում է, որ էրէյիւում 1963 թ. եղել է 10-15 տուն հայ ընտանիք²²⁸:

Նոյն աղբիւրի համաձայն՝ Ուրֆայում էլ նոյն թուականներին ապրել են հայեր, ընդ որում՝ նաեւ մի կոյր աշուղ²²⁹: Վերջինս յաւելեալ մի ապացոյց է Եաշար Քեմալի՝ նախորդ գլխում մէջբերուած այն արտայայտութեան, թէ «Անատոլիայի ժողովրդական բանաստեղծներից շատերը հայ են...»²³⁰:

Տիգրանակերտից ոչ հեռու գտնուող Դերիկում ընթացող կեանքը ներկայացնելով հանգիստ ու ազատ՝ հայ աւետարանական Շահէն Մակարեանն այդտեղ համախումբ ապրող 30 հայ ընտանիքների մասին գրելիս մատնանշում է մի կարեւոր հանգամանք. «Քաղաքապետը թուրքի հետ ամուսնացած մի հայ կնոջ զաւակ լինելով՝ հայերի հանդէպ շատ ազնիւ վերաբերմունք ունի: Այստեղ հայերը շատ հանգիստ եւ ազատ են ապրում: Քաղաքապետը գիւղի գեղեցիկ եւ ընդարձակ եկեղեցին յանձնել է հայերին: Քահանայ չունեն, բայց եկեղեցին միշտ պահում են մաքուր եւ լուսաւոր»²³¹:

Այս առիթով թերեւս աւելորդ չենք համարում յիշել Միքայէլ Վարանդեանի ֆրազը, համաձայն որի՝ աւելի բարձր, աւելի խորունկ եւ աւելի ընդարձակ ազգային գիտակցութեան հէնքի վրայ բնական փոխըմբռնման ոլորտ է գոյացել «պաշտօնական» եւ «թաքուն» հայութեան միջեւ: Իսլամացած հայի քա-

²²⁸ Պալըմեան Շ., Ու ես կ'երթամ, Ստամբուլ, 2005, էջ 15:

²²⁹ Նոյն տեղում, էջ 72:

²³⁰ Նոր Մարմարա, 1960, սեպտեմբերի 11:

²³¹ Բանբեր, Փարիզ, 1971, յունուար-փետր., թիւ 1-2, էջ 36:

ղաքապետ զաւակը, կրելով պետական պատասխանատուութիւն եւ գիտակցելով դրա քաղաքական հետեւանքները, իր ազգակիցներին եկեղեցի է տրամադրել:

«Նոր Մարմարա» օրաթերթի խմբագրապետ Ռոբեր Հատտէճեանին ուղղած նամակում Ալի Ռեզա Դեմիրոք անունով Թուրքիայի քաղաքացին 1960-ականների իր ծննդավայր Մալաթիայի Չավուշօղլու թաղամասն այսպէս է բնութագրում. «Մեր թաղամասի մասնայատկութիւնն այն էր, որ բնակչութեան 60 տոկոսը հայեր էին, իսկ մնացած 40 տոկոսը՝ մահմեդական հայրենակիցներ: Մեր տան երկու կողմերում հայեր էին բնակւում: Այս դրացիութեան պատճառով թաղամասի ժողովուրդն այնպէս միաձուլուել էր իրարու, որ կարծես դարձել էին միս ու եղունգ»²³²: Մալաթիան հայութեան կարեւոր քաղաքներից մէկն է, ուր Շահէն Մակարեանի վկայութեամբ ապրում էր սոցիալապէս լաւ վիճակում գտնուող «արհեստավորներից եւ առեւտրականներից բաղկացած»²³³ 120 հայ ընտանիք:

Բուէնոս Այրեսի «Ներկան» 1969 թ. աշնան համարում հակիրճ տեղեկութիւն է հաղորդում Տիգրանակերտի մօտակայքում գտնուող «զուտ հայաբնակ գիւղի» մասին: Տպագրուած լուսանկարի տակ կայ հետեւեալ մակագրութիւնը. «Տիգրանակերտի Սիլոք զուտ հայաբնակ գիւղի քրդախօս բնակիչներն իրենց քահանայով 1969-ի ամրան...»²³⁴: Լուսանկարում երեւում են շուրջ յիսուն գիւղացիներ (կին, տղամարդ,

²³² Նոր Մարմարա, 2004, յունուարի 27:

²³³ Բանբեր, 1970, ապրիլ, թիւ 4, էջ 79:

²³⁴ Ներկա, Բուէնոս Այրես, 1969, հոկտ.- դեկտ., թիւ 82-83:

պատանի եւ մանուկ)՝ տեղական տարազներով, իսկ կենտրոնում՝ մի հայ քահանայ: Արդեօք Սիլոբ կոչուած այդ գիւղը Շիրնակի հարաւում գտնուող Սիլոպի քաղաքն է, թէ՞ Տիգրանակերտ (Դիարբեքիր)- Շիւվան (բուն Տիգրանակերտ) ճանապարհի վրայ գտնուող ներկայիս Սուլուֆաղը: Դա հնարաւոր չեղաւ վերջնականապէս ճշտել:

Շահէն Մակարեանը հարուստ տեղեկութիւններ է տալիս նաեւ Փոքր Հայքի եւ յարակից շրջանների (տարածք «դ») «պաշտօնական» հայութեան եւ յատկապէս Սեբաստիայի մասին, ուր այդ ժամանակահատուածում ապրում էր մեծ մասամբ առետրով ու արհեստով զբաղուող 80 հայ ընտանիք: Նա Սեբաստիայի հայութեան մասին հաղորդում է նաեւ մի այլ կարեւոր տեղեկութիւն. «Անշուշտ, շրջակայքում եւ գիւղերում էլ հայեր գտնուում են...»²³⁵:

«Geographical Magazine» հանդէսի յօդուածագիրը Թուրքիայի հայութեան մասին 1969 թ. պատրաստած իր զեկուցման մէջ բացատրում է, որ գաւառներում բնակուող հայերը, անկախ իրենց ցանկութիւնից, ամբողջ Թուրքիայում ունեն միայն երեք եկեղեցի՝ Դիարբեքիրում, Կեսարիայում եւ Իսկենդերունում: «Օրինակ՝ Անկարայի 4,000 հայերը,- գրում է հանդէսի յօդուածագիր Ռոբերտ Մեյնկը,- ունենալով հանդերձ նիւթական բաւարար միջոցները, չեն կարողանում կառուցել իրենց եկեղեցին»²³⁶:

Փոքր Հայքի եւ յարակից շրջանների միւս քա-

²³⁵ Նոյն տեղում:

²³⁶ Geographical Magazine, London, 1969, March, p. 459.

ղաքների վերաբերեալ բուն շապինգարահիսարցի Շահնագար Քէոթահեանը 1969 թ. իր ուղեգրական յուշերում գրում է. «...Կանգ առանք Սու-Շեհիր (Էնդիրէս), հարցնելով այնտեղ գտանք 90 տարեկան դեռ կայտառ ու շարժում մի հայուհու, որ քահանայի հարս էր եղել եւ Եղեռնից յետոյ յաջողել էր մնալ այնտեղ: Նա էլ իր հերթին մեզ առաջնորդեց ուրիշ հայ ընտանիքի մօտ. բոլորն էլ հայերէն էին խօսում եւ մեզ ընդունեցին սիրալիր...»²³⁷:

Նկատելի է, որ Փոքր Հայքի եւ յարակից շրջանների հայութեան սոցիալական կեանքն այս ժամանակահատուածում տարբերուել է զուտ ֆէոդալական տնտեսակարգ ունեցող շրջաններից: Ըստ Պոլսի Գատըգիւղ թաղի քահանայ Տ. Մովսէսի՝ «Եօզգաթում գտնուում է 16 հայ ընտանիք: Սրանց մի մասը զբաղուած է երկաթագործութեամբ, մի քանիսը՝ դերձակութեամբ, իսկ մնացածներն էլ բանուորներ են»²³⁸: Ըստ այս վկայութեան՝ Փոքր Հայքում եւ յարակից շրջաններում չկան ճորտական աշխատանքի բացայայտ նշոյլներ, որոնք ակնյայտօրէն գոյութիւն են ունեցել Արեւմտեան եւ Հարաւարեւմտեան Հայաստանում:

Իսլամացած համշէնահայութեան այս ժամանակահատուածի թուաքանակի մասին հանդիպում ենք Սերօ Խանզադեանի աշխատութեան մէջ. «Այժմ, ոչ լրիւ տուեալներով,- ասում է նա,- Տրապիզոն-Գիւմուշխանէ-Բաբերդ-Սպեր-Համշէն ընդարձակ հատուածում երեք հարիւր հազար մահմեդական հայեր

²³⁷ Նաւասարդ ամսագիր, Լոս Անջելես, 1986, ապրիլ, թիւ 45, էջ 20:

²³⁸ Ալիք, 1962, հոկտեմբերի 14:

են ապրում: Միայն Սուրմենիէի փոքրիկ նահիէում (գաւառակ, վիճակ) հինգ հազար տուն մահմեդական հայեր կան, 30-ից 35 հազար մարդ: Մոռացուած հայութիւն...»²³⁹:

Լեւոն Խաչիկեանը «էջեր համշինահայ պատմութիւնից» արժէքաւոր աշխատութեան մէջ նշում է, որ երոպացի հայագէտ Չ. Ղումեզիլը 1962 թ. գրանցել էր համշէնի բարբառով երեք պատմութեան եւ ուսումնասիրել այդ բարբառը՝ հարցովործ անելով Իսմէթ Ակբիյիկ անունով համշէնցի մի ուսանողի: Այդ պատմութեանը «խօսուն փաստեր են այն իրողութեան, - գրում է Լ. Խաչիկեանը, - որ այսօր իսկ կենսունակ է համշէնահայ բարբառը շուրջ երկու դար առաջ հաւատափոխ եղած համշէնցիների նոր սերնդի շրթերին»²⁴⁰: Այս տեղեկութիւններն արժէքաւոր են նաեւ այն տեսակէտից, որ ընդհանրապէս այս ժամանակահատուածում համշէնցիների մասին տուեալները շատ սակաւ են:

Արեւմտեան Հայաստանի (տարածք «ա») կարելի է տրագոյն քաղաքներից Վանի մասին շատ քիչ վկայութիւններ կան: Վանի վերաբերեալ մի յատկանշական վկայութեան ենք հանդիպում «Վարագի» 1964 թ. համարներից մէկում, ուր մէջբերումներ են կատարուել լիբանանահայ Առաքել Միքայէլեանի՝ «Նախիրիում» տպագրուած ուղեգրութիւնից: Միքայէլեանը երկար փնտրելուց յետոյ յաջողել է մի հայ խանութպանի գտնել Վանում, 1960-ականների սկզբին: Հա-

²³⁹ Խանգաղեան Ս., Չայն Համշէնական, Երեւան, 1971, էջ 11:

²⁴⁰ Բանբեր Երեւանի համալսարանի, 1969, թիւ 2, էջ 139:

յախօս խանութպանը «գոցեց փեղկերը եւ տարաւ տուն, - գրում է նա, - ուր շուտով հաւաքուեցան քանի մը տասնեակ ուրիշ հայեր ալ: Կիները չէին երեւար, ամօթխած՝ իրենց ձերմակ քողերուն ետեւ, եւ դուրսը, պատուհանէն կը դիտէին: Բայց երբ սկսանք տաք տաք խօսիլ, համարձակութիւն առին եւ կամաց-կամաց ներս եկան: Բոլորն ալ հայերէն գիտէին, բացի նոր երիտասարդներէն: 82 հայ ընտանիքներ կ'ապրին Վանին մէջ - զարմանալի առողջ, կայտառ, կարմիր երեսներով... Հայերը հանգիստ են եւ քողերէն շատ սիրուած (ընդգծումը մերն է, - Կ.Խ.)»²⁴¹:

Էրզրումի հայութեան մասին եւս շատ չեն ստոյգ տեղեկութիւնները: Վարդգէս Պետրոսեանի ուղեգրութիւններից մէկում, որը կոչւում է «Կարսից մինչեւ Տրոյայի աւերակները (Թուրքիա, 1965, սեպտեմբեր...)», ասւում է, որ «Էրզրումում 100-120 հայ ընտանիք է ապրում»²⁴²: Նոյն ուղեգրութիւնից պարզւում է, որ այդ ժամանակ Իզդիրում ապրել են չորս եւ Կարսում տասնչորս հայ ընտանիքներ²⁴³: Նկատի առնելով, որ Պետրոսեանի հաղորդած տեղեկութիւնները հիմնուած են տեղացիների վկայութիւնների վրայ («Եկամուտներ ունեցող» մի թուրք, «հիւրանոցի տէր» մի այլ թուրք եւ այլն)՝ ենթադրելի է, որ մէջբերուած թուերն աւելցւում են «պաշտօնական» հայութեանը: Քանզի ենթակայական տարաբնոյթ պատճառներով թուրք շարքային քաղաքացիների մօտ գո-

²⁴¹ Վարագ, Լուս Անջելես, 1964, ապրիլ, թիւ 45, էջ 51:

²⁴² Պետրոսեան Վ., Հաւասարում բազմաթիւ անյայտներով, Երեւան, 1977, էջ 169:

²⁴³ Նոյն տեղում, էջ 186-187:

յութիւն չունի քրիստոնեայ հայից բացի հայի այլ տեսակի ընկալում²⁴⁴:

Արեւմտեան Հայաստանի այլ քաղաքներում բռնակոտոր հայութեան, առաւելաբար Սասուն-Մուշ-Վարդոյի շրջանների մասին եւս կան որոշ վկայութիւններ: Հայ աւետարանական հոգեւոր հայր Հրանտ Կիւզէլեանն իր 1969 թ. ուղեգրութեան մէջ առանձին գլուխ է յատկացրել Վարդօ աշիրէթին, ուր մանրամասնութիւններով ներկայացնում է այդ շրջանի հայութեան համայնքային-սոցիալական իրավիճակը²⁴⁵:

Առարկայական ծանր ու դաժան պայմաններում ազգային ինքնագիտակցութեան պահպանման իրողութիւնը նկատելի է նաեւ այստեղ, ուր, ըստ Շահէն Մակարեանի, ապրում են «բոլորովին աննպաստ պայմանների տակ, շրջապատուած մոլեռանդ իսլամ քուրդ գիւղերով, դեռ իրենց հայութիւնն ու հաւատքը պահող» հայեր²⁴⁶:

Արեւմտեան Հայաստանում «թաքուն» հայերի կամ էլ, այսպէս կոչուած, «քղաքած» հայերի մասին անմիջական տեղեկութիւններ կարելի է գտնել Վ. Յոխիկեանի յօդուածաշարում՝ տպագրուած «Հայրենիք ամսագրի» 1964 թ. համարներում: Նա, ուսումնասիրելով քղական մանր ու խոշոր ցեղախմբերը, պարզում է, որ ամռանը Վանայ լեռներ բարձրացող Թաեան աշիրէթը հիմնականում հայերից եւ քրդերից

²⁴⁴ Սա օրինաչափ երեւոյթ կարելի է համարել յատկապէս իսլամական երկրներում, ուր հանրութեան մօտ նոյնիմաստ են նկատւում «հայ» եւ «քրիստոնեայ» հասկացութիւնները:

²⁴⁵ Բանբեր, 1969, նոյեմ.-դեկտ., թիւ 11-12, էջ 244-246:

²⁴⁶ Բանբեր, 1971, յուն.-փետ., թիւ 1-2, էջ 35:

է բաղկացած եղել: Կամ՝ հայկական ամենամեծ աշիրէթ Խալտան՝ իր երեք գլխաւոր ստորաբաժանումներով, այսինքն՝ Մամըկանցի (կէսով հայ), Փէնճարցի (փոքրամասնութեամբ հայ) եւ Պամերացի (կէսով հայ) բնակւում է Բաթման նահանգում (որի կազմում է նաեւ Սասունը): Իսկ Բեշիր քաղաքում բնակւում են Սէնեքա եւ Ռիճեպան աշիրէթները, «որոնց 25 գիւղերը հայեր են»²⁴⁷:

Ասենք նաեւ, որ 1966 թ. Մուշ նահանգի Վարդօ քաղաքում (տարբերել Վարդօ աշիրէթ գիւղից) պատահած երկրաշարժից մեծապէս տուժել են տեղի հայերը: Լուսանկարիչ Հերի Գունտաքճեանը հասել է Վարդօ աղէտից ընդամենը մի քանի ժամ յետոյ եւ տեսել «աւերակների տակ ճչացող» հայ մանուկներին: Մի քանի օր անց նա տեղեկացուել է, որ երկրաշարժից յետոյ բարեբախտաբար «նկատառելի թուով քրդացած հայեր տակաւին ողջ են մնացել Վարդոյում»²⁴⁸:

Հերի Գունտաքճեանը նաեւ վկայում է, որ Պոլսի պատրիարքարանի հրապարակած անուանացանկի համաձայն՝ 1966 թ. Վարդոյում պատահած աղէտին զոհ է գնացել չորս հայ ընտանիք (թուով՝ 14 մարդ)²⁴⁹:

Տուեալ երկրաշարժը, մարդկային ցաւալի վնասներ պատճառելով հանդերձ, կարեւոր նշանակութիւն ունեցաւ «թաքուն» հայութեան մի մասի յայտնաբերման գործում: «Երկրաշարժն անակնկալ յայտնութիւն

²⁴⁷ Հայրենիք ամսագիր, 1964, մայիս, էջ 59:

²⁴⁸ Գարագաշեան Վ., Fifty years behind a lens, Հայրենիք Վիքի, Բոստոն, 2001, ապրիլ:

²⁴⁹ Բազին, 1968, յուլիս:

եղաւ, որի «շնորհիւ» ի յայտ եկան ինչպէս Վարդոյի շրջանում, այնպէս էլ Սասունի լեռներում գոյութիւնը պահող, «քրդացած (միայն լեզուով), քրիստոնեայ մնացած ամբողջական հայ գիւղեր»²⁵⁰: «Միայն լեզուով քրդացած» շեշտադրմամբ այստեղ էլ, փաստօրէն, ակնարկւում է «թաքուն» հայութեան երեւոյթը:

Այսպիսով վերը նշուած վկայութիւններում «քրդացած»-ը թերեւս հոմանիշ պէտք է համարել դոկտ. Աշոտ Մելքոնեանի մատնանշած «թուրքացած» կամ «տաճկացած» բառերին, որը, ըստ էութեան, ծուլութեան իմաստից առաւել իր մէջ պարունակում է թաքնուածութեան հասկացութիւնը:

Տրամաբանութիւնը հետեւեալն է. էթնիկական ծուլման եւ ուժացման պայմաններում կատարեալ մետամորֆոզացած տարրի յայտնաբերումն ու զանազանումը միւսներից, ըստ էութեան, անկարելի է: Նոյնիսկ մարդաբանական եւ ֆիզիոլոգիական տըւեալները բաւարար չափորոշիչներ չեն՝ յատկապէս արագ եւ անմիջական յայտնաբերման համար:

Հետեւաբար եթէ ուղեւորներն ի վիճակի են ոչ մասնագիտական, պարզ որոնումներով գտնել «թուրքացած» կամ «քրդացած» հային ու զանազանել նրան թուրքից կամ քրդից, դա նշանակում է, որ տըւեալ հայն էթնիկապէս տակաւին չծուլուած, բայց եւ թուրքախօս, քրդախօս կամ կրօնափոխ հայ է՝ «թաքուն», «գաղտնի», «ծպտեալ» հայ, «hidden» կամ «crypto» armenian:

«Թաքուն» հայութեան համատեքստում Սասունը

²⁵⁰ Սէլլան, Սասուն, Երեւան, 1990, էջ 10:

հանդիսանում է ամենախորհրդաւոր եւ հետաքրքիր աւանդ: Շաւարշ քահանայ Պալըմեանի վկայութեամբ «Այսօր Սասնոյ լեռներում հարիւր տուն հայութիւն կայ, իւրաքանչիւր տուն 15-30 անդամ ունի, որոնք հարսներով ու թոռներով ապրում են իրենց սեփական կալուածների մէջ»²⁵¹: Նման մի թիւ քիչ թէ շատ հաստատում է նաեւ Շահէն Մակարեանը. «Սասնոյ մէջ ներկայում հազարից աւելի հայեր կան»²⁵²:

Նկատելի է ազգային ինքնագիտակցութեան ու հաւաքական կեանքի գիտակցութեան առկայութեան փաստը Արեւմտեան Հայաստանի (տարածք «ա») «թաքուն» հայութեան մէջ. «Գաւառի մէջ կան այնպիսի հայեր, որոնք իրենց անձնական շահերն անտեսում եւ հանգիստը զոհում են յանուն եկեղեցու եւ համայնքի...», - կարդում ենք Շաւարշ քահանայ Պալըմեանի տպաւորութիւնների մէջ²⁵³:

Բնորոշելով Արեւմտեան Հայաստանի ֆէոդալական իրավիճակը եւ այն, որ «Գաւառի կենցաղն ու ապրելակերպը նախնական են»՝ Շաւարշ քահանայ Պալըմեանը նշում է մի կարեւոր երեւոյթ, որ յատուկ է հայի ազգային տիպիկ նկարագրին. «Այսօր գաւառում աղքատներ ունենք, սակայն մուրացկաններ չունենք»²⁵⁴:

Գաւառահայութեան առօրեայի մասին ուշագրաւ են նաեւ Շահէն Մակարեանի վկայութիւնները: Նա, անդրադառնալով սասունցիների հաւաքական գի-

²⁵¹ Ալիք, 1963, մարտի 31:

²⁵² Բանբեր, 1970, յունուար-փետր., թիւ 1-2, էջ 29:

²⁵³ Ալիք, 1963, մարտի 31:

²⁵⁴ Նոյն տեղում:

տակցութեանն ու կեցուածքին, գրում է նրանց հետ պատահած մի միջադէպի մասին, որն աւելորդ չենք համարում մէջ բերել. «Երկու տարի առաջ մեզ հետ վէճի բռնուած դրացի քրդերը մեզնից մի տարեց սպանեցին: Ու սկսեցին մեզ անիրաւել ու կողոպտել: Բողոքեցինք: Ոճրագործն անմիջապէս բանտարկուեց, բայց յետոյ ազատ արձակուեց եւ սկսեց աւելի չարանալ ու ազատ-համարձակ մեզ անտանելի վընասներ հասցնել... Տիգրանակերտ բողոքեցինք: Այս անգամ կառավարութիւնը խուլ դարձաւ եւ չուզեց միջամտել»²⁵⁵:

Հրանտ Սամուէլը, ակնարկելով, որ գաւառներում «հազարաւոր թուրքախօս հայ երիտասարդութիւն» կայ, վերլուծում է նրա ծուլման դէմ պայքարող պոլսահայ հայրենասէր մտաւորականութեան, հոգեւորականութեան եւ գործիչների գործունէութիւնը եւ եզրակացնում, որ հէնց այդ ծուլման մտահոգութեամբ են գործել ու աշխատել նրանք «աւելի քան կէս դարից ի վեր»²⁵⁶:

Հրանտ Սամուէլը շօշափում է եւս մի հարց, որը մեր կարծիքով այս խնդրի առումով բնորոշիչ է Թուրքիայի պետական քաղաքականութեան գնահատման մէջ: Նա, վկայակոչելով Շնորհք արք. Գալուստեանին եւ ժողովրդավար կուսակցութեան հեղինակաւոր դէմքերից, խորհրդարանի պատգամաւոր Մկրտիչ Շելեֆեանին, պարզում է, թէ ինչպէս Թուրքիայի օրուայ իշխանութիւնները, «շնորհակալ լինելու

փոխարէն», յաճախ անյաղթահարելի դժուարութիւններ են յարուցել «Անատոլիա»-ի հայ մանուկներին Կ. Պոլիս փոխադրելու գործում²⁵⁷:

Այս վկայութիւնը մէկ կողմից հաստատում է «կարմիր սահմանների» գոյութեան փաստը (որն արդէն քննարկել ենք), իսկ մի այլ մեկնաբանութեամբ բնորոշում է պետական յստակ քաղաքականութիւնը՝ գաւառահայութեանն առաւել մեկուսացնելու եւ մայր օրգանիզմից հեռու պահելու ուղղութեամբ:

Այս ժամանակահատուածում գաւառահայութեան համընդհանուր թուաքանակի մասին եւս ստոյգ տեղեկութիւններ գոյութիւն չունեն: Ծատուր Աղայեանի 1969 թ. հրատարակուած մենագրութիւնում, որն իր ժամանակին ներկայացնում էր ճանաչողական արժէք, կարդում ենք. «Թուրքիայի գաւառներում եւս, ոչ լրիւ տուեալներով, մօտ 500 հազար հայեր կան, որոնք սակայն բաւականին ծանր պայմանների մէջ են գտնուում: Նրանց մեծ մասը թուրքախօս է եւ աչքի չընկնելու, աշխատանք ձարելու եւ հալածանքից խուսափելու համար իրեն թուրք է ծեւազնում (ընդգծումները մերն են,- Կ.Ն.)»²⁵⁸: Աղայեանի տեղեկատրութեան մէջ ընդգծելի են մի քանի նկատառումներ. նախ այն, որ այս ժամանակահատուածում եւս բացակայում են ամբողջական տուեալները թուաքանակի ճշտորոշման հետ կապուած: Միւսը. նկատի առնելով թուրքալեզութեան եւ թուրք ծեւանալու մասին շեշտադրումը, թւում է, որ Աղայեանի նշած թուաքանակը, գերազանցապէս, առընչում է «թաքուն»

²⁵⁵ Բանբեր, 1970, յունուար-փետր., թիւ 1-2, էջ 30:

²⁵⁶ Ալիք, 1969, դեկտեմբերի 29:

²⁵⁷ Նոյն տեղում:

²⁵⁸ Աղայեան Ծ. Պ., Հայերը Թուրքիայում, Երեւան, 1994, էջ 17:

հայության: Այնուհետեւ Աղայեանն ակնարկում է «հարիւրաւոր» գաւառահայերի (ի դէմս հազարաւորների) գաղթը Ստամբուլ²⁵⁹:

Համաշխարհային պատմութեան մէջ 1960-ականներն առանձնանում են որպէս երիտասարդութեան եւ ուսանողութեան քաղաքական դերակատարութեան ժամանակաշրջան: Այդ ժամանակաշրջանում մենդերէսեան համեմատական ժողովրդավարութիւնը համտեսած եւ զինուորական բռնապետութեան ենթարկուած Թուրքիայի քաղաքան-հասարակական կեանքը տրամաբանօրէն չէր կարող յղի չլինել այլեւայլ շարժումներով ու հոսանքներով:

«Ժողովրդավար կուսակցութեան» բիրտ տապալման եւ ինքնուրոյն ու իրական սոցիալիզմոկրատիայի բացակայութեան պայմաններում, կոմունիզմը, ապա ծայրայեղ ծախս հոսանքն էր սկսել լայնօրէն հմայել ու իր շարքերը ներգրաւել Թուրքիայի երիտասարդութեանը, որից, անշուշտ, չէր կարող անմասն մնալ թուրքահայութիւնը յատկապէս աւատապետական, յետամնաց ու խաւարամիտ «Անատոլիա»-ում:

Մի «թաքուն» հայ, իր դաժան մանկութեան ու երիտասարդութեան տառապանքները, ընտանիքի տեղափոխութիւններն ու «ծախ» հոսանքներում իր ներգրաւուելու պատմութիւնը ներկայացնելով, «Հոգիս քեզմով կը խայտայ» գրքի հեղինակ եւ Թուրքիայի առաջադիմական գրող Քեմալ Եալչինին ասում է. «Մօրս երգերն ընդհանրապէս թախծոտ էին: Իմ երգերը չէր հաւանում: Մայրս երիտասարդ տարիքում

դաշնակցական է եղել: Քաղաքական տեսակէտից էլ ինձ երբեք չէր հաւանում: Ինքը, փեսաները, մեծ մօրաքրոջս ամուսինը՝ բոլորն էլ Դաշնակցութիւն կուսակցութիւնից էին եղել: Որպէս ընտանիք՝ մենք այդ արտի մէջ ենք բուսել: Մօրս դիմադրելու ուժը, կամքը քարի պէս տոկուն էր: Իր հաւատը, յոյսը երբեք չկորցրեց: Իր լաւատեսութիւնը, մարդասիրութիւնը, ընդդիմութեան ջիղը գալիս էր երիտասարդութեան ընթացքում իր կուսակցական լինելուց: Իմ անհատականութեան եւ յատկապէս քաղաքական տեսակէտներիս հասունացման մէջ մօրս ազդեցութիւնը մեծ է եղել...»²⁶⁰:

Կոտորածները, պարբերական բռնագաղթերը եւ էթնոկրօնական ինքնութիւնից հրաժարուելու անմարդկային հարկադրանքը «թաքուն» հայերի մէջ ստեղծել էին քաղաքական իւրայատուկ տրամադրուածութիւն, եւ երբ պայմանները թոյլ էին տալիս, նրանք անհատաբար դրսեւորում էին քաղաքական սուր դիրքորոշում եւ հակապետական կեցուածք:

Մինչեւ 1960-ականները Թուրքիայի Կոմունիստական կուսակցութիւնը՝ իր «ինտերնացիոնալիստական» կարգախօսներով, հանդիսանում էր այն կազմակերպուած կառոյցը, որի մէջ համախմբւում էին ռեժիմին հակառակ ուժերն ու զանազան էթնոկրօնական խմբերի ներկայացուցիչները: Այդ թուականներից յետոյ կուսակցութեան գաղափարախօսական լծացումը, ներքին ճիւղաւորումներն, անջատողականութիւնն ու իշխանատենչ ձգտումներն աստիճանաբար

²⁵⁹ Նոյն տեղում:

²⁶⁰ Եալչին Բ., Հոգիս քեզմով կը խայտայ, թարգմանեց Գարեգին արք Պեքճեանը, Երեւան, 2003, էջ 306-307:

զցեցին նրա երբեմնի հեղինակությունը եւ թուլացրեցին կազմակերպական կորովը, որի հետեւանքով հակառեժիմ շարժման գլուխ անցան փոքր կառույցներով եւ ահաբեկչական խմորումներով ծախ-ծայրայեղական իրերամերժ խմբեր եւ խմբակցություններ:

Սոյն Կոմունիստական կազմակերպությունների ներքին փոխյարաբերությունների ոլորտում եւս, հակառակ կոմունիզմի դասականացած միջազգայնական քարոզչության, գնալով ակնյայտ էին դառնում էթնիկական խտրականության եւ այլամերժության երեւոյթներ: Այս իմաստով կարելի էր ենք համարում մէջ բերել ժալէ անունով մի ծախակողմեան թրքուի տեսակետները, որն իր երիտասարդ հասակում սիրահարուած է եղել մի կեսարացի «թաքուն» հայի՝ Ջաքարիա անունով: Նա Քեմալ Եալչինին պատմում է, թէ ինչպէս «միութեան պատասխանատու տիկինն» ուղղակի եւ անուղղակի բոլոր միջոցներով արգելքներ է ստեղծել իր եւ Ջաքարիայի յարաբերության հարցում. «Նման վիճաբանություններ եւ խօսակցություններ ունէինք բազմաթիւ ընկերների հետ,- պատմում է ժալէն,- ոմանք իրենց յանցաւոր էին զգում, որ չէին կարողացել ինձ համար մի թուրք ընկեր գտնել: Գլխից զարնուածի պէս էի դարձել: Սա ի՞նչ ծախակողմեանականութիւն էր: Մէկ կողմից՝ «Մարդիկ հաւասար են», «Բանւորնե՛ր բոլոր երկրների, միացէ՛ք» էին գոռում, երգեր էին երգում, միւս կողմից՝ «Ջաքարիան հայ է, չես կարող իր հետ ամուսնանալ» էին ասում...»²⁶¹:

²⁶¹ Նոյն տեղում, էջ 251:

Ազգամիջեան անվստահութեան, գաղափարախօսական ամբոխավարութեան եւ կեղծաւորութեան նման պայմաններում «թաքուն» հայութիւնն իր հակապետական դիրքն ու տեղն այլեւս չէր կարողանում որոնել թուրքական ծախակողմեան հոսանքներում: Այդպիսով՝ յաջորդող տասնամեակներում նրա քաղաքական ձգտումներն ընթացել են ամենատարբեր ուղիներով:

Ե- 1971- 80 թթ. ժամանակահատուած

Այս ժամանակահատուածը յատկանշուում է «Գորշ գայլերի» հակահայ գործունէութեամբ: Բուն անունով «Ազգայնական շարժում» (MHP) ծայրայեղ աջ, ցեղապաշտական այս կուսակցութիւնը գնդապետ Ալփարսլան Թուրքէշի գլխաւորութեամբ 1969 թուականից հանդիսացել է պանթուրանիզմի ամենահուժկու բազուկը՝ Թուրքիայի ներքին եւ արտաքին քաղաքականութեան դաշտերն ամէն կարգի ընդդիմութիւնից ու հակառակորդից մաքրելու գործում: Ստեփան Պօղոսեանը, վերլուծելով 1970-ականներին Գորշ գայլերի քաղաքական դերակատարութեան ու աշխուժացման պատճառները, նշում է, որ 1971 թ. մարտի 14-ի «յուշագրային» յեղաշրջումից յետոյ, նրանց կազմակերպութիւնը ղեկավար ուժ դարձաւ, ինչպէս գործադիր որոշ ոլորտներում, այնպէս էլ շատ դժարոցներում եւ բուհերում²⁶²:

Կիսազինուորական այս կառոյցի «էսկադրոններն» այդ ժամանակահատուածում բուռն գործունէութիւն ծաւալեցին ինչպէս թուրք եւ քուրդ այլախոհ տարրերի, այնպէս էլ երկրի եւ արտասահմանի հայութեան դէմ: Նշենք, որ միայն 1977-80 թթ. թուով

երեք ռմբային յարձակումներ են իրագործուել Կ. Պոլսոյ պատրիարքարանի դէմ²⁶³:

Թերեւս թուրքական պատկանելութեան TIS (Turk - Islam - Sunni) բանաձեւի յորինումն ու տարածումը կարելի է այս շրջանի արդիւնքը համարել:

Յատկապէս հայ ազատագրական շարժման նոր զինեալ պայքարի ժամանակաշրջանում «Գորշ գայլերի» կիրառած թուրքացման քարոզարշաւների սպառնալիքի ներքոյ թուրքահայութիւնը ստիպուած ինքն իրեն ներկայացնում էր որպէս քրիստոնէայ թուրք՝ հայկական ծագումն ու պատկանելութիւնը քաղաքական յանցանք նկատելով:

Այս կապակցութեամբ էական մատնանշում կայ պատմաբան Ջոն Կիրակոսեանի «Երիտթուրքերը պատմութեան դատաստանի առաջ» արժէքաւոր աշխատութեան մէջ, ուր մէջ է բերուում թուրք պրոֆ. Նեժմադի պնդումը, թէ «Հայերն առհասարակ իրենց քրիստոնէայ թուրքեր են նկատում»²⁶⁴: Պատմագիտական եւ էթնոլոգիական տրամաբանութիւնից հեռու նման անհեթեթութիւններով էր հիմնաւորուում սոյն ժամանակահատուածի հակահայ քաղաքականութիւնը:

Թուրքացման քաղաքականութիւնը, հայկական զինեալ պայքարի հետեւանքով ստեղծուած մթնոլորտին միախառնուելով, իր ամենագեղիկ դրսեւորումներն էր գտնում այդ ժամանակահատուածում: Թեսսա Հոֆմանն ու Ժիրայր Քոչարեանն իրենց՝ «Քրիս-

²⁶² Պօղոսեան Ս., Պանթուրքիզմը երէկ եւ այսօր, Երեւան, 1990, էջ 58:

²⁶³ Ալիք, 1981, հոկտեմբերի 31:

²⁶⁴ Կիրակոսեան Ջ., Երիտթուրքերը պատմութեան դատաստանի առաջ, Երեւան, 1983, էջ 445:

տոնէութիւնն Արեւելքի մէջ, Հայ եկեղեցու կենսավէ-
պը» զեկուցագրում ակնարկում են 1970 թ. ի վեր պե-
տական-պաշտօնական հրահանգների ու մեքենա-
յութիւնների մասին, որոնցով խանգարում էին պատ-
րիարքարանի հոգեւոր, հասարակական եւ մշակու-
թային միջոցառումներն ու աշխատանքները: «Սը-
րանք բոլորն էլ,- գրում են նրանք,- ուղղուած էին նոյն
նպատակին՝ թուրքացնել եւ կամ ահաբեկել դեռ վե-
րապրող հայերին»²⁶⁵:

Շնորհք պատրիարքի տուեալներով այդ ժամա-
նակի «իսլամացած» հայութեան թուաքանակը մէկ
միլիոնի էր հասնում, որոնց կարեւոր մի մասը գիտակ
էր իր հայկական արմատներին: 1980 թ. Երուսաղէ-
մում իր բանախօսութեան մէջ Շնորհք պատրիարքը
հետեւեալն է ասում. «Գաւառում նոյնիսկ մինչեւ մէկ
միլիոն հայեր ունենք» եւ աւելացնում է, որ Մալաթ-
իայում սոցիալապէս ապահովուած հայեր կան, նոյն-
պէս եւ Էլազիգում հայեր կան եւ եկեղեցի ունեն...
Տիգրանակերտում էլ հայեր կան, «իսկ լսածիս հա-
մեմատ,- ասում է Շնորհք պատրիարքը,- Սասնոյ
լեռների վրայ էլ ցրուած հայեր կան, որի մասին
ժամանակին ձեռքս անցաւ 35 գիւղերի մի անուանա-
ցանկ...»²⁶⁶:

Այս ժամանակահատուածում Կեսարիայի հոգե-
ւոր պետ Սերովբէ քահանայ Կիւլեանը, որ 1976 թ. Ս.
Զատկի առթիւ այցելել էր մի շարք քաղաքներ, իր
հաղորդած տեղեկագրում կարեւոր տեղեկութիւն է

²⁶⁵ Ալիք, 1981, հոկտեմբերի 31:

²⁶⁶ Ալիք, 1980, դեկտեմբերի 18:

տալիս հիմնականում Փոքր Հայքի եւ յարակից շըր-
ջանների հայութեան մասին, ըստ որի՝ Սեբաստիա-
յում բնակուել են 75, Թոքատում՝ 25, Ամասիայում՝ 30,
Գիւմիւշհաճըզէոյում՝ 25, Պողազլեանում՝ 30 եւ Գաս-
տամոնիում՝ 80 հայ ընտանիքներ²⁶⁷. մեր համոզ-
մամբ՝ գերազանցապէս «պաշտօնական» հայեր: Յի-
շեցնենք նաեւ, որ սոյն տեղեկագրից դարձեալ պարզ-
ւում է վերը նշուած «կարմիր սահմանների» հարցը:

Քաղաքների ցանկը դեռ կարելի է ընդլայնել՝ աւե-
լացնելով նաեւ Ամասիան, ուր 1971 թ. տուեալներով
ապրում էր 300 հայ²⁶⁸: Կամ պատմական Գումուշխա-
նէում, ուր 1970-ականների տուեալներով կար 330
հայ²⁶⁹: Այնուամենայնիւ, այս ժամանակահատուածի
«պաշտօնական» հայութեան թուաքանակը չունի հա-
մապարփակ պատկեր: Նոյնիսկ Արեւմտեան Հայաս-
տանի (տարածք «ա») սրտում՝ Էրզրումում, ըստ «Ա-
լիք» օրաթերթի, 1973 թ. դեռ ապրել են հայեր²⁷⁰, ան-
շուշտ՝ «պաշտօնական» հայեր:

Եւրոպայի գաղթական աշխատաւորների պաշտ-
պան միջեկեղեցական յանձնախմբի զեկուցագրից
պարզւում է, որ սոյն ժամանակահատուածի վերջե-
րում (հաւանաբար 1975 թ. յետոյ) 20-ից 30 հազար
«պաշտօնական» հայեր են ապրել գաւառներում²⁷¹:

²⁶⁷ Ալիք, 1976, մայիսի 25:

²⁶⁸ Յակոբեան Թ. Խ., «Պատմական Հայաստանի քաղաքները»,
Երեւան, 1987, էջ 36:

²⁶⁹ Նոյն տեղում, էջ 135:

²⁷⁰ Ալիք, 1973, սեպտեմբերի 23:

²⁷¹ Ալիք, 1980, մարտի 2:

Շնորհիք արք. Գալուստեանն իր տարեկան տեղեկագրում 1979 թ. հրապարակում է գաւառի ծխատէր քահանաների անուանացանկը եւ մանրամասներ տալիս նրանց հովուապետական վայրերի մասին: Այսպիսով՝ պարզուրում է, որ Տ. Ղեւոնդ Գարթունեանը Վազըֆ գիւղի հովուապետն է, Տ. Սերովբէ Կիւլեանը՝ Ալեքսանդրէթի, Գըրըգիսանի, Մէրսինի եւ Ադիեամանի, Տ. Վարագ Պէլլերեանը՝ Դիարբէքիի, Դերիկի, Մալաթիայի, Խարբերդի եւ Շիրնակի, իսկ Տ. Բարսեղ Վանլեանը՝ Կեսարիայի, Սվազի, Թոքատի, Ամասիայի, Գիւմիւշհաճըգէոյի եւ Անկարայի հայութեան²⁷²:

Տուեալների պակասի պատճառով առաւել բարդ ու անորոշ է հայութեան միւս խմբերի պարագան: Իսլամացած համշէնահայութեան եւ պոնտահայութեան սոյն ժամանակահատուածի թուաքանակի մասին ուսումնասիրութիւն է կատարել Բարունակ Թոռլաքեանը: 1981 թ. լոյս տեսած նրա՝ «Համշէնահայերի ազգագրութիւնը» ծաւալուն աշխատութեան առաջին մասում նշում է. «Սեւ ծովի հարաւում առնուազն 400 հազար մահմեդական համշէնահայ պէտք է լինեն»²⁷³:

«Հաշիւ չունին անոնք,- գրում էր Հրանտ Սամուէլը 1976 թ.,- որ Մեծ Սպանդի զարհուրելի օրերուն կրօնափոխութիւնը փրկութեան լաստ համարելով՝ խուսափեցան ցեղասպան դահիճի եաթաղանին զոհուելէ»²⁷⁴: Այսպիսով՝ Հրանտ Սամուէլն ակնարկում է

²⁷² Ալիք, 1980, փետրուարի 9:

²⁷³ Սովետական Հայաստան, Երեւան, 1983, ISSN 0131-6834, թիւ 6, էջ 31:

²⁷⁴ Ալիք, 1976, մայիսի 25:

այս ժամանակահատուածի «թաքուն» հայութեան թուաքանակի մեծութեան մասին: Նա արժէքաւոր այս յօդուածներում նաեւ շօշափում է «թաքուն» հայութեան սերնդափոխութեան հարցը՝ նշելով, որ առաջին սերնդին պատկանողները, ովքեր անմիջական կերպով յիշում են «իրենց հայութիւնը, քրիստոնէական աւանդութիւններն ու մասամբ նաեւ լեզուն», փորձում են ահաւոր դաժան պայմաններում դրանք փոխանցել «իրենց ժառանգորդներուն»²⁷⁵:

Որոշ ուղեգրութիւններ հաստատում են «թաքուն» հայութեան գոյութիւնը Արեւմտեան Հայաստանի անգամ ամենածայրամասային բնակավայրերում: Զբօսաշրջիկ Համբարձում Վասիլեանը, որ այս ժամանակահատուածում այցելել է իր պապենական գիւղը՝ Բաղին, վկայում է, որ Բաղինում (հաւանաբար՝ Դերսիմի մօտակայքում) մնացել են մի քանի կրօնափոխ հայեր, որոնցից մէկը նոյնիսկ շրջակայ քրդաբնակ գիւղերից մէկի գիւղապետն է²⁷⁶:

Թուրքիայի արեւելեան շրջաններում գաղտնի շրջած Յակոբ քահանայ Գլընճեանը, «Քրիստոնէայ փոքրամասնութիւններ՝ Թուրքիայից» յօդուածաշարում ներկայացնելով այդ ժամանակահատուածի հայութեան սոցիալական վիճակը, վկայում է, որ նրանց շառաւիղները վերածուել են տնային ստրուկների եւ պարտաւոր են կատարել ամէն տեսակ աշխատանք իրենց տիրոջ համար եւ այլն: Սակայն, հակառակ այդ

²⁷⁵ Նոյն տեղում:

²⁷⁶ Սիմոնեան Հ. Լ., Թուրք-հայկական յարաբերութիւնների պատմութիւնից, Երեւան, 1991, էջ 572:

սոցիալական ծանր պայմանների, «Արտաքնապէս իսլամացած (նրանց կոչում են «մուսուլմանի»)՝ նըրանք պահպանում են իրենց հայկականութիւնը»²⁷⁷:

Հոլանդիայում հաստատուած մի «թաքուն» հայ «AGBU»-ի աշխատակից Ղաւիթ Ջենեանի հետ իր ասուլիսում այսպէս է ներկայացնում այդ ժամանակահատուածում Շիրնաքի (տարածք «բ») «թաքուն» հայութեան մտակեցուածքը. «Տեղացի քուրդ աւատապետերը,- ասում է շիրնաքցի Սարիջանը,- գիտէին, որ մենք հայ ենք, սակայն մենք մեր ինքնութիւնը պահում էինք մեր մէջ եւ մեր տների պատերից ներս»²⁷⁸: Նա շեշտում է նաեւ, որ Շիրնաքի հայութիւնը կտրուած է եղել ոչ միայն աշխարհի, այլ նոյնիսկ Կ. Պոլսի հայութիւնից. «Մեզ մօտ հայ լինելը տարբերայնօրէն երկու իմաստ էր կրում. նախ՝ քրիստոնէական հաւատք, ապա՝ քուրդ մեծամասնութիւնից տարբերուել եւ ուրիշ ոչինչ...»²⁷⁹:

Ինչպէս նախկին, այնպէս էլ այս ժամանակահատուածում «թաքուն» հայի համար բացառուած է եղել իսպառ ծուլութիւն եւ էթնիկական մետամորֆոզի ճանապարհը: Թէեւ «գեաւուր» (թուրքերէնով նշանակում է՝ անուղղայ, անհնազանդ, խռովարար) նուաստացուցիչ կոչումն ամերեւոյթ փոխուել էր հեզնական «մուսուլմանի»-ի, սակայն բնագոյն համագօր էթնիկական ինքնագիտակցութիւնից բխած պատնէշը շարունակում էր անթափանց մնալ ծուլման դէմ:

²⁷⁷ Կիրակոսեան Զ., Երիտթուրքերը պատմութեան դատաստանի առաջ, Երեւան, 1983, էջ 428:

²⁷⁸ <http://www.geocities.com/cryptoarmenians/Sirnak2.html>.

²⁷⁹ Նոյն տեղում:

Մեր գնահատմամբ, ինչպէս ասուեց, այդ պատնէշի պահպանման հարցում առկայ է երկկողմանի ցանկացողութիւն. մէկ կողմից՝ «թաքուն» հայութեան մօտ, իսկ միւս կողմից՝ իսլամ թուրք կամ քուրդ զանգուածների: Այս իրողութիւնն ապացուցող մի այլ վկայութիւն կայ Քեմալ Եալչինի նշուած գրքում, ուր մի «թաքուն» հայ դառնօրէն արտայայտւում է իր դէմ փակուած ծուլման ելքի մասին. «Իսլամ էլ դառնաս, հաջի էլ դառնաս,- ասում է նա,- նորից չես կարող հանել ճակատիդ փակցուած «գեաւուր» պիտակը»²⁸⁰:

Բելգիայում հաստատուած շիրնաքցի Մեսրոպ Աֆշարը «AGBU»-ի հետ իր ասուլիսում հետաքրքիր մանրամասնութիւններով պատմում է Շիրնաքում նորածինների թաքուն մկրտութեան մասին եւ աւելացնում. «Մենք նրանց կնքում էինք հայկական անուններով, ինչպէս՝ Ղաւիթ, Նուբար, Գէորգ եւ Սարօ, սակայն փողոցում նմանում էինք քաղաքի բնակչութեանը եւ կրում քրդական անուններ, ինչպէս Էիզ, Եալիկ, Օդեմիշ, Եաջիր, Բիրգին եւ այլն»²⁸¹:

«Թաքուն» հայութեան սոցիալական կեանքին առընչուող հարուստ եւ հետաքրքրեալ տեղեկութիւնների կարելի է հանդիպել Եւրոպայի գաղթական աշխատավորների պաշտպան միջեկեղեցական յանձնախմբի երկու առանձին տեղեկագիր-ուսումնասիրութիւնների մէջ. առաջինը՝ 1979 թ., իսկ երկրորդը 1982 թ. պատրաստուած²⁸²: Վաչէ Բրուտեանը, թարգմանելով եւ խորքային վերլուծութեան ենթարկելով

²⁸⁰ Եալչին Զ., Հոգիս քեզմով կը խայտայ, Երեւան, 2003, էջ 347:

²⁸¹ <http://www.geocities.com/cryptoarmenians/Sirnak.html>.

²⁸² Ալիք, 1984, մայիսի 5:

առաջին տեղեկագիրը, Թուրքիայի արեւելեան նահանգների (հիմնականում Արեւմտեան Հայաստան) կապակցութեամբ եզրակացնում է, որ ժրաջան աշխատողներ են եղել քրիստոնեաները եւ տնտեսական ամենանեղ կացութիւնների մէջ անգամ, ի տարբերութիւն քրդերի, կարողացել են շատ աւելի բարւոք կեանք ստեղծել իրենց ընտանիքների համար: «Այս տնտեսական ազդակը,- եզրակացնում է Բրուտեանը,- կարելոր պատճառ է, որ քրդերը թշուառութեան մէջ իրենց բնագոյական թաւանի ու բռնութիւնների քաւութեան նոխազ դարձնեն քրիստոնեաներին...»²⁸³:

Ի՞նչ թիւ էին կազմում «թաքուն» հայերն այս ժամանակահատուածում: Այս ուղղութեամբ մեր տրամադրութեան տակ է մի շատ կարելոր փաստ, որի հիմքը մեր կարծիքով դրուել է Ստամբուլի «Նոր Մարմարա» օրաթերթի աշխատակից Կ. Մուրադեանի տուեալների վրայ²⁸⁴: Ահա այն. «Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի տուեալներով այժմ (իմա՝ 1975 թ.- Կ.Խ.) Թուրքիայում ապրող հայերի թուաքանակը հասնում է շուրջ 250 հազար մարդու»²⁸⁵:

Իրանցի հետազօտող Աբդուլիուսէյն Սայիդեանը, իր աշխատութեամ մէջ այս նոյն թուաքանակը հաստատող տեղեկանք է մէջ բերում «Հայրենիքի ծայն» թերթից, բայց կասկած է յայտնում, որ «Թուրքիայի պարագայում 250 հազարը շատ կասկածելի թիւ է,

²⁸³ Ալիք, 1980, մարտի 3:

²⁸⁴ Հայրենիք ամսագիր, 1961, ապրիլ, էջ 80:

²⁸⁵ Աւագեան Գ. Ե., Հայկական ՍՍՀ բնակչութիւնը, Երեւան, 1975, էջ 77:

նորեմն՝ իր մէջ պէտք է ընդգրկի բազմաթիւ «կամոֆլաժ» հայերին, որոնք թուրքական անուններ ունեն եւ իսլամացել են հետապնդումներից ու հալածանքներից խուսափելու համար»²⁸⁶:

Այս նոյն յայտնուած կասկածը փարատելու համար էլ Գրիգոր Աւագեանը մէջտեղ է դնում «թաքուն» հայութեան իրողութեան փաստը եւ այս կապակցութեամբ բազմաթիւ տարաբնոյթ եւ յաճախ հակասական տուեալներին ի տես՝ իր աշխատութեան մէջ եզրակացնում է. «Ո՞րն է այդ տուեալներից ստոյգը: Մեր կարծիքով, անշուշտ, 250 հազարը: Դեռ աւելին՝ նրա կարծիքով Թուրքիայի գիւղական բնակավայրերում (յատկապէս արեւելեան վիլայէթներում) ապրում են մեծ թուով հայեր, որոնք, սակայն, մի կողմից՝ վախի ազդեցութեան տակ թաքցնում են իրենց ազգային պատկանելութիւնը, իսկ միւս կողմից, կտրուած լինելով աշխարհից եւ ապրելով խիստ մեկուսացած կեանքով, պատկերացում էլ չունեն հայերի գոյութեան եւ գոյատեւման մասին եւ անտարբեր կերպով գրում են թուրք, բայց մեխանիկօրէն շարունակում են պահպանել ազգային որոշ սովորութիւններ եւ աւանդոյթներ: «Այնտեղ շատ գիւղերում,- եզրակացնում է Գ. Աւագեանը,- շարունակում են ապրել քրիստոնեայ հայեր, որոնք խնամքով թաքցնում են իրենց եւ ազգային, եւ կրօնական պատկանելութիւնը (ընդգծումները մերն են- Կ.Խ.)»²⁸⁷: Գ. Աւագեանի այս լրացուցիչ

²⁸⁶ Սաաիդեան Ա., Աշխարհի ժողովուրդները (պարսկերէն), Թեհրան, 1983, էջ 173:

²⁸⁷ Աւագեան Գ. Ե., Հայկական ՍՍՀ բնակչութիւնը, Երեւան, 1975, էջ 77-78:

բացատրությունների լոյսի տակ կարելի է եզրակացնել, որ նշուած թուաքանակը (250 հազար) գերազանցապէս առընչում է «թաքուն» հայերին:

Մի յատկանշական փաստաթղթի լոյսի ներքոյ առաւել է պարզում հայութեան «խնամքով թաքնուելու» երեւոյթը: Այսպէս՝ Քերեմ Օկտեմը, իր «Թուրք հայրենիքի ստեղծումը. արդիականացումը, ազգայնականութիւնը եւ աշխարհագրութիւնը հարաւարելեան Թուրքիայում 19-րդ դարավերջին եւ 20-րդ դարում» աշխատութեան մէջ վեր հանելով Ուրֆա քաղաքի բարոյահոգեբանական եւ պատմամշակութային նշանակութիւնը հայ ժողովրդի համար, գրում է. «Հայկական եւ սիրիական համայնքների անդամներն ապրել են քաղաքում մինչեւ 1970-ական թուականները, երբ, ըստ տեղացիների, մահացաւ քաղաքի վերջին հայը՝ բժիշկ Վանէսը»: Ապա շարունակում է. «Ըստ մի շարք հետազոտութիւնների ու փաստաթղթերի՝ այսօր առնուազն 200 եւ, հաւանաբար դեռ աւելի, ծագումով հայ ընտանիքներ ապրում են Ուրֆայում: Նրանք իսլամացուած են, ունեն թուրքական անուններ եւ հանրութեան մօտ խուսափում են որպէս հայ ներկայանալուց: Երբ հայկական եկեղեցին մզկիթի էր վերածում 1990-ականների սկզբին, աւելի քանի 200 բողոքագրեր, ի բողոք այդ վերածման, հասցէագրուեցին Ուրֆայի նահանգապետին, որոնց ընթացք չտրուեց անստորագիր լինելու պատրուակով»²⁸⁸:

²⁸⁸ Oktem K., Creating Turk's Homeland: Modernization, Nationalism and Geography in Southeast Turkey in the late 19th and 20th Centuries, University of Oxford, 2003, p. 12.

Այս կարեւոր վկայութիւնից պարզ է դառնում «թաքուն» հայութեան ազգային գիտակցութեան ու հաւաքական յանձնառութեան չափն ազգային գոյատեւման բարդ, աննպաստ եւ դժնդակ պայմաններում: Պայմաններ, որոնք, վերջին հաշուով, տեղահանութեան համար լուրջ պատճառ կարող էին հանդիսանալ:

Պոլսահայ «Ժամանակ» օրաթերթի 1976 թ. համարներից վերցուած տեղեկութիւնների համաձայն՝ 120 հոգուց բաղկացած սասունցի 16 ընտանիք ժամանել է Կ. Պոլիս՝ թշուառագոյն վիճակում: Արաբկիրում կայ 450 անչափահաս երեխայ, որոնցից միայն 200-ը հնարաւորութիւն ունի վարժարան յաճախելու: Ակնի եւ շրջակայքի հայ բնակչութեան թիւը հասնում է 190-ի, որոնցից 40-ի մանուկները զրկուած են կրթութիւնից: Դիվրիկի եւ շրջակայքի հայերի թիւը հասնում է 200-ի, որոնց մէջ կան մօտ 60 արհեստաւորներ²⁸⁹: Սոյն ժամանակահատուածում նման արտահոսքեր յաճախ են պատահել յատկապէս Արեւմըտեան Հայաստանից:

Ստեփան Պօղոսեանը «Պանթուրքիզմը երէկ եւ այսօր» աշխատութեան մէջ խորհրդային պատմաբան Ն. Խ. Մախմուդովի տուեալների հիման վրայ յայտնում է, որ 1970-ականներին Բայեզիտի բնակիչների՝ 58.2, Բիթլիսի՝ 74.4, Դիարբեքիի՝ 68.8, Էլազիզի՝ 52.8, Հաքքեարիի՝ 88.9, Սղերդի՝ 74.1, Վանի 76.6 տոկոսը քրդեր են: Ապա վկայակոչելով «Ազդակի» 1977 թ. նոյեմբերի 8-ի համարը՝ աւելացնում է, որ

²⁸⁹ Պատմա-բանասիրական հանդէս, Երեւան, 1977, թիւ 1(76), էջ 256:

թուրքերեն չգիտի Արարատի բնակչության 64 տոկոսը, Բիւրակնի՝ 69, Բիթլիսի՝ 69, Սղերդի՝ 99, Ուրֆայի՝ 61, Դիարբեքիի՝ 69, Մարդինի 92 տոկոսը²⁹⁰:

Լեզուական պատկերի մասին ակնարկում է Քրիստինա Կուէուսենը «The Invisible War in North Kurdistan» (Անեղծելի պատերազմ հիւսիսային Քըրդստանում) ուշագրաւ աշխատութեան մէջ, ուր, մէջ բերելով «Ջումհուրիէթի» 1966 թ. յունիսի 31-ի համարի տուեալները, պարզում է, որ թուրքերեն չգիտի Մարդինի՝ 91, Սղերդի՝ 87, Հաքքեարիի՝ 81, Դիարբեքիի՝ 67 եւ Բիթլիսի 66 տոկոսը²⁹¹:

Որոշ կրճատումներով ի մի ենք բերում սոյն տոկոսային տուեալները (տես՝ Աղ. 6) եւ կանգ առնում Սղերդի հանգամանքի վրայ. բերուած տուեալներից պարզում է, որ Սղերդի բնակչութեան առնուազն 20 տոկոսը քուրդ չէ եւ թուրքերեն էլ չգիտի: Տրամաբանական մտայնագումը կարող է լինել այն, որ այդ հատուածը տուեալ դէպքում քրդախօս է, սակայն էթնիկապէս չի պատկանում քրդութեանը:

Վիլայէթ	Թուրքերեն չխօսողների յարաբերակցութիւնը			Քրդերի թային յարաբերակ- ցութիւնը ըստ Մախմուդովի
	ըստ «Ջումհուրիէթի» 1966 թ.	ըստ «Ազդակի» 1977 թ.	միջին	
Բայեզիտ	-	-	-	58.2
Բիթլիս	66	69	67.5	74.4

²⁹⁰ Պողոսեան Ս., Պանթուրքիզմը երէկ եւ այսօր, Երեւան, 1990, էջ 40:

²⁹¹ Koivunen K., The Invisible War in North Kurdistan, Yurmala, Latvia, Gender and Multiculturalism June 7-13, 1998.

Դիարբեքի	67	69	68	68.8
Էլազիզ	-	-	-	52.8
Հաքքարի	81	-	81	88.9
Սղերդ	87	99	93	74.1

Աղիւսակ 6

Այս պատկերն առաւել ճոխանում եւ հետաքրքրական է դառնում, երբ վերելում նշուած՝ «Ջումհուրիէթի» 1966 թ. յունիսի 31-ի համարի տուեալները համեմատում ենք Հ. Հ. Գալստեանի «Քրդական հարցի արտացոլումը ժամանակակից թուրքական մամուլում» աշխատութեան մէջ արտացոլուած պատկերի հետ, ուր, հիմք ընդունելով Ֆիլիզ Բաբաջանի դարձեալ «Ջումհուրիէթի» 1968 թ. յունուարի 15-ի համարում լոյս տեսած տեղեկատուութիւնը, քրդալեզու բնակչութեան յարաբերակցութիւնը Սղերդի պարագայում գնահատում է 71, Հաքքեարի պարագայում՝ 80, Մարդինի պարագայում՝ 67, Դիարբեքիի պարագայում՝ 66, Բիթլիսի պարագայում՝ 64 տոկոս²⁹² (տես՝ Աղ. 7):

Վիլայէթ	ըստ «Ջումհուրիէթի» 1966 թ.		ըստ «Ջումհուրիէթի» 1968 թ.
	ընդ. բնակչութիւն (հազար մարդ)	քրդալեզու բնակ. (տոկոսով)	Թուրք. չխօսողները (տոկոսով)
Սղերդ	232	71	87
Հաքքարի	68	80	81

²⁹² Գալստեան Հ. Հ., Քրդական հարցի արտացոլումը ժամանակակից թուրքական մամուլում, Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, ժողովածու, Երեւան, 1975, էջ 252:

Մարդին	353	67	91
Դիարբեքիր	402	66	67
Բիբլիս	129	64	66

Աղյուսակ 7

Սոյն համեմատությունից պարզվում է, որ Սղերդի բնակչության 16 տոկոսը (առնուազն 37 հազար մարդ) ոչ թուրքալեզու է, ոչ քրդալեզու: Իսկ Մարդինում այդ թիվը կազմում է 24 տոկոս (առնուազն 85 հազար մարդ): Արդեօք դրանք հենց «թաքուն» եւ «պաշտոնական» հայերը չե՞ն (դեռ չենք խօսում միւս վիլայեթների կամ նահանգների մասին, որոնց պարագայում տուեալների մերժությունը ենթադրում է որոշ հաւանական վրիպումներ):

Լեզուական պատկանելութեան մասին թուրքական աղբիւրներից քաղուած տուեալների հիման վրայ եզրակացութիւնները բաւարար չէր կարելի համարել, եթէ, անշուշտ, դրանց չկցուէին կենդանի այլ վկայութիւններ: Արեւմտեան Հայաստանում այս ժամանակահատուածում գոյատեւած «թաքուն» հայութեան մասին ահաւասիկ մէկ-երկու վկայութիւն. լուսանկարիչ Շիրազը (Յովհաննէս Ճերէճեան) իր հարցազրոյցում պատմում է 1971 թ. Իգդիրում իր տեսածի մասին. «Երբ նա (թուրք հիւրընկալը) վստահացաւ, որ մենք հայ ենք, ասաց, որ իրենց դրացու տիկինն էլ հայ է...»²⁹³:

Իսկ Սասնոյ լեռնաստանի մասին յուշերում նա պատմում է. «146 գիւղերով հսկայ մի լեռնաստան է Սասունը, ուր դեռեւս 11-ն ամբողջութեամբ հայ են»:

²⁹³ Արմենիա, 1987, ապրիլ, էջ 30:

Ապա անդրադառնում է բնիկ սասունցի Քեշիշեան տոհմի հետ իր հանդիպմանը. այդ աւանդական ընտանիքի նահապետը խնդրել է նրան, որ իր լուսանկարը յանձնի «հայոց թագաւորին» ու կաթողիկոսին եւ նրանց ասի Սասնոյ լեռների վրայ Քեշիշեան տոհմի հայ մնալու մասին. «Ասկէ ետք,- ասել է նահապետը,- չեմ գիտեր, թէ ինչ կը պատահի այս երեխաներուն հետ...»²⁹⁴: Այս վկայութիւնը վերահաստատում է Գ. Աւագեանի՝ վերելում բերուած տեսակէտն այն մասին, որ «թաքուն» հայութեան մի կարեւոր մասի հոգեմտաւոր կապն ամբողջապէս խզուած է մայր օրգանիզմից:

«Hetq Online» էլեկտրոնային կայքէջի աշխատակցուհի Լուսինէ Բալեանը 2005 թ. ապրիլի 24-ի իր զեկուցագրում արժարժում է Հաջի Մեհմետ Դեմիրչի-գիլ «թաքուն» հայի ընտանիքի պարագան, որ հաստատուել է Գերմանիայում 1975 թ.: Բնիկ մշեցի ընտանիքում ծնուած եւ Տիգրանակերտում ապրած Հաջի Մեհմետը, իր յուշերը պատմելով, ակնարկել է նաեւ հետաքրքրական մի երեւոյթի մասին. «Արեւմըտեան Հայաստանի բոլոր դաւանաւորիս հայերը լաւապէս ճանաչում են մէկը միւսին»: Նրա վկայութեամբ դեռ 70-ականներին բոլոր չգրանցուած արհեստաւորները «թաքուն» հայեր էին. «Երբ թուրքերը կամ քրդերը փորձում էին տանել մեր գեղեցիկ աղջիկներին,- ասում է Հաջի Մեհմետը,- հայերս բոլոր հնարաւոր միջոցներով դիմադրում եւ յաճախ բախում էինք»²⁹⁵:

²⁹⁴ Նոյն տեղում, էջ 31:

²⁹⁵ <http://www.hetq.am/eng/society/0504-bagrjoglu.html>

Շնորհք արք. Գալուստեանը 1977 թ. մարտի 26-ին Ստամբուլի համայնքի հետ հանդիպման ժամանակ ասում է. «Մի նոր ձեռք է ստացել գաւառներից ժամանող գաղթականների հարցը: Անցեալ աշնանը Սիլուփիի «Վարդօ Էրմենի» (նոյն Վարդօ աշիրէթ գիւղ- Կ.Խ.) կոչուած գիւղից հասել են, իւրաքանչիւրը երեսունական հոգուց բաղկացած, 15 ընտանիքներ, մօտ 412 հոգի»²⁹⁶:

Զօրավար Գուրսէլի զինուորական իշխանութեանը յաջորդող այս ժամանակահատուածում «թաքուն» հայութեան համար, ինչպէս նշել ենք, ստեղծուում է քաղաքական գործունէութեան որոշ հնարաւորութիւն: Մի «թաքուն» հայ Քեմալ Եալչինին այդ մասին պատմում է հետեւեալը. «1970 թ. յաջորդող օրերին կարծես մի քիչ հանգիստ էինք: Ադիեամանի, Քեահթայի մէջ յառաջադիմական կազմակերպութիւններ հիմնուեցին: Այս կազմակերպութիւնների մէջ եւ քուրդ, եւ «մերինների» երիտասարդները համախմբուելով ընդհանրական նպատակների էին պատրաստուում: Քուրդ երիտասարդները «մերինների» երիտասարդներին առաջարկում էին, որ իրենց ծագումը չծածկեն, ինքնութիւնն ու հաւատքը բացայայտ կերպով յայտարարեն: Սրա համար ապահովութիւն էին տալիս: Այս բարեացական, անկեղծ, յետին նպատակներից հեռու մթնոլորտում բազմաթիւ երիտասարդներ սկսեցին ասել. «Ես հայ եմ, ես ծագումով հայ եմ, իմ կրօնքս տարբեր է»: Կարծես կամաց կամաց մթնոլորտ էր կազմուում, ուր մարդիկ կարողանային հանգիստ շնչել, անվախ

²⁹⁶ Ալիք, 1977, ապրիլի 25:

պառկել ու խնդալ»²⁹⁷ («մերիններ»-ից պէտք է հասկանալ «թաքուն» հայեր- Կ.Խ.):

Խաղաղ գործունէութեան հնարաւորութիւնը «թաքուն» հայութեան համար երկար չէր կարող պահպանուել Թուրքիայի քաղաքական դաշտում, որը յատկապէս սոյն ժամանակահատուածում խիստ անկայուն էր՝ աջից կենտրոն տատանուող, «գորշգալլական» շանտաժներով լեցուն եւ քաղաքական ազդեցութեան գանազան լծակներով կառավարուող: Սրա վերաբերեալ նոյն հայը շարունակում է պատմել. «Այս մթնոլորտը, սակայն, հաճելի չէր ոմանց եւ մի շարք քաղաքական շրջանակների: Սկսեցին արծարծուել բամբասանքներ. «Հայերը կազմակերպուում են», «Գեաւորները բացելու են իրենց եկեղեցիները», «Հայերն իրենց պապերի ինչքերը յետ են ուզելու» եւ այլն»²⁹⁸:

Այն հարցին, թէ ինչքանով են համատարած եղել «թաքուն» հայութեան քաղաքական ցանկութիւնները, տրամադրութիւններն ու կամքը, դժուար է պատասխանել ճշգրտօրէն: Սակայն կարելի է միանշանակ ասել, որ էթնիկական ինդուլիդէալիզացիայի նրա բընական ձգտումների կոպիտ ճնշումը, նրա դէմ շարունակուող թուրքացման քաղաքականութիւնը, մարդկային իրաւունքների ոտնահարումը եւ էթնիկական խտրականութիւնը նրան մղում էին հակապետական կոշտ եւ անտագոնիստական պայքարի ուղիներ, ինչն ակնառու է դառնում հետագայ ժամանակահատուածներում:

²⁹⁷ Եալչին Ք., Հոգիս քեզմով կը խայտայ, Երեւան, 2003, էջ 346:

²⁹⁸ Նոյն տեղում:

2- 1980 - 91 թթ. ժամանակահատուած

Եթէ 1960 թ. զինուորական յեղաշրջումն առաւելաբար միտուած էր ժողովրդավար կուսակցութեան գլխաւորութեամբ կազմուած իշխանութիւնների տապալմանը, 1980 թ. յեղաշրջումը, ինչպէս ներքին քաղաքական, այնպէս էլ տնտեսական, հասարակական եւ յատկապէս արտաքին քաղաքական հիմնական փոփոխութիւններ առաջացրեց թուրքիայում: Սակայն թուրք վերլուծաբանների կարծիքով զօրավար Քենան Էրէնի գլխաւորած կառավարութեան մեծագոյն հիմնահարցերից հանդիսացաւ Հայկական Հարցը: «Թերջումանը» 1988 թ. յունիսի 28-ի համարում, «Մեծագոյն հոգսը՝ հայը» խորագրով յօդուածում հաստատելով Հայկական հարցի առաջնային նշանակութիւնը, ակնարկում է այն կարեւոր իրողութեանը, ըստ որի՝ «Նախագահ Էրէնը ութ տարուց ի վեր զբաղուել է այս հարցով»²⁹⁹:

Քրդական միջավայրերում վերապրող, քրդական կենցաղ վարող հայութեան նկատմամբ մինչ այդ իրականացուող թուրքացման փորձերն ապարդիւն էին անցնում թերեւս այն պարզ պատճառով, որ այդ փորձերն անմիջականօրէն հանդիպում էին առաջին հերթին հէնց քրդական հակազդեցութեանը: Վահան

²⁹⁹ Դրօշակ, Աթենք, 1988, օգոստոսի 3, էջ 38:

Բայբուրդեանը «Հայ-քրդական յարաբերութիւնները Օսմանեան կայսրութիւնում» աշխատութեան վերջաբանում, ուր քննարկում է Քրդական հարցը թուրքիայի ժամանակակից պայմաններում, վերլուծում է բռնի թուրքացման քաղաքականութեան անճարակութիւնն այս ժամանակահատուածում եւ եզրակացնում է, թէ ինչպէս էր այդ քաղաքականութիւնը բախում քուրդ զանգուածների աճող դիմադրութեան հետ³⁰⁰:

Այդ իմաստով առաւել հաշուարկուած եւ համակարգուած քայլերով է բնորոշուում Էրէնի գլխաւորած կառավարութեան հակահայ ռազմավարութիւնն այս շրջանում, երբ թուրքացման քաղաքականութեան փոխարէն առաւելաբար շեշտադրուեց իսլամացման քաղաքականութիւնը:

Ի հարկէ, պէտք է ասել, որ այս «իսլամացման քաղաքականութեան» բուն ելակէտերը միայն հայութեան հարցին չէին առնչուում: «1980 թ. զինուորական յեղաշրջմամբ գործի անցած իշխանութիւնը, կարողում ենք ընկերվար-ժողովրդավար ժողովրդական կուսակցութեան (SHP) 1991 թ., ապրիլի 23-ի «տեղեկագրում», երկրում տիրող գաղափարական պարապութիւնը փորձեց լցնել կրօնով»³⁰¹: Այս վակուումի լցանիւթից, ի թիւս ոչ-իսլամների, բնականաբար խոշոր բաժին էր յատկացուել հայութեանը: Օգալի կառավարութեան կրթութեան նախարարի օգնականներից Զեմիլ Գըւանջը 1987 թ. իր ասուլիսում նկատել էր տալիս «ոչ-իսլամների զաւակների շահագրգռուա-

³⁰⁰ Բայբուրդեան Վ. Ա., Հայ-քրդական յարաբերութիւնները Օսմանեան կայսրութիւնում, Երեւան, 1989, էջ 331:

³⁰¹ Դրօշակ, Աթենք, 1991, մայիսի 22, էջ 62:

ծութիւնը» երկրի պաշտօնական կրօնի նկատմամբ եւ այդպիսով հիմնաւորում կրօնի դասաւանդութեան ներառումը նախարարութեան հերթական ծրագրերում³⁰².

Աջար գիւղի (Հերենտ՝ Սասունի մօտակայքում) շուրջ 600 հայ բնակչութեան իսլամացումը 1983 թ. ամռանը, կամ 1984 թ. աշնանը Ադիեամանի Կերկեր գիւղաքաղաքում 19 հայերի կրօնափոխութիւնը կարելի է համարել իսլամացման քաղաքականութեան լաւագոյն փաստարկ³⁰³:

Աջար գիւղի բնակչութեան կրօնափոխութեան մասին ակնարկում է նաեւ ֆրանսահայ հետազօտող Արման Գասպարը «Հայ ազգային-ազատագրական պայքարն ու ահաբեկչութիւնը» աշխատութեան մէջ՝ աւելացնելով, որ այդ կապակցութեամբ ժամանակին թուրքական եւ սփիւռքեան մի շարք լրատուամիջոցներում յայտնուել են տարբեր մեկնաբանութիւններ³⁰⁴:

«Զումհուրիէթի» թղթակից Գիւլդեմիրը «Անատոլիայի հայ հայրենակիցները» յօդուածաշարում 1981 թ. օգոստոսի 12-16-ին յետեղաշրջման շրջանի շատ թարմ տեղեկութիւններ է տալիս գաւառի հայութեան մասին³⁰⁵: Նա մի շարք «պաշտօնական» եւ «թաքուն» հայերի հետ հարցազրոյցներում հետաքրքիր համեմատութիւնների եւ եզրակացութիւնների է յան-

³⁰² Դրօշակ, Աթենք, 1987, փետրուարի 4, էջ 36:

³⁰³ Hofmann T., Armenians in Turkey today, October 2002, p. 18.

³⁰⁴ Գասպար Ա., Հայ ազատագրական պայքարն ու ահաբեկչութիւնը, Թարգմանեց եւ խմբագրեց Արմէն Տօնոյեանը, Լոս Անջելէս, 1989, էջ 112:

³⁰⁵ Ալիք, 1981, դեկտեմբերի 9:

գում: Այսպէս, օրինակ, նա ասում է, որ եթէ Վիրանշեհիրի հայերը դժուարութիւններ ունեն կրօնական ազատութեան իմաստով, Մալաթիայում ապրող 20 տուն հայութիւնը «գերծ» է այդպիսի մտահոգութիւններից: Մալաթիայի հայերը, ըստ Գիւլդեմիրի, Ադիեամանի հայերի պէս միմիայն «աղջիկ առնելու, տալու հարց» ունեն³⁰⁶: Այդ հարցազրոյցներից պարզւում է նաեւ, որ 700 տուն հայութիւն ունեցող Կեսարիայում 1981 թ. հազիւ մնացած է եղել 12 տուն, շրջակայ գիւղերում եւս մնացել են հայեր:

Մի «թաքուն» հայ, նկարագրելով 1980 թ. սեպտեմբերի 12-ի զինուորական յեղաշրջման հետեւանքով առաջացած կացութիւնը, վկայում է. «Յեղաշրջումից յետոյ «մերիկները» եւ ասորիներն ահաւոր ճնշումների եւ նախատինքների ենթարկուեցին: Ապահովութիւն, խաղաղութիւն, բարեացականութիւն չմնաց: Հայերին եւ ասորիներին նախատողները «վերից» քաջալերւում էին մի շարք քաղաքական շարժումների կողմից»³⁰⁷:

Սոյն հակահայ ճնշումը, ի հարկէ, միմիայն քաղաքական բնոյթ չունէր: Էւրէնեան իսլամացման քաղաքականութեանն առնթր՝ յատկապէս արեւելեան տարածքներում կարգադրուել է հակաֆէոդալական մի կացութեամբ, որը մեծապէս ազդել է հայութեան վրայ: Այսպէս՝ քուրդ աւանդական օջախներում ըստրուկի կարգավիճակ ունեցող հայ ֆլաները պաշտպանւում էին իրենց քուրդ աւատապետ աղաների

³⁰⁶ Նոյն տեղում:

³⁰⁷ Եալչին Զ., Հոգիս քեզմով կը խայտայ, Երեւան, 2003, էջ 346:

կողմից՝ ընդդէմ ամէն տեսակ սպառնական արտաքին ազդակների³⁰⁸:

«Իւրաքանչիւր աղա ունի մի խումբ հայեր, որոնց վրայ նա տիրութիւն է անում,- գրում են Թեսսա Հոֆմանը եւ Ժիրայր Քոչարեանը՝ վերելում նշուած զեկուցագրում,- Վերջինները ճորտական կամ ֆլայական կախման մէջ են իրենց աղաներից: Ֆլային կարելի է վաճառել կամ մի ուրիշ աղայի նուիրել: Ֆլայի աղջիկն ամուսնանալուց առաջ նախ առաջին անգամ տրում էր աղային»³⁰⁹:

Խոշոր աւատապետական յարաբերութիւնների քայքայման պայմաններում երէկուայ հայ ֆլաներն այլեւս պարտադրութիւն մշակի կարգավիճակով աշխատանքի անցնել քուրդ միջին գիւղացիութեան մօտ, ինչը մեծապէս խոցելի էր դարձնում նրանց՝ հասարակական, կրօնական եւ մինչեւ իսկ ֆիզիկական առումով: «Այս քրդերը,- կարդում ենք վերելում նշուած զեկուցագրում,- հայերին դիտում են որպէս խամաճիկներ (մարիոնետներ) իրենց թշնամիների՝ աղաների ձեռքում եւ լաւատեղեակ լինելով, որ հայերը դիմադրութիւն ձեռնարկող չեն, կատարում են ամէն տեսակ ոճրագործութիւն հայերի հանդէպ՝ առանց որեւէ երկիւղի, քանի որ ոչ ոստիկանութիւնը եւ ոչ էլ աղաները չեն դիմելու հակամիջոցառման»³¹⁰:

Ահա այդ իւրայատուկ հասարակական յարաբերութիւնների կացութեան էլ իր հերթին բացասա-

կան հետք է թողել յատկապէս քրդաշատ նահանգների հայութեան արտահոսքի հարցում:

Թուրքահայ մամուլի էջերում յաճախ կարելի է հանդիպել 1960-70-ական թուականներին Մալաթիայում, Սասունում, Սեբաստիայում եւ այլուր ծնուած, 80-ականներին հասարակական կեանք թեւակոխած եւ Ստամբուլում հաստատուած հայերի կենսագրականների, որոնք այսպէս թէ այնպէս վկայում են հայութեան այս որոշակի արտահոսքի մասին՝ արեւելեան քաղաքներից եւ գիւղերից: Ահաւասիկ դրանցից մի քանիսը.

- Յակոբ Չըթաք. ծնուել է 1965 թ. Մալաթիայում: Նախնական ուսումը ստացել է Բանկալթիի Մխիթարեան վարժարանում³¹¹:

- Համբար Ազգայա. ծնուել է 1965 թ. Սվազի (Սեբաստիա) Գանգալ գիւղում: Աւարտել է պատրիարքարանի Սուրբ Խաչ դպրեւանքը³¹²:

- Մելինէ Պէլլերեան. ծնուել է 1958 թ. Էրզինջանում (Երզնկա): Աւարտել է «Էսայեան» աղջկանց վարժարանը³¹³:

- Էդիբ Թեմելջի. ծնուել է 1969 թ. Տիգրանակերտում: Աւարտել է պատրիարքարանի Սուրբ Խաչ դպրեւանքը³¹⁴:

- Արամ Դեմիր. ծնուել է 1965 թ. Սասունում: 2001 թ. եղել է «Ս. Փրկիչ» ազգային հիւանդանոցի հոգաբարձութեան անդամ³¹⁵:

³⁰⁸ Hofmann T., Armenians in Turkey today, October 2002, p. 17.

³⁰⁹ Ալիք, 1981, հոկտեմբերի 31:

³¹⁰ Նոյն տեղում:

³¹¹ Սուրբ Փրկիչ, 1985, մարտ, 36-րդ տարի, թիւ 425, էջ 3:

³¹² Սուրբ Փրկիչ, 1985, նոյեմ., 37-րդ տարի, թիւ 433, էջ 5:

³¹³ Սուրբ Փրկիչ, 1986, օգոստոս, 37-րդ տարի, թիւ 442, էջ 3:

³¹⁴ Նոյն տեղում:

³¹⁵ Սուրբ Փրկիչ, 2001, յունիս-յուլիս, թիւ 620-621, էջ 9:

Սոյն արտահոսքին առընթեր՝ պետական համակարգուած ծրագրով տարբեր էթնիկ խմբերով են բռնակեցուել հայաբնակ եւ հայապատկան տարածքները յատկապէս Արեւմտեան Հայաստանում: Ըստ Արման Գասպարի՝ Աֆղանստանից կիրգիզական բազմաթիւ խմբեր են բերուել եւ բնակեցուել Վանի հիւսիսային շրջանների ամայացած գիւղերում: «Թուրքթուրանական այս քաղաքականութիւնը,- գրում է Արման Գասպարը,- կը շարունակուի մինչեւ որ ամբողջ շրջանը հայազերծուի»³¹⁶:

Ընդգծենք, որ հայապատկան տարածքները թուրքական ցեղերով բնակեցնելն ինչպէս օսմանեան, այնպէս էլ հանրապետական Թուրքիայի հակահայ քաղաքականութեան կարեւոր դրսեւորումներից է եղել, որը սոյն ժամանակահատուածում էլ կիրառուել է:

Այս ժամանակահատուածում «պաշտօնական» հայութեան վիճակագրութեան մասին մանրամասն տեղեկութիւններ է տալիս թուրքական «Միլլիէթը» 1985 թ., որոնցից պարզուում է, որ հայերի ստոյգ թուի գնահատումը 1975 թ. սեպտեմբերի 19-ին ընդունուած մի օրէնքով հնարաւոր չի եղել: Ըստ «Միլլիէթի»՝ սոյն օրէնքը, որ ամրագրուած է «անձնագրային վերանորոգում» կոչուող կանոնադրութեան մէջ, թելադրում էր գործադիր պատկան մարմիններին՝ անձնագրերում չնշել դաւանական եւ համայնքային տեղեկութիւններ, այլ նշել միայն կրօնական պատկանելութիւնը (մահմեդական, քրիստոնեայ կամ հրեայ): «Հակառակ սրան,- գրում էր «Միլլիէթը»,- կատար-

³¹⁶ Գասպար Ա., Հայ ազատագրական պայքարն ու ահաբեկչութիւնը, Լոս Անջելես, 1989, էջ 112:

ուած մի շարք ստուգումների շնորհիւ եւ 1980 թ. մարդահամարից ձեռք բերուած արդիւնքների լոյսի տակ (մանրամասնութիւնները պարզ չեն մեզ- Կ.Խ.) ենթադրում է, թէ ներկայիս վաթսուն հազար հայեր են ապրում Թուրքիայի սահմաններում, որից 45 հազարն ապրում են Կ. Պոլսում եւ մնացածը (15 հազարը) ցրուած են հետեւեալ շրջաններում՝ Հաթայ, Իսկենդերուն, Մարդին, Դիարբեքիր, Սիւլայի, Մալաթիա, Սիիրտ, Սվազ, Հաքքեարի, Էլազիզ, Կեսարիա, Գաստամունի, Եօզգաթ, Ամասիա, Աֆիոն եւ Ադիեաման»³¹⁷: Տեղեկատուութեան բնոյթից կարելի է կռահել, որ նշուած թիւն անընչուում է «պաշտօնական» հայութեան:

Թուրքական «Հիւրգիւնը» 1985 թ. հոկտ. 26-ին հաղորդեց այն մասին, որ Շնորհք արք. Գալուստեանը հարցաքննուել է Թուրքիայի դատախազ Իպիշօղլուի կողմից՝ Երուսաղէմից եկած մի քահանայի միջոցով կրօնաւոր դառնալու ցանկութիւն ունեցող դիարբեքիրցի հայ տղաներին Երուսաղէմ տեղափոխելու գործի կապակցութեամբ³¹⁸: Սոյն հարցաքննութեան արդիւնքների մասին լուում է թերթը: Այլ աղբիւրներից գիտենք, որ այդ քահանան հայր Մանուէլ Երկաթեան էր:

Մանուէլ Երկաթեանի ձերբակալման հետ է զուգորդում նաեւ ատետարանական եկեղեցու քահանայ պատուելի Հրանտ Կիզէլեանի պարագան, որի դատավարութիւնը սկսուել է 1981 թ. հոկտեմբերի 2-ին:

³¹⁷ Ալիք, 1985, օգոստոսի 22:

³¹⁸ Ալիք, 1985, նոյեմբերի 24:

Էլրէնի զինուորական իշխանութիւններից կախուածութեան մէջ գտնուող դատախազը դատարանում շեշտում էր, որ Կիւզէլեանը բազմաթիւ «թուրք» որբ տղաների արեւելեան նահանգներից Ստամբուլ է բերել եւ նրանց հայութիւն քարոզել³¹⁹: «Նա 20 պատանիներ Դիարբեքիից եւ Մարդինից բերել եւ տեղաւորել է Թուզլուի կամպում», - ասել է դատախազը³²⁰:

Կարելի է ասել, որ Էլրէնեան հակահայ քաղաքականութեան հետեւանքով նոր լիցք է հաղորդուել նաեւ «պաշտօնական» հայութեան արտագաղթի երեւոյթին: Հոլանդահայ գաղութի մասին «Ազատ օրի» աշխատակից Նուբար Եսայեանի թղթակցութեան մէջ արտացոլւում են այս արտագաղթի դրսեւորումները. «Երեք հազար հինգ հարիւր հայերից մօտ հինգ հարիւրը հաստատուած են Ալմելօ քաղաքում: Սրանց ջախջախիչ մեծամասնութիւնը եկել է Տիգրանակերտի շրջաններից»³²¹:

Կիլիկիայի հայութիւնը (տարածք «գ»), պահպանելով հանդերձ ազգային-համայնքային իր դրուածքը, այնուամենայնիւ դիմագրաւել է պետականօրէն յարուցուած լուրջ դժուարութիւններ: Շնորհք արք. Գալուստեանը 1987 թ. Թուրքիայի վարչապետ Թուրգութ Օզալի հետ վարած իր բանակցութիւնների մասին հանրութեանը բացատրական տալով՝ ակնարկում էր. «Ասուեց նաեւ, որ Քրքիսանի հայոց եկեղեցին իր կալուածներով, տոմարներով եւ դրամներով գրաւուել է Վազըֆի վարչութեան կողմից, առանց որեւէ

պատճառաբանութեան, երբ տեղի վրայ դեռ ունենք 18 հոգանոց հայ համայնք»³²²:

Շնորհք արք. Գալուստեանը 1985 թ. մի խումբ հոգեւորականների հետ կրկին այցելել է գաւառահայութեանը: Այս այցի առիթով պատրիարքարանի դիւանի կողմից հրատարակուած զեկուցագրում որոշ նշումներ կան Կեսարիայի, Խարբերդի, Մալաթիայի, Դիարբեքիի եւ Դերիկի հայութեան մասին³²³: Այսպէս՝ Կեսարիայում 1985 թ. եղել է 10-12 հայ, Խարբերդում՝ 30-33 հայ ընտանիք, Մալաթիայում՝ շուրջ 25 հայ ընտանիք եւ Դերիկում՝ 150 հայ: Յատկանշականն այն է, որ այդ զեկուցագրում շեշտւում է Դերիկի հայութեան քրդալեզու լինելու եւ քրդական տարազ կրելու հանգամանքը³²⁴: Այսպիսով՝ կարելի է ընդգծել, որ սոյն հարցի խորքում ընկած է «թաքուն» եւ «խսւամացած» հայութեան իրականութիւնը հաշուի առնելու գիտակցութիւնը, որն առաւելաբար յատուկ է եղել Շնորհք արք. Գալուստեանին:

Պատրիարքի երրորդ եւ վերջին այցելութիւնը գաւառահայութեանը տեղի է ունեցել 1989 թ., որի ընթացքում ի յայտ են եկել նորութիւններ: Այսպէս՝ Սամսունում գիշերելուց յետոյ՝ յունիսի 8-ի առաւօտեան, նա անցել է Մերզիֆոն, ապա՝ Գիւմիւշհաճըզէոյ, ուր բոլոր հայերը, թերեւս մի քանիսի բացառութեամբ, լաւ հայերէն են խօսել ու հասկացել. «15 ընտանիքներ կան այնտեղ, բոլորն էլ կրում են հայկական անուններ:

³¹⁹ Ալիք, 1985, նոյեմբերի 24:

³²⁰ Նոյն տեղում:

³²¹ Ալիք, 1985, օգոստոսի 18:

³²² Արմենիա, 1987, ապրիլ, էջ 28:

³²³ Ալիք, 1985, նոյեմբերի 25 եւ 27:

³²⁴ Նոյն տեղում:

Ներկայում 12 հայ ընտանիքներ են ապրում Պողազլուեանի մէջ, շուրջ 40-50 հոգի»³²⁵:

Պարագան միանգամայն տարբեր է «թաքուն» հայերի մօտ: Նրանք, բացարձակ մեծամասնութեամբ, հայկական անուններ չեն կրում. «Պոլսէն դուրս թըրքախօս կամ քրդախօս հայերու թիւը ստուգուած չէ, գրում էր Հրանտ Գանգրունին «Արարատի» բացառիկ համարում 1987 թ.,- ապահովութեան համար մականուն, անուն փոխելը սովորական դարձած է»³²⁶:

Սոյն ժամանակահատուածում իսլամացման քաղաքականութեան դամոկլեան սրի սպառնալիքի տակ «Անատոլիա»-ի հայը «ներքին ամուսնութեան» կամ «օտարի չերթալու» մարտավարութեամբ մաքառում է իր ազգային նկարագրի պահպանման համար: Տիգրան Ղալեանն 1989 թ. իր ուղեգրութիւնների մէջ, բնութագրելով Սեբաստիայի հայութեան կեանքը, նոյնպէս հաստատում է շրջանի հայութեան կամքը՝ իսլամացման քաղաքականութեան դէմ. «Սկսածում ներկայում ապրում է 25 տուն հայ. առիթ ունեցանք նրանց մէջ լինելու: Սեբաստիայի եւ միւս քաղաքների հայերը մեծ ճիգ են թափում հայկական օջախ կազմելու եւ խուսափում են ոչ-հայերի հետ ամուսնանալուց. տեղում հանդիպեցինք երկու երիտասարդի, որոնք հայ կին ունենալու որոշումով հարս էին բերել էրզրումից եւ հեռաւոր Իսկենդերունից»³²⁷:

Ամուսնական հարցում այս խուսափողական մար-

տավարութեան կիրառման մասին մի «թաքուն» հայ էլ Քեմալ Եալչինին պատմել է, որ. «Քոյրս մի գեղեցիկ աղջիկ էր: Հօրս մօտ մեծացած, տարիներով իրեն ծառայած մի քուրդ աղա քրոջս իր տղայի համար հարս ուզեց: Հայրս, ամէն բան նկատի առնելով, չհամաձայնուեց: Յետոյ վախենալով, որ կարող է՝ փախցընեն քրոջս, նրան կարգեց «մերիններից» մի ճաղատ, տգեղ, աղքատ ու որբ հովուի հետ»³²⁸:

Պէտք է հաստատել, որ այս երեւոյթն ազգային դիմագծի պահպանման նպատակին է միտուած եւ, անշուշտ, չունի զուտ կրօնական ելակէտ: Երեւոյթն առկայ է ինչպէս «պաշտօնական» եւ «թաքուն», այնպէս էլ անգամ մէկ տասնեակ սերունդ առաջ «իսլամացած» հայութեան մէջ: Գառնիկ Ասատրեանն ու Արման Կիրակոսեանը համշէնահայութեան մէջ այս երեւոյթի առկայութեան մասին գրել են. «Թուրքիայի տարածքում պահպանուած հայերի թուին կարելի է դասել նաեւ, այսպէս կոչուած, համշէնացիներին, որոնք լիովին պահպանեցին իրենց բարբառը եւ սովորութիւնները: Նրանք ապրում են մեկուսացած եւ խուսափում են թուրքերի հետ խառն ամուսնութիւնից (ընդգծումը մերն է- Կ.Խ.)»³²⁹: Երեւոյթի պատմական նշանակութիւնն ընդգծելու նպատակով կարելոր ենք համարում վկայակոչել մխիթարեան միաբան Յակովբոս Տաշեանի տուած տեղեկութիւնը, ըստ որի՝ դեռ անցեալ դարասկզբին՝ 1911 թ. դրութեամբ, «իսլամացած» համշէնահայերը խուսափում էին «մահմետա-

³²⁵ Արմենիա, 1989, օգոստոս, էջ 36-37:

³²⁶ Արարատ, Բէյրութ, 1987, յունուար, էջ 6:

³²⁷ Ալիք, 1989, սեպտեմբերի 19:

³²⁸ Եալչին Բ., Հոգիս քեզմով կը խայտայ, Երեւան, 2003, էջ 350:

³²⁹ Ալիք, 1989, նոյեմբերի 19:

կան» լազերի, յոյների եւ թուրքերի հետ «խնամիական կապեր» հաստատելու³³⁰:

Արեւմտեան Հայաստանում (տարածք «ա») բընակուող «թաքուն» հայութիւնն այս ժամանակահատուածում էլ շարունակել է իր խիստ մեկուսացած կեանքը: «Զարթօնքի» 1984 թ. փետր. 23-ի համարն այդ շրջանի հայութեան մասին տալիս է մի դիպուկ տեղեկութիւն. «Վանի շրջանի բնակիչները յայտնում են, որ լեռների բարձրադիր գիւղերի մէջ հայեր կան»³³¹:

Համլէն եւ Պրոէն «Վերագտնուած յիշատակը» աշխատութեան մէջ, որ լոյս է տեսել 1983 թ., մէջ են բերել Վանում 1956 թ. ծնուած եւ Ֆրանսիայում հաստատուած մի հայի վկայութիւնները՝ երգրումում, Կարսում եւ այլ քաղաքներում ու գիւղերում բազմաթիւ հայ ընտանիքների հետ նրա հանդիպումների մասին³³²:

Պէտք է այստեղ ընդգծել, որ հաւատափոխութեան մարտավարութիւնն էլ լիարժէք չի նպաստել ծուլման քաղաքականութեանը: Սոյն ժամանակահատուածում թէեւ պետութեան կողմից վերակիրառուել է իսլամացման լայնամասշտաբ հնաւանդ քաղաքականութիւնը, այնուամենայնիւ թուրքացման ծաւալները դրան համարժէք չեն եղել: Թուրք մտաւորականութեան որոշակի խաւ լաւատեղեակ է այս

³³⁰ Տաշեան Յ., Հայ բնակչութիւնը Սեւ Ծովէն մինչեւ Կարին, Վիեննա, 1921, էջ 38:

³³¹ Պատմա-բանասիրական հանդէս, 1985, թիւ 1(108), էջ 221:

³³² Գասպար Ա., Հայ ազատագրական պայքարն ու ահաբեկչութիւնը, Լոս Անջ., 1989, էջ 111-112:

մարտավարութեան անձարակութեանն ու ապարդիւնութեանը: «Թուրքիայում ապրող հայերի մեծ մասը թուրքացած հայեր են,- գրում է պրոֆ. Ֆահիր Արմաօղլուն «Թերջումանի» 1988 թ. փետրուարի 17-ի համարում,- այսինքն՝ առանց իրենց ինքնութիւնը կորսնելու թուրքերի հետ խառնուել են եւ ձերբազատուել են Թուրքիայի նկատմամբ թշնամական զգացումներից (ընդգծումը մերն է- Կ.Խ.)»³³³: Պարզուում է, որ Թուրքիայի պետական շահերի դիտանկիւնից քրդացման, թուրքացման եւ իսլամացման յաջորդական քաղաքականութիւններից եւ ոչ մէկը չի տուել ցանկալի արդիւնքներ պատմական երկար կտրուածքի վրայ ...

Այս ժամանակահատուածի հայութեան ցրուածութիւնը պատկերացնելու համար նշենք, որ մինչեւ իսկ Դերսիմի մօտակայքում գտնուող Խոզատ (Հոզաթ) եւ Փերի (Աքբազար) երկու պատմական գիւղաքաղաքներում էլ, ըստ Թ. Խ. Յակոբեանի, գոյութիւն են ունեցել մի քանի հայ ընտանիքներ³³⁴:

Պատմաբան Ուղուր Ունգուրը (ծագումով՝ հաւանաբար քուրդ) Ամստերդամի Համալսարանի պատմութեան ամբիոնում 2005 թ. պաշտպանած աւարտաճառում (թեման կոչւում է «Սարսափի տիրութիւնը») հանգամանօրէն կանգ է առել բռնի դաւանափոխութեան հարցի վրայ՝ որպէս Հայոց Ցեղասպանութեան դառն հետեւանք: Թեզուսը գետեղուել է Բալուցի Զանգուլեան (այժմ Զինգիլ) ընտանիքի տոհ-

³³³ Նոր Մարմարա, 1988, փետրուարի 17:

³³⁴ Յակոբեան Թ. Խ., Պատմական Հայաստանի քաղաքները, Երեւան, 1987, էջ 147 եւ 247:

մածառը, որը գրի է առնուել նրա շառաւիղներից մէկի կողմից 1980-ականներին: Տոհմածառից եւ յարակից բացատրականներից պարզուում է, որ այդ ընտանիքի հայրը՝ Ասատուրը (վերանուանուած Նուրի) մահմետականացել եւ կնոջ՝ Աննայի հետ պատասպարուել է Բալուի շրջակայքում գտնուող Զիվեր գիւղում՝ մի զազա ընտանիքի մօտ: Ասատուրի զաւակները՝ Աղաւնին, Տիգրանուհին եւ Կարապետը, հերթականօրէն վերանուանուել են՝ Ֆերիդէ, Ազիմէ եւ Սայիդ ու ամուսնացել նոյն այդ զազա ընտանիքի զաւակների հետ: Յատկանշական է, որ Կարապետը (Սայիդ) հետագայում իր զաւակին անուանակոչել է Արմենակ: Իսկ Աղաւնին ունեցել է երկու զաւակ (Լուտֆիյէ եւ Հասսան), որոնց ընտանիքն այդ ժամանակահատուածում ապրել է Բալուում եւ այլն³³⁵:

«Թաքուն» հայ երեւոյթի արտաքին դրսեւորման վերաբերեալ հետաքրքիր տեղեկութիւն է տալիս դարձեալ «Զումհուրիէթի» թղթակից Գիւլդեմիրը: Վիրանշեհիրում բնակուող Իւնգեզ անունով մի հայի մասին պատմում է հետեւեալը. նա շատ քիչ հայերէն գիտէր, եւ իր գիտեցածը 70 տարի առաջ հայկական վարժարանում սովորած ընդամենը մի քանի աղօթքն էր³³⁶: Գիւլդեմիրն այդ երեւոյթը թերեւս «բնական» ծեւացնելու, բայց իրականում թուրքացման քաղաքականութիւնը մի կերպ կոծկելու նպատակով շարունակում է այսպէս. «Հայ հայրենակիցները երկար դարեր իսլամների հետ ապրելու այնքան են վարժուել,

որ իրենց աղօթքին էլ *նամազ* են կոչում... Արդէն, բացի լեզուից, մեծ տարբերութիւններ չկան երկու *նամազ*ների միջեւ: Երկուսն էլ գորգի վրայ ծունկի են գալիս եւ թելերը դէպի երկինք են բացում...»³³⁷:

Էւրէնի յեղաշրջական իշխանութիւնների իրականացրած կարեւոր «առաքելութիւններից» մէկն էլ այն էր, որ քաղաքական, հասարակական եւ, նոյնիսկ, քրէական ամբաստանութիւնների լայնատարած հըրապարակային տարափով շարքից հանուեցին հաւանական հակառակորդներն ու անցանկալի տարրերը: Այդ թւում «մաքրագործման» ենթարկուեցին նաեւ ոչ-թուրք էթնիկական պատկանելութեան բազմաթիւ պետական գործիչներ: ՄԻԹ-ի 221 հոգանոց «գաղտնի տեղեկագրում», որն իբր անցել է «Նոքթա» շաբաթաթերթի աշխատակիցների ձեռքը 1988 թ., հանդիպում ենք Արտաշ Բարթուղեանի, Աննիկ Սւաճեանի եւ Շիւքրու Բալչիի անուններին: «Նոքթա» շաբաթաթերթը Պոլսոյ ապահովութեան պետ Շիւքրու Բալչիի մասին յատուկ շեշտադրութեամբ գրում էր, որ նա «ծնուել է Դիվրիկիի (պատմական Դելիլկը) հայկական գիւղերից մէկում եւ ծագումով հայ է»³³⁸:

Հասկանալի պատճառներով Քրդական շարժման նկատմամբ չէր կարող անտարբեր մնալ «թաքուն» հայութիւնը: Յատկապէս Արեւմտեան եւ Հարաւարեւմըտեան Հայաստանում (տարածքներ «ա» եւ «բ») բռնկուած քրդերի ազատագրական զարթօնքն անմիջական ազդեցութիւն էր թողնում հայութեան վրայ:

³³⁵ Ungor U. U., A Reign of Terror, University of Amsterdam, Dep. of History, June 2005, p. 137.

³³⁶ Ալիք, 1981, դեկտեմբերի 9:

³³⁷ Նոյն տեղում:

³³⁸ Դրօշակ, Աթենք, 1988, սեպտեմբերի 28, էջ 40:

Այս առընչութեամբ յատկանշական է 1989 թ. նոյեմբերին Թուրքիայի պետական հեռուստատեսութեան հաղորդումը, որտեղ ասուում էր. «Նոյեմբերի 27-ին Հաքքեարիի Իւքսեքուա գաւառի Իքիեաքա գիւղում ահաբեկչական յարձակում է կատարուել, որի ընթացքում զոհուել են 28 մարդ: Գիւղից հեռանալիս ահաբեկիչները մի թռուցիկ են թողել սպանուածներից մէկի մօտ: Պարզուել է, որ այդ անձնաւորութիւնը Զեմիլ Ըշըքն է, որը ծագումով հայ է (ընդգծումը մերն է- Կ.Խ.)»³³⁹:

Քրդական շարժումներին հայութեան մասնակցութիւնն առաւել զգալի է դառնում յաջորդ ժամանակահատուածում: Այս երեւոյթը ոչ միայն ապացուցում է «թաքուն» հայութեան զանգուածային ներկայութիւնը նշուած տարածքներում, այլեւ լաւագոյնս բնութագրում է նրանց հակապետական կոշտ կողմնորոշումը, որին հանգամանօրէն կ'անդրադառնանք ստորեւ:

³³⁹ Պօղոսեան Ս. Կ., Քրդերը եւ Հայկական Հարցը, Երեւան, 1991, էջ 333:

Է- 1991- 2005 թթ. ժամանակահատուած

Այս ժամանակահատուածի բնորոշ շրջադարձն է կազմում Խ. Միութեան փլուզումը՝ իր բոլոր յարակից հարցերով եւ հետեւանքներով: Մի շարք քաղաքական վերլուծաբաններ փլուզման պատճառները հիմնականում գտնում են Խ. Միութեան եւ դրա արբանեակային համակարգի տնտեսական սնանկութեան, ռազմական եւ տիեզերական տեխնոլոգիաների անմըրցունակութեան եւ տկարութեան մէջ:

Սա, ի հարկէ, առանձին ուսումնասիրութեան նիւթ է: Սակայն մեր գնահատմամբ փլուզման գլխաւոր եւ առաջնային պատճառներն են հանդիսացել մէկ կողմից՝ խորհրդային համակարգում ազգային-էթնիկական հարցերի առկայութիւնը եւ միւս կողմից՝ տեղեկատուական աշխարհի սրընթաց զարգացումները:

Այս երկու գործօններն են, որ, ըստ մեզ, Խ. Միութեան փլուզման պատճառ հանդիսանալուց բացի՝ յեղափոխական իրավիճակի մէջ դրեցին բովանդակ տարածաշրջանի իրաւագրկուած ազգերին եւ էթնիկական խմբերին՝ իրենց անլոյծ կամ թերի լուծուած ազգային հարցերի արծարծման եւ արդար լուծման ուղղութեամբ:

Ազգային ինքնաճանաչման համընդհանուր այս զարթօնքը եւ տեղեկատուական ու հաղորդակցական միջոցների աննախադէպ թռիչքը ճակատագրա-

կան նշանակություն ունեցան խնդրոյ առարկայ հայութեան համար:

Թուրքիան Խ. Միութեան պէս բազմազգ պետութիւն լինելով հանդերձ՝ նոյն ճակատագիրը չունեցաւ: Սակայն Խ. Միութեան փլուզումը եւ դրա հետեւանքով խորհրդային հանրապետութիւնների անկախութիւնը կամ վերանկախացումը քաղաքական եւ իրաւական նախադէպ հանդիսացան միւս բոլոր բազմազգ պետութիւնների համար: Այդպիսով՝ Թուրքիան ապրեց եւ տակաւին ապրում է փլուզման ու տարածքային մասնատման զարհուրելի մղձաւանջ:

Թուրքիայի հաւանական փլուզման եւ հողային ամբողջականութեան քայքայման որեւէ ուղի, մեր համոզմամբ, անխուսափելիօրէն անցնելու է Հայկական Հարցի միջով: «Թուրքիայի համար,- գրում է հայ քաղաքական մտքի վաստակաշատ գործիչ Ռուբէն Տէր Մինասեանը,- Հայկական խնդիրը նոյնքան եւ աւելի վտանգաւոր կը համարուէր՝ քան քրդականը: Հայ ժողովրդի ազգային գիտակցութիւնը, բարձր մշակութիւնը, Հայկական Դատի միջազգային բնոյթն աւելի հաւանական կը դարձնէին Հայաստանի՝ քան Քուրդստանի ստեղծումը»³⁴⁰: Եթէ հայութեան ազգային ներուժի՝ Ռուբէնի թուարկած գործօններին գումարենք նաեւ անկախ Հայաստանի գոյութեան փաստը, ապա պատահական չպէտք է համարել բրիտանական BBC լրատուական ընկերութեան վերլուծութիւնը, համաձայն որի՝ «Թուրքիայում ոչ մի հարց չունի այն աստիճան զգայնութիւն, որքան հայերի ճակատագիրը Օս-

մանեան կայսրութեան վերջին տարիներում»³⁴¹: Իսկ այդ հարցն առնուազն «ամենազգայունը» չպէտք է լինէր, եթէ առնչուած չլինէր Թուրքիայի ներկայ իրողութեանը եւ ճատակագրական նշանակութիւն չունեւար դրա ապագայի վրայ:

Այս տեսակէտից սոյն ժամանակահատուածը տարբերում է միւսներից ոչ միայն իր այժմեականութեան եւ տուեալների համեմատական առատութեան, այլ մանաւանդ Թուրքիայի հայութեան հասարակական կեանքի եւ ազգային-հաւաքական գիտակցութեան բնագաւառներում արտացոլուող որակական փոփոխութեան առումով:

Հետեւաբար՝ այս ժամանակահատուածի մեր քննարկումներն առաւել տարաբնոյթ տեղեկութեամբ ներկայացնելով՝ կը փորձենք կացութիւնը որոշակիացնել մեր բնութագրած տիպերի՝ «պաշտօնական», «իսլամացած» եւ «թաքուն» հայութեան համար:

Է (ա) «Պաշտօնական» հայութիւն: Հայութեան միւս տեսակների համեմատութեամբ «պաշտօնական» հայութեան ներկայ վիճակի մասին առաւել քանակութեամբ տեղեկութիւններ կան մեր տրամադրութեան տակ: Որոշ բացառութեամբ նրա վիճակն այսօր եւս շարունակում է մնալ անմիջապէս: «Թայմզ» օրաթերթը 1994 թ. ազդանշան տուեց այն մասին, թէ Թուրքիայի դէմ մի նոր արշաւ պէտք է բացուի՝ պայմանաւորուած քրիստոնեաների վրայ ծանր ճնշումների առկայութեամբ: Լուրը հաղորդուել է Թուրքիայի

³⁴⁰ Դրօշակ, Ժնեւ, 1925, յուլիս, էջ 11:

³⁴¹ Ալիք, 2004, դեկտեմբերի 14:

արելեւեան նահանգներում ապրող քրիստոնեաների առիթով³⁴²: «Թայմզի» թղթակիցն ընդգրկուն տեղեկատուութեան մէջ գրում է, որ այդ քրիստոնեաներն այլեւս չեն դիմանում ճնշումներին եւ ստիպուած լքում են իրենց հայրենի տարածքները:

«Պաշտօնական» հայութեան շարունակուող արտահոսքին 1994 թ. անդրադառնում է նաեւ պոլսահայ գրող Ռ. Հատտէճեանն իր «Յուշատետրում»՝ առաւել ծանրանալով արտահոսքին տոն տուող սոցիալ-տնտեսական պատճառների վրայ: «Գաւառի մէջ նրանցից ոմանց համար,- գրում է Հատտէճեանը,- կեանքի պայմաններն անտանելի էին, հողագործութիւնը բաւարար չէր, բազմանդամ ընտանիքները բաւականաչափ հող կամ բերք չունէին՝ իրենց ապրուստն ապահովելու համար: Երիտասարդ այրեր, գաւառի մէջ թողնելով իրենց նորապսակ կանանց, Պոլիս էին գալիս՝ զանազան արհեստների մէջ աշխատելու, մինչեւ իսկ բեռնակրութիւն էին անում: Աշխատում էին ու գիշերները կարօտի երգեր էին երգում իրենց կանանց ու ծննդավայրի համար...»³⁴³:

«Պաշտօնական» հայութեան իրավիճակին անդրադառնալու համար կարելու է ճշտել նրա թուային մօտաւոր պատկերը: Որոշ տուեալների համաձայն՝ 1990-ականների կեսին Թուրքիայի հայութեան թիւը հասնում էր 82 հազարի, որից չորս հազարը գաւառներում էր ապրում³⁴⁴:

1995 թ. հրատարակուած «Հայերն աշխարհում»

³⁴² Ալիք, 1994, մայիսի 19:

³⁴³ Ալիք, 1994, նոյեմբերի 2:

³⁴⁴ Ալիք, 1994, մայիսի 16:

համառօտ հանրագիտարանը Թուրքիայի «պաշտօնական» հայութեան թուաքանակը գնահատում է մօտ 10 հազար³⁴⁵ (տես՝ Աղ. 8): Ակնյայտ է, որ սոյն ցանկից բացառուած են պատմական Կիլիկիայի հայկական բնակավայրերը: Հանրագիտարանում նշուած թուերն առնուազն Տիգրանակերտի եւ Մալաթիայի դէպքում գերազնահատուած են, Կեսարիայի դէպքում՝ թերագնահատուած, իսկ Խարբերդի պէս կարելու համայնքն անտեսուած է առհասարակ: Հետեւաբար ենթադրելի է, որ հանրագիտարանն առաւելապէս օգտուել է ոչ թէ 1970-ականների, այլ աւելի հին աղբիւրներից: Այդուհանդերձ՝ հանրագիտարանի այս տեղեկանքը կարելու է ոչ այնքան հայ բնակչութեան թուաքանակի, որքան համայնքների թուի ճշտորոշման համար:

	Տեղանուն	Ընտանիք
1	Անկարա	300
2	Մալաթիա	120
3	Դիարբեքիր (Տիգրանակերտ)	110
4	Սվազ (Սեբաստիա)	72
5	Թոքատ (Եդոկիա)	29
6	Կայսերի (Կեսարիա)	28
7	Ամասիա	36
8	Արաբկիր	12
9	Քեմալիէ (Ակն)	6
10	Սասունի գիւղեր	69

Աղիւսակ 8

³⁴⁵ Հայերն Աշխարհում, Երեւան, 1995, էջ 45:

Սահմանափակ թուով համայնքների հայ բնակիչների թուաքանակի առումով առաել այժմեական է 1997 թ. պատրիարքական ընտրություններին մասնակիցների թուապատկերը՝ գաւառական հինգ ընտրատարածքներում³⁴⁶ (տես՝ Աղ. 9):

	Ընտրատարածք	մասնակցողների թիւ
1	Կեսարիա	59
2	Դիարբեքիր	5
3	Իսքենդերուն	41
4	Քրքիսան	7
5	Վազըֆ գիւղ	121

Աղիւսակ 9

Համայնքների թիւը, անշուշտ, աւելին է: «Թուրքիայի հայոց համայնքային օրացոյցը» 1991 թ. համապարփակ մի պատկեր է ներկայացրել Թուրքիայի հայութեան ազգային կառոյցների վերաբերեալ: Դրա մի բաժնում պարզուր է, որ «Կեսարիայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցուն կապուած են Անկարայի, Ամասիոյ, Գաստամոնիի, Գիւմիւշհաջըքէոյի, Եօզգաթի, Բողազլեանի, Սվազի, Թոքատի եւ Կենտրոնական Անատոլիայի բոլոր համայնքները: Տիգրանակերտի Ս. Կիրակոս եկեղեցուն կապուած են Մալաթիոյ, Էլազիզի, Բիթլիսի, Սասունի եւ այլ Հարաւարեւելեան Անատոլիայի հայ համայնքները: Իսկենդերունի Ս. Քառասուն Մանկունք եկեղեցուն կապուած են Ադիեամանի, Մէրսինի եւ հարաւարեւմտեան Անա-

³⁴⁶ Նոր Մարմարա, 1998, հոկտեմբերի 12:

տոլիայի այլ հայ համայնքները (ընդգծումները մերն են - Կ.Խ.)»³⁴⁷:

Սոյն քաղաքներում «պաշտօնական» հայութեան բնակութեան կապակցութեամբ 1998 թ. Թուրքիայի հայոց պատրիարքարանի դիւանի զեկուցման մէջ եւս մի կարեւոր հաստատման ենք հանդիպում, ուր լայն բացատրութիւն է տրուել նորընտիր պատրիարքի գահակալութեան արարողութեան վերաբերեալ: Ձեկոյցի 4-րդ կէտի համաձայն՝ «150 հոգիանոց պրոտոկոլի ցանկում» ի թիւս այլոց նկատի էին առնուել «Անկարայի, Կեսարիայի, Ամասիայի, Գաստամոնիի, Գիւմիւշհաջըքի, Եօզգաթի, Բողազլեանի, Սվազի, Թոքատի, Դիարբեքիրի, Մալաթիայի, Էլազիզի, Բիթլիսի, Սասունի, Իսկենդերունի, Ադիեամանի, Մէրսինի հայ համայնքների ներկայացուցիչները, որոնք լատկապէս գահակալութեան մասնակցելու համար Ստամբուլ են հրաւիրուել (ընդգծումը մերն է - Կ.Խ.)»³⁴⁸:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ հայկական «պաշտօնական» համայնքներ գոյութիւն ունեն «Անատոլիայի» 17 նահանգներում եւ վարչատարածքներում:

2000 թ. Թուրքիայի հայոց պատրիարքի եւ կրօնի նախկին տեսուչ Լիւթֆի Դողանի շուրջ մէկժամանոց հեռուստազրոյցում եւս որոշակիօրէն շօշափում է գաւառների հայկական համայնքների խնդիրը եւ բացատրում համայնքային դժուարութիւնների ու քաղաքացիական բարդութիւնների հարցը: «Այսօր ըՍ-

³⁴⁷ Արմենիա, 1991, յունիս, ԺԱ տարի, թիւ 6, էջ 7:

³⁴⁸ Ժամանակ, Ստամբուլ, 1998, նոյեմբերի 11:

տամբուլում ու բովանդակ թուրքիայում գործող 44 եկեղեցիներ ունենք,- ասում է Մեսրոպ արք. Մութաֆեանը,- սրանից բացի՝ կան 14 համայնքներ եւս, որոնք իրենց ապրած տեղում եկեղեցի չունեն, ինչպէս՝ Անկարա, Մալաթիա, Սվազ: Այս կարիքների դիմաց ունենք միայն 25 եկեղեցականներ, որը շատ քիչ է...»³⁴⁹:

Մեր ժամանակներում թուրքիայի հայկական համայնքների մասին կենդանի վկայութիւնների ու նկարագրութիւնների նշումը կարող է աւելի առարկայական մտապատկերացումներ ստեղծել:

Մուսա Լեռան 2002 թ. ուխտագնացութեան մասին «Նոր Մարմարայի» թղթակիցը գրում է. «Վազըֆ գիւղի աւանդական հանդիսութեան առիթով ուխտագնացութեան մասնակցեց նաեւ Ներսէս արք. Պոզապալեանը: Ուխտաւորներ ներկայ էին նաեւ Էլազիզից (Խարբերդ), Մալաթիայից, Սեբաստիայից, Մէրսինից, Ադանայից, Անկարայից, Ադիեմանից եւ Տիգրանակերտից»³⁵⁰:

Քաղաքական, պատմական եւ աշխարհագրական բազմաթիւ պատճառներով պատմական Կիլիկիան (տարածք «գ») կարելի է համարել «պաշտօնական» հայութեան ներկայ ժամանակների ազգապահպանման միջնաբերդը: Նօսրացման, արտահոսքի եւ ուժացման վտանգին ենթակայ ու պետական խոչընդոտների դէմ մաքառող Կիլիկեան համայնքները մեծապէս պահպանել են իրենց ազգային դիմագիծը՝ այնքանով, որ կարելի է դրանք համարել Կ. Պոլսի հայութեան հասարակական-մշակութային կեանքի

շարունակութիւնը: Այդտեղ, բացի համայնքային-ընտրական իրաւունքներից, առկայ են ազգային-հաւաքական կեանքի առողջ նշոյլներ: Ահա այդ իրողութիւնը հաստատող երկու վկայութիւն.

- «Պատրիարք Սրբազանը ժամանեց Վազըֆ գիւղ, որի մուտքի մօտ Պատրիարքն ու ուղեկիցները դիմաւորուեցին թմբուկ-գուռնայով եւ պարմանների ու պարմանուիների պարերով, մի տեսարան, որ յուզիչ էր: Ամէն մարդ հայերէն էր խօսում, երգում էին տոհմիկ երգեր ու եղանակներ»³⁵¹:

- Կամ. «ԱՂԱՆԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄ... Պատրիարք Հայրն այստեղ մեծ ուրախութեամբ դիմաւորուեց տեղի կաթօլիկ վարդապետի եւ զոյգ մայրապետերի կողմից, որոնք Նորին Ամենապատուութեան այցելութեան առիթով հրաւիրել էին ադանացի հայերին: Հաւաքուած էր հայերից շուրջ քսանհոգանոց մի խումբ, բոլորն էլ հայկական անուններով...»³⁵²:

Պատրիարքի 2002 թ. Մէրսին քաղաք այցելութեան ընթացքում տեղի Կաթօղիկէ եկեղեցու պետ Հայր Գրեգորիօ Բրունօ Սիմոնելլին, իր տուած քարոզում դիմելով պատրիարքին, ասում է. «Տարին զոնէ մէկ անգամ գալիս էք մեր քաղաքը եւ չափազանց ուրախութիւն էք պատճառում ոչ միայն տեղացի հայ հաւատացեալներին, այլ նաեւ քաղաքիս բոլոր քրիստոնեաներին (ընդգծումը մերն է- Կ.Խ.)»³⁵³:

Մէրսինի հայ բնակչութեան թուաքանակի մասին թարմ տեղեկութիւն է հաղորդում Կարալիս Տեր Եղ-

³⁴⁹ Նոր Մարմարա, 2000, փետրուարի 5:

³⁵⁰ Նոր Մարմարա, 2002, օգոստոսի 19:

³⁵¹ Նոր Մարմարա, 1999, ապրիլի 1:

³⁵² Ժամանակ, 2000, ապրիլի 4:

³⁵³ Նոր Մարմարա, 2002, օգոստոսի 20:

իայեանը 2006 թ. Կիլիկիա, Կապադովկիա եւ Արեւմըտեան Հայաստան կատարած ուխտագնացութեան ուղեգրութեան մէջ, ուր ասում է, որ. «200 կամ աւելի հայ է դեռ ապրում Մէրսինում»³⁵⁴:

Թում է, թէ մշակութային կեանքը Կիլիկեան պատմական համայնքներում ընթանում է քիչ թէ շատ բնականոն եւ մինչեւ իսկ անկաշկանդ: Վազըֆ գիւղի նորաշէն եկեղեցու պարտէզում Արամ Խաչատրեանի 100 ամեակին նուիրուած հանդիսութեան կապակցութեամբ պատրաստուած լրատուութեան մէջ ասում է. «Եկեղեցին եւ բակը ծայրից ծայր լեցուն էր գիւղացի հաւատացեալներով. ներկայ էին բազմաթիւ ուխտաւորներ՝ Մէրսինից, Ադանայից, Իսկենդերունից, Անտիոքից, Սամանդաղից»³⁵⁵:

Այս եւ բազմաթիւ այլ պատճառներով Վազըֆ գիւղը բացառիկ դիրք է գրաւում: Այն հարուստ մանրամասնութեամբ է բնութագրում օտարազգի հետազօտող ժողիոն Նաէգլէն: Ըստ նրա՝ գիւղն էրնիկական իմաստով միատարր է, եւ միայն մէկական թուրք եւ քուրդ ընտանիքներ են բնակում այնտեղ, եկեղեցին հիմնական վերանորոգման է ենթարկուել իսլամիստ Ռեֆահ (Բարօրութիւն) կուսակցութեան իշխանութեան օրօք, եւ բնակիչները, հանրային վայրերում թուրքերէն խօսելով հանդերձ, լաւ են տիրապետում մայրենի լեզուին եւ ընտանեկան միջավայրերում հայերէն են խօսում եւ այլն: «Հայկական համայնքը Վազըֆում, - ըստ բուն Վազըֆցի Պետրոս Քեհիրօղլուի՝

նշում է ժողիոն Նաէգլէն, - վայելում է հարիւր տոկոսանոց աւտոնոմիա»³⁵⁶:

Իսկ ազգային գիտակցութեան պահպանման կենսական անհրաժեշտութեան վերաբերեալ Պետրոս Քեհիրօղլուն յայտնել է ժողիոն Նաէգլէն, որ «չի կարելի վստահել այն անձնաւորութեանը, որն ուրանում է իր ինքնութիւնը...»³⁵⁷:

Կիլիկիեան համայնքներում առկայ է նոյնիսկ համեմատական որոշ կազմակերպութիւններ (թաղային խորհուրդ եւ այլն): Ահա երկու վկայութիւն.

- «Պատրիարք Հայրն ու ուխտաւորները երեկոյեան ժամը 4-ին ժամանեցին Իսկենդերունի Սրբոց Քառասուն Մանկանց եկեղեցին, որի մուտքի մօտ դիմաւորուեցին թաղային խորհրդի ատենապետ եւ Ս. Խաչ դարեվանքի սան Յովհաննէս Սիլահլըի, միւս թաղականների եւ տեղացի մի խումբ հայ հաւատացեալների կողմից»³⁵⁸:

- «Մարտի 29-ի շաբաթ կէսօրից յետոյ պատրիարքն ինքնաթիռով հասաւ Ադանա եւ պատուոյ սրահի մէջ դիմաւորուեց Լեւոն եւ Էմէլ Էրարսլանների (Ադանայից), Կարպիս Քըսատուրի եւ Խոսրով Քէօլէդալիթօղլուի (Իսկենդերունից) եւ Պետրոս Շիշմանեանի (Վազըֆ գիւղից) կողմից»³⁵⁹:

Հակառակ այս իրողութեան՝ ներկայումս Փոքր Հայքի եւ յարակից շրջանների (տարածք «դ») «պաշ-

³⁵⁴ Der-Yeghiayan G., The Presence of the Past, Lebanon, 2008, p. 18.

³⁵⁵ Նոր Մարմարա, 2003, սեպտեմբերի 30:

³⁵⁶ Naegele J., Turkey: Village survived the century's first mass ethnic expulsion, 27 May 1999.

³⁵⁷ Նոյն տեղում:


³⁵⁸ Նոր Մարմարա, 2002, օգոստոսի 21:

³⁵⁹ Նոր Մարմարա, 2003, մարտի 3:

տօնական» հայութեան վիճակն այնքան էլ մխիթարական չէ: Լրատուութիւններից պարզու՛մ է, որ ինչպէս որակական, այնպէս էլ քանակական առումով այս տարածքի համայնքները լուրջ նահանջ են ապրում: «Նոր Մարմարայում» կարդում ենք. «Շաբաթ առաւօտեան արարողութեան ներկայ գտնուելու համար հայեր ժամանեցին նաեւ Սվազից (ուր դեռ 115 հայեր են ապրում) եւ Պողազլեանից...»³⁶⁰:

«Պաշտօնական» հայութեան արտահոսքի քանակական չափերը բնորոշելու համար Սեբաստիայի օրինակը գտնում ենք նպատակայարմար, քանզի յաջորդական ժամանակահատուածների դրա հայ բնակչութեան մասին մեր տրամադրութեան տակ են նախապէս ակնարկուած բաւարար տուեալներ, որոնք Սեբաստիայի «պաշտօնական» հայ բնակչութեան հոլովոյթի մօտաւոր պատկերը կազմելու հնարաւորութիւն են տալիս (տես՝ Նկ.5):

Սեբաստիայի «պաշտօնական» Հայ բնակչութեան հոլովոյթը՝ ըստ թուականի



Նկար 5

³⁶⁰ Նոր Մարմարա, 2001, մարտի 27:

Ենթադրում ենք, թէ առհասարակ Փոքր Հայքի եւ յարակից շրջանների «պաշտօնական» հայութեան արտահոսքը նման մի հոլովոյթ ունի:

Կեսարիայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, որ 50-ականներին հանդիսանում էր «պաշտօնական» հայութեան հոգեւոր կենտրոնը, ուր բազմամարդ հաւատացեալներով կատարուում էին արարողութիւններ, այժմ գտնուում է յուսահատական պայմաններում. 2003 թ. փետրուարի 9-ին՝ «Երեկոյեան ժամը 5-ին Կեսարիայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում, - կարդում ենք «Նոր Մարմարայում», - երեխայից սուրբ պատարագ մատուցուեց պատրիարք Հօր միջոցով եւ Արգէոս սարից վերադարձող երիտասարդների ու նաեւ Կեսարիա-Կապադովկիայում բնակուող մի քանի հայերի մասնակցութեամբ»³⁶¹:

Այս եկեղեցու եւ Կեսարիա քաղաքի ռազմավարական նշանակութեան մասին այսպէս է գրում նաեւ Կ. Պոլսի (կամ՝ Թուրքիայի հայոց) պատրիարքարանի պաշտօնաթերթ «Լրաբերը». «Հայ եկեղեցու համար կարեւոր ուխտատեղի է այս քաղաքը եւ յատկապէս քաղաքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, որ կենտրոնական Անատոլիայի պաշտամունքի բանուկ միակ հայ եկեղեցին է»³⁶²:

Թղթակցութիւններից կռահելի է դառնում Փոքր Հայքի եւ յարակից շրջանների «պաշտօնական» հայերի ցրուածութեան չափը. օրինակ՝ «Գաստամունիի կենտրոնի մէջ այսօր բնակւում են 12 հայ ընտանիք-

³⁶¹ Նոր Մարմարա, 2003, փետրուարի 17:

³⁶² Լրաբեր, Ստամբուլ, 2004, յունիսի 26:

ներ, ընդամենը 40 անձ,- դարձեալ կարդում ենք «Նոր Մարմարայում», - իսկ Թաշքէնփրուում բնակում են 11 հայ ընտանիքներ, ընդամենը 37 անձ»³⁶³ (ընդգծումները մերն են- Կ.Խ.): Կամ՝ պատրիարքարանի հրապարակած «Եկեղեցականք-պաշտօնականքում» կարդում ենք. «Սեպտ. 26, Ուրբ.- Նորին Ամենապատուութիւնը Գոնիայում ժամը 10-ին ուխտի այցելութիւն տուեց Ս. Պօղոս կաթողիկէ եկեղեցուն, ուր նախագահեց երեխայից սուրբ պատարագին: Աւարտին Նորին Ամենապատուութիւնը հանդիպում ունեցաւ տեղի կաթողիկէ կրօնաւորների եւ Հայ Առաքելական Եկեղեցու անդամների հետ (ընդգծումները մերն են- Կ.Խ.)»³⁶⁴: Երիտասարդ գրագիտուի ժաքլին Չելիքը, որ վերջերս շրջագայել է «Անատոլիա»-ի 50 քաղաքներում, ուսումնասիրել է այդ շրջանների հայկական եւ յունական եկեղեցիները, տալիս է շատ անմիջական տեղեկութիւններ յատկապէս Փոքր Հայքի եւ յարակից շրջանների հայութեան մասին: «Ուր կ'երթա,- գրում է «Մարմարան» նրա շրջագայութեան մասին 2005 թ. օգոստոսի 4-ի համարում,- ան կը գտնէ նաեւ հայ մը», ինչպէս Սվազի Թավրա գիւղում՝ Երւանդ Տուրմազկիւլերին, Օրդու քաղաքում՝ Յարութիւն Վարպետին եւ այլն»³⁶⁵:

Քրդաշատ Հարաւարեւմտեան Հայաստանում (տարածք «բ») հայ համայնքներն գտնւում են գրեթէ նոյն վիճակում, թէեւ այնտեղ «պաշտօնական» եւ

³⁶³ Նոր Մարմարա, 2003, սեպտեմբերի 20:


³⁶⁴ Նոր Մարմարա, 2003, հոկտեմբերի 4:

³⁶⁵ Նոր Մարմարա, 2005, օգոստոսի 4:

«թաքուն» հայերին զանազանող սահմաններն աւելի առաձգական են եւ անորոշ: Ի տարբերութիւն «թաքուն» հայութեան, «պաշտօնական» համայնքներն այնտեղ էլ նօսրանում են: Պատրիարքարանի Կրօնական ժողովի 1998 թ. վերջին նիստի մասին մամուլում հրապարակուած յայտարարութեան մէջ կարդում ենք. «Դիարբեքիից դէպի Պոլիս գաղթը շարունակուեց վերջին ամիսներում եւս՝ պատմական այդ քաղաքի մէջ թողնելով միմիայն 6 հայեր»³⁶⁶:

Տիգրանակերտի պարագայում էլ, Սեբաստիայի օրինակով, կարելի է կազմել բնակչութեան հոլովոյթի մօտաւոր պատկերը (տես՝ Նկ. 6):

Տիգրանակերտի «պաշտօնական»
Հայ բնակչութեան հոլովոյթը՝ ըստ թուականի



Նկար 6

Տիգրանակերտի հայաթափումը չի վրիպել անգամ այլազգի հետազօտողի քննական հայեացքից.

³⁶⁶ Նոր Մարմարա, 1998, դեկտեմբերի 31:


«Դիարբեքիրում,- զեկուցում է Նատալի Տոչչին 2001 թ.,- ուր մի ժամանակ ապրում էին 250 հազարից ավելի հայեր, այսօր ապրում են փոքր թուով հայ ընտանիքներ միայն: Եկեղեցու մօտ էր գտնուում ծերունու տունը եւ մի փոքրիկ մատուռ, որը դեռեւս օգտագործում էր քաղաքում մնացած փոքր թուով հայ ընտանիքների կողմից»³⁶⁷:

Տիգրանակերտի «պաշտօնական» հայ բնակչության հոլովոյթի պատկերը համեմատելով Սեբաստիայի համապատասխան պատկերի հետ եւ հաշուի առնելով Թուրքիայի քաղաքաբնակչության պատկերը³⁶⁸ (տես՝ Նկ. 7)՝ կարելի է ասել, որ 1960-ականներին Տիգրանակերտի հայ բնակչության ժամանակաւոր աճը հետեւանք է եղել շրջակայ գիւղերից դեպի քաղաք արտահոսքի: Երեւոյթի գլխաւոր պատճառը գիւղատնտեսական պայմանների վատթարացումն էր, որը, ինչպէս տեսանք, առաւել մեղմ դրսեւորում է ունեցել մանր արհեստով եւ առետրով զբաղուող Փոքր Հայքի եւ յարակից շրջանների հայ համայնքներում: Հետեւաբար՝ կարելի է եզրակացնել, որ ի տարբերութիւն Փոքր Հայքի եւ յարակից շրջանների, Հարաւարեւմտեան, հաւանաբար նաեւ Արեւմտեան Հայաստանում հայ գիւղացիության թիւը քաղաքային բնակչության համեմատ ավելի մեծ է եղել:

³⁶⁷ TOCCI N., Our future southeastern turkish frontiers, CEPS Policy Brief No 6, Oct. 2001, p. 3.

³⁶⁸ Oehring O., Human Rights in Turkey, Secularism, Religious Freedom, 2002, missio order no 600 215, p. 2.

Թուրքիայի քաղաքաբնակչության պատկերը



Ամէն դէպքում «պաշտօնական» հայության արտահոսքը երկու տարածքներում էլ ակնյայտ է դառնում 1970-ականներից սկսեալ:

Տիգրանակերտի մօտակայքում գտնուող Դերիկում էլ, ուր նոյնիսկ պաշտօնապէս գրանցուած գործող եկեղեցի կայ, բնականաբար վիճակը նոյնն է. «Ամեն. Ս. պատրիարք Հայրը,- «Նոր Մարմարային» են հաղորդում պատրիարքարանից,- աւարտեց իր շփումները Տիգրանակերտում եւ 14 սեպտեմբերի 2002-ի շաբաթ առաւօտեան իր ընկերակիցների հետ ուղեւորուեց դէպի Մարդինի Դերիկ գիւղաքաղաք: Պատրիարք Հայրն առաջնորդուեց կառավարական շէնք, ուր քաղաքավարական այցելութիւն տուեց Դերիկի գաւառապետ Մուստաֆա Ունադըին: Գաւառապետը բացատրեց Դերիկի մասին՝ յայտնելով, թէ այս գիւղաքաղաքում փոքրաթիւ հայ ընտանիքներ են բնակուում (ընդգծումը մերն է- Կ.Խ.)»³⁶⁹:

³⁶⁹ Նոր Մարմարա, 2002, սեպտեմբերի 19:

Մալաթիայից էլ պատկերը մխիթարական չէ: Թուրքական հարցերով փորձագետ Հայկարամ Նահապետեանի համոզմամբ այժմ այնտեղ ապրում է ընդամենը 10 հայ³⁷⁰, որոնց մասին երբեմն լսում են արտառոց լուրեր, օրինակ. «Մալաթիացի մի հայ սիրարկածի զոհ...»³⁷¹ Եւ այլն: Սակայն ստացուած այլ տեղեկութիւնները վկայում են, որ այնտեղ բնակուող «պաշտօնական» հայերի թիւն աւելին է: Կ. Պոլսի պատրիարքին տուած այցելութեան ժամանակ, 2005 թ. մարտի 12-ին, Մալաթիայի հայութեան պատուիրակութիւնը՝ Յարութ Կուրումլուի եւ Կարապետ Զեկեմի գլխաւորութեամբ, յայտնում է պատրիարքին Մալաթիայում դեռ բնակուող 40 հայ ընտանիքների գոյութեան մասին³⁷²: Էլեկտրոնային լրատուացանցերի 2006 թ. օգոստ. 26-ի հաղորդած տեղեկութիւնից պարզուում է, որ Մալաթիա քաղաքում մնացած 30 հայ ընտանիքները դիմում են կատարել՝ իրենց եկեղեցին վերաբացելու խնդրանքով³⁷³: Լրատուութեան մէջ նշուում է ներկայումս Ստամբուլում բնակութիւն հաստատած 1,200 մալաթիացի հայ ընտանիքների եւ Մալաթիայի շրջակայքում բնակուող բազմաթիւ «թաքուն» հայերի մասին³⁷⁴:

³⁷⁰ Նահապետեան, Հ., Հայլուրի համար, Երեւան, 2004, յուլիս:

³⁷¹ Նոր Մարմարա, 2003, մարտի 1:

³⁷² <http://www.geocities.com/cryptoarmenians/MalChurch.html>.

³⁷³

http://www.pressbox.co.uk/detailed/Arts/Armenians_in_Malatya_so_on_to_demand_the_reopening_of_the_church_79067.html.

³⁷⁴

http://www.pressbox.co.uk/detailed/Arts/Armenians_in_Malatya_so_on_to_demand_the_reopening_of_the_church_79067.html.

Խարբերող, սակայն, մինչ օրս շարունակուում է գոյատեւել որպէս համեմատաբար կայուն «պաշտօնական» համայնք Հարաւարեւմտեան Հայաստանում (տարածք «Բ»): Երկրաշարժի հաւանական վնասների մասին տեղեկանալու նպատակով պատրիարքը 2004 թ. օգոստոսի 11-ին կապուել է Էլազիզի (Խարբերդ) հայ համայնքի ներկայացուցիչների հետ եւ տեղեկացել, որ «38 ընտանիքներից բաղկացած տեղի համայնքը չի վնասուել շարժի հետեւանքով (ընդգծուումը մերն է- Կ.Խ.)»³⁷⁵:

Տեղեկութիւնների հանրագումարը ցոյց է տալիս «պաշտօնական» համայնքների նօսրացման ընդհանուր ուղղութիւնը: Այս հարցի կապակցութեամբ պէտք է ընդգծել մի կարեւոր հանգամանք. ի տարբերութիւն «խսլամացած» եւ «թաքուն» հայութեան՝ «պաշտօնական» հայութիւնը, ազգային-կրօնական կեանքի խիստ սահմանափակութեան պայմաններում (ըստ պաշտօնական յայտարարութիւնների՝ զաւառներում գործում է ընդամենը վեց եկեղեցի³⁷⁶, եւ ի հարկէ՝ ոչ մի հայկական դպրոց) պարտաւորուել է գաղթել Ստամբուլ:

Առերեւոյթ այս արտահոսքը թւում է «ինքնակամ» եւ ոչ բռնի, սակայն դրան տոն տուող իրական մղիչները, անշուշտ, պէտք է փնտրել պետականօրէն ստեղծուած սահմանափակումների եւ տեղական իշխանութիւնների կողմից յարուցուած համայնքային եւ հասարակական դժուարութիւնների մէջ: Հանգամանք,

³⁷⁵ Ժամանակ, Ստամբուլ, 2004, օգոստոսի 12:

³⁷⁶ <http://www.hyetert.com/rehber.asp>.

որ ամբողջությամբ է պատճառ դարձել «խախտման» եւ «թաքնում» հայտնաբերման արտահոսքի:

«Պաշտոնական» հայտնաբերման ցրտաճարձան պատկերը որոշակիացնելու մտադրությամբ օգտագործվել է համացանցային մի նոր հնարավորություն, որի գիտական արժեքը մեթոդաբանական դիտարկումներից քննարկման եւ ուսումնասիրության է կարօտ: Մինչ այդ, սակայն, կիրառելով ICQ կոչումը, «պատգամատար» (messenger) համացանցային տեսակի ընտանիքին պատկանող ծրագիրը՝ կարելի է ուշագրավ արդիւնքների յանգել: Ի տարբերություն միւս ծրագրերի՝ ICQ-ի «Հանրային որոնում» (People search) բաժինը տալիս է մի բացառիկ կարելիություն, որն է հասցէներ որոնելն ինչպէս բնականության երկրի եւ քաղաքի, այնպէս էլ լեզուական նախասիրության հիման վրայ: Այսպիսով՝ հնարավոր է դառնում գտնել, օրինակ, Թուրքիայի Արդուինի նահանգում բնակուող այն անձերի համացանցային հասցէները, ովքեր իրենց լեզուական նախընտրությունների եռեակ ցանկում նշել են նաեւ հայերէնը: Այս նոր մեթոդով 2005 թ. փետրուարի որոնումներից ստացուել է հայերէն լեզուին ծանօթ մարդկանց համացանցային հասցէների քանակը՝ մեր պայմանական տարածքներում (տես՝ Աղ. 10):

	Տարածք	Մարդ	հասցէների քանակը
1	Արեւմտեան Հայաստան	Էրզրում	20-ից ամբողջ
2		Տրապիզոն	20-ից ամբողջ
3		Ռիզէ	20-ից ամբողջ
4		Արդուին	16
5		Կիրեսոն	12
6		Երզնկա	8

7		Սղերդ	9
8		Կարս	7
9		Վան	6
10		Բիթլիս	4
11		Արդահան	3
12		Ղերսիմ	2
13		Մուշ	1
14		Ազրի	1
15		Իգդիր	-
16		Բինգեօլ	-
17		Բայբուրդ	-
18		Գիւմուշհանէ	-
1	Հարաւ-արեւմտեան Հայաստան	Մալաթիա	20-ից ամբողջ
2		Մարդին	10
3		Բաթման	9
4		Ադիեման	4
5		Հաքքիարի	3
6		Ուրֆա	2
7		Ղիարքեքիր	1
8		Խարքերդ	1
9		Շիրնակ	-
1	Պատմական Կիլիկիա	Ադանա	20-ից ամբողջ
2		Անթապ	20-ից ամբողջ
3		Իսկենդերուն	20-ից ամբողջ
4		Մերսին	20-ից ամբողջ
5		Քիլիս	3
6		Մարաշ	-
7		Օսմանիէ	-
1	Փոքր Հայք եւ յարակից շրջաններ	Անկարա	20-ից ամբողջ
2		Անթալիա	20-ից ամբողջ
3		Կեսարիա	20-ից ամբողջ
4		Կոնիա	20-ից ամբողջ
5		Սամսոն	20-ից ամբողջ
6		Սեբաստիա	16
7		Թոքատ	16
8		Օրդու	16
9		Ամասիա	14


10	Եօզգաթ	11
11	Գաստամոնու	8
12	Աքսարայ	7
13	Չորում	7
14	Նիզդե	5
15	Քարաման	5
16	Քիրիքալե	4
17	Սինոպ	4
18	Քարաբուկ	1
19	Բարդին	-
20	Չոնգուլդագ	-
21	Քիրշեհիր	-
22	Նեշեհիր	-
23	Քանքիրի	-

Աղյուսակ 10

Սոյն տուեալները կարելի է ամփոփել քարտեզում (տես՝ Նկ. 8): Տուեալներից ու քարտեզից եզրակացում է, որ Արեւմտեան Հայաստանի (տարածք «ա») կենտրոնական մասերում (Տրապիզոն, Էրզրում եւ Ռիզե) հայախօսների կամ առնուազն հայերէն իմանալու յաւակնութիւն ունեցողների մեծ թուով հասցէներ կան: Մալաթիայի, ինչպէս նաեւ Կիլիկիայի, Փոքր Հայքի եւ յարակից շրջանների արեւելեան եւ արեւմըտեան շրջանների պարագայում եւս այդպիսի իրավիճակ գոյութիւն ունի:

Հոգեմտաւոր ստեղծագործութեան համատեքստում կարելի է նշել մի շարք «պաշտօնական» հայ գրողների անուններ, որոնք իրենց գիւղագրական վէպերում, վիպակներում ու պատմուածքներում, կենդանի պատկերներ տալով գաւառահայ կեանքից, ճոխացնում են մեր պատմագիտական տեղեկութիւնները:

ICQ-ից ստացուած Հայախօսների Հասցէների
ցրուածութեան քարտեզ



Նկար 8

Այս իմաստով արդէն մէջբերումներ կատարել ենք Մկրտիչ Մարկոսեանի երկերից: Նա ծնուել է Տիգրանակերտում 1938 թ.³⁷⁷: Լրացման կարգով ասենք, որ նրա «Գեաւոր մահալեսի» թուրքերէն հատորում եւս, որ արժանացել է ֆրանսահայ գրողների ընկերակցութեան գրական մրցանակի, մանկական յուշերի միջից յաւելեալ պատկերներ են փոխանցում ընթերցողին՝ Տիգրանակերտի 1940-50-ականների հայութեան հասարակական կեանքի մասին:

Գեղամ Սեւանը (1926-91 թթ.) «Հայոց թաղը» (Երեւան, 1967) եւ «Երեք սերունդ» (Երեւան, 1974) երկերում նոյնպէս կենդանի տեղեկութիւններ է տալիս

³⁷⁷ Տէմիրճեան Ս. Ծ., Սփիւռքահայ արդի գրականութիւն, հատ. Ա, Միջիգան, 1994, էջ 513:

1940-ականների վերջերի գաւառահայութեան հասարակական կեանքի վերաբերեալ, որին ծանօթացել է զինուորական ծառայութեան ժամանակ:

1933 թ. Թոքատում ծնուած Յակոբ Արսլանեանի «Դարաւոր այս ծառին արմատներ թող դալար մնան» պատմուածքում («Նոր Մարմարա», 1992), հետաքրքիր պատկերներ կան Սեբաստիայի հայութեան 1950-ականների կեանքի, յոյզերի ու մաքառումների մասին³⁷⁸ (սոյն պատմուածքից մէջ ենք բերել վերում):

Այստեղ կարելի է յիշել նաեւ 1938 թ. Վազըֆ գիւղում ծնուած Արսէն Ճանեանին, որի հայրենակարօտ քերթուածներում, գեղարուեստական հարուստ ու սահուն ոճով ներկայցում է գաւառը³⁷⁹: 1963 թ. Սմասիայում նրա գրած բանաստեղծութիւններից մէկում³⁸⁰ կարդում ենք.

Աշխարհի մէջ ինչ որ կայ
Սիրես առանց խտրութեան,
Գիտակցիս թէ իւրաքանչիւրն իր կարգին
Կապ մը ունի մեզի հետ
Անձրեւ տեղայ ուրախանաս հողին հետ
Հով գայ հովուն հաւատաս
Ամէն հոգ մէջէդ հանես հովուն տաս
Աշխարհի մէջ աշխարհով երջանկանալ կարենաս:

Նորայր Տատրեանի «Մատաւաս գիւղը» պատմուածքում («Նոր սան», 1991) հետաքրքրական մանրամասնութեամբ են պատկերուել Բիթլիսի մօտա-

³⁷⁸ Նոյն տեղում, էջ 424-426:

³⁷⁹ Նոյն տեղում, էջ 509:

³⁸⁰ Նոյն տեղում, էջ 76:

կայքում գտնուող եւ մի քանի տարի առաջ հայութիւնից պարպուած Մատաւաս գիւղի բնակարանները, ամայացած դաշտերն ու փողոցները³⁸¹:

Այս շարքին կարելի է աւելացնել նաեւ այլ անուններ ու երկեր, որոնց ամբողջութիւնը հանդիսանում է «պաշտօնական» հայութեան հոգեմտաւոր հարստութիւնը:

Է (բ) «Իսլամացած» հայութիւն: Ներկայիս մի շարք մասնագէտների կողմից արծարծուած են պատմաէթնոլոգիական լուրջ հիմնաւորումներ՝ զազաների կամ ալեւիների հայկական ծագման կապակցութեամբ: «Դիկին» համալսարանի ասիական եւ միջին-արեւելեան հարցերի եւ քրդական ազգայնականութեան մասնագէտ Պաուլ Վայթը «զազայական լեզուական խմբի» ծագումնաբանութեան մասին յայտնում է այն տեսակէտը, որ արեւմտեան քրդական կիզիբաշները, որոնք խօսում են զազա կոչուող քրդաթուրքական առանձին բարբառով, «հայկական արեւմտեան ուժեղ խառնուրդ ունեն»³⁸²:

Այս մասին նշումներ կան մինչեւ իսկ որոշ թուրքական աղբիւրներում: Դրանցից մէկում բացատրելով, որ ալեւի ցեղը կազմուել է բազմաթիւ տոհմերից, եւ որ դրանց համախմբման հիմնական գործօններ են հանդիսացել կրօնը եւ հասարակական կացութեանը, հաստատում է, որ այս ցեղում «ընդգրկուած են

³⁸¹ Նոյն տեղում, էջ 434-436:

³⁸² White P., Ethnic Differentiation Among The Kurds: kurmanci, kizibach and Zaza, <http://www.deakin.edu.au/~kstudyg/articles.html>.

թուրք թափառականներ, որոշ քրդական խմբեր, մեծ հաւանականութեամբ նաեւ ծուլուած հայեր եւ այլ քրիստոնէական խմբաւորումներ (ընդգծումը մերն է-Կ.Խ.)»³⁸³:

Հետաքրքիր է, որ Գրիգոր Զօհրապը եւս «Հայկական Հարցը փաստաթղթերի լոյսի տակ» ֆրանսերէն ուսումնասիրութեան մէջ (1913 թ.) ակնարկել է զազանների հայկական ծագմանը: «Զազաները,- գըրում է նա,- իսլամացած հայեր են: Իրենց լեզուին մէջ կը գտնուին մեծ թուով հայերէն բառեր, ինչպէս արճիճ (կապար), կօշկար (կօշկակար) եւ այլն: Իրենց բարբերը եւս կը վկայեն: Իրենց քաղփաքին վրայ խաչի նշան կը կրեն: Տունը շաղուած խմորին վրայ եւս խաչի նշան կը կրեն»³⁸⁴:

Մարտին Վան Բրոյնսէնը 1984 թ. նոյեմբերի 20-ին Գառնիկ Ասատրեանին յղած նամակում գրում է. «1975-76 թթ. ես որոշ ժամանակ անցկացրի Բիթլիսի նահանգի զազայաբնակ մի գիւղում: Գիւղի բնակիչները թէեւ համարում էին զազաներ, սակայն իրենց հայերէնախառն բարբառով ու մարդաբանական տիպով ամբողջովին տարբերում էին այլ զազաներից եւ անկասկած նախկինում եղել են հայեր»³⁸⁵:

Սանդրինէ Ալեքսին իր «The Kizil Bash» աշխատութեան մէջ (2000 թ.), վերլուծելով քրդական կարեւոր ցեղախմբերի ծագումն ու պատմական հոլովոյթը, նշում է, որ «Որոշ քուրդ-զազաները պնդում

են, որ իրենք հայերի ուղղակի շառաւիղներն են: Ամէն դէպքում պատահել է մշակութային եւ հասարակական կարեւոր համաձուլում քրիստոնեաների եւ Դերսիմի կիզիլբաշների միջեւ: Նրանք Զատիկը տօնում են հայերի հետ եւ Սուրբ Սարգսի ծէսը, փոխաբերական իմաստով, կատարում են Խըզըր-էլիասի (Khizr-Elias) անուամբ»³⁸⁶:

Վերջերս Թուրքիայի պատմութեան ակադեմիայի երբեմնի նախագահ Եուսուֆ Հալաջողլուն, 2007 թ. օգոստոսին Կեսարիայում տեղի ունեցած մի համագումարի մէջ, բարձրացրեց մի տազնապայարոյց հարց արծարծելով, որ «այսօր որպէս քուրդ ճանաչում գտած, կամ որպէս քուրդ ալեւի ճանաչում գտած շատեր, դժբախտաբար, հայ դաւանաւորներ են»³⁸⁷:

Այնուամենայնիւ, զազանների եւ ալեւիների խընդիրն առայժմ հանելով մեր ուսումնասիրութեան շըրջագծից, կը փորձենք, ընդհանուր գծերով, անդրադառնալ Ցեղասպանութիւնից դեռ առաջ իսլամացած համշէնահայ-պոնտահայերի ներկայ իրավիճակին:

Հայկական այս տոհմն ունի հայերէնի իւրայատուկ բարբառ եւ բնակւում է սեւծովեան ափերիզից սկսուող եւ մինչեւ Երզրում երկարող տարածքներում:

Հարուարդի եւ Կոլումբիայի համալսարանների լեզուաբանական շրջանակներում համբաւ ունեցող Բերտ Վաուքսն իր մի յօդուածի նախաբանում ակնարկելով այն մասին, որ լազերի եւ աբխազների վերաբերեալ յաճախ են քննարկումներ գնում, ասում է

³⁸³ The Changing Face Of Anatolian Alawism, http://www.turkishdailynews.com/old_editions/09_11_96/feature.htm.

³⁸⁴ Նորք, 1989, դեկտեմբեր, էջ 97:

³⁸⁵ Ալիք, 1989, նոյեմբերի 19:

³⁸⁶ http://perso.wanadoo.fr/kurdistannameh/histoire/kizil/hist2_kizil_kurd.htm.

³⁸⁷ Նոր Մարմարա, 2007, օգոստոսի 22:

սակայն. «Քչերը գիտեն լայն ցրուածութեամբ տոհմական այն խմբի մասին, որ այսօր հաշուում է մի քանի հարիւրհազարներով: Այս խումբը, որ ինքն իրեն «համշէնցիք» կամ «համշէն» է անուանում, զբաղեցնում է սեւծովեան ափը՝ Թուրքիայի հիւսիս-կենտրոնից, Սամսունից մինչեւ հարաւային Ռուսաստան...»³⁸⁸:

Նա համշէնահայութեանը բաժանում է երեք խումբի³⁸⁹.

ա) արեւմտեան համշէններ. որոնք բնակւում են Սամսունում (Ջանիկում), Օրդուում, Կիրեսոնում, Տրապիզոնում եւ Ռիզում, թուրքախօս են եւ սուննի դաւանանքին յարած,


բ) արեւելեան համշէններ. որոնք բնակւում են առաւելաբար Արդուինում, խօսում են հայոց լեզուի համշէնի բարբառով եւ յարում սուննի դաւանանքին,

գ) հիւսիսային համշէններ. որոնք բնակւում են Վրաստանում եւ Ռուսաստանում, խօսում են հայոց լեզուի համշէնի բարբառով եւ քրիստոնեայ են (տես՝ Նկ. 9):

Հիւսիսային համշէնահայութիւնը, որպէս բուն համշէնահայութեան շառաւիղ, այսօր բնակւում է Աբխազիայում, Վրաստանում եւ Ռուսաստանում: Փաստօրէն այս խմբին պէտք է գումարել նաեւ Միջին Ասիայում բնակւող իսլամացած «խեմշինցի» կամ «խեմշինլի»

³⁸⁸ Vaux B., The Forgotten Black Sea Armenians, Columbia University, 1996, April 2, p. 1.

³⁸⁹ Նոյն տեղում:



Նկար 9

փոքրամասնութեանը, որի 2005 թ. թուաքանակը, ըստ որոշ աղբիւրների, գնահատւում է ոչ ուելի քան 1120 մարդ³⁹⁰:

Իսլամացած եւ Թուրքիայում բնակւող առաջին երկու խմբի թուաքանակը գերակշռում է Թուրքիայի սահմաններից դուրս բնակւող վերջին խմբին: Այս նոյն տեսակէտն են յայտնում Armeniapedia էլեկտրոնային հանրագիտարանի հեղինակները³⁹¹, ասելով, որ համշէնահայերի մեծ մասն այժմ բնակւում է Սամսունում, Տրապիզոնում, բուն Համշէնում, Արդուինում, Արտաշէնում, Ֆուտինայում (Պորդանիս), Բազարում եւ շրջանի այլ գիւղերում ու գիւղակներում (Տորասիլ, Պերտեվան, Այրէն, Թրէծոր (Չիմլա), Եղիովիտ եւ այլն)³⁹²:

³⁹⁰ [http://www.joshuaproject.net/Joshua Project - Languages Listing.htm](http://www.joshuaproject.net/Joshua%20Project%20-%20Languages%20Listing.htm)

³⁹¹ <http://www.armeniapedia.org/index.php?title=Hamshen>

³⁹² Նոյն տեղում:

Յամենայնդէպս, մեր ուսումնասիրութեան աշխարհագրական շրջագծի մէջ մտնում են առաջին եւ երկրորդ խմբերը (արեւմտեան եւ արեւելեան համշէնահայերը):

Wikipedia համացանցային հանրագիտարանը Թուրքիայի համշէնցիների կամ հեմշինլիների համար այսպիսի մի տեսակաւորում է նկատի առնում՝ արեւմտեան խմբին կոչելով Բաշ-հեմշինցիներ, իսկ արեւելեան խմբին՝ Հոփա-հեմշինցիներ: Նշուած հանրագիտարանը հաստատագրում է համշէնցիների հայկական ծագումը, բայց եւ ուրուագծում ինչպէս լեզուական, այնպէս էլ նրանց ծէսերի հետ կապուող որոշ տարբերութիւններ. այսպէս՝ եթէ թուլումը (մի տեսակ պարկապզուկ) համարում է աւանդական նուագարան արեւմտեան խմբի մօտ, ապա շեմշիր քառաւը (մի տեսակ սրինգ) նոյն տեղն ունի արեւելեան խմբի մօտ եւ այլն³⁹³:

«Համշէն» հայկական գիտամշակութային կենտրոնի տնօրէն, բուն հանշէնահայ Արտաւազդ Թուլումճեանը, որ 2005 թ. ամռանը գիտարշաւ է կատարել Թուրքիայի հիւսիսարեւելեան տարածքներ, Հոփա-հեմշինցիների կամ արեւելեան համշէնահայութեան լեզուի մասին իւրօրինակ եզրակացութիւնների է յանգում: Նա գտնում է, որ այս խմբի ներկայացուցիչների խօսուածքն ունի առնուազն երկու ենթախօսուածք, որոնց մէջ գերազանցապէս պահպանուել են հայերէն արմատներ եւ գրական ծելեր, որոնք չկան համշէնահայ միւս հատուածների բարբառում: Ապա նա շեշտում է, որ Հոփա-հեմշիլների խօս-

³⁹³ <http://en.wikipedia.org/wiki/Hamshenis>

ուածքն աւելի շատ ընդհանրութիւններ ունի գիւղական տրապիզոնցիների խօսուածքի հետ³⁹⁴:

Թուրքիայի համշէնահայ բնակչութեան ցրուածութեան համայնապատկերը գրեթէ աննկարագրելի է եւ ցայժմ մեծապէս անորոշ: Օրինակ՝ Բերտ Վաուքսի երեք յօդուածներում³⁹⁵ զետեղուած տեղեկութիւններն ի մի բերելով՝ պարզում է, որ թուրք-վրացական սահմանագծից 5 կիլոմետր հեռաւորութեամբ Արդուինի նահանգում գոյութիւն ունի Կուպրուչու անունով գիւղ՝ իր զուտ համշէնահայ մօտ հազար բնակիչներով: Ի դէպ՝ Վաուքսի այս մօտաւոր թիւը համապատասխանում է թուրքական աղբիւրներից քաղուած տուեալներին, համաձայն որոնց Կուպրուչուի բնակչութիւնը 1990 թ. կազմել է 1,314, 1997 թ.՝ 967 եւ 2000 թ.՝ 870 մարդ³⁹⁶:

Հարաւային Կալիֆորնիայի համալսարանի քաղաքական գիտութիւնների թեկնածու Յովան Սիմոնեանը «History and Identity among the Hemshin» (Պատմութիւնը եւ ինքնութիւնը Համշէնում) նշանակալի յօդուածում, յենուելով Ռուդիգեր Բեննինգհաուսի տուեալների վրայ, Ռիզէում (Ռիզէոն) բնակուող արեւմտեան համշէնահայութեան (կամ բաշ-

³⁹⁴ Թուլումճեան Ա., Հոփա-հեմշիլներ եւ Բաշ-հեմշիլներ. ճանապարհորդութեան գրառումներ, Սոչի, 2005, հոկտեմբեր, էջ 4:

³⁹⁵ - Vaux B., The Forgotten Black Sea Armenians, Columbia University, April 2, 1996, page 1.

- Vaux B., LaPorta S., Tucker E., Ethnographic Materials from the Muslim Hemshinli, Harvard University, 1996, page 1.

- Vaux B. Hemshinli: The Forgotten Black Sea Armenians, Harvard Univ., April 2, 2001, page 1.

³⁹⁶ <http://www.Hopam.com>.

համշինցիություն) թուաքանակը գնահատում է 15-ից 23 հազար: Նոյն աղբիւրի հիմամբ՝ Միմոնեանը Հոփայի (պատմական Խոպա) արեւելեան համշինահայերի թիւը ներկայացնում է 25 հազար մարդ³⁹⁷:

Սա նշանակում է, որ ի դէմս Խոպայի բնակչութեան (1990 թ.՝ 30,862, 1997 թ.՝ 30,646 եւ 2000 թ.՝ 32,584 մարդ³⁹⁸), համշինահայութիւնն այդտեղ կազմում է բնակչութեան բացարձակ մեծամասնութիւնը: Այս իրողութիւնը հաստատում են նաեւ Armeniapedia էլեկտրոնային հանրագիտարանը³⁹⁹ եւ Արտաւազդ Թուլումճեանը. «Այսօր քաղաքում հեմշիլները մեծամասնութիւն են կազմում,- գրում է նա,- եւ դեռ աւելին՝ 2004 թ. ընտրութիւններում նրանք ընտրել են Հոփա քաղաքի հեմշիլ քաղաքապետին»⁴⁰⁰ հայազգի Եւմագ Թուփալօղլուին⁴⁰¹:

Հոփայի քաղաքապետական սոյն ընտրութիւններում (2004 թ.) ընկերվարական հոսանքի թեկնածուն է եղել Հուրի Վայիչը: Յատկանշական է այն, որ 33-ամեայ գործիչի նախընտրական քարոզարշաւներում շեշտադրուել է նրա հայկական ծագումը (ermeni asilli)⁴⁰²: Այս փաստն ապացուցում է «իսլամացած» հայութեան ինքնարժարժման, բուն ինքնութեանն ու

³⁹⁷ Simonian H.H., History and Identity among the Hemshin, ISIM Newsletter 14, June 2004, pp 24,25

³⁹⁸ <http://www.Hopam.com>.

³⁹⁹ <http://www.armeniapedia.org/index.php?title=Hamshen>

⁴⁰⁰ Թուլումճեան Ա., Հոփա-հեմշիլներ եւ Բաշ-հեմշիլներ. Ճանապարհորդութեան գրառումներ, Սոչի, 2005, հոկտեմբեր, էջ 4:

⁴⁰¹ <http://www.hopalilardernegi.org.tr/index.asp?altsayfa=secim>

⁴⁰² <http://www.ezilenlerinsosyalistplatformu.com/modules.php?name=Sections&op=printpage&artid=2>

արմատներին վերադառնալու ծգտումը, որին անդրադառնալու ենք քիչ յետոյ: Մինչ այդ, սակայն, նշենք ինքնարժարժման եւս մի քանի առանձին դէպքեր:

Տ. Մեսրոպ քինյ. Ռաթէոսեանը եւ Արմինէ Բուդաղեանը 2004 թ. ամռանը Իրանից դէպի Վան ուխտագնացութեան մասին իրենց առանձին ուղեգրութիւններում պատմում են Աղթամար կղզում Ս. Խաչ եկեղեցու մօտ իրանահայ ուխտագնացների՝ մի խումբ համշինահայերի հետ հանդիպման մասին: «Տրապիզոն քաղաքից էին,- գրում է Տ. Մեսրոպ քինյ. Ռաթէոսեանը,- եւ թուրքախօս հայեր են, ի հարկէ, նրանցից ոմանք նաեւ հայերէն էին խօսում»⁴⁰³: «Այդ ընթացքում,- գրում է Արմինէ Բուդաղեանը,- մեր ընթացքին միացան նաեւ տեղացի մի քանի կաշուրջպարին միացան նաեւ տեղացի մի քանի կանայք: Երբ պարը դադարեց, իրար հետ խօսեցինք եւ պարզուեց, որ իրենց տատիկները եւ պապիկները նոյնպէս այս երգերը գիտէին եւ երգում էին»⁴⁰⁴:

Ախուրեանի ափին գտնուող պատմական Բագարանի մասին, 2000 թ. մի ուղեգրութեան մէջ կարդում ենք. «Մի տօնակատարութեան ընթացքում նկատեցի սահմանագծի վրայ թուրքական կողմի գետափին նըստած մի զինուորի, որ երկար ժամանակ նայում էր այս կողմ: Նա Համշինի շրջանի Տրապիզոնի շրջակայքից մի հայ էր: Զինուորը թախծոտ նայում էր իր հայրենակիցներին, անկարող՝ գետը կտրելու, նրանց միանալու եւ տօնակատարութեան մասնակցելու...»⁴⁰⁵:

⁴⁰³ Ալիք, 2004, սեպտեմբերի 27:

⁴⁰⁴ Ալիք, 2004, սեպտեմբերի 27:

⁴⁰⁵ <http://www.roadtoarmenia.com/scenes/scenes.html>.

Թուրքիայի համշնահայության թուաքանակի մասին վկայությունները բաւականին տարբեր են ու այլազան:

Դոկտ. Թեսսա Հոֆմանի գնահատմամբ «Այնտեղ 20 հազար մուսուլման համշնհներ կան, որոնց հայրենիքը գտնուում է Տրապիզոնի եւ Էրզրումի արանքում»⁴⁰⁶:

Յովան Սիմոնեանը Բէյրութի «Հայկազեան» քոլեջում իր բանախօսութեան մէջ, 2002 թ. յունիսի 24-ին, համշնահայության թուաքանակի մասին այսպէս է եզրակացնում. «100 հազար համշնհներ են ապրում ամբողջ Թուրքիայի տարածքում»⁴⁰⁷:

Դժուար է ճշտել, թէ որոնք են համշնահայության թուաքանակի թերագնահատման պատճառները: Վիճակագրական ստոյգ տուեալների չգոյութիւնից բացի՝ մենք կարծում ենք, որ Թուրքիայի պետական շրջանակներում առկայ է պոնտահայերին որպէս պոնտացի յոյներ, բաշ-համշնհներին, լազեր եւ արեւելեան համշնահայերի մի մասին որպէս վրացիներ, իսլամացած քարթուլեաններ ներկայացնելու միտումը, որի խորքում, ի հարկէ, ընկած է հակահայ քաղաքականութիւնը: Պետական աղաւաղման այս մօտեցմանը լաւապէս նպաստում է պոնտահայության եւ արեւմտեան համշնահայության խօսակցական լեզւում թուրքերէնի գերակայութիւնը: Այս շփոթն իր հերթին կարող է մի շարք հետազօտողներին յանգեցնել թուային լուրջ վրիպումների եւ վիճակագրա-

կան անճիշտ գնահատումների: Իրականութիւնը լուսարծակի տակ առնելու իմաստով նպատակայարմար ենք համարում մի հրէական կայքէջից մէջբերել հետեւեալը. «Ներկայիս տեղական թուրքերէն խօսող մարդկանց մի մասը, - օգտուելով Ռոբերտ Դանկոֆի աղբիւրներից՝ գրում է կայքէջում, - փաստօրէն շառաւիղներն են այն հայերի, ովքեր այլ եւ այլ պատճառներով իսլամացել են: Այս իրականութեան հիման վրայ, որը նկատելի է Անատոլիայի տարբեր շրջաններում (ինչպիսին է Պոնտոսը), մենք ընդունում ենք, որ այդ մարդիկ շարունակում են խօսել հայերէն կամ ունեն մի խառնուրդ լեզու (ընդգծումը մերն է- Կ. Խ.)»⁴⁰⁸:

«Institute for the Secularisation of Islamic Society»-ի (Իսլամական հասարակութեան սեկուլարացման ինստիտուտ) համանուն կայքէջում մի իսլամացած հայ իր 2002 թ. սեպտ. 16-ի էլեկտրոնային նամակում գրում է. «Հայախօս մուսուլմաններով բնակեցուած գիւղեր կան: Որոշ աղբիւրներ նրանց թուաքանակը գնահատում են շուրջ 2 միլիոն: Նրանցից ոմանք գիտակ են իրենց հայկական ծագմանը»⁴⁰⁹:

Գրիգոր Աւագեանի տուեալներով՝ «Թուրքիայում, մասամբ նաեւ այլ երկրներում ապրում են շուրջ 4 միլիոն մուսուլման համշնահայեր»⁴¹⁰:

Ըստ բուն համշնահայ, Գեօթէ համալսարանի

⁴⁰⁶ Hofmann T., Armenians in Turkey today, October 2002, p 11.

⁴⁰⁷ <http://www.haigazian.edu.lb/announce/pressrelease.htm>.

⁴⁰⁸ <http://www.anarres.net/anatolia/ermenice.html>.

⁴⁰⁹ http://www.secularislam.org/testimonies/More_Testimonies_Why_Left_Islam.htm.

⁴¹⁰ Աւագեան Գ., Հայաստանը եւ հայերս աշխարհում, Երեւան, 1990, էջ 21:

գիտաշխատող, նախկին վարչապետ Մեսուդ Ելմազի ազգականուհի, Ալիէ Ալթի (Ալիս Կոստանեան)՝ «Այսօր աւելի քան մէկ միլիոն իր ազգակիցները գտնուում են ազգային ինքնագիտակցութեան ու զարթոնքի գործընթացում»⁴¹¹:

Ալիէ Ալթի զաւակ, երիտասարդ արուեստագէտ, գերմանաբնակ Դենիզ (Ծովակ) Ալթի հետ մի շատ շահեկան հարցազրոյցում այսպէս է նկարագրում համշէնահայութեան վիճակը. «Այսօր 350 հազար համշէնցիներ են ապրում Հայնէի ու Գեօթէի հայրենիքում, որոնք փորձում են դուրս գալ երկկողմանի «շրջափակումից», թուրքերի եւ հայերի կողմից՝ հասնելու ինքնաճանաչման եւ ինքնորոշման դժուարին վիճակին»⁴¹²: Այս նոյն հարցազրոյցում յստակօրէն ակնարկուում է նաեւ Թուրքիայի շուրջ 1,5 միլիոն հաշուող համշէնահայերի մասին:

Դարերից ի վեր իսլամին յարած լինելով եւ պետականօրէն որպէս էթնիկական փոքրամասնութիւն չճանաչուելով հանդերձ՝ համշէնահայութեան «անատոլեան» հատուածը յամառօրէն պահպանում է իր քրիստոնէական բարքերի եւ աւանդութիւնների մի մասը (Ծաղկազարդ, Վարդավառ եւ այլն): Օրինակ՝ Վարդավառը, որին համշէնահայերն անուանում են Վարթիւոր, ամէն տարի մեծ շուքով ու ծիսակատարութեամբ տօնուում է առ այսօր⁴¹³:

Հայկազուն Ալվրցեանը, «Երկիր» թերթի հետ իր հարցազրոյցում, հաստատում է, որ համշէնահայերը,

գտնուելով թուրքական մշակոյթի ազդեցութեան տակ, հիմնականում պահպանել են ազգային ծէսերը, սովորոյթները, երգն ու երաժշտութիւնը, պարերը, կենցաղավարութեան շատ իւրայատկութիւններ: «1994 թ. մի տրապիզոնցի համշէնահայ (մահմեդական),-ասում է Հայկազուն Ալվրցեանը,- ինձ պատմեց, որ իր տատը, սովորութեան ուժով, հունցած խմորի վրայ միշտ խաչի նշան է հանում»⁴¹⁴:

Հետաքրքրական մանրամասնութեան ենք հանդիպում Յովան Սիմոնեանի ուսումնասիրութիւնում, այն է՝ եւ արեւմտեան, եւ արեւելեան համշէնահայերը պահպանել են նշուած բարքերը եւ աւանդութիւնները, սակայն համշէնի բարբառը պահպանուել է միայն արեւելեան համշէնահայերի մօտ: Սիմոնեանի համոզմամբ սա եղել է երկու խմբերի միջեւ խզուածութեան հետեւանք⁴¹⁵:

Համշէնահայերի բնակավայրերում ապրում են էթնիկական զանազան խմբեր՝ յոյներ, լազեր, վրացիներ, թուրքեր եւ այլն: Մաքս Պլանկի անուան մարդաբանական հաստատութեան (Max Planck Institute for Social Anthropology) գիտաշխատող Քրիս Հաննը հետազօտական իր զեկուցագրում (History and ethnicity in Anatolia) 2003 թ. վերլուծութիւններ է կատարել հիւսիսարեւելեան Թուրքիայի էթնիկական խմբերի ազգամիջեան յարաբերութիւնների վերաբերեալ եւ յանգել մի տրամաբանութեան, ըստ որի՝ տարածքի

⁴¹¹ Դիտակ, Բէյրութ, 2002, մարտ-ապրիլ, էջ 26:

⁴¹² Դիտակ, 2004, ապրիլ-մայիս, էջ 58:

⁴¹³ <http://www.tb-yayin.gov.tr/tarimkoy/sayi127/m04.htm>.

⁴¹⁴ Ալիք, 2004, հոկտեմբերի 14:

⁴¹⁵ Simonian H.H., History and Identity among the Hemshin, ISIM Newsletter 14, June 2004, pp 24, 25.

բնակչության (համշէնցիներ, լազեր, քարթուլեաններ, չայելի թուրքեր եւ այլն) սոցիալական յարաբերութիւններում էթնիկական պատկանելութիւնն աւելի քիչ նշանակութիւն է ունենում, քան գուտ տեղական, գաւառական պատկանելութիւնը⁴¹⁶։ Ֆինդիկլիում նըրա տեսած լազ ընտանիքներից շատերը խառն ամուսնութիւններ են կատարել։ Այնուամենայնիւ, նա իր նշուած ընդհանուր տրամաբանութիւնից բացառում է համշէնցիներին, որոնք խորհրդաւոր կերպով դեռ գիտակցում են, որ իրենց նախնիները դեռ 200 տարի առաջ խօսել են միւսներից միանգամայն տարբեր լեզուով եւ այդ «մշուշային գիտակցութեամբ» շարունակում են առ այսօր պահել իրենց սերտ կապուածութիւնը հայութեան հետ⁴¹⁷։

Այս իրողութիւնը հաստատում են նաեւ այլ աղբիւրներ։ «Մահմեդական համշէնցիները,- գրում է Լեւոն Խաչիկեանը,- ըստ հնարաւորի պահպանել են ընտանեկան իրենց կենցաղն ու բնաւորութիւնը. ականատեսների վկայութեամբ նրանք դրականօրէն տարբերւում են իրենց հարեւանութեամբ ապրող մահմեդական յոյներից, լազերից ու վրացիներից. քաջարի են, վեհանձն, անխարդախ ու պարզասիրտ, չեն խնամհանում ուրիշների հետ եւ հարեւաններից տարանջատւում են իրենց հեմշին անուանւմով, որ մատնանշում է ոչ այնքան իրենց հայրենի երկրա-

⁴¹⁶ Hann C., History and ethnicity in Anatolia, Max Planck Ins. for Social Anthropology, Halle, 2003, p. 13, <http://www.eth.mpg.de/pubs/wps/pdf/mpi-eth-working-paper-0050.pdf>.

⁴¹⁷ Նոյն տեղում։

մասը՝ որքան հայկական ծագումը (ընդգծւումը մերն է-Կ.Խ.)»⁴¹⁸։

Թուրքացման քաղաքականութիւնը տարբեր բնույթ է ունեցել սեւծովեան ափերում եւ «Անատոլիա»-ի այլ շրջաններում։ Կրօնական այլասերման ազդեցութիւնն առաւել նկատելի է համշէնահայութեան, քան «թաքուն» հայութեան վրայ։ Մինչդեռ լեզուական առումով համշէնահայերն ու պոնտահայերն աւելի նուազ ազդեցութիւններ են կրել քրդախօս կամ թուրքախօս դարձած «թաքուն» հայութեան համեմատութեամբ։ Այս տարբերութեան մասին ակնարկւում է Օսլոյի համալսարանի արուեստի ֆակուլտէտի գիտաշխատող Բրենդ Բրենդամոնդը «The Turkish Dialects of Trabzon, Their Phonology and Historical Development» (Տրապիզոնի թուրքերէն բարբառները, դրանց հնչիւնաբանութիւնը եւ պատմական հոլովոյթը, 2001 թ.) աշխատութեան մէջ⁴¹⁹։

Թէեւ կրօնական այլասերումը մնում է անցանկալի իրականութիւն համշէնահայերի մօտ, սակայն որոշ տուեալներ ապացուցում են, որ այսօր իսլամի նկատմամբ նրանց տածած հաւատքը հեռու է սուննիականութեանը յատուկ մոլեռանդութիւնից։ «Համշէնները շատ կրօնական չեն,- պարզաբանում է Յովան Սիմոնեանը՝ իր դասախօսական ելոյթներից մէկում,- նրանք շատ քիչ մզկիթներ ունեն, եւ շատ քիչ մարդիկ են ուշադրութիւն դարձնում դրան։ Համշէնցիները նաեւ օգտագործում են ակոհիւլային խմիչքներ»⁴²⁰։

⁴¹⁸ Բանբեր Երեւանի համալսարանի, 1969, թիւ 2, էջ 139։

⁴¹⁹ <http://www.karalahana.com/index.htm>.

⁴²⁰ <http://www.lazebura.net/english> - Lazebura.net

Կրօնական ոչ մոլեռանդութեան իրողութիւնը լաւագոյնս պարզուում է նաեւ համշէնցիների շուրջպարերի բազմաթիւ լուսանկարներից, ուր աղջիկներ եւ տղաներ, մէկընդմէջ, միմիանց ձեռքերն են բռնում պարելիս: Կրօնամոլ սուննիների դէպքում նման երեւոյթ պատկերացնելն անգամ դժուար է:

Պէտք է նշել, որ, ըստ որոշ աղբիւրների, համշէնահայերի բռնի իսլամացումն սկսուել է դեռ 17-րդ դարից, իսկ ըստ այլ աղբիւրների (Armeniapedia, նըշուած աղբիւր)⁴²¹ 18-րդ դարից: Թէեւ այս հարցը վերջնական ճշտորոշման կարիք ունի, սակայն կարելի է հիմք ընդունել թուրքագէտ Լուսինէ Սահակեանի տուեալները, ըստ որոնց «Համշէնում կամ յարակից շրջաններում բռնի մահմեդականացման փորձեր եւ մահմեդականացումներ կատարուել են 1578, 1629, 1650-1660, 1690, 1723 թուականներին»⁴²¹:

Ամէն դէպքում թուում է, թէ իսլամացած համշէնահայերը նկատի չեն առնուել պատրիարքարանի նախաեղեռնեան վիճակագրութիւններում: Հետեւաբար՝ ենթադրելի է, թէ յետեղեռնեան հայկական վիճակագրութիւնը եւս զանց է արել նրանց՝ որպէս հայեր: Սերգէյ Վարդանեանը համշէնահայութեան մասին իր յօդուածներից մէկում («Կարելոր սկզբնաղբիւրներ մահմեդականացած հայերի մասին»), մանրամասնօրէն քննարկելով Էփրիկեանի եւ Ա-Դօ-ի 1907 եւ 1909 թուականների տուեալները, ցոյց է տալիս, որ հայկական աղբիւրներում (այդ թւում՝ նաեւ Կարինի առաջնորդարանի «վիճակագիրներում») «իսլամացած» հայերի գիւղերը չէին յիշատակուում: Օրինակ՝

⁴²¹ Ձայն համշէնական, 2006, սեպտեմբեր-հոկտեմբեր:

մահմեդական համշէնահայերի խեւակ գիւղը չի նշուել «Վիճակագիր Կիսկիմի գաւառի հայ ժողովրդի» համապատասխան աղիւսակում, «այն պայմաններում, - գրում է Վարդանեանը, - երբ 15 տուն ունեցող Գասապան եւ ընդամէնը 7 տուն ունեցող Նիխախը նշուած են»⁴²²: Այս ենթակայական տրամադրուածութիւնն էլ իր հերթին բարդացնում է «իսլամացած» հայերի ներկայ թուի ճշտման գործը:

Ինքնութիւնը թաքցնելու վարքագիծը եւս բարդացնող հանգամանք պէտք է համարել: Այս մասին ուշագրաւ հաստատում է կատարում Անդրու Գոլդբերգը «Ազդակի» լրագրող Խաչիկ Մուրադեանի հետ իր հարցազրոյցի ընթացքում: «Նախ պէտք է ասել, որ նրանց ձգտումները շատ տարբեր են աշխատող տեսախցիկների առջեւ, քան սրանց անջատուած վիճակից, - ասում է Գոլդբերգը, - եթէ զրոյց վարես համշէնցիների հետ, նրանք քեզ կ'ասեն, որ «մենք հայ ենք», բայց երբ արդէն աշխատացնես տեսախցիկը, ապա նրանք կ'ասեն, որ «մենք թուրք ենք»: Թուրքիան ազատ խօսքի երկիր չէ»⁴²³:

Այնուամենայնիւ Թուրքիայի համշէնահայերը վերջին տարիներին մեծ աշխուժութիւն են ցուցաբերում ազգային-էթնիկական գիտակցութեան զարթօնքի բնագաւառում: Այս իմաստով յատկանշական են նրանց ինքնարժարժման ելոյթներն ու յօդուածները մի շարք կայքէջերում եւ էլեկտրոնային ֆորումներում⁴²⁴:

⁴²² Պատմա-բանասիրական հանդէս, 2004, թիւ 3(167), էջ 166:

⁴²³ Ազդակ, 2006, մարտի 23:

⁴²⁴ - <http://www.yaylayolu.info/forum/>

Այս ենթատեքստում աւելորդ չենք համարում յիշել նաեւ երիտասարդ ռեժիսոր Օզջան Ալպերի «Momi» («Մեծ մայր») կարճ կինոժապաւէնը, որն էկրանաւորուել է 2000 թ.⁴²⁵։ Սոյն ֆիլմում նկարահանուել են Քաջքար լեռան բարձրունքների վրայ գտնւող Համշէնի գեղեցիկ բնութիւնից տեսարաններ, Արդուին-Շաուշատի ճանապարհի վրայ գտնւող Սուսուզյուրտ գիւղակի բնակիչների կենցաղային պատկերներ, համշէնի բարբառով զրոյցներ, երգեր եւ այլն։

Մեր տրամադրութեան տակ են նաեւ բազմաթիւ երաժշտական ծայներիզներ՝ համշէնական երգերից (թուլում, քեամանչա, աթապարի, մնի-մնի կամ մանի-մանի), որոնց մեծամասնութեան մէջ համշէնի բարբառով արտացոլւում են «իսլամացած» հայութեան հոգեմտաւոր ներաշխարհը⁴²⁶։

Թուրքիայի իսլամացած համշէնահայութեան երգարուեստում նշելի է մի հետաքրքիր հանգամանք. 1975 թ. Կուպրուչու գիւղում ծնուած երիտասարդ երգիչ Ալթան Զիվելեկի ծայնասկաւառակի ութ երգերից երեքը հայկական են։ «Ասա, օնդեր, ասա» (Ասա, դարիբ, ասա) աւանդական համշէնական երգից բացի, միւս երկուսի («Լուսնիկա» եւ «Մադմոն») խօսքերի եւ երաժշտութեան հեղինակը երգիչն ինքն է։ «Լուսնի-

-<http://hyeforum.com/index.php?showtopic=3459>

-<http://www.devrimcidemokrasi.org/arsiv/2001/Sayi-13/arastirma2.htm>

- <http://karalahana.com/>

- <http://f20.parsimony.net/forum36933/>

⁴²⁵ <http://birkanmakar.dostweb.com/contact.html>.

⁴²⁶ Խտասկաւառակներով (CD) պահուած հեղինակի մօտ։

կա» երգում այսպէս է արտացոլւում համշէնահայ նորօրեայ հեղինակի սիրային ապրումները.

...TEVES PERNA İNQİ HED HORON ĞAĞA
ASA ONDER TUN ASA İSPON AĞCİK DESARTA...

EESE MARĞİ BESAU ACVENİYE LUSNİKA⁴²⁷
(...Ձեռքս բռնիր, ինձ հետ խօրան (կամ հորոն) պարիր,

Ասա, դարիբ /օտարական/, դու ասա, այսպիսի աղջիկ տեսե՞լ ես.

Երեսը մարգի պէս է ու աչքերը լուսնիկ է...)

Իսլամացած համշէնահայութեան մշակոյթի եւ ստեղծագործութեան բնութագրման մէջ չի կարելի չանդրադառնալ վերելում յիշատակուած Դենիզ Ալթի (Ծովակ Կոստանեան) նկարչական գործունէութեանը։ Դենիզ Ալթի ցայժմ ունեցել է նկարչական մի քանի ցուցահանդէսներ։ Հայոց Ցեղասպանութեանը նըւիրուած նրա ցուցահանդէսից չունենք եւ ոչ մէկ նըւիրուած նրա ցուցահանդէսից գիտենք, որ «...ցուցադրուող նկարները վառ հայկական գոյներով են եւ Ցեղասպանութեան տառապանքներու պատկերմամբ»⁴²⁸։ Սակայն նրա «Հայ Կինը» թեմայով նկարչաշարից մեր տրամադրութեան տակ են մի քանի նմոյշներ⁴²⁹, որոնցում հայ կինը նկարագրուել է ոսկրոտ դէմքով ու ցցուն այտերով, բարեկազմ ու շիկա-հեր, որի ալեկոծուած, խոշոր աչքերի լճակներում

⁴²⁷ <http://www.altancivelek.com>

⁴²⁸ Դիտակ, 2004, ապրիլ-մայիս, էջ 58։

⁴²⁹ <http://www.hdb4you.de/galerie.asp>, Խտասկաւառակով (CD) պահուած հեղինակի մօտ։

ծփում է հայուհուն յատուկ վիշտն ու թախիծը: Պէտք է արձանագրել այստեղ, որ Ղենիզ Ալթն այսօր համա-
երոպական մասշտաբով արժարժուող գեղանկարիչ-
ների ցանկում է եւ ըստ այդմ՝ ուշադրութեան կենտ-
րոնում:

Համշէնահայութեան ինքնաճանաչման շարժումը,
գտնուելով հանդերձ նախնական փուլում, ունի մեծ
ներուժ, գերազանցապէս ընթանում է ինքնուրոյն
մղումներով ու պարզում է զարգացման շօշափելի
տարողութիւն:

Շեշտենք եւս մի կարեւոր իրողութիւն՝ իսլամացած
հայութեան բնակութեան վայրի հետ կապուած:
Ճշտելու համար համշէնահայութեան բնօրրանի էթնի-
կական միատարրութեան եւ նրա աշխարհագրական
դիրքի նկատմամբ միւս էթնոկրօնական խմբերի,
յատկապէս քրդերի պատկանելութեան յաւակնութիւն-
ները, ուսումնասիրութեան նիւթ դարձնելով միջազ-
գային եւ քրդական զանազան աղբիւրներ՝ հաւաքել
ենք քառասունից անելի ազգաբաշխական, ժողովըր-
դագրական եւ պահանջատիրական քարտէզներ:

ա- Քրդերի ազգաբաշխական քարտէզներ



*բ- Քրդական տարածքային
պահանջատիրութեան քարտէզներ*



Նկար 10

Սրանցից նախ պարզում է, որ համշէնահայու-
թեան բնօրրանային տարածքներում քրդերը չնչին
թիւ են կազմում, ապա՝ որ քրդական պահանջատի-
րական նոյնիսկ ամենածայրայեղ հոսանքների պա-
հանջած ամենամաքսիմալ տարածքներն էլ չեն անց-
նում Պոնտեան լեռնաշղթայից դէպի հիւսիս, այն պայ-
մաններում, երբ սոյն հոսանքներից ոմանք, Արեւմըտ-
եան Հայաստանից բացի, յաւակնութիւններ ունեն
անգամ ՀՀ տարածքների եւ, նոյնիսկ, Պարսից ծոցի
ափերի նկատմամբ:

Այս իրողութիւնը թէւ ուղղակի առընչում է մեր
նիւթին, այդուհանդերձ առանձին հետազօտութեան
հարց է: Այստեղ ընդամէնը ներկայացնելով մի քանի
օրինակներ այդպիսի քարտէզներից (տես՝ Նկ. 10)
բաւարարում ենք՝ ընդգծելով մեր վերոնշեալ եզրա-
կացութիւնը եւ վեր հանելով դրա աշխարհաքաղա-
քական նշանակութիւնը:

Իսլամացած հայութեան մասին թուրքական աղ-

բիրներն անգամ երբեմն թոյլ են տալիս հաստատումներ: Օրինակ՝ դրանցից մէկը, թուրք հասարակագէտ եւ պատմաբան Թաներ Աքչամի հայանպաստ կեցուածքը «բնական» ծեւացնելու համար, այսպէս է ներկայացնում նրա կենսագրականը. «Թաներ Աքչամը ծնուել է Կարսում: Նահանգ, ուր պատկառելի թուով «թուրքացած» հայ ընտանիքներ են ապրում, եւ զաւակն է ծախակողմեան գրող Դորսուն Աքչամի... (ընդգծումը մերն է- Կ.Խ.)»⁴³⁰ եւ այլն:

Համշէնահայութեան քաղաքական հակումների եւ ակտիւութեան վերաբերեալ արձանագրենք, որ, ուսումնասիրելով Թուրքիայի քաղաքական գործիչների կենսագրութիւնները, յայտնաբերում ենք պատկառելի թուով համշէնահայերի մասնակցութիւնը Թուրքիայի քաղաքական կեանքին: Այսպէս՝ Դամաթ Մեհմետ Ադիլ Ֆերիդ Փաշան (Օսմանիայի մեծ վեզիրը 1919 թ.), Ահմետ Տեվֆիկ Իւլերին (վարչապետ Ադնան Մենդերեսի դաւիթի կրթութեան նախարարը 1958-60 թթ.), Մեսուդ Եւմազը (Թուրքիայի վարչապետը 1997 թ.) եւ Մուրատ Կարաեալչինը (SHP կուսակցապետն ու Անկարայի վերջին ժամանակների քաղաքապետը) եղել են համշէնահայեր⁴³¹: Նորագոյն պատմութիւնից գիտենք, որ Մեհմետ Ադիլ Ֆերիդ Փաշայի իշխանութիւնների օրոք տեղի է ունեցել հայանպաստ երկու խոշոր ակցիա՝ Զինուորական յայտնի տրիբունալի կայացումը եւ Սեւրի պայմանագրի ստորագրումը: Արդեօք կարելի՞ է այս պատմական

երեւոյթների խորքում հաշուի չառնել Ֆերիդ Փաշայի հայկական ծագման փաստը՝ որպէս խթանիչ, նշանակալից գործօն...

Է (գ) «Թաքուն» հայութիւն: Ներկայումս մեր պայմանական տարածքներում բնակուող հայութիւնը՝ իր էթնիկական վերակերպուած տիպերով, շարունակում է մնալ խորհրդաւոր եւ գրեթէ անձանաչելի: Միւսների համեմատութեամբ «թաքուն» հայերի պարագան թերեւս ամենաբարդը պէտք է համարել:

Փաստերից եւ ապացոյցներից երեւում է, որ ներկայումս «թաքուն» հայութիւն է ապրում մեր պայմանական չորս տարածքների բազմաթիւ շրջաններում, յատկապէս Արեւմտեան եւ Հարաւարեւմտեան Հայաստանում (տարածքներ՝ «ա» եւ «բ»):

Թուրքիայի վերաբերեալ միջազգային առեւտրականութեան մասնագիտական-ուսանողական մի զեկուցագրում նորուեզացի փորձագէտները հետաքրքրական տեղեկութիւններ են փոխանցում. «Ստամբուլում եւ Վանայ լճի շրջակայքում ապրում է 70 հազար հայ (ընդգծումը մերն է - Կ.Խ.)»⁴³²:

Գերմանիայում հաստատուած եւ բուն անունն ու կրօնը վերականգնած Սիմոն Կոստանեանը (նախկինում՝ Սարդետ Կոստուն), որ ծնուել եւ ապրել է Տարօնի Կարմիր Խաչ գիւղում, ասում է. «Դեռ մեր ազգականներն ապրում են Արեւմտեան Հայաստանում եւ ենթակայ են մնում չարչարանքների»⁴³³:

⁴³⁰ <http://www.tallarmeniantale.com/TURKISH-SCHOLARS.htm>

⁴³¹ <http://www.answers.com/topic/hamshenis>

⁴³² Reve T., Hauge E. H., Gjaerum P I., Finding Market Opportunities in Turkey, International Buisness, 2003, p. 20.

⁴³³ Thousands Of Turkified Armenians Revert To Their Roots,

Պրոֆ. Գեղամ Կիրակոսեանը Արեւմտեան Հայաստան ուղեւորութեան յուշերում գրում է. «Այդ ամբողջ օրը մեզ հետ էր նաւավար Ռաջաբը: Ես փորձեցի քողերէն իմացած իմ մի քանի բառով «գրուցել» նրա հետ ու հասկանալ, թէ ինչու է նա մեր նկատմամբ այդքան ջերմ: Նա բռնեց իմ թելը, ինձ տարաւ կղզու հարաւային կողմ՝ մի բարձր տեղ, եւ ցոյց տուց լճի հարաւային ափին՝ հեռւում երեւացող իրենց գիւղը՝ Շքուերդը՝ պատմական Մոխրաբերդը, եւ ալեկոծուած հոգով ասաց, որ ինքը հայ է, եւ իրենց գիւղի բոլոր բնակիչները քրդախօս հայեր են»⁴³⁴:

Սոյն նաւավարի մասին վկայում է նաեւ Մեսրոպ արք. Աշճեանը. «Յանկարծ աչքիս է զարնում Ռաջաբը: Նոր եմ ծանօթացել: Մեր նաւավարն է, հայ է, հայ են իր հայրը, մայրը, մեծ հայրը: Նա փափագում է Հայաստան գալ եւ մի հայ աղջիկ առնել: Աստուած տայ. քանի՜-քանի՜ Ռեճէպներ կան, Աստուած բոլորի մուրազը տայ, բոլորն էլ լսեն իրենց արեան կանչը»⁴³⁵:

Գեղամ Կիրակոսեանն իր յուշերում շարունակում է. «Հիւրանոցի մուտքի մօտ Հայկազ Յովհաննիսեանն ինձ ասաց, որ ծագումով Սասունի Սեմալ գիւղից, այժմ Մուշում ապրող Արմէն անունով մի երիտասարդ ցանկանում է ինձ տեսնել: Հիւրանոցի առաջին յարկի սրահում ինձ ընդառաջ եկաւ կարճա-

հասակ ու թիկնեղ մի երիտասարդ, ծանօթացանք, ողջագուրուեցինք, ապա սկսուեց անմիջական եւ աշխոյժ գրոյց. նա լաւ էր խօսում հայերէն... Անմիջապէս ճանապարհ ընկանք, մեզ ընկերակցում էր Արմէնը: Մուշից Արեւմուտք՝ Հայկական Տաւրոսի ստորոտին, կան եօթ գիւղեր, որոնց բնակիչները քրդախօս հայեր են: Այդ եօթ գիւղերի թում է նաեւ Արմէնեց գիւղը՝ Գաւառը (ընդգծումը մերն է - Կ.Խ.)»⁴³⁶:

Սոյն անձնաւորութիւնը՝ Արմէն Մարտիրոսեան, իր տուած հարցազրոյցում որոշակիացնելով եւ ընդհանուր գծերով բնութագրելով Մշոյ ներկայիս հայութեան վիճակը, ասում է. «Մշոյ մէջ այսօր 1,000 հայեր են ապրում, որոնք ոչ ամուսնական եւ ոչ էլ այլ կապերով չեն շփուում քրդերի եւ թուրքերի հետ»⁴³⁷:

Մուշի եւ Բինգէօլի (Բիւրակն) «թաքուն» հայութեան գիւղերի մասին վկայութիւններ կան նոյնիսկ թուրքական հակահայ քարոզչութեան բնոյթի կայքէջերում: Նրանցից մէկում ասւում է, որ ներկայումս Բինգէօլի Գենչ շրջանում եւ Մուշում գոյութիւն ունի 25 հայկական գիւղ⁴³⁸: Նոյն տեղում ակնարկւում է նաեւ Էրզինջանի (Երզնկա) Քեմախում (Կամախ) չորս հայկական գիւղերի մասին⁴³⁹:

2007 թ. օգոստոսին Կեսարիայում տեղի ունեցած մի համագումարի մէջ Եուսուֆ Հալաջողլուն խոստովանում է մի յոյժ կարեւոր պատմական իրողութիւն,

PanArmenian News, jan 19 2005 www.panarmenian.net/news/eng/?task=society&id=11935&date=2005-01-19.

⁴³⁴ Կիրակոսեան Գ., Հողի ու արեան կանչով, տասն օր Արեւմտեան Հայաստանում, Երեւան, 2001, էջ 32:

⁴³⁵ Վարազ, 2001, խը (48) տարի, էջ 58:

⁴³⁶ Կիրակոսեան Գ., Հողի ու արեան կանչով, տասն օր Արեւմտեան Հայաստանում, Երեւան, 2001, էջ 48:

⁴³⁷ Դիտակ, 2004, ապրիլ-մայիս, թիւ 24, էջ 60:

⁴³⁸ <http://www.ulkuocaklari.org.tr/arastr/teror/10.htm>.

⁴³⁹ Նոյն տեղում:

որը խորքում առնչվում է ոչ այնքան ավելիների ծագումնաբանությանը, այլև «թաքուն» հայերի երեւոյթին: «Հայերու մէկ մասը տեղահանուեցաւ, մէկ մասն ալ իրենք զիրենք թաքցնելու համար ավելի քուրդ դարձաւ,- 1915 թ. դէպքերին անդրադառնալով, ընդգծում է Հալաջողուն,- այս կերպով մեծաթիւ հայեր թուրքիոյ մէջ մնացին (ընդգծումը մերն է,- Կ.Խ.)»⁴⁴⁰: Յիշեցնենք, որ «թաքուն» հայերի այս խումբը հիմնականում բնակւում է Արեւմտեան Հայաստանի (տարածք «ա») ծայրամասում գտնուող Դերսիմ (Թունջելի) եւ Փոքր Հայքի Սեբաստիա (Սվազ) նահանգներում:

«Թաքուն» հայերի մի մաս էլ բացայայտւում է գուտ անձնական հարցերի բերումով: Այս իմաստով հետաքրքիր է Ֆրանսիայի քաղաքացի Արմենակ Շահմուրադեանի ժառանգութեան հարցի հետ կապուած հանգամանքը: Նա իր ունեցուածքը, յետմահու, ժառանգութիւն է թողել իր քրոջ՝ Շուշանի յետնորդներին: Ֆրանսական նօտարը, ըստ «Մարմարայի» 2006 թ. օգոստ. 5-ի համարի, 2004 թ. ենթակայի ծննդավայր Մուշ քաղաքի «բնակչութեան գրասենեակին» նամակ ուղարկելով, հարց է տուել, թէ արդեօք Շահմուրադեանը ժառանգորդներ ունի՞ Մուշում: Հրատարակուած ծանուցումներից յետոյ պարզուել է, որ Շահմուրադեանի քրոջ աղջիկը Կիւնազ Պահչըրվանն է, որի թոռներն այժմ բնակւում են Մուշում⁴⁴¹: Անձնական նմանօրինակ հարցերի գետնի վրայ բա-

ցայայտումները չեն բացառում նաեւ այլ շրջաններում:

«Middle East Times»-ի աշխատակից Նիկոլաս Չելիրոնն իր 2005 թ. դեկտ. 5-ի յօդուածում (թարգմանաբար կոչւում է՝ «Առաւել մեղմացած Թուրքիայում դաւանափոխ հայերի յետնորդներն արմատներ են փնտրում») Ֆեթիյէ Չեթինի «Մեծ մայրս» վէպի թողած ազդեցութեան տակ հանգամանօրէն վերլուծում է «թաքուն» հայերի վիճակն արդի Թուրքիայում: Չելիրոնը նշում է վէպի հրատարակութիւնից յետոյ ի յայտ եկած բազմաթիւ «դաւանափոխների», այդ թըւում՝ իր մեծ մօր հետքերը Օրդու քաղաքում որոնող ռեժիսոր Բերկէ Բաշին⁴⁴², եւ այդտեղից պարզւում է, որ Փոքր Հայքում եւ յարակից շրջաններում (տարածք «դ») եւս քիչ չէ «թաքուն» հայերի թիւը: Ըստ Հալաջողլուի բացայայտած տեղեկութիւնների, ներկայիս Դերսիմից բացի, Սվազում եւս ապրում են «թաքուն» հայեր, «կարգ մը ավելի խմբակներ հայ դաւանափոխներու սերունդէն»⁴⁴³:

Պատմական Կիլիկիայի (տարածք «գ»), Այնթապում ներկայումս ապրող «թաքուն» հայութեան մասին կարելի է վկայութիւն կայ վերելում նշուած թուրքական հակահայ քարոզչական կայքէջում, ըստ որի Գազիանթեփի (Այնթապ) Ռեֆահիյէում գոյութիւն ունի երեք-չորս գիւղ⁴⁴⁴:

Ադանայում ծնուած, այժմ շուեղաբնակ Հայկ Ա-

⁴⁴⁰ Նոր Մարմարա, 2007, օգոստոսի 20:

⁴⁴¹ Նոր Մարմարա, 2006, օգոստոսի 5:

⁴⁴² <http://www.metimes.com/storyview.php?StoryID=20051205-073332-7827r>

⁴⁴³ Նոր Մարմարա, 2007, օգոստոսի 20:

⁴⁴⁴ <http://www.ulkuocaklari.org.tr/arastr/teror/10.htm>

րամեանը (նախկինում՝ Սուլէյման Ֆարուկ) AGBU-ի էլեկտրոնային լրատուի մէջ 2005 թ. մարտի 2-ի իր հարցազրոյցում պատմում է մեծ մօր յիշեցումների եւ իր արմատներին վերադառնալու որոշման մասին ու անելացնում, որ «Անհաշիւ հազարներով ուրիշներ եւս կորել եւ դարձել են քուրդ: Ես էլ, անշուշտ, կարող էի քուրդ մնալ, բայց այլ որոշում ընդունեցի»⁴⁴⁵:

Հարաւարեւմտեան Հայաստանի Մարդինի շրջանում ծնուած 46 ամեայ Վրէժ Քէոսէեանը նոյն աղբիւրում պարզում է իր «թաքուն» կեանքի հետաքրքիր ծալքերը: «Ծնուել եմ Մարդինի մօտակայքում՝ հիմնականում ասորիներից բաղկացած գիւղում: Մենք գիտէինք, որ հայ ենք, սակայն, ցաւօք, մեզ որպէս այդպիսին չէր ընդունում Պոլսի հայկական համայնքը»⁴⁴⁶:

Այստեղ նկատելի է, որ ազգային պատկանելութեան հարցում եթէ անհատի սեփական գիտակցութիւնն ու զգացողութիւնները հիմնական նշանակութիւն ունեն, ապա բազմաթիւ այլ ազդակներ, այդ թւում՝ նաեւ անմիջական միջավայրի հաւաքական կեանքում տիրող ենթակայական գործօնները լրացուցիչ դերում են հանդէս գալիս եւ երբեմն էլ խանգարում, դանդաղեցնում են ազգային արմատներին վերադառնալու բնական գործընթացը:

Վերելում Օկտեմից մէջբերած տեղեկութիւնները կրկնում ենք այստեղ, ըստ որի՝ 1990-ականներին «ամբողջական 200 եւ հաւանաբար դեռ անելի ծագումով

հայ ընտանիքներ ապրում են Ուրֆայում: Նրանք իսլամացուած են, ունեն թուրքական անուններ եւ հանրութեան մօտ խուսափում են որպէս հայ ներկայանալուց: Երբ հայկական եկեղեցին մզկիթի էր վերածում 1990-ականների սկզբին, անելի քանի 200 բողոքագրեր, ի բողոք այդ վերածման, հասցէագրուեցին Ուրֆայի նահանգապետին, որոնց ընթացք չտրուեց անստորագիր լինելու պատրուակով»⁴⁴⁷:

«Թաքուն» հայութեան բողոքի այս ուշագրաւ քայլը մասնակի բնոյթ չի ունեցել: Դրա նման օրինակների կարելի է հանդիպել այլ քաղաքներում եւս: «Յառաջի» խմբագիրը, յենուելով հայկական հարցեր հետազօտող պրոֆ. Սալիմ Ջէօհջէի տեղեկութիւնների վրայ, նշում է, որ 1995 թ. յետոյ Մալաթիայում թաքուն ու կրօնափոխ հայերի գործունէութիւնն աշխուժացել է: Իսկ 2003 թ. մահմեդական անուններով շուրջ 120 ծագումով հայեր դիմել են պետական մարմիններին, Չաոււշօղլու թաղամասի եկեղեցին վերաբացուելու խնդրանք»⁴⁴⁸:

Ազգագրագէտ-բանահաւաք Արտակ Վարդանեանի 2008 թ. յուշագրութեան մէջ առարկայական տեղեկութիւններ կան Մուշ քաղաքի «թաքուն» հայերի ազգային եւ կրօնական գիտակցութեան պահպանման մասին. «... երեխաների ու մեծերի մի ամբողջ բազմութիւն հաւաքուեց,- պատմում է նա Մշոյ Մայր եկեղեցու մօտ իր տեսածի մասին,- երեխանե-

⁴⁴⁵ http://www.agbu.org/agbunews/display.asp?A_ID=47.

⁴⁴⁶ Նոյն տեղում:

⁴⁴⁷ Oktem K., Creating Turk's Homeland: Modernization, Nationalism and Geography in Southeast Turkey in the late 19th and 20th Centuries, University of Oxford, 2003, p. 12.

⁴⁴⁸ <http://www.horizonweekly.ca/2006-03-22>

րից մի քանիսի ձեռքին ուռնում կարճ ու երկար ճիւղերից պատրաստուած խաչեր կային: Ես մօտեցայ նրանցից մէկին եւ, խաչը ցոյց տալով, թուրքերէնով հարցրի-Սա ի՞նչ է,- Հաչ...,- պատասխանեց նա: Ուրեմն՝ մահմեդականութիւն ընդունելուց յետոյ էլ հայերը կենցաղում պահում են խաչի պաշտամունքը...»⁴⁴⁹:

Քրդական հարցը, որ 1984 թուականից Արդուլլահ Օջալանի ղեկավարութեամբ զինեալ պայքարի նոր փուլ էր մտել, թուրք քաղաքական վերնախաւին կրկին յանգեցրեց հարցի բիրտ՝ աւանդական մեթոդով հանգուցալուծմանը:

Գեներալ Քենան Էրէնի ժամանակուանից սկսած եւ յատկապէս 90-ական թուականների ընթացքում Թուրքիայի արեւելեան գաւառներում բանակն աւերել կամ այրել է բազմաթիւ բնակավայրեր եւ տեղահանել շուրջ երեք միլիոնի հասնող բնակչութիւն:

Այս իմաստով մարդկային իրաւունքներին առնչուող բազմաթիւ զեկուցագրերից մէկում այդ բռնութիւնների մասին նշուած են մանրամասնութիւններ: Պարզուում է, որ 1984 թուից ի վեր, երբ կառավարական ուժերը Արեւմտեան եւ Հարաւարեւմտեան Հայաստանում սկսեցին կռուել քուրդ անջատողականների դէմ, նուազագոյնը 19 հազար մարդ է զոհուել այդ բախումների ընթացքում: Նոյն ժամանակահատուածում քրդաբնակ տասնեակ քաղաքների եւ 2,000-ից 3,000 գիւղերի մեծ մասը գտնուում էր Թուրքիայի տաս նահանգներում, ուր 1987 թ. սկսեալ հաստատ-

⁴⁴⁹ Վարդանեան Ա., Երկիրն իմ աչքերով, Թեհրան, 2008, էջ 32-33:

ուել էր արտակարգ դրութիւն: Այդ նահանգներն էին Թինջելին (Դերսիմ), Բինգեօլը, Դիարբեքիրը (Տիգրանակերտ), Մարդինը, Բաթմանը, Բիթլիսը (Բաղէշ), Սիիրտը (Սղերդ), Շիրնաքը, Վանը եւ Հաքքեարին:

Բնաջնջման նախօրեակին մօտ 5,000 գիւղ գլտնըւում էր արտակարգ դրութեան մէջ: Թուրքական պաշտօնական աղբիւրներում նշուում է, որ 1984-87 թթ. ընթացքում 2,400 գիւղ եւ 1,500 գիւղակ ամբողջութեամբ կամ մասնակիօրէն դատարկուել են բնակչութիւնից: 2-ից 3 միլիոն բնակիչներ տեղահանուել են: 1995 թ. ապրիլի 27-ին թուրքական բանակի ուժերն այրել են Բաթմանի շրջանի Սասունի գիւղերը, ներառեալ՝ Սեքսիքան (Այդինլիք), Փիրմիսը (Ենի Չաքմաք) եւ Հելիզը (Քափլի): Բնակիչները նախապէս բռնի տեղահանուել են իրենց տներից⁴⁵⁰:

Այս զանգուածային բռնութիւններից չէր կարող անմասն մնալ հայութիւնը: Մեզ դեռ յայտնի չէ հայկական գիւղերի կրած մարդկային եւ նիւթական վնասների ճշգրիտ չափը: Մարդկային իրաւունքների պաշտպան մի կայքէջում, հիմք ունենալով Թուրքիայի մարդկային իրաւունքների հաստատութեան կողմից հաստատուած մի փաստաթուղթ, ասում է, որ «Թուվ 729 գիւղեր (թէ՛ քրդական, թէ՛ քրիստոնէական) դատարկուել են անվտանգութեան ուժերի կողմից (ընդգծումը մերն է,- Կ.Խ.)»⁴⁵¹:

«Kurdistan Liberation» (Քրդստանի ազատագրու-

⁴⁵⁰ Forced Evictions: Violations of Human Rights, Global Survey on Forced Evictions, No 7 COHRE, September 1998, www.cohre.org, pp 65-69.

⁴⁵¹ <http://www.jubileecampaign.co.uk/world/tur2.htm>.

թին) անունով մի քրդական կայքէջում՝ Արեւմտեան եւ Հարաւարեւմտեան Հայաստանում այրուած գիւղերի ցանկում՝ Սասունի գիւղերի գլխում հանդիպում ենք Աջար գիւղի անուանը, որի հայ բնակչութեան բռնի իսլամացման մասին խօսուել է նախորդ բաժնում: Ըստ կայքէջում նշուած փաստի, որը մէջ է բերուել Սերդար Զելիկի «Killing Machine: Turkish Contra-Guerilla» (Թուրքական հակաարձակազէնը՝ սպանութեան գործիք) աշխատութիւնից, Թուրքիայի բանակը Աջար գիւղն այրել է 1995 թ.⁴⁵²:

ԱՄՆ-ի Ապաստանածների համար կոմիտէի հրապարակած պարբերական մի զեկուցագրում մի ապաստանած անձ, նկարագրելով իր փախուստը, իմիջիայլոց ասում է. «Ես Սիիրտ տարածաշրջանի x գիւղից եմ: Մայրս հաշմանդամ էր եւ ի վիճակի չէր քայլել: Փախել եմ 1994 թ.: Բանակը եկաւ 1992 թ.: Մենք կատարեցինք այն բոլոր պարտականութիւնները, որ պահանջել էին բանակայինները. փայտ տրամադրեցինք, հաց տուեցինք նրանց: 1994 թ. նըրանք ստիպեցին մեզ միանալ գիւղի զօրամասին: Մեր գիւղի աւելի քան 80 տուն բնակչութիւնից միայն մէկ անձնաւորութիւն միացաւ զօրամասին: Զինուորները եկան մեր տուն: Նրանք կոտորեցին մեր մուտքի դուռը: Զինուորներն ամբաստանում էին ինձ PKK-ին (Քրդստանի բանուորական կուսակցութիւն) օժանդակելու մէջ եւ ասում էին, որ ես հայ եմ: Ի հարկէ, մայրս քրիստոնէայ է: Եթէ ես միացած լինէի զօրամասին, այժմ հանգիստ կեանք կ'ունենայի: Իմ նախնիներին պարտադրեցին հայկական քրիստոնէութիւնից կրօ-

⁴⁵² <http://www.dozame.org/villages/burnedvillages.htm>.

նափոխուելու իսլամի: Իսկ ներկայումս թերեւս ամէն ինչ լաւ կը լինէր, եթէ քուրդի փոխարէն դառնայի թուրք: Նախընտրեցի փախչել x-ից: Տանս բանալին յանձնեցի մի քրիստոնէայ տիկնոջ: Բայց մեկնումիցս յետոյ գիւղի զօրամասը թալանել էր տունս եւ վերցրել թանկարժէք իրերը: Խնդրել եմ քրիստոնէայ ընկերներիցս, որ նորից փակեն տունս (ընդգծումները մերն են, ապաստանածի ինքնութիւնը եւ պատկան գիւղի անունը չեն մատնանշուել բնագրում, թերեւս, անվտանգութեան նկատառումներով- Վ.Խ.)»⁴⁵³:

«Ապաստարանի օժանդակութիւն» խորագրով մի այլ զեկուցագրում ոմն հողագործ Իւսուֆը, պատմելով իր եւ իր ընտանիքի նկատմամբ տեղի ունեցած դաժան հալածանքների մասին Մալազկիրտի (Մալազկերտ, Խնուսի մօտակայքում) Գուլալի գիւղում, բացատրում է, թէ ինչպէս անվտանգութեան ուժերը 1993 թ. իրենց գիւղը երեք անգամ այրելուց յետոյ դրա մուտքի մօտ փակցրել են «Սա հայկական գիւղ է, մուտքն արգելուում է» բովանդակութեամբ մի յայտագիր: «Մէկ ամիս շարունակ նրանք տանջեցին մեզ: Տղամարդկանց, կանանց եւ երեխաներին մերկացրին...»⁴⁵⁴ - ասում է Իւսուֆը՝ յիշատակելով թուրքաբարոյ այլ բռնութիւններ:

Ենթադրելի է, թէ նմանօրինակ բազմաթիւ դէպքեր են եղել ինչպէս Արեւմտեան եւ Հարաւարեւմտ-

⁴⁵³ The Wall Of Denial: Internal displacement in Turkey, U.S. Committee for Refugee, November 1999, pp. 14-15.

⁴⁵⁴ Asylum Seekers From Turkey: The Dangers They Flee, A Report To Asylum Aid (Report of a mission to Turkey), 4-17 October 2000, p. 59.

եան Հայաստանում (տարածքներ «ա» եւ «բ»), այնպէս էլ Կիլիկիայում (տարածք «գ»), Փոքր Հայքում եւ յարակից շրջաններում (տարածք «դ»): Նոյնպէս արտասահմանում հաստատուած եւ բուն անունն ու կրօնը վերականգնած Ռազմիկ Յակոբեանը (նախկինում Նուրէդդին Եագուբ), որ ծնուել եւ ապրել է Ադիեամանում եւ որոշել է էկրանաւորել փաստագրական ֆիլմ «Թաքուն» հայութեան մասին, 2004 թ. մանրամասնօրէն նկարագրում է կացութիւնը. «Ծնողներս թաքցնում էին իրենց ծագումը, որովհետեւ հայ լինելն աններելի յանցանք է համարում»⁴⁵⁵:

«Թաքուն» հայութեան իրավիճակին առնչուող բազմաբնոյթ վկայութիւններ գոյութիւն ունեն այսօր, սակայն նրա ընդհանուր թուաքանակի վերաբերեալ քիչ տուեալներ կան մեր տրամադրութեան տակ:

Թեսսա Հոֆմանը, վկայակոչելով մի շարք էթնոլոգների, «crypto-armenians» կամ «թաքուն» հայերի թուաքանակը գնահատում է 30-ից 40 հազար, որոնք արդէն «համակերպուել են թուրք կամ քուրդ մեծամասնութեան հետ»⁴⁵⁶: Մեր համոզմամբ այս թիւը խիստ թերագնահատուած է:

Միւս կողմից գերագնահատուած մի թուաքանակի մասին ակնարկներ են գնում Քրդստանի աքսորեալ խորհրդարանի փաստաթղթերում, ընդ որում՝

⁴⁵⁵ Thousands Of Turkified Armenians Revert To Their Roots, PanArmenian News, jan 19, 2005

www.panarmenian.net/news/eng/

?task=society&id=11935&date=2005-01-19.

⁴⁵⁶ Hofmann T., Armenians in Turkey today, October 2002, pp 11-12.

այսպէս կոչուած «Մեծ Քրդստանի» սահմաններում ապրող ասորի եւ հայ բնակչութեան թուաքանակի գումարը գնահակում է ամբողջական բնակչութեան շուրջ 10 %-ը⁴⁵⁷:

Քրդերի մարդկային իրաւունքների մասին գեկուցագրում («The EU, Turkey and the Kurds», 2004 թ.) Թուրքիայի քուրդ փոքրամասնութեան թուաքանակը ներկայացւում է 15-ից 20 միլիոն⁴⁵⁸: Իսկ վերջերս Թուրքիայի՝ Եւրոմիութեանն անդամակցելու հարցին նուիրուած տեղեկագրում (2005 թ.), նրանց թիւը ներկայացւում է 10-ից 15 միլիոն⁴⁵⁹: Եթէ հիմք ընդունենք 15 միլիոնը, ապա ասորի եւ հայ բնակչութեան թուաքանակը, ըստ Քրդստանի աքսորեալ խորհրդարանի նշուած հիմնաւորման, պէտք է գնահատել շուրջ 1.5 միլիոն:

Քրդական «Ozgur politik» էլեկտրոնային թերթի 1997 թ. դեկտեմբերի համարում Թեմել Դեմիրեր անունով յօդուածագիրը եւս ակնարկում է նման մի թուաքանակի մասին՝ նշելով, որ «քրդական տարածքներում» սուրիանական եւ հայկական ծագումով 2 միլիոն «քրդեր» կան⁴⁶⁰:

Այս լոյսի տակ Քրդստանի աքսորեալ խորհրդարանի գործադիր խորհրդի խօսնակ Զուրէիր Այդարի ստորագրութեամբ յայտարարութեան մէջ (հրապարակուած 1995 թ. ապրիլի 23-ին), ակնարկ կայ եւ Հայոց Ցեղասպանութեան, եւ այն մասին, որ այսօր

⁴⁵⁷ <http://www.kurdish.com/media/article/kwr-article-15.htm>.

⁴⁵⁸ <http://www.khrp.org/news/pr2004/26-11-04.htm>.

⁴⁵⁹ Նոր Մարմարա, 2005, փետրուարի 15:

⁴⁶⁰ www.ozgurpolitika.org/1997/aralik/1226kyb.htm.

«քրդերի հետ միասին այնտեղ՝ Քրդստանում, ապրում են հայեր եւ ասորիներ...»⁴⁶¹:

Քրդստանի աքսորեալ խորհրդարանը 1995 թ. հրատարակել է մի քարտեզ, ուր տեղացի էթնիկական խմբերի կողքին նշուել են նաեւ հայերով բնակեցուած վայրերը՝ իրենց անուններով: Այս մասին վկայում է ասորի պատմաբան Յակոբ Հիդրիսահը՝ քննադատելով, սակայն, Քրդստանի աքսորեալ խորհրդարանի պաշտոնաթերթ «Bulletin of Preparatory Commission for the Kurdistan Parliament in Exile»-ի պատմական նենգափոխումները՝ «Քրդստանի ժողովուրդ», «քրդաբնակ», «քրդապատկան» եւ նմանօրինակ այլ բառակապակցութիւնների շուրջ⁴⁶²:

Ասորի եւ հայ բնակչութեան համար 1-ից 1.5 միլիոն թուաքանակը թէեւ փաստարկելի եւ ստուգելի չէ, սակայն լուրջ նկատառման է արժանի, մանաւանդ երբ հաշուի ենք առնում Թուրքիայի ասորիների ներկայ թուաքանակը: Ժիրայր Պէժճեքեանը, ըստ Ժոզէֆ Եակուպի հեղինակած «Թուրքիայի տարագիր ասորիները» աշխատութեան տուեալների, յայտնում է, որ «Առաջին աշխարհամարտի նախօրեակին Թուրքիայի ասորիների թիւը հասնում էր 250 հազարի: 1986 թ. այնտեղ մնացել են միայն 4,500 ասորիներ»⁴⁶³: Այս զգայուն հարցի կապակցութեամբ վկայակոչում ենք

⁴⁶¹ <http://www.etext.org/Politics/Arm.The.Spirit/Kurdistan/Kurdistan.Parliament.in.Exile/armeniangenocide.txt>.

⁴⁶² Hidrisah Yakup, Massacre of Christians (Syriacs, Nestorians, Chaldeans, Armenians) in Mesopotamia and Kurds, A Documentary Study, Honnover, 1997.

⁴⁶³ Ղրօշակ, Աթենք, 1987, փետրուարի 18, էջ 38:

նաեւ ասորական միջազգային լրատուական գործակալութեան (AINA) հրապարակած մի յօդուածը, ուր Թուրքիայի ասորիների ներկայիս ամբողջական թուաքանակը գնահատում է հինգ հազար (որից երկու հազարը՝ ստամբուլաբնակ)⁴⁶⁴: Այսպիսով՝ քրդախառն շրջանների «թաքուն» հայութիւնը պէտք է գնահատել առնուազն մի քանի հարիւր հազար: Այս մասին վերջնական եզրակացութեան դեռ յանգելու ենք:

Այլ քուրդ ղեկավարներ եւս վկայում են «թաքուն» հայերի մասին. «Այն գիւղը, որ գնացի, մօտ մէկ ժամ կամ աւելի հեռու էր մեր գիւղից եւ հայկական շատ հին գիւղերից էր (խօսքը Զեբին գիւղի մասին է- Կ. Խ.): Հէնց այդտեղից... պարզուում էր հայերի իրաւունքների ոտնահարումն ու նրանց նկատմամբ խտրութիւնը, որովհետեւ այդ գիւղի եկեղեցին վերածել էին մզկիթի, այն պայմաններում, երբ դեռ հայ եղբայրներն ապրում էին այդտեղ: Հայրս հետաքրքիր եւ ընկերական կապեր ունէր հայ եղբայրների հետ եւ նրանցից շատերի հետ սերտ ընկերութիւն էր հաստատել... Այդ խնդիրն արծարծում եմ, որովհետեւ թուրք ֆաշիստները սնապարծութեամբ ու պռոշտախօսութեամբ ասում էին, որ այլեւս հայ չկայ...»: Ահա այսպէս է արտայայտուում Աբդուլլահ Օջալանը թուրք լրագրող դոկտ. Եալչին Քիւչիւքի վարած մամուլ ասուլիսի ընթացքում՝ 1990-ականների կէսերին⁴⁶⁵:

⁴⁶⁴ Assyrian International News Agency (AINA), <http://www.aina.org/ahrr.htm>.

⁴⁶⁵ Քիւչիւք Ե., Վերապրումի պատմութեան, Աբդուլլահ Օջալանի յուշերն ու մտորումները (պարսկերէն), Թեհրան, 1999, էջ 48 եւ 49:

Մեսրոպ արք. Մուրաֆեանը, 2000 թ. յուլիսի 4-ին այցելել է Ուրֆայի շրջակայքում գտնուող Ջեբին կամ Սայլակկայա գիւղը: Այդ կապակցութեամբ աւելորդ չենք համարում մէջ բերել հետեւեալ յուզական տողերը. «Նուրին կամ Մուշեղը պատրիարքին հրաւիրեց իր տունը: Նա կոյր է եղել 4 տարեկանից եւ հայերէնը խօսում է մաքուր պոլսական ոճով: Նա ասեց, որ վերջին 75 տարում սա առաջին անգամն է, որ հայ պատրիարքը ոտք է դնում Ջեբին: ... Ծերունին գեղեցիկ ձայն ունէր եւ հիանալի տոնով երգեց Ս. Ներսէսի շարականներից մէկը...»⁴⁶⁶:

Ջեբինի թուրքերէն կայքէջի հեղինակները (<http://www.cibin.de>), մատնանշելով Ջեբինի հայկական լինելու հանգամանքը, առանձին տեղ են յատկացրել գիւղի ներկայիս հայ բնակիչներին եւ լուսանկարներով ներկայացրել նրանց. Սաթենիկ, Մարիամ, Ծաղիկ, Ղուկաս եւ Մելինէ անունների կողքին այնտեղ հանդիպում ենք նաեւ Իսուֆ, Ջինէ, Խաթուն, Ֆաթմա եւ այլ ոչ հայկական անուններով հայերի եւ նրանց միջեւ ազգակցական կապերի մասին հետաքրքրական տեղեկութիւնների⁴⁶⁷:

Պաուլա Վոլֆերտը Թուրքիայի հարաւարեւելեան շրջանների խոհանոցին ու կերակրատեսակներին նուիրուած մի յօդուածում («Saveur» հանդէս, 1998 թ. մայիս) յիշատակում է Ջեբին գիւղի բնակիչ Ջելիհա Գունգորէն անունով մի «թաքուն» հայուհու⁴⁶⁸: Վոլֆերտը, ընդգծելով 1915 թ. տեղահանութիւններից

⁴⁶⁶ oons-request@uk-christian.net, 2000, յուլիսի 12:

⁴⁶⁷ <http://www.cibin.de>

⁴⁶⁸ <http://www.paula-wolfert.com/articles.html>.

յետոյ մի խումբ հայերի «ծուլման» պարագան, նշում է, որ նրանց շառաւիղների՝ «սեւահեր եւ կապուտաչեայ» Ջելիհայի նմանների գոյատեւման շնորհիւ այսօր «հայկական համ ու հոտ է հաղորդուել շրջանի խոհանոցին»⁴⁶⁹: Նա նոյն հաստատումն է անում նաեւ Գագիանթեփի խոհանոցի դէպքում: Իսկ Վագըֆ գիւղի պարագայում ուղղակի համոզուած է, որ այն «քրիստոնեայ հայերով բնակեցուած» շրջան է, եւ խոհանոցն էլ՝ հայկական⁴⁷⁰:

«Թաքուն» հայութեան գոյութեան ակնյայտ իրողութիւնը հաստատում են Արեւմտեան եւ Հարաւարեւմտեան Հայաստան ճանապարհորդած այլ ուղեւորներ եւ հետազօտողներ եւս. «էգինի (Ակն, Քեմալիէ- Կ.Խ.) այսօրուայ մնացած հայերը նրանք են, որոնք գոյատեւել են թուրքանալու միջոցով»⁴⁷¹:

Պատահական չէ, որ Թուրքիայի զբօսաշրջիկութեան ոլորտի աշխատակից Սինան Թորթումը, 2006 թ. իր մի հրապարակման մէջ անդրադառնալով կրիպտօ-արմէններին, նրանց բնութագրում է պարզ ու միեւնոյն ժամանակ դիպուկ բանաձեւով: Նրա բնորոշմամբ «թաքուն» հայերը «մուսուլմաններ են, որոնք պահպանում են իրենց բուն հայկական ինքնութիւնը: Իսկ նրանցից ոմանք էլ քողագերծում են իրենց այդ թաքուն ինքնութիւնը»⁴⁷²:

⁴⁶⁹ Նոյն տեղում:

⁴⁷⁰ Նոյն տեղում:

⁴⁷¹ [http://gokdemir.com/Borderlands From Hasankeyf to Mardin to Harput and Beyond.htm](http://gokdemir.com/Borderlands%20From%20Hasankeyf%20to%20Mardin%20to%20Harput%20and%20Beyond.htm), 2000, օգոստոսի 3:

⁴⁷² http://www.pressbox.co.uk/detailed/Arts/Armenians_in_Malatya_soon_to_demand_the_reopening_of_the_church_79067.html.

Սակայն թույլ է, թե այդ «քողագերծման» հոլովոթն ընթանում է դանդաղ տեմպերով: Ստամբուլի «Միլլի գագեթէ» թերթը, 2005 թ. դեկտեմբերի 28-ի համարում մեջբերելով Սալիմ Ջեօհջէի տուեալները, գրում է, որ Թուրքիայում 1916-2004 թթ. ժամանակահատվածում կրօնավորն է եղել 2,630 մարդ, որից 2,172-ը ցանկացել են վերադառնալ իրենց նախնիների դաւանանքին: Այդ 2,172-ից 1,340-ը (շուրջ 62 տոկոս) եղել են հայեր: Ջեօհջէն նշում է նաեւ բուն կրօնին վերադարձած հայերի բնակավայրերը (Տիգրանակերտ, Բաթման, Սեբաստիա, Դերսիմ, Մալաթիա, Խարբերդ, Կեսարիա, Մէրսին, Մարդին եւ այլն)⁴⁷³: Ըստ նրա՝ ներկայումս միայն Մալաթիայի շրջակայքում բնակւում են աւելի քան 3,500 իսկ Դերսիմում (Թունջելի)՝ 2,000 «թաքուն» հայ ընտանիքներ⁴⁷⁴: Սալիմ Ջեօհջէի տեղեկատուութիւնների հիման վրայ (ենթադրաբար դրանք կարելի է համարել պետական-պաշտօնական) թուրքական «Աքսիոնը» 2007 թ. հրապարակել է «թաքուն» հայերի մասին կարեւոր տուեալներ⁴⁷⁵, որոնք արտայայտուած են հետեւեալ աղիւսակում (տես՝ Աղ. 11).

Քաղաքը	«թաքուն» հայերի թիւը	կարգավիճակը
Դիարբեքիր	1000 ընտանիք	քուրդ, ասորի, ալեւի
Մալաթիա	3655 ընտանիք	քուրդ-ալեւի
Կեսարիա	5000 ընտանիք	թուրք

⁴⁷³ <http://www.hri.org/news/cyprus/tcpr/2005/05-12-30.tcpr.html> #09


⁴⁷⁴ Նոյն տեղում:

⁴⁷⁵ Հանրապետական, 2007, թիւ 8 (50), էջ 6:

Էլազիգ	1000 ընտանիք	քուրդ, ալեւի
Վան	4000 ընտանիք	քուրդ
Թունջելի	2000 ընտանիք	քուրդ-ալեւի
Շանլիուրֆա	3500 ընտանիք	քուրդ, արաբ
Սղերթ	1200 ընտանիք	արաբ, քուրդ
Հաթայ (Ալեքսանդրետ)	1100 ընտանիք	արաբ
Բիթլիս	200 ընտանիք	քուրդ
Էրզրում	3000 ընտանիք	քուրդ, ալեւի, թուրք
Երզնկա	1300 ընտանիք	ալեւի, քուրդ
Սեբաստիա	2000 ընտանիք	քուրդ, ալեւի
Մարդին	1500 ընտանիք	արաբ
Քահրաման Մարաշ	3000 ընտանիք	քուրդ, ալեւի
Ադիեման	1600 ընտանիք	քուրդ
Ադանա	2000 ընտանիք	քուրդ, արաբ, ալեւի

Ինչպէս երեւում է «Աքսիոնի» տուեալներից, այսօրուայ դրութեամբ մեր պայմանական տարածքներում, ապրում է շուրջ 37,000 «թաքուն» հայ ընտանիք, որոնք, միջին հաշուարկով, կազմում են 150-ից 200 հազար մարդ: Յիշեցնենք, որ սրանք պաշտօնական տուեալներն են, որոնք, հաւանաբար, ներկայացնում են չափաւոր թեր: Աւելացնենք նաեւ, որ այնտեղ, ակնյայտօրէն, բացակայում են «իսլամացած» համշենահայութեան եւ պոնտահայութեան մասին տուեալները: «Աքսիոնի» տուեալներ հաւաքագրելով մի քարտէզի մէջ (ՆԿ. 11) կարելի է որոշ պատկերացում կազմել «թաքուն» հայերի բնակութեան վայրերի աշխարհագրութեան մասին:

«Թաքուն» Հայութեան աշխարհագրական ցրտածութիւնը
(ընտանիքների քանակի հիման վրայ) ըստ «Աքսիոնի»



Նկար 11

«Աքսիոնի» տուած տուեալներում զգալիօրէն բացակայում են նաեւ Արեւմտեան Հայաստանի (տաւածք «ա») այլ քաղաքների եւ նահանգների «թաքուն» հայութեան մասին տուեալներ: Այդ քաղաքների թւում է Մուշը: Արտակ Վարդանեանն իր 2008 թ. յուշագրութեան մէջ տալիս է թարմ տեղեկութիւններ Մուշ քաղաքի մասին. «Մօտաւոր տուեալներով, - ասում է նա, - այս երբեմնի հայաշունչ քաղաքի բնակչութեան կէսը քրդացած հայեր կամ հայկական ծագումով քրդեր են...»⁴⁷⁶:

Մուշ քաղաքի բնակչութիւնը 1997 թ. կազմում էր 64,088 մարդ⁴⁷⁷: Սա նշանակում է, որ այսօրուայ

⁴⁷⁶ Վարդանեան Ա., Երկիրն իմ աչքերով, Թեհրան, 2008, էջ 32:
⁴⁷⁷ <http://en.wikipedia.org/wiki/Mu%C5%9F>

դրութեամբ առնուազն 30-ից 35 հազար «թաքուն» հայ է բնակւում քաղաքում: Իր առարկայական դատողութեամբ, Արտակ Վարդանեանը, զանազանելով «թաքուն» եւ «պաշտօնական» հայութեան հասկացութիւնները, այնուհետեւ յստակեցնում է Մուշ քաղաքի «պաշտօնական» հայերի թիւը՝ ասելով. «Կան նաեւ իրենց հայ համարող՝ ծպտեալ քրիստոնեայ երեք հազար հայեր»⁴⁷⁸:

Ինչպէս թուրքական այնպէս էլ քրդական աղբիւրների ստուար մեծամասնութեան մէջ «թաքուն» հայերի կենցաղային պայմանների, ապրելակերպի մասին նշումներ չկան: Շնորհիք արք. Գալուստեանի բնորոշմամբ «քրդական աշիրէթական ծելերով» ապրող «թաքուն» հայերի աշխարհագրական դիրքը ճշգրտելու համար, մենք ի մի ենք բերել Թ. Գ. Մկրտիչեանի, Ա. Ալպոյաճեանի եւ Վ. Յոխիկեանի՝ համապատասխան աղբիւրներում նշուած հայկական ծագումով շուրջ քսան աշիրէթի անուն եւ դրանք համեմատել Մեհրդադ Իզադիի (1997 թ.)⁴⁷⁹ եւ Պիեռ Օբերլինգի (2004 թ.)⁴⁸⁰ կազմած՝ ներկայիս Թուրքիայում բնակուող «քրդական աշիրէթների» անուանացանկերի հետ: Լեզուա-ինչունաբանական նկատառումներով կատարուած սոյն համեմատութեան արդիւնքները ցոյց են տալիս, որ այսօրուայ դրութեամբ, առնուազն, մէկ տասնեակ «թաքուն» հայերից բաղկացած աշիրէթներ են ապրում, հիմնականում, Վանայ լճի հա-

⁴⁷⁸ Վարդանեան Ա., Երկիրն իմ աչքերով, Թեհրան, 2008, էջ 32:

⁴⁷⁹ http://www.dersim.biz/html/dersim_neresidir_.html.

⁴⁸⁰ http://www.iranica.com/articles/ot_grp5/ot_kurdish_tribes_20040616.html.

րեւանութեամբ, Արեւմտեան, Հարաւարեւմտեան Հայաստանում եւ Կիլիկիայում (տես՝ Նկ. 12, փակագծում աշիրեթի անուան թուրքական կամ քրդական տարբերակն է գրուել)

«Թաքուն» Հայերի աշիրէթներ



Նկար 12

Քեմալ Եալչինը, որ «թաքուն» հայութեանը նուիրուած երկու հատորի հեղինակ է, գերմանական թղթակցի հետ մի հարցազրոյցի ընթացքում դիպուկ բնութագրում է մերօրեայ «թաքուն» հային. «Այդպիսի ընտանիքներն ապրում են որպէս քուրդ կամ թուրք մուսուլմաններ, եւ նրանց երեխաներն իրենց մայրենի լեզուն չեն սերտում: Իմ տեսած թաքուն հայերից շա-

տերը 15-17 տարեկաններ էին, որոնց ծնողները նրանց զգուշացրել էին չխօսել այդ մասին»⁴⁸¹:

«Թաքուն լինելու», «խնամքով թաքնուելու» մըտակեցումը ինքնին բարդ եւ անըմբռնելի կենսափիլիսոփայութիւն է: Դժուար է պատկերացնել, թէ ինչպէս կարելի է ամբողջ կեանքի տեւողութեամբ ծածկելով, կեղծելով, ամօթի ու վախի զգացումներից եւ հոգեմտաւոր ներքին հակասութիւններից տառապելով, ի վերջոյ, պահպանել ինքնութիւնը եւ կառուցել էթնիկական պատկանելութեան ներաշխարհի եւ, որ էականն է, այն փոխանցել յետնորդներին:

«Թաքուն» հայութեան երկրորդ սերնդին պատկանող մի մարդ ահա այսպէս է բացատրում այդ կենսափիլիսոփայութիւնը. «Հայրս ամէն օր մեզ խիստ կերպով պատուիրում էր. «Ուր էլ ուզում էք գնալ, երբեք մի ամաչէք, որ հայ էք»: Մանկական մտածումով հայութիւնիցս ամաչում էի, մտածում էի, որ եթէ թուրք լինեմ, չեմ վախենայ, «Մենք ինչո՞ւ թուրք չենք» խորհելով յուզում էի... Ժամանակի ընթացքում ամօթս յաղթահարեցի: Դէպի թրքութիւն իմ ունեցած համակրանքը երիտասարդական շրջանում կամաց-կամաց անհետացաւ: Սկսեցի ինքս ինձ ընդունել՝ ինչպէս որ եմ: Միայն այդ ժամանակ կարողացայ հանգիստ քնել...»⁴⁸²:

«Թաքուն» հայութեան հետքեր գտնելու գործում

⁴⁸¹ Kemal Yalcin, Armenians 'In Turkey: The silence broken through?', 22.1.2002, http://www.nadir.org/nadir/initiativ/kurdi-almani-kassel/aktuell/2002/jan2002/armenier_tr.htm.

⁴⁸² Եալչին Ք., Հոգիս քեզմով կը խայտայ, Երեւան, 2003, էջ 362-363:

խրայատուկ զգայնություն եւ հայացք կարելի է նկատել, թերեւս համատեղ ապրող, «պաշտօնական» հայության մօտ: Հետաքրքրականն այն է, որ «պաշտօնական» հայերը յաճախ ի վիճակի են լինում իրենց շրջապատի «թաքուն» հայութեանը յայտնաբերել ամենայն նրբանկատութեամբ: Օրինակ՝ Կիլիկիայի հայության ներկայացուցչական դէմքերից Լեւոն Էրարսլանը, որ 1998 թ. պատրիարքական ընտրությունում պատգամաւորն էր Վազըֆ գիւղից⁴⁸³, 2005 թ. յունուարի 8-ին տողերիս հեղինակին հասցէագրուած էլեկտրոնային նամակում, բնորոշելով Ադանայի «թաքուն» հայութեան նշանները, ասում է. «Թուրքիայի ոչ մի տեղում Աստօյ կամ որեւէ սուրբ գրքի անունով չեն երդում, բայց Ադանայում նրանք դա անում են: Նրանք յատկապէս Հրեշտակի (Herishtag) անունով են երդում»:

«Նաւասարդ» ամսագրի խմբագրապետ Արմէն Տօնոյեանին ուղղած երկու նամակներում Ուրֆայից մի «թաքուն» հայուհի յուզական տողերով բնորոշում էր իր «թաքուն» ներաշխարհը: Իր վախճանուած մօր համար հայկական յուղարկաւորութիւն կազմակերպելու մասին պատմելով՝ պետական պաշտօն զբաղեցրած «թրքուհին» այսպէս էր աւարտել իր առաջին նամակը. «Որոնում եմ էութիւնս, ինքնութիւնս, եւ եթէ գտնեմ, մօրս աստուածը վկայ, լքելու եմ պաշտօնս... Թուրք ծնուած լինելուս բռնաբարուած պարտաւորութեան վրէժը լուծելու եմ»⁴⁸⁴:

⁴⁸³ Ժամանակ, 1998, հոկտեմբերի 15:

⁴⁸⁴ Նաւասարդ ամսագիր, 1995, յունիս-յուլիս, թիւ 167-168, էջ 7:

«Թաքուն» հայութեան քաղաքական տիպարի եւ ուղղութեան մասին քիչ թէ շատ ամբողջական գաղափար կազմելու համար շահեկան կարող է լինել նաեւ քրդական կազմակերպութիւնների շարքերում հայկական ծագումով անդամների մասնակցութեան փաստը:

Մինչ այդ, սակայն, կարելի էր ենթադրել խընդրոյ առարկայ տարածաշրջաններում իսլամիստական հոսանքների ազդեցութեան հարցին անդրադառնալը: Ինչքան որ բնական է համարում «թաքուն» հայութեան հակումը քրդական հոսանքների, այդ թւում՝ նաեւ ժողովրդական ժողովրդավարութիւն կուսակցութեան (DeHaP) նկատմամբ (տես Նկ. 1), այնքան տարօրինակ է թւում իսլամիստական հոսանքների նկատմամբ նրա համակրանքը:

Թէեւ մեզ բոլորովին պարզ չէ «թաքուն» հայութեան ակտիւութիւնն ու դերակատարութիւնը պետական ընտրութիւններում, այնուամենայնիւ եթէ տուեալ պատկերները համարենք «նորմալ» (այսինքն՝ խտութեան նոյն գործակցով ցրուած բնակչութեան վրայ), ապա անխուսափելիօրէն քննարկելի է դառնում այն վարկածը, որ DeP-ի եւ DeHaP-ի բացակայութեան պայմաններում տուեալ տարածքների քաղաքական կողմնորոշումներն ընթացել են «վատի եւ վատթարի երկընտրանքի» օրինաչափութեամբ. «վերազգային» իսլամիստներին Թուրքիայի՝ էթնոկրօնական այլամերժութեան եւ խտրականութեան անցեալով հարուստ աւանդական կուսակցութիւններից գերադասելու ամբոխային պարզ տրամաբանութեամբ: Ի դէպ՝ թուրքական իսլամիզմի կամ «շարիաթականութեան» գաղափարախօսական հէնքերն առերեւոյթ տարբեր

են քեմալական պանթուրքիզմից: Ըստ «Զումհուրիէթի» աշխատակից Քենջայ Շայլանի՝ «շարիաթի» դոկտրինայում «ազգայնության ամեն հակում, որ հակասում է «իսլամական պետութիւն» հասկացութեանը, մերժելի է»,⁴⁸⁵ եւ հետեւաբար պէտք է ջնջել ազգայնության հիման վրայ հաստատուած պետութիւնները:

Մեր կարծիքով վերոնշեալ կողմնորոշման խընդրում գաղափարախօսական ահա այս գործօնին էլ պէտք է տալ կարեւոր կշիռ եւ նշանակութիւն: Սակայն, անկախ նոյն երկընտրանքից ու կողմնորոշումներից, ուզում ենք այստեղ կանգ առնել թուրքական շարիաթականութեան (պանիսլամիզմի) եւ ազգայնամոլութեան (պանթուրքիզմի) համատեղ գոյակցութեան եւ պատմական սերտաձման հարցի վրայ՝ ամրագրելով, որ գաղափարական, սոցիալտնտեսական, քաղաքական եւ կառուցային ընկալումների տեսակէտից, բազմաբնոյթ ռազմավարական եւ մարտավարական տարբերութիւններով հանդերձ, զոյգ հոսանքներն էլ յատկապէս էթնոկրօնական այլամերժութեան եւ խտրականութեան համատեքստում հանդէս են գալիս միեւնոյն էութեամբ: Իրերի դրութեան լոյսի տակ պէտք է եզրակացնել, որ «բազմաբնոյթ» տարբերութիւնները ձեւականօրէն արժարժուում են քաղաքական պահի թելադրանքով եւ գործնականում չունեն էական նշանակութիւն:

Իսկ վերադառնալով քրդական հոսանքների հարցին՝ պէտք է ասել, որ «թաքուն» հայերը հայկական կազմակերպութիւնների չգոյութեան պայմաններում առատօրէն զինուորագրուել եւ զինուորագրուում

⁴⁸⁵ Ղրօշակ, Աթենք, 1987, մարտի 4, էջ 38:

են քրդական կազմակերպութիւններին եւ այդպիսով դարձեալ «թաքնուում» քրդական առաւել յարիր եւ հոգեհարազատ տանիքի ներքոյ:

Թուրքական «Գիւնեշ» օրաթերթը 1989 թ. յունիսի 6-ին գրեց, որ Մուշի ճանապարհներին ապաստանած քուրդ փիշմերզներից մի խումբ դիմել է ԱՄՆ եւ բրիտանական իշխանութիւններին՝ պնդելով, որ իրենք հայկական ծագում ունեն եւ խնդրում են ապաստանի իրաւունք⁴⁸⁶:

ԱՄՆ-ի պետդեպարտմենտի հրատարակած՝ Թուրքիայում մարդու իրաւունքներին վերաբերող զեկուցագրի (1994 թ. յունուարի 31) հեղինակը, յենուելով ականատեսների վկայութիւնների վրայ, նշում է Մարդինի շրջակայքում գտնուող Հասսենա անունով հայկական գիւղի տեղահանման պարագան. «Տեղական մի տոհմապետի տուած ցուցմունքների հիման վրայ հրաման արձակուեց գիւղի տեղահանման կապակցութեամբ, քանզի գիւղը հայկական է, եւ թուրք պետական պաշտօնական պատասխանատուները յաճախ հայերին մեղադրում են PKK-ին օժանդակելու մէջ: Ապացոյցներ կան, որ գիւղացիները տեղահանուել են հարեւան գիւղի, Միդիաթի եւ Մարդինի ուղղութեամբ»⁴⁸⁷:

Հասսենայի հայաթափման իրողութիւնը հաստատում է Ռուդիգեր Բեննինգհաուսն իր «Production, usage and diffusion of the *Shal o Shapik* Men's Cos-

⁴⁸⁶ Պօղոսեան Ս. Կ., Քրդերը եւ Հայկական Հարցը, Երեւան, 1991, էջ 333:

⁴⁸⁷ Turkey Human Rights Practices, 1993, Author: U.S Department Of State, January 31, 1994

tume in Turkish Kurdistan» (*Շալ ու Շապիկ* տղամարդու հագուստի արտադրությունը, օգտագործումը եւ տարածումը թուրքական Քրդստանում) չափազանց հետաքրքրական աշխատությունում: Բեննինգհաուսի համոզմամբ՝ Հասսենան PKK-ի եւ թուրքական անվտանգության ուժերի միջեւ ընդհարումների ընթացքում քաղաքական նոխազ դարձաւ: Նա յիշատակում է նաեւ երկու այլ գիւղեր՝ Հերբուլ եւ Բեսպին, որոնց քրիստոնէայ բնակիչները (հայեր եւ ասորիներ) գաղթել են 1990 թ.: Իսկ «Շիրնակի քրիստոնէայ հայերը, ինչպէս նաեւ դրա ոռոշ կրօնափոխ հայերը, - ըստ Բեննինգհաուսի, - այնտեղից գաղթել են 1980-ականների վերջերին եւ 1990-ականների սկզբներին (ընդգծումը մերն է - Կ.Խ.)»⁴⁸⁸:

«Հուրիէթը» 1993 թ. յուլիսի 11-ի համարում «PKK-ականներն այրեցին Ղուրանը» խոհագրով հաղորդման մէջ պատմում է Աղըրի (Արարատ) նահանգի Սէոյուքի գիւղում պատահած ահաբեկչական դէպքի մասին, որի ընթացքում վիրաւորուած ականատեսներից մէկը պատմել է թղթակիցներին, որ զինուած PKK-ականները ո՛չ թուրք էին եւ ո՛չ էլ քուրդ, այլ «բոլորն էլ հայերէն էին խօսում»⁴⁸⁹: Թերեւս նման դէպքերը հիմք հանդիսացան Թուրքիայի պետական քարոզչամեքենայի համար՝ քրդական շարժումներին «թաքուն» հայութեան մասնակցութեան հարցն այլեւս չկոծկելու, բարձրաձայնելու համար:

⁴⁸⁸ Benninghaus R., Production, usage and diffusion of the *Shal o Shapik* Men's Costume in Turkish Kurdistan, 31 May 2001, <http://www.chaldeansonline.net/forums/ruediger-benninghaus.html>

⁴⁸⁹ Ղրօշակ, Աթենք, 1993, յուլիսի 15-28, էջ 40:

«Զումհուրիէթը» 1993 թ. յուլիսի 11-ի համարում գրում է PKK-ի դէմ «հոգեբանական շարժում» նախաձեռնելու նպատակով ստեղծուած պետական քարոզչական յանձնախմբի մասին, որը պէտք է PKK-ի դէմ կանոնաւոր տեղեկատուութիւն տար Թուրքիայի «բարեկամ, չէզոք եւ թշնամի» հոսանքներին: Վարչապետ Թանսու Չիլլերի նախագահութեամբ ղեկավարուող այդ յանձնախումբը, ըստ նշուած աղբիւրի, նըպատակ էր ճշտել լուսանկարների եւ այլ տեսակի տեղեկութիւնների տարածման միջոցով դիմել նաեւ PKK-ի շարքայիններին եւ նրանց հարց ուղղել, թէ նրանք գիտե՞ն արդեօք, որ Աբդուլլահ Օջալանը հայերի ծեռքում գործիք է դարձել եւ այլն: «Լուսանկարների միջոցով, - գրում է «Զումհուրիէթը», - PKK-ականների համար յստակ է դառնալու կազմակերպութեան մէջ գործող ահաբեկիչների հայկական ծագումը (ընդգծումը մերն է - Կ.Խ.)»⁴⁹⁰:

Լրագրողներ՝ հոլանդացի Ստելլա Բրամն ու թուրք Մեհմեթ Ուլգերը, «Գորշ գայլեր - հետազօտութիւն թուրք ծայրայեղ աջակողմեանների մասին» տազնապայարոյց աշխատութեան մէջ խօսելով ԱՇԿ-ի (MHP) հակահայ էութեան մասին, նշում են, որ PKK-ն յաճախ ներկայացւում է որպէս «հայ ստրուկներից» բաղկացած կառույց. «Թուրքեշը նոյնիսկ բերնից բաց է թողել, որ Աբդուլլահ Օջալանը քուրդ չէ, - ասում են Բրամն ու Ուլգերը, - այլ հայ է, եւ իր իսկական անունն էլ Ակոփ Արթինեան է»⁴⁹¹:

⁴⁹⁰ Ղրօշակ, Աթենք, 1993, յուլիսի 29- օգոստոսի 25, էջ 78:

⁴⁹¹ Բրամ Ս., Ուլգեր Մ., Գորշ գայլեր - հետազօտութիւն թուրք ծայրայեղ աջակողմեանների մասին, թարգմանեց Արսէն Նազար-

Թուրքիայի աջակողմեան «Մէլդան» թերթը չէր խորշում նոյնիսկ այս մասին վերջնական, սուր եւ «հանճարեղ» եզրայանգումներ հրապարակելուց. «Թուրքիայում,- յայտարարում էր «Մէլդանը»,- Քրդական հարց գոյութիւն չունի, այլ հարցը Հայկական Հարց է...»⁴⁹²:

Նման տրամադրութեամբ է բացայայտումներ կատարում նաեւ Եուսուֆ Հալաջողլուն, 2007 թ. Կեսարիայի վերում նշուած համագումարում, եզրակացնելով, որ. «Ուրեմն PKK-ի կամ TIKKO-ի նման ահաբեկչական կազմակերպութիւններու անդամները,- պնդում է նա,- իրականութեան մէջ հայկական ծագում ունին ու անոնց դատը, մեր գիտցածին պէս, քրդական դատ չէ»⁴⁹³:

Օջալանի հայկական ծագման մասին արտայայտուել է Թուրքիայի ներքին գործերի նախարար Մերալ Աքշէները դեռ 1997 թ.՝ Օջալանին «հայկական ծագումով խլէզ»⁴⁹⁴ անուանելով: Այս մասին նաեւ ակնարկուել է ՄԱԿ-ի «General Assembly»-ի առանձին զեկուցագրում, որը հրապարակուել է 2000 թ.: Այդ զեկուցագրում շեշտուել է նաեւ, որ ներքին գործերի նախարարութեան այս յայտարարութեանն առընթեր՝ արծարծուել էին թուրքացման բացայայտ կոչեր, «մէկ լեզու, մէկ ցեղ, մէկ մշակոյթ» եւ այլն⁴⁹⁵:

Եանը, Երեւան, 2003, էջ 152:

⁴⁹² Ալիք, 1994, նոյեմբերի 13:

⁴⁹³ Նոր Մարմարա, 2007, օգոստոսի 20:

⁴⁹⁴ Դրոշակ, Աթենք, 1997, մարտի 27- ապրիլի 23, էջ 67:

⁴⁹⁵ Situation in Turkey, Interim report of the Special Rapporteur of the Commission on Human Rights on the elimination of all forms of

Քրդական շարժման ղեկավար շրջանակների մասին խօսելիս թուրքական աղբիւրներն առիթը բաց չեն թողնում շեշտ դնելու Թուրքիայի տնտեսական-առեւտրական շրջանակներում համբաւ ունեցող Բեհչէթ Ջանթուրքի հայկական ծագման վրայ: Դրանցից մէկում, Բեհչէթ Ջանթուրքին ներկայացնելով որպէս PKK-ի նիւթական գործերի եւ հայ ահաբեկչական զանազան խմբերի հետ կապերի պատասխանատու, ի միջի այլոց ասում է, որ նա «ծնուել է 1950 թ. Դիարբեքիրում, քուրդ հօրից ու հայ մօրից»⁴⁹⁶:

Միւս փաստը վերաբերում է PKK-ի նախագահական խորհրդի անդամ Նուրիէ Գեսպիրի եւ դրա Կենտրոնական կոմիտէի անդամներ Պեքիր Պաքրըճեանի եւ Մուսա Հաճըւի հայկական ծագմանը, որն առաջինը բացայայտել է պետական խօսնակ համարուող «Թուրքիէ» օրաթերթը⁴⁹⁷:

Աւելացնենք, որ Նուրիյէ Գեսպիրը Թուրքիայի դատախազութեան կողմից հետապնդուել է մի քանի տասնեակ հակապետական բռնարարքներ իրականացնելու ամբաստանութեամբ: Նա Թուրքիայից փախել է 2001 թ. սկզբին եւ «ապօրինի մուտք գործելու» մեղադրանքով ձերբակալուել է Հոլանդիայում, ապա ազատ է արձակուել 2002 թ. դեկտեմբերին:

Թուրքիայի Հարաւարեւելեան շրջանների ռազմական արտակարգ դրութեան կառավարիչ Իւնիլ Էր-

intolerance and of discrimination based on religion or belief, Addendum 1, General Assembly, 11 August 2000, p. 14.

⁴⁹⁶ <http://www.biyografo.net>.

⁴⁹⁷ Նոր Մարմարա, 2002, նոյեմբերի 11:

քանն ազդեցիկ «Միլլիէթ» թերթում յայտարարում էր. «Մեր համակարգիչներում արձանագրել ենք հայկական ծագում ունեցող 800 PKK-ի անդամ...»⁴⁹⁸:

Որոշ աղբիւրների համաձայն⁴⁹⁹ PKK-ի գինուած անդամների թիւը գնահատւում է շուրջ 5,500, ինչը համապատասխանում է Բիթլիսի տանկային ստորաբաժանման հրամանատար գեներալ Թագմայի յայտնած տեսակէտին: Նա մամլոյ մի հարցազրոյցի մէջ պնդում էր, «որ PKK-ի ամէն եօթերորդ անդամը հայ է: PKK-ի այդ անդամները զաւակներն են այն հայերի, ովքեր Օսմանական Կայսրութիւնը կռնակից դաշունահարեցին Առաջին աշխարհամարտի ընթացքում»⁵⁰⁰:

Նոյն գեներալ Թագման, մի այլ առիթով եւս 1995 թ., «մարդու իրաւունքների եւրոպական դատարան»-ի հարցաքննիչ յանձնախմբի առջեւ գրաւոր վկայութիւն էր տալիս առ այն, որ հակա-PKK թէժ պատերազմի ժամանակ տեղի ունեցած ինչ-որ ծանր մարտերի ընթացքում «քրդեր չկային այնտեղ: Նրանք, ովքեր մեր ստորաբաժանման ուժերի յարձակումների արդիւնքում նահանջեցին դէպի բարձր լեռները, միայն հայեր էին... (ընդգծումը մերն է - Կ.Խ.)»⁵⁰¹:

⁴⁹⁸ Hofmann T., Armenians in Turkey today, October 2002, p. 35.

⁴⁹⁹ Official general report on Turkey, Directorate for Movements of Person, Migration and Consular Affairs Asylum and Migration Division, May 2001, p 31.

⁵⁰⁰ Hofmann, Tessa, Armenians in Turkey today, October 2002, p. 36.

⁵⁰¹ European Court Of Human Rights, Former Second Section, Case Of Tepe V., Turkey, (Applicatoin no.27244/95), <http://www.vahitbicak.com/tepetr.htm>

Եւրոպայում մի քանի «քրդացած» եւ «թուրքացած» հայերի հարցազրոյցներից պարզւում է, թէ ինչպէս նրանցից ոմանք աշխատել եւ պայքարել են PKK-ի շարքերում եւ Օջալանի ձերբակալութիւնից յետոյ, հիասթափուելով եւ հաշուի առնելով իրենց հայկական ծագումը, որոշել են մեկնել Գերմանիա, որտեղ քաղաքական եւ ազգային աշխատանքի լայն դաշտ կայ Թուրքիայից արտագաղթած փոքրամասնութիւնների միջավայրում (Ֆրանկֆուրտ, Վիսբադեն, Շտուտգարդ, Մայնց եւ այլն)⁵⁰²: Ռազմիկ Յակոբեանը (վերում նշել ենք նրա մասին) երկար տարիներ պայքարել է PKK-ի շարքերում, ձերբակալուել ու բանտարկուել է Անկարայի սարսափազդու բանտերում⁵⁰³: Իսկ Սիմոն Կոստանեանը կամ Սարդետ Կոսդունը (նրա մասին նոյնպէս նշել ենք վերում) ասում է. «Հայրս ու եղբայրներս թուրքական ֆաշիզմի դէմ պայքարելու համար դարձել են PKK-ի մարտիկներ, բազմիցս բանտարկուել են ու երկար տառապել»⁵⁰⁴:

PKK-ի էլեկտրոնային տեղեկատուներից մէկում կարդում ենք հայաբնակ Սայլակկայա (Ջեքին) պատմական գիւղում 1970 թ. ծնուած հայ երիտասարդ Հուսէյն Սարիչիյէքի մասին, որը զոհուել է Թուրքիայի բանակի դէմ մարտերում 1988 թ.⁵⁰⁵:

www.vahitbicak.com/tepetr.htm

⁵⁰² Ազգ, Երեւան, 2005, յունուարի 18:

⁵⁰³ Նոյն տեղում:

⁵⁰⁴ Նոյն տեղում:

⁵⁰⁵ <http://www.pkk.org/2002/03>.

Թուրքիայի ծայրայեղ ձախ եւ մարքս-լենինեան հոսանքների, յատկապէս TIKKO կազմակերպութեան լրատուամիջոցներում կարելի է հանդիպել 1946 թ. Ամասիայում ծնուած Կարպիս Ալթինօղլուի անուանը, քաղաքական, տեսական յօդուածներին եւ նրա մասին թեր ու դէմ տեսակէտների: Մի քանի անգամ ձերբակալուած, բանտարկուած եւ արտասահման փախած Կարպիս Ալթինօղլուն զանազան կայքէջերում համարում է հակապետական պայքարի խորհրդանշական դէմք, որի կենսագրականում յաճախ է յիշատակում նրա հայ լինելու հանգամանքը (ermeniasilli)⁵⁰⁶:

Առաւելաբար զազա-ալեւիական շրջանակներում աշխատող եւ Դերսիմի լեռներում մաքառող նոյն այդ TIKKO կազմակերպութեան զոհուածների ցանկում հանդիպում ենք երեք հայ երիտասարդների կենսագրականներին⁵⁰⁷, ըստ հետեւեալի.

- Արմենակ Բաքրչիեան (Օրհան Բաքիր), ծնուած Տիգրանակերտում 1953 թ., զոհուած Խարբերդում 1980 թ.:

- Նուբար Եալիմ, ծնուած Մարդինում 1957 թ., զոհուած Ամստերդամում 1982 թ.:

- Մանուէլ Դեմիր, ծնուած Կեսարիայի Բունիան քաղաքում 1963 թ., զոհուած Ստամբուլում 1988 թ.:

Ռուբէն Մելքոնեանի տեղեկատուութեան համաձայն, Արմենակ Բաքրչիեանի մահից յետոյ իր ընկեր-

⁵⁰⁶ <http://arsiv.aksiyon.com.tr/arsiv/140/pages/dosyalar/dos1.html>.

⁵⁰⁷ <http://babaerdogan.org/partisan>.

ները գաղտնի փախցրել են նրա աճիւնը եւ, ըստ իր կտակի, թաղել Ֆարաչ լեռներում: Նրա յուղարկաւորութիւնը վերածուել է ժողովրդական մեծ արարողութեան, որին մասնակցել են հազարաւոր մարդիկ, ենթադրաբար նաեւ մեծ թուով «թաքուն» հայեր⁵⁰⁸: Հետաքրքիր է իմանալ նաեւ, որ Մանուէլ Դեմիրի հերոսական տիպարին ու սխրանքներին նուիրուած թուրքերէնով երգ է յօրինուել, որը հնչում է քրդական շրջանակներում:

Ընդհանրապէս այսօր այլեւս տարօրինակ չպէտք է թուայ քրդական, ալեւիական եւ զազայական մշակութային եւ քաղաքական լայն մեղիայում հայերէն երգեր կատարող երգիչների մասին գովազդերի ու ծանուցումների առկայութիւնը: Երգիչներ, որոնք ըստ իրենց կենսագրականի՝ սվազցի, դիարբեքիրցի կամ մշեցի են: Նրանք եթէ նոյնիսկ հայ էլ չլինեն, նրանց կողմից հայերէն երգերի կատարման եւ տարածման փաստը նշանակալի իմաստ կարող է ունենալ: Նիլուֆեր Աքբալն՝ իր «Սարի գելին»-ով, Բեշեր Շահինն՝ իր «Հորովել»-ով, Դիանա Վեքիլն՝ իր «Դելէ եաման»-ով, Ջան Թուֆանն էլ՝ իր «Դելէ եաման»-ով եւ Արամ Տիգրանն՝ իր «Առաքել Մուշեղ»-ով իրականում վերապրող հայութեան լինելութեան ծայնն են հնչեցնում:

Ֆուկլորիստ Նիլուֆեր Ակբալը ծնուել է 1963 թ. Մուշի Վարդօ քաղաքում: Յատկանշական է նրա «Սարի Գելին»-ի հայերէն կատարումը: Նրա համա-

⁵⁰⁸ Հանրապետական, Երեւան, 2007, 4:

ռօտ կենսագրականներից մէկում ասում է, որ նա հայերէն երգերը սերտել է իր մօրից: Ակբալը քրդական մեդիայում, յատկապէս PKK-ի կայքէջերում հանդէս է գալիս որպէս քրդական ազատագրական շարժումներին յարող արուեստագէտ:

1969 թ. Սեբաստիայի Ջարա քաղաքում ծնուած Բեշեր Շահինը դասում է հայերէն երգեր կատարող «քուրդ» երգիչների շարքում: Յաճախ է ելոյթներ ունենում PKK-ի արտասահմանեան տօնախմբութիւններում: Նրա քրդական երգացանկում տեղ է գտել նաեւ Կոմիտասի «Հորովել»-ը:

Օպերայի մեներգչուհի Դիանա Վեքիլը ծնուել է 1972 թ.: Նրա համերգների մէջ ուշագրաւ է 2002 թ. համերգը Վանայ լճի հարաւարեւմուտքում գտնուող Բաթման նահանգում (որի կազմում է նաեւ Սասունը): Վեքիլի բազմաթիւ հայերէն փայլուն կատարումների մէջ աչքի է ընկնում «Դէլ Եաման»-ը:

Քրդական լայն շրջանակներում բացառիկ պատիւ ու յարգանք վայելող Արամ կամ Արամէ Տիգրանը, որի գեղարուեստական գործունէութեան 50 ամեայ յոբելեանը մեծ շուքով տօնուեց 2005 թ. քրդական զանազան կազմակերպութիւնների կողմից, եւս կատարել է մի քանի հայերէն երգեր: Առանձին ուշադրութեան է արժանի նրա խմբի կատարած հայկական յեղափոխական «Առաքել Մուշեղ» երգը, որը մենք ծայնագրել ենք Դենիայից հեռարձակուող քրդական ROJ արբանեակային եթերից:

Թերեւս «թաքուն» հայութեան հոգեմտաւոր ըստեղծագործութեան ամենահետաքրքիր արտայայտութիւններից կարելի է համարել Թալին Էոզգալայ-

ճըի բանաստեղծական տաղերը: Նա ծնուել է 1972 թ. Կ. Պոլսում՝ բազմազաւակ թուրքախօս մի ընտանիքում⁵⁰⁹:

Նրա համառօտ կենսագրականից իմանում ենք, որ մանկութեան տարիներից սիրել է գրականութիւնը, եւ իր մէջ արթնացել է արտասանելու փափագը: Իր հօր շնորհիւ, որ ամէն օր «Նոր Մարմարա» եւ «Ժամանակ» օրաթերթեր էր տուն բերում եւ քաջալերում իր զաւակներին՝ սերտել մայրենի լեզուն, կատարելագործել է իր հայերէնը եւ նուիրուել գրականութեան ասպարէզին⁵¹⁰:

Այս կենսագրականում էլ ակնյայտ է դառնում «թաքուն» հայի՝ ազգային գիտակցութեան վերջին թելիկներից կառչելով՝ ազգային բուն արմատներին վերադառնալու վիթխարի ծգտումը:

Աւելորդ չենք համարում մէջ բերել հետեւեալ տողերը Թալին Էոզգալայճըի բանաստեղծութիւններից⁵¹¹, որոնք, արտացոլելով բանաստեղծի իւրօրինակ ներաշխարհը, բացայայտում են բովանդակային ու հոգեմտաւոր ընդգծուած առընչութիւններ մեր նիւթի հետ.

Կաթիլ մը սառ եմ ես, ամենամեծ ժայռը ճայթեցնող
Ափ մը հող եմ ես, արմատներով հզօրացող
Խենթ հով մըն եմ, օրէնք ու սահման չճանչցող

⁵⁰⁹ Կեմիրճեան Ս. Ծ., Սփիւռքահայ արդի գրականութիւն, հատ. Ա, Միջիգան, 1994, էջ 492-493:

⁵¹⁰ Նոյն տեղում:

⁵¹¹ Նոյն տեղում, էջ 85-86:

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Եզրակացություն

«Այսօր գաւառներու մէջ հայ կայ, անշուշտ,- դիպուկ կերպով նկատել է տալիս Յարութին Պզտիկեանը եւ աւելացնում,- բայց հայութիւն չկայ, համայնք գոյութիւն չունի»⁵¹²:

Վերում նշուած բազմաթիւ ուսումնասիրութիւնները, լրագրային տեղեկութիւնները, հաղորդագրութիւնները եւ ուղեգրութիւնները բաւարար հիմք են տալիս եզրակացնելու, որ ներկայումս քննարկուած երեք խմբերին պատկանող հայութեան հետքեր կան մեր պայմանական տարածքների առնուազն 80 քաղաքներում, գիւղերում եւ գիւղակներում:

Ամփոփելով եղած տուեալները՝ կարելի է նշել Թուրքիայի ներկայիս հայաբնակ գլխաւոր վայրերը (տես՝ Նկ. 13).

ա) Արեւմտեան Հայաստանում՝ Բիթլիս, Մուտքի, Սասուն, Աջար, Մուշ, Վարդօ, Էրզրում, Երզնկա, Շապին-Գարահիսար, Կարս, Ակն (Էգին կամ Քեմալիէ),

⁵¹² Բազմավէպ, Վենետիկ, Ս. Ղազար, 1999, թիւ 1-4, էջ 267:



Նկար 13

Բինգեոլ բնակավայրերում բնակվում են «թաքուն» հայեր, իսկ Տրապիզոն, Արդուին, Ռիզե (Ռիզեոն), Խոպա (Հոփա) եւ այլ բնակավայրերում՝ նաեւ իսլամացած համալսական հայեր:

բ) Հարաւարեւմտեան Հայաստանում՝ Դիարբեքիր, Հաքքեարի, Ուրֆա, Սայլակկայա (Ջեբին), Մալաթիա, Կերկեր, Դերիկ, Խարբերդ, Ադիեաման եւ Արաբկիր բնակավայրերում հիմնականում բնակվում են «թաքուն» եւ «պաշտօնական» հայեր:

գ) Պատմական Կիլիկիայում՝ Իսկենդերուն, Հաթայ, Ադանա, Քրքիսան, Մերսին եւ Վազըֆ բնակավայրերում կան «պաշտօնական» համայնքներ եւ «թաքուն» հայեր:

դ) Փոքր Հայքում եւ յարակից շրջաններում՝ Անկարա, Կեսարիա, Ամասիա, Կիւմիւշհաճըզիդ, Գաստանոնի, Եօզգաթ, Պողազլեան, Սվազ, Թոքատ, Ան-

տալիա եւ այլ բնակավայրերում բնակվում են եւ իսլամացած համալսական հայեր, եւ «թաքուն», եւ «պաշտօնական» հայեր:

Սակայն դիրքին չէ այս հայութեան թուաքանակի մասին վերջնական տեսակետ յայտնելը: Այդուհանդերձ վկայակոչենք մի քանիսը:

Իսլամական գաղափարախօսութեան տարածող «Jihadwatch» (Ջիհադի պահակախումբ) էլեկտրոնային թերթը 2005 թ. փետրուարի 17-ի համարում, արձագանգելով Ստեփան Շուարտցի յօդուածին, գրում է. «Մինչեւ մէկ միլիոն հայեր են դեռ ապրում Թուրքիայում»⁵¹³:

«Պահպանողական գնահատմամբ, - ասուած է ԱՄՆ-ի Հայ Դատի յանձնախմբի (ANCA) 2003 թ. մայիսի 31-ի յայտարարութեան մէջ, - մօտաւորապէս 1,000,000 հայեր դեռ ապրում են Արեւմտեան Հայաստանում»⁵¹⁴: Հիմքեր ունենք ենթադրելու, թէ սոյն յայտարարութեան մէջ ակնարկուած Արեւմտեան Հայաստանը մօտաւոր չափերով համընկնում է մեր պայմանական համապատասխան տարածքին:

«Ներկայումս Թուրքիայում շուրջ երկու միլիոն է հաշուում թիւն այն հայերի, - գրում է Արմէն Մելիքեանը, - որոնք իսլամ են ընդունել անցեալում, գոյատեւել են ֆիզիկապէս եւ աճել են քանակութեամբ: Նրանք չեն թուրքացել: Շատերը գիտեն իրենց հայ լինելը, սակայն վախենում են խօսել այդ մասին: Այդ երկու միլիոն մարդիկ հայ են համարում...»⁵¹⁵: Արմէն

⁵¹³ <http://www.jihadwatch.org/archives/2005/02/005091print.html>.

⁵¹⁴ <http://www.anca.org/ancadesk.php>.

⁵¹⁵ <http://www.armeniadiaspora.com/population/>

Մելիքեանի վերոյիշեալ դիտողութեան հիման վրայ «Հայաստան-Սփիւռք» կայքէջում Թուրքիայի հայ բընակչութեան թիւը գնահատուել է 2,080,000 մարդ⁵¹⁶:

«Երկիր» շաբաթաթերթի աշխատակից Արամ Անանեանն իր յօդուածում յայտնում է. «Ըստ զանազան գնահատականների՝ Թուրքիայում բնակւում են 2-3 միլիոն մահմեդականացած հայեր»⁵¹⁷:

«Գետթէ» համալսարանի գիտաշխատող Ալիէ-Ալիս Ալթի համոզմամբ «Մինչ երեք միլիոն թուրքացած հայեր կան, որոնք փորձում են իմանալ իրենց ծագման մասին, տասնամեակների լռութիւնից յետոյ...»⁵¹⁸:

ACN (Aid to the Church in Need), կամ Կարիքաւոր եկեղեցիների օժանդակութեան հիմնարկի՝ «Կրօնական ազատութիւնն իսլամական մեծամասնութեամբ երկրներում» խորագրով 1998 թ. զեկուցագրում 63,528,000 բնակչութեամբ Թուրքիայի մասին կարդում ենք. «20 հազար բապտիստ քրիստոնեաներին իրականում պէտք է գումարել եւս չորս ու կէս միլիոն քրիստոնեաների, որոնք այնտեղ ապրում են կեղծ եւ թաքուն ինքնութեամբ»⁵¹⁹:

Սոյն թուաքանակը հաստատող մի շատ հետաքրքրական տուեալի ենք հանդիպում «Planet of Dias-

note_turkey_pop.htm, Armen Melikian, Armenian Watch Monitors Human Rights Violations Against Armenian Worldwide.

⁵¹⁶ <http://www.numbers@armeniadiaspora.com>.

⁵¹⁷ Երկիր շաբաթաթերթ, Երեւան, 2004, հոկտեմբերի 22:

⁵¹⁸ Ղիտակ, 2004, ապրիլ-մայիս, էջ 58:

⁵¹⁹ Religious Freedom in the Majority Islamic Countries- 1998 Report, A.C.N Italian Office, 1998.

pora» թերթում, ուր Թուրքիայի հայութեան թիւը ներկայացւում է 4,500,000 մարդ⁵²⁰:

Ընդհանուր թուաքանակի ճշտորոշման գործը, սակայն, կարօտ է վիճակագրական ստուգումների: Հիմնուելով մի շարք նախնական տուեալների վրայ եւ հաշուի առնելով Թուրքիայի բնական աճը զանազան տարածքներում, պարբերական եւ պատահական արտահոսքների մօտաւոր տուեալները՝ հնարաւոր է ստուգել եղած թուերը եւ այդ լոյսի տակ յանգել առաւել յստակ եզրակացութեան:

Այլ խօսքով՝ սոյն ուսումնասիրութեան տրամաբանական շարունակութիւնը, անխուսափելիօրէն, անցնելու է վիճակագրական հետազօտութեան միջով:


Ըստ վիճակագրական որոշ տուեալների, օրինակ Ս. Խաչ դպրեվանքի սաների թուի համեմատութեամբ կարելի է համընդհանուր գաղափար կազմել հայ բնակչութեան ցրուածութեան պատկերի մասին:

Սակայն հայ երեխաների՝ հայկական դպրոցներ յաճախելու մասին հարկ ենք համարում պարզաբանել մի շատ կարեւոր հանգամանք: Օթմար Օէիրինգի վկայութեամբ՝ պետականօրէն արտօնուած չի եղել (եւ տակաւին արգելուած է մնում) «մէկ անգամ իսլամացած» ընտանիքների երեխաների հայկական դպրոց յաճախումը: Այս մասին իր մարդկային իրաւունքներին առնչուող զեկուցագրում հանգամանօրէն տեղ յատկացրած մասնագէտը մատնանշում է նաեւ, որ «Մի հայ ընտանիք եթէ որեւէ պատճառով իր երեխային պետական կամ մասնաւոր դպրոց ուղարկի,

⁵²⁰ <http://www.iatp.am/economics/migr/hayga-e95.htm>, Planeta of Diaspora, #25, 1999.

շուրջ 150,000-ից իջել է չորս-հինգ հազարի (տես՝ Նկ. 15): Սակայն եթե գոյություն ունենային կեանքի բնականոն պայմաններ, ապա տարեկան չափաւոր աճի դէպքում (1.2 տոկոս), ներկայումս գաւառներում «պաշտօնական» հայութեան թիւը պէտք է լինէր առնուազն 350,000:

«պաշտօնական» հայ բնակչութեան հոլովոյթը՝
ըստ թուականի



Նկար 15

Ակնյայտ թուային այս դեֆիցիտը չի դրսեւորւում Կ. Պոլսի կամ արտասահման գաղթած թուրքահայութեան համընդհանուր թուաքանակում: Այստեղից կարելի է եզրակացնել, որ «պաշտօնական» հայութեան մի մասն է արտագաղթել, իսկ նրա կարելու մասն էլ «թուրքացել», «քրդացել» կամ առերեւոյթ ուժացուել եւ «թաքուն» հայի, կարգավիճակով շարունակել է գոյատեւել մեր ուսումնասիրութեան առարկայ տարածքներում:

Իսլամացած հայութեան թուաքանակը տարբեր պատկեր է պարզում: Եթէ ի մի բերենք իսլամացած հայութեան թուաքանակի մասին նախապէս նշուած


մի քանի վկայութիւնները, ակնբերւ է դառնում Շնորհք Գալուստեանի եւ Բարունակ Թողաքեանի նշած թուաքանակների միջեւ մեծ տարբերութիւն (տես՝ Աղ. 12).

	Աղբիւր	Թուական	Թուաքանակ
1	Շնորհք Գալուստեան	1980	1,000,000
2	Բարունակ Թողաքեան	1981	400,000
3	Ալիս Կոստանեան	2002	1,000,000
4	Դեմիզ Ալթ	2004	1,500,000

Աղիւսակ 12

Հետեւաբար՝ կարելի է նկատի առնել նրանց միջին թուաքանակը՝ 700,000-ը: Թուրքիայի բնակչութեան աճի գործակիցը պարզում է հետեւեալ պատկերը⁵²⁵ (տես՝ Նկ. 16).

Թուրքիայի բնակչութեան աճի գործակիցը



Նկար 16

⁵²⁵ Oehring O., Human Rights in Turkey, Secularism, Religious Freedom, 2002, p. 2.

Ըստ այս պատկերի՝ 700,000-ը 25 տարում հասնում է՝ 1,300,000-ի, որը մօտաւորապէս համապատասխանում է Ալիս Կոստանեանի եւ Դենիզ Ալթի ակնարկած թուաքանակների միջինին՝ 1,250,000-ին:

Եւ եթէ ի մի բերենք Թուրքիայի ներկայիս հայութեան ընդհանուր թուաքանակի մասին վկայութիւնները (տես՝ Աղ. 13), ապա դրանց միջինը մեզ յանգեցնում է շուրջ երկուս ու կէս միլիոն թուաքանակի: Նկատի առնելով բազմաթիւ անորոշութիւնների եւ անձգորտութիւնների առկայութիւնը՝ այն կարելի է ամենայն չափաւորութեամբ իջեցնել 2,000,000-ի:

	Աղբիւր	Թուաքանակ
1	ANCA	1,000,000
2	Արմէն Մելիքեան	2,000,000
3	Արամ Անանեան	2,500,000
4	Ալիս Կոստանեան	3,000,000
5	Planet of Diaspora	4,500,000

Աղիւսակ 13

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ «պաշտօնական» հայութիւնը մեր հետազօտութեան աշխարհագրական շրջագծում կազմում է աննշան թուաքանակ (թերեւս հինգ հազարից պակաս), իսկամացած հայութեան թուաքանակը՝ շուրջ 1,300,000 մարդ, իսկ «թաքուն» հայութիւնը՝ աւելի քան 700 հազար մարդ:

Հաշուի առնելով 1920-ականներից մինչեւ 1938 թ. երկարող ժամանակահատուածում Կիլիկիայի հայաթափման թիւը (շուրջ 130 հազար մարդ), ինչպէս նաեւ 1929-30 թթ. Խարբերդ-Տիգրանակերտ-Դերսիմի հայութեան մասնակի բռնագաղթը (շուրջ 30 հազար

մարդ), կարելի է եզրակացնել, որ 1940 թ., «Անատոլիա»-ի ողջ տարածքում ապրել են առնուազն 170-ից 200 հազար «թաքուն» հայեր: Ի դէպ՝ այս թիւը համապատասխանում է, թուրքական «Ջաման» օրաթերթի 2006 թ. հոկտեմբերի 26-ի համարում բերուած տեղեկութեանը, ըստ որի այդ ժամանակահատուածում աւելի քան 500 հայկական գիւղերում ապրել են դաւանափոխ հայեր⁵²⁶:

Եթէ Ինոնիւի ժամանակահատուածի համար մեր եզրակացութեան համաձայն հաշուենք 170,000 հայերի 60 տարուայ աճը (տարեկան 2.5 տոկոս աճի միջին գործակցով), ապա այն գերազանցում է 740,000-ը, որը համապատասխանում է «թաքուն» հայութեան՝ վերելում մեր եզրակացրած թուաքանակին:

Ամեն դէպքում իրողութիւն է ստուար թուով հայ էթնիկական տարրի առկայութիւնը Արեւմտեան, Հարաւարեւմտեան Հայաստանում, Կիլիկիայում եւ Փոքր Հայքում: Էթնիկական վերակերպուած տարր, որ մաքառում է ինքնաճանաչման ու իր ինքնութեան պահպանման համար եւ կոչ է անում իր ազգային օրգանիզմի միւս հատուածին. «Մեզ մի՛ մոռացէք,- դիմում է բուն մշեցի Արմէն Մարտիրոսեանը,- Վարդոյի եւ այլ շրջաններում վերապրող շատ հայեր կան... Հայեր, որոնք մինչեւ վերջերս վախենում էին իրենց ինքնութիւնը յայտնելու, բայց այսօր խիզախաբար արտայայտւում ու մաքառում են հայ մնալու համար»⁵²⁷:

⁵²⁶ <http://www.zaman.com/?bl=national&alt=&trh=20061026&hn=37691>

⁵²⁷ Դիտակ, 2004, ապրիլ-մայիս, թիւ 24, էջ 60:

Այլեւս կարելի է եզրակացնել, թէ այսօր ինչքանով է «թուրքացել» իսլամացած հայը, կամ ինչքանով է թաքնուած մնացել «թաքուն» հայը...

Իսլամացումը ֆիզիկական ստոյգ կործանումից ու տեղահանումից փրկուելու հնարք է եղել, որի քողի ներքոյ խնամքով թաքնուել է հայութիւնը եւ վճարել այդ վերակերպման գինը՝ կորցնելով լեզուն, մշակոյթը եւ համայնքային կեանքը:

Սակայն այսօր այդ տարրը, գոյատեւելով հայրենի հողի վրայ, ազգային համընդհանուր զարթօնքի ու տեղեկատուութեան դարաշրջանում վերակերպուած իր ինքնութիւնն արծարծելու եւ վերականգնելու բացայայտ ունակութիւն եւ որոշ վճռականութիւն է դրսեւորում:

Կ. Պոլսի պատրիարքը 2005 թ. փետրուարի 5-ին ընդունեց Ֆրանսիայի Ազգային Ժողովի նախագահ Ժան Լուի Դեբրէին: Ողջոյնի խօսքում, ակնարկելով «եղեռնական դէպքերի» իննսունամեակը, շեշտել է, որ հարիւրհազարաւոր հայազգի հայրենակիցներ կորցրել են իրենց կեանքը: Պատրիարքը չի վարանել յայտարարելու, որ հայերն ու թուրքերն այսօր «Անատոլիա»-ի եւ Կովկասի «որոշ տեղերում» ապրում են միասին, «քովքովի», որպէս «միեւնոյն ընտանիքների անդամներ»⁵²⁸: Սա պատրիարքի հերթական ելոյթն է, որն արծարծում է ինչպէս ցեղասպանութեան հարցը, այնպէս էլ հաստատում «Անատոլիա»-ում հայութեան առկայութիւնը:

«Միլլի գագեթէ» թերթում Մեհմէթ Շելքէթ Էյքի

⁵²⁸ Նոր Մարմարա, 2005, փետրուարի 5:

ստորագրութեամբ 2004 թ. յուլիսի 31-ին հրատարակուած յօդուածում յօդուածագիրը պնդում է, «որ օտարականների կողքին հայերն էլ սկսել են մեծ հողատարածքներ գնել Կարսի սահմանային շրջանում (ընդգծումները մերն են - Կ.Խ.):

Յօդուածագիրը յայտնելով, որ ըստ հաւաստի աղբիւրների արդէն «Ագեաքա» սահմանային շրջանի հողատարածքների «գրեթէ ամբողջութիւնն այլեւս «անպաշտօն կերպով» պատկանում է հայերին», փորձում է ստեղծել քաղաքական ուրոյն տեսութիւն՝ հայ-թուրքական սահմանի բացման առընչութեամբ:

Սակայն մեզ, ըստ էութեան, հետաքրքրողն այն է, թէ ի՞նչ հայերի մասին է խօսում Մեհմէթ Շելքէթ Էյքը...

Երկար վերլուծութիւնից յետոյ ի վերջոյ նա յստակեցնում է. «Նորուեգացի ծերունի մի գոյգ, որ մեր երկիրը շատ է սիրում, կարող է եզեականից հողամաս գնել: Անշուշտ, սա անպատեհութիւն չունի: Բայց եթէ հայերն իրենց երկրի սահմանամերձ հողամասերն են գնում, սրա մէջ կասկածելի մի կէտ կայ»:

Թուրք վերլուծաբանը պարզաբանում է նաեւ այս «կասկածելի կէտը». «Արդէն ասւում է, որ մեր երկրի մէջ մեծ թուով «թաքուն» հայեր են ապրում, որոնք ըստ երեւոյթին թուրք ու մահմեդական են, բայց եթէ իրականութեան մէջ հայկական ինքնութիւն ու գիտակցութիւն ունեն, այդ պարագայում նշանակում է, որ անբնական մի վիճակ կայ մէջտեղում (ընդգծումները մերն են - Կ.Խ.)»⁵²⁹:

Այս յատկանշական տողերից կարելի է եզրակացնել, որ Թուրքիայի պետական մտածողութեան

⁵²⁹ Նոր Մարմարա, 2004, օգոստոսի 1:

տեսակետից «Անատոլիա»-ի հայութեան հարցը նախ եւ առաջ անուրանալի իրողութիւն է, անվիճելի եւ, ի հարկէ, «անցանկալի» փաստ, ապա եւ պետական անվտանգութեան ու երկրի ամբողջականութեան հետ կապուած լուրջ մտահոգութիւն է եւ ապագայի գեր-խնդիր:

Թերեւս այս մտահոգութեամբ է հիմնաւորուում այն շրջաբերականը, ըստ որի՝ Թուրքիայի ներքին գործերի նախարարութիւնը, միանգամայն գաղտնի կերպով, ցուցումներ է տալիս 81 նահանգապետարաններին՝ իրենց նահանգների հայ, յոյն, հրեայ, ասորի եւ քաղղէացի փոքրամասնութիւնների մասին վիճակագրութիւն պատրաստելու եւ կենտրոն առաքելու վերաբերեալ⁵³⁰:

Սոյն պետական մտահոգութիւնն արդիւնքը չէ՞, արդեօք, Միութիւն եւ առաջադիմութիւն կուսակցութեան կենտկոմի քարտուղար դոկտ. Նազըմի կողմից, կուսակցութեան 1915 թ. գաղտնի ժողովում շեշտուած տրամաբանութեան, ըստ որի «Ոչ մի հայ կենդանի չթողնելու պայմանով միայն պէտք է դիմել նըրանց ոչնչացմանը»⁵³¹:

Արդէն տարիներ է, որ Թուրքիայի քաղաքական դաշտում սովորական երեւոյթի են վերածուել պետական գործիչների՝ միմեանց հասցէին արուող զրպարտութիւնները, որոնց հիմքում ընկած են նրանց էթնիկական ծագման բացայայտումները:

Թուրքիայի երբեմնի վարչապետ Մետութ Եւմազի

⁵³⁰ Հայրենիք վիքի, 2003, դեկտեմբերի 12:

⁵³¹ Սիմոնեան Հ. Լ., Թուրք-հայկական յարաբերութիւնների պատմութիւնից, Երեւան, 1991, էջ 259:

եւ Թուրքիայի առաջին կին օդաչու Սաբիհա Գէոքչէնի հայ լինելու պարագաներից բացի (նրանց մասին արդէն նշել ենք)՝ նման «մերկացումների» թիրախ են դարձել նաեւ նախկին նախագահ Ահմետ Նեջդէթ Սեզերը՝ որպէս Ադիեամանի շրջանում ծնուած հայ, եւ անգամ «Գորշ գայլերի» նախակարապետը հանդիսացող Թուրքեշը՝ որպէս Կիպրոսում ծնուած հայ եւ «Գորշ գայլերի» միւս ղեկավար Դելլէթ Բախչելլին՝ որպէս Կոզանում (Սիս) ծնուած հայ⁵³²...

Նման մերկացումների կամ զրպարտութիւնների ճշմարտացիութիւնը ստուգելու նպատակ չունենք այստեղ, սակայն մեզ խիստ հետաքրքրում է այն, թէ ապա որն է նման «զրպարտութիւնների» սուբյեկտի ենթահողը Թուրքիայի լայն հասարակայնութեան մէջ, եթէ ոչ գաւառներում ստուար թուով հայութեան առկայութեան օբյեկտի իրողութիւնը:

Իսկ ինչպիսի՞ն է հայկական օրգանիզմի, տուեալ դէպքում՝ Հայաստանի պետութեան, Սփիւռքի, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու, ինչպէս նաեւ ազգային գաղափարախօսութեամբ առաջնորդող մտաւորականութեան մօտեցումը, յանձնառութիւնն ու բարոյական պատասխանատուութիւնն այս հիմնահարցի նկատմամբ:

Թերեւս առաջնայինն առգոյ համոզումների, ըմբռնումների եւ բնորոշումների ընդհանուր վերանայումն է:

Տեսական հարթութեան վրայ, կարելոր նշանակութիւն է ստանում, Միքայէլ Վարանդեանի բանա-

⁵³² Ազգ (անգլերէն բաժին), 2004, համար 146, օգոստոսի 25:

ծեւմամբ, «աւելի բարձր» եւ «աւելի խորունկ» ազգային ենթագիտակցութեան գործօնը: Զօրաւոր մի գործօն, որ միշտ կարող է գիտակցութեան վերածուել, երբ թեւածութեան հնարաւորութիւններ, պայմաններ գոյանան: Շուրջ 120 տարի առաջ, երբ ռուս-թուրքական պատերազմի հետեւանքով արդէն Կարսըն անցել էր ցարական տիրապետութեան տակ, Պոլսում հրատարակուող «Մասիսը» 1887 թ. համարներից մէկում հրատարակուած տեղեկատուութեան մէջ երեւան է գալիս այս գործօնի նշանակութիւնը. «Կարսի շրջանակերէն այն մահմեդականք, որոնց հայրերը 60-70 տարի առաջ հայ քրիստոնեաներ էին եւ յետոյ կրօնափոխ եղած են, այժմ սկսած են հետըզհետէ վերստին իրենց նախահարց կրօնին վերադառնալ: Այդ մահմեդականները ցարդ կէս հայ անուն կը կրեն, օրինակի համար՝ Ալի-Սարգիս Կարապետօղլու, Մեհմէթ Յովհաննէսօղլու»⁵³³: Այս անուանացանկին աւելանում են այսօր Ալիէ Ալթը, Դենիզ Ալթը, Սարդետ Կօստունը, Նուրեդդին Եագուրը եւ ուրիշներ, որոնք իրենց կենդանի կեանքի ընթացքով ապացուցում են ազգային ենթագիտակցութեան ներուժի հզօրութիւնը:

Թուրքիայի ծախ եւ ֆեմինիստական հոսանքներում աչքի ընկնող ակտիւիստներից եւ «Istanbul'da, Diyarbakir'da Azalirken» (Ստամբուլից Դիարբեքիր՝ լինել փոքրամասնութիւն) գրքի հեղինակ Սելմա Հեդիէն (գրական անունով՝ Ելդա) դոկտ. Թեսսա Հոֆմանի հետ ունեցած հարցազրոյցում անուղղակի կեր-

⁵³³ Գարուն, Երեւան, 1987, յունիս, էջ 95:

պով անդրադառնում է այդ գործօնին. «Այլ ծախակողմեանների պէս,- ասում է Ելդան,- ես էլ ազդում էի ընդդիմադիր շարժումներում քուրդ կանանց մղած պայքարից, որոնք ծագում էին պաշտպանել իրենց ինքնութիւնը, քանզի իմ նախնիները Սիւլանից, Դիարբեքիրից, Բիթլիսից ու Ախլաթից են եղել: Անցեալում կարծում էի, թէ մենք այն քրդերից ենք, ովքեր ուրացել են իրենց քրդական ինքնութիւնը: Սակայն երբ կարդացի Մկրտիչ Մարկոսեանի գիրքը, արդէն սկսեցի խորհել, որ հաւանական է, որ մենք էլ լինենք այն հայերից, ովքեր կրօնափոխուել են իսլամի»⁵³⁴:

Ազգային ինքնաճանաչման եւ զարթօնքի երեւոյթներն այլեւս հնչեղութիւն են ձեռք բերում, հրապարակայնանում եւ ստանում աննախընթաց տարողութիւն Թուրքիայի ամբողջ տարածքով մէկ:

2005 թ. փետրուարի 5-ին Կ. Պոլսի «Եափը վէ քրեդի» բանկի դահլիճում «Հայկական հարցը Թուրքիայում» նիւթով բանախօսութիւն է ունեցել տազնապայարոյց «Աննաէաննէմ» (Մեծ մայրս) գրքի հեղինակ Ֆեթիիէ Չեթինը եւ մեծ յանդգնութեամբ խօսել բոլոր այն անիրաւութիւնների մասին, որոնք գործադրուել են հայութեան դէմ⁵³⁵: Նա, յիշելով իր հայ մեծ մօրը, պատմել է, թէ ինչպէս իր «Աննաէաննէմ» գրքի հրատարակութիւնից յետոյ բազմաթիւ «թուրքեր» կապուել, շնորհաւորել եւ «թախանձագին խնդրել են իրեն», որ գրի առնի նաեւ իրենց ընտանիքների հայկական ծագման համանման պատմութիւնները:

⁵³⁴ Hofmann T., Three wishes for Yelda, Armenian International Magazine (Aim), Vol 10, No 11, November 1999, pp. 39, 41, 42.

⁵³⁵ Նոր Մարմարա, 2005, փետրուարի 7:

Այս իմաստով շահեկան ենք համարում իսլամացած եւ «թաքուն» հայի հոգեկան ներաշխարհի շատ էական այս երեսը վեր հանելն այդպիսի մարդկանց լեզուով. «Մենք երկու «ես» ունենք՝ ներքին եւ արտաքին,- ասել է իրաւաբան Ֆեթիհէ Չեթինն իր բանախօսութեան ընթացքում,- այս երկրում երբեք չենք կարող մեր երկու «ես»-երը միացնել եւ ներկայանալ որպէս մէկ «ես» ունեցող անձ...»⁵³⁶:

Հայոց Ցեղասպանութեան տաբուի մասին խօսելն այսօր առօրեայ պոլեմիկայի է վերածուել Թուրքիայում: Եւրոմիութեանն անդամակցելու հարցի հետ կապուած՝ այս երեւոյթը քիչ թէ շատ բնական կարելի է համարել: Սակայն բուն պոլեմիկայից զատ, որը հայ պատմագիտութեան եւ թուրքագիտութեան ամենաէական հարցերից մէկն է այսօր, մեզ համար չափազանց կարեւոր է այն հանգամանքը, որ Թուրքիայում ցեղասպանութեան առընչութեամբ հնչող բազմաթիւ թեր կամ դէմ տեսակէտներին, Եղեռնին առընչուող մանրամասնութիւններին առընթեր կարեւորութեամբ է արծարծուում Թուրքիայում վերապրած եւ վերակերպուած հայ տարրի իրականութիւնը: Այսպէս՝ Քեմալ Եալչինը, ամենաապաքաղաքական հողի վրայ ներկայացնելով Ցեղասպանութեան հետքերը, լայնօրէն քննարկում է «թաքուն» հայութեան վիճակը: Օրհան Փամուքը, քաջաբար նշելով մէկ միլիոն հայութեան բնաջնջման պարագան, «Չիւնը» վիպակում պատմում է նաեւ Կարսում իր տեսած հայկական հետքերի եւ այցելած «հայկական գիւղերի» մասին:

⁵³⁶ Նոյն տեղում:

Մեսրոպ արք. Մութաֆեանը, Ֆրանսիայի Ազգային Ժողովի նախագահին յիշեցնելով Եղեռնի 90-ամեակը, իմիջիայլոց ակնարկում է, որ «Անատոլիա»-ում թուրքերի կողքին ապրում է հայութիւն: Հեղիէ Սելման (Ելդա), ցաւ յայտնելով քրդերի միջոցով կատարուածների համար, պահը չի կորցնում շեշտելու իր հայկական հաւանական ծագումը: Նման մօտեցում է ցուցաբերում նաեւ Ֆեթիհէ Չեթինը:

Հարցի նկատմամբ Թուրքիայում ձեւաւորուող նոր մօտեցումների մասին է վկայում հետեւեալ միջադէպը. 2003 թ. Թուրքիայի պատասխանատու մարմինների կողմից Ատոմ Էգոյեանի «Արարատ» կինօժապաւէնի ցուցադրման պաշտօնական արգելումը լրատուամիջոցներում աննախադէպ քննարկման նիւթ դարձաւ: Ընդ որում՝ «Սաբահ» թերթի 2004 թ. յունուարի 6-ի համարում մի թուրք յօդուածագիր, քննարկելով արգելման հարցը, մէջ է բերում «Անատոլիա»-ի խորքում մի գիւղի «թաքուն» հայութեան եւ նոյն գիւղի հայ իմամի (կրօնապետ) մասին կենդանի վկայութիւններ եւ վերջում պարզ ու իմաստալից հարց ուղղում. «Առանց տեսնելու արգելել «Արարատ» ժապաւէնի ցուցադրութիւնը... այս արգելքը մեզ մտածել է տալիս վերելում յիշուած պատմութեան մասին»⁵³⁷:

Իրօք, ի՞նչն է ստիպում Թուրքիայի լրատուական, քաղաքական, կրօնական, գրական եւ իրաւական զանազան հայ եւ այլազգի գործիչներին Հայկական Հարցի մասին արտայայտուելիս արծարծել նաեւ մեզ հետաքրքրող հարցը, եթէ ոչ՝ դարձեալ այն պարզ ճշմարտութիւնը, որ սոյն հարցն ուղղակիօրէն աղերս

⁵³⁷ Նոր Մարմարա, 2004, յունուարի 8:

ունի հայապատկան եւ յարակից տարածքներում վերապրած ու վերակերպուած հայութեան ներկայ իրողութեան հետ:

Այս առումով իրական է այն երկընտրանքը, որ արժարժուում է Թուրքիայի կառավարութեան Մարդկային իրաւունքների խորհրդի կողմից պատրաստուած պետական տեղեկագրում, ըստ որի եթէ «Լօզանի դաշնագիրը ճիշտ գործադրուի, երկիրն այլեւս կը փրկուի Սեւրի «սինդրոմից»⁵³⁸:

Իրական է նաեւ Թուրքիայի ակադեմիականներից պրոֆ. Զէօհջէի համոզմունքը, ըստ որի «թաքուն», կրօնափոխ հայերն ի վերջոյ վտանգաւոր են լինելու Թուրքիայի համար: «Վերջին տարիներին ներանց ուղղուած աշխատանքներ կան,- ասում է Զէօհջէն,- ջանում են նրանց ինքնութիւնը յիշեցնել: Հաւատում են, որ իրենց բուն ինքնութիւնը գիտակցաբար յիշեցնելու գծով վաղն այդ մարդիկ հողի եւ հատուցման պահանջ են ներկայացնելու թուրքերին»⁵³⁹:

⁵³⁸ Նոր Մարմարա, 2004, հոկտեմբերի 18:

⁵³⁹ <http://www.aksyon.com.tr/yazdir.php?id=23084>

ՎԵՐՋԱԲԱՆ

Թուրքիայի վերակերպուած հայութեան հարցը հրամայական նկատառում պէտք է համարել այսօր: Այդ հսկայական ներուժը կարող է կամ ընթանալ տարերային, զարտուղի ճանապարհներով, շահագործուել այլեւայլ համաշխարհային ու տարածաշրջանային քաղաքական ուժերի կողմից եւ ի վերջոյ մարել, կամ վերածուել գիտակցուած ազգային շարժման ու վերազարթօնքի:

Մեր բիւրաւոր հայ եղբայրների ու քոյրերի վտանգըւած դիմագծի պահպանումը խթանելու հեռանկարով կազմուած այս աշխատութիւնն աւարտում ենք նախ դրա կատարելագործման համար յոյս յայտնելով եւ ապա մէջբերելով տիգրանակերտցի հանրահռչակ գրագէտ եւ գիւղագիր, Կ. Պոլսի «Սուրբ Խաչ» դպրեվանքի վաստակաւոր տեսուչ եւ ուսուցիչ Մկրտիչ Մարկոսեանի Ստամբուլի Տեխնիկ համալսարանում կազմակերպուած խորհրդաժողովում 2000 թ. ելոյթի եզրակացութիւնը. «Ամէն մարդ զղջում է անցեալի մի շարք արժէքների կորստի համար. կարելորդ սխալների չկրկնուելն ու փոքրամասնութիւնների այսօրուայ բեկորների պահպանուելն է...»⁵⁴⁰:

⁵⁴⁰ Ժամանակ, 2000, փետրուարի 9:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՐՆԵՐ

ա- Գրքեր եւ մենագրություններ

ա- (1) Հայերէն

1. Արեւմտահայերի բռնագաղթը եւ սփիւռքահայերի հայրենադարձութիւնը Սովետական Հայաստան, Մելիք-սէթեան Հ. Ու., Երեւան, 1975
2. Գիշերը առաւօտը իր մէջ կը կրէ, Ստամբուլ, 2003
3. Գորշ գայլեր- հետազօտութիւն թուրք ծայրայեղ աջակողմեանների մասին, Բրամ Ս., Ուլգեր Մ., թարգմանեց Արսէն Նազարեանը, Երեւան, 2003
4. Ղէպի կախաղան, Թափառական, տպարան «Հայրենիք», Բոստոն, 1932
5. Երիտթուրքերը պատմութեան դատաստանի առաջ (գիրք երկրորդ), Կիրակոսեան Զ., Երեւան, 1983
6. Երկիրն իմ աչքերով, Վարդանեան Ա., Թեհրան, 2008
7. Թուրք-հայկական յարաբերութիւնների պատմութիւնից, Սիմոնեան Հր. Լ., Երեւան «Հայաստան», 1991
8. Հայ ազատագրական պայքարն ու ահաբեկչութիւնը, Գասպար, Ա., Թարգմանեց եւ խմբագրեց Արմէն Տոնոյեանը, Լոս Անջելէս, 1989
9. Հայ բնակչութիւնը Սեւ Ծովէն մինչեւ Կարին, Տաշեան Յ., Վիեննա, 1921
10. Հայ Գողգոթան, Պալաքեան Գ., Վիեննա, 1922

11. Հայ-քրդական յարաբերությունները Օսմանեան կայսրութիւնում, Բայբուրդեան Վ. Ա., Երեւան, 1989
12. Հայաստանը եւ հայերս աշխարհում, Աւագեան Գ., Երեւան, 1990
13. Հայաստանը միջազգային դիւանագիտութեան եւ սովետական արտաքին քաղաքականութեան փաստաթղթերում, Կիրակոսեան Զ., Երեւան, 1972
14. Հայերը Թուրքիայում, Աղայեան Ծ. Պ., Երեւան, 1994
15. Հայերն աշխարհում, Երեւան, 1995
16. Հայկական Հարցը եւ միջազգային օրէնքը, Թորիկեան Շ., Բէյրութ, 1976
17. Հայկական ՍՍՀ բնակչութիւնը (տնտեսա-աշխարհագրական ուսումնասիրութիւն), Աւագեան Գ. Ե., Երեւան, 1975
18. Հայրենիքի գաղափարը, Վարանդեան Մ., Ժնեւ, 1904
19. Հայոց թիւը, Խաթանասեան Ե., Բոստոն, 1965
20. Հաւասարում բազմաթիւ անյայտներով, Պետրոսեան Վ., Երեւան, 1977
21. Հոգիս քեզմով կը խայտայ, Եալչին Բ., թարգմանեց Գարեգին արք. Պեքճեանը, Երեւան, 2003
22. Հողի ու արեան կանչով, տասն օր Արեւմտեան Հայաստանում, Կիրակոսեան Գ., Երեւան, 2001
23. Ձայն համշէնական, Խանգաղեան Ս., Երեւան, 1971
24. Յատկացումներու եւ հատուցումներու մօտաւոր հաշուեկշիռ Թրքահայաստանի եւ Կովկասի Հայկական Հանրապետութեան մէջ հայ ազգային վնասներուն համար, 1919, Փարիզ
25. Յուշամատեն 160-ամեայ Ս. Փրկիչ հայոց հիւանդանոցի, Քէոսէեան Վ., Ստամբուլ, 1994
26. Չմշկածագ եւ իր գիւղերը, Գասպարեան Հ. Յ., «Պայքար» տպարան, 1969

27. Ցեղասպան թուրքը, Ղազարեան Հ., Բէյրութ, 1968
28. Պանթուրքիզմը երէկ եւ այսօր, Պօղոսեան Ս. Կ., Երեւան, 1990
29. Պատմական Հայաստանի քաղաքները, Յակոբեան Թ. Խ., Երեւան, 1987
30. Սասուն, Սէյլան, Երեւան, 1990
31. Սփիւռքահայ արդի գրականութիւն, Տեմիրճեան Ս. Ծ., հատ. Ա, Միչիգան, 1994
32. Սփիւռքահայ գաղթօջախներն այսօր, Գասպարեան Ս., Երեւան, 1962
33. Վիճակագրական նոր տեսութիւն մը ի նպաստ անկախ հայաստանի, Սարգիսեան Հ. Բ. Վ., Վենետիկ- Ս. Ղազար, 1919
34. Տիգրանակերտի նահանգի ջարդերը, Մկրտիչեան Թ. Գ., Գահիրէ, 1919
35. Քրդերը եւ Հայկական Հարցը, Պօղոսեան Ս. Կ., Երեւան, 1991
36. Ու ես կ'երթամ, Պալըմեան Շ., Ստամբուլ, 2005

ա- (1) Օտար լեզու

1. «Աշխարհի ժողովուրդները» (պարսկերէն) Սայիդեան Ա., Թեհրան, 1983
2. «Վերապրումի պատմութեամբ. Աբդուլլահ Օջալանի յուշերն ու մտորումները» (պարսկերէն), Քուչուք Ե., Թեհրան, 1999
3. The Presence of the Past, Der-Yeghiayan G., Lebanon, 2008

բ- Յօդուածներ եւ գիտական աշխատութիւններ

բ- (1) Հայերէն

1. Թուլումճեան Ա., Հովա-հեմշիլներ եւ Բաշ-հեմշիլներ. Ճանապարհորդութեան գրառումներ, Սոճի, 2005, հոկտեմբեր
2. Մելքոնեան Ա., Հայ բնակչութեան էթնոկրօնական դիմախելման գործընթացներն Արեւմտեան Հայաստանում XVI-XVIII դարաշրջանում, գիտաժողովի հիմնադրոյթներ, Երեւան, 2004
3. Մկրտչեան Լ., Ընթացիկ բանավեճեր ազգային հարցի շուրջ, Բագին, 1970
4. Խաչիկեան Լ., Էջեր համշէնահայ պատմութիւնից, Բանբեր Երեւանի համալսարանի, 1969, թիւ 2
5. Համբարեան Ա., Արեւմտահայերի թուաքանակի հարցի շուրջը, Բանբեր Երեւանի համալսարանի, 1969, թիւ 2
6. Պապիկեան Թ., Ջուտ հայաբնակ գիւղը՝ ՎազըՖ, Քուլիս, Ստամբուլ, 1990, փետր., թիւ 1022, էջ 22-24 եւ 1990, մարտ, թիւ 1023

բ- (1) Օտար լեզու

1. Asylum Seekers From Turkey: The Dangers They Flee, A Report To Asylum Aid, (Report of a mission to Turkey), 4-17 October 2000
2. Benninghaus, R., Production, Usage and diffusion of the Shal û Shapik Men's Costume in Turkish Kurdistan, 31 May 2001

3. Bruinessen, M. V., Genocide In Kurdistan? The suppression of the Dersim rebellion in Turkey (1937-38) and the chemical war against the Iraqi Kurdis (1988), in: George J. Andreopoulos (ed), Conceptual and historical dimensions of Genocide. University of Pennsylvania Press, 1994
4. Burgess, G., Into the Protecting Arms: The League of Nations and the Extension of International Assistance to Unprotected Persons in the Middle East and Europe, 1926 – 1928, Copyright (c) Monash University, School of Historical Studies 2001
5. Dakessian, A., The Armenians in Post-WW I Turkey, «Հայկազեան հայագիտական հանդէս», 1995
6. European Court Of Human Rights, Former Second Section, Case Of Tepe V., Turkey, (Applicatoin no. 27244/95), [http:// www.vahitbicak. com/ tepetr.htmhttp](http://www.vahitbicak.com/tepetr.htmhttp).
7. Forced Evictions: Violations of Human Rights, Global Survey on Forced Evictions, No. 7. COHRE, September 1998, www.cohre.org
8. Hann C., History and ethnicity in Anatolia, Max Planck Ins. for Social Anthropology, Halle, 2003
9. Hidrisah, Y., Massacre of Christians (Syriacs, Nestorians, Chaldeans, Armenians) in Mesopotamia and Kurds, A Documentary Study, Honnover, 1997
10. Hofmann, T., Armenians in Turkey today, October 2002
11. Hofmann, T., Three Wishes For Yelda, Armenian International Magazine (AIM) VOL. 10, NO. 11, November 1999
12. Hovannisian, R.G., Intervention and Shades of Altruism During the Armenian Genocide, from The Armenian Genocide, History, Politics, Ethics; edited by St. Martin's Press. NY, 1992

13. Karakashian, V., Fifty years behind a lens, Հայրենիք Վիքի, Բոստոն, 2001, ապրիլ
14. Koivunen, K, The Invisible War in North Kurdistan, Yurmala, Latvia, Gender and Multiculturalism, June 7-13, 1998
15. Oehring, O., Human Rights in Turkey, Secularism, Religious Freedom, 2002, missio order no 600 215
16. Official general report on Turkey, Directorate for Movements of Person, Migration and Consular Affairs Asylum and Migration Division, May 2001
17. Oktem, K., Creating Turk's Homeland: Modernization, Nationalism and Geography in Southeast Turkey in the late 19th and 20th Centuries, University of Oxford, 2003
18. Situation in Turkey, Interim report of the Special Rapporteur of the Commission on Human Rights on the elimination of all forms of intolerance and of discrimination based on religion or belief, Addendum 1, General Assembly, 11 August 2000
19. Suny, G., Gocek, F. M., Discussing Genocide: Contextualizing the Armenian Experience in the Ottoman Empire, 2002
20. The Changing Face Of Anatolian Alawism, http://www.turkishdailynews.com/old_editions/09_11_96/feature.htm.
21. The Wall Of Denial: Internal displacement in Turkey, U.S. Committee for Refugees, November 1999
22. Thousands Of Turkified Armenians Revert To Their Roots, PanArmenian News, Jan 19, 2005
23. Religious Freedom in the Majority Islamic Countries-1998 Report, A.C.N. Italian Office, 1998

24. Reve T., Hauge E. H., Gjaerum P. I., Finding Market Opportunities in Turkey, International Buisness, 2003
25. Tocci, Nathalie, Our Future Southeastern Turkish Frontiers, CEPS Policy Brief No. 6, October 2001
26. Turkey Human Rights Practices, 1993, Author: U.S. Department Of State, January 31, 1994
27. Ungor U. U., A Reign of Terror- CUP Rule in Diyarbakir Province, 1913-1923, University of Amsterdam, Dep. of History, June 2005
28. Vaux B., The Forgotten Black Sea Armenians, Columbia University, 1996
29. Vaux B., LaPorta S., Tucker E., Ethnographic Materials from the Muslim Hemshinli, Harvard University, 1996
30. Vaux B., Hemshinli: The Forgotten Black Sea Armenians, Harvard University, 2001
31. White, P., Ethnic Diferentiation Among The Kurds: kurmanci, kizilbach and Zaza, <http://www.deakin.edu.au/~kstudyg/articles.html>

գ- Մամուլ

գ- (1) Հայերեն

1. Ազգ, Երեւան
2. Ազդակ շաբաթօրեակ, Բեյրութ
3. Ալիք, Թեհրան
4. Այգ, Թաւրիզ
5. Ամենուն տարեգիրք, Բեյրութ
6. Արարատ, Բեյրութ

7. Արմենիա, Սիդնեյ
8. Բազին, Բէյրութ
9. Բազին օրացոյց, Թաւրիզ
10. Բազմավէպ, Վենետիկ, Ս. Ղազար
11. Բանբեր, Փարիզ
12. Բանբեր Երեւանի համալսարանի, Երեւան
13. Գարուն, Երեւան
14. Դիտակ, Բէյրութ
15. Դրօշակ, Ժնեւ, Փարիզ, Աթենք եւ Երեւան
16. Երկիր, Երեւան
17. Ընդարձակ տարեցոյց, կազմեցին՝ Զուհաճեան Մ. եւ Ազատեան Թ., Կ. Պոլիս
18. Ժամանակ, Ստամբուլ
19. Լրաբեր, Ստամբուլ
20. Հայկազեան հայագիտական հանդէս, Բէյրութ
21. Հայրենիք ամսագիր, Բոստոն
22. Հայրենիք վիքի, Բոստոն
23. Հայրենիք տարեգիրք-տօնացոյց, Բոստոն
24. Հանրապետական, Երեւան
25. Հորիզոն, Թորոնթօ
26. Զայն համշէնական, Երեւան
27. Յուսաբեր, Կահիրէ
28. Նաւասարդ, Լոս Անջելէս
29. Ներկա, Բուէնոս Այրէս
30. Նոր Մարմարա, Ստամբուլ
31. Նորք, Երեւան
32. Շիրակ, Բէյրութ
33. Պատմա-բանասիրական հանդէս, Երեւան
34. Զանասէր, Բէյրութ

35. Ս. Փրկիչ, Ստամբուլ
36. Սովետական Հայաստան, Երեւան
37. Վարագ, Լոս Անջելէս
38. Րաֆֆի տարեգիրք, Թեհրան

գ- (1) Օտար լեզու

1. Geographical Magazine, London
2. Masis, London
3. Middle East Times
4. The Journal of the International Institute
5. The Minneapolis Morning Tribune

դ- Կայքէջեր եւ էլեկտրոնային այլ աղբիւրներ

1. <http://arsiv.aksiyon.com.tr/arsiv/140/pages/dosyalar/dos1.html>
2. <http://babaerdogan.org/partisan>
3. <http://birkanmakar.dostweb.com/contact.html>
4. <http://en.wikipedia.org/wiki/Hamshenis>
5. <http://f20.parsimony.net/forum36933/>
6. [http://gokdemir.com/Borderlands From Hasankeyf to Mardin to Harput and Beyond.htm](http://gokdemir.com/Borderlands%20From%20Hasankeyf%20to%20Mardin%20to%20Harput%20and%20Beyond.htm)
7. <http://horizonweekly.ca/eandf.php?c=10&id=1577&n=1390>
8. <http://hyeforum.com/index.php?showtopic=3459>
9. <http://karalahana.com/>
10. <http://members.tripod.com/~TurkKurd/kurdistan.html>

11. <http://oons-request@uk-christian.net>
12. http://penelope.uchicago.edu/Thayer/E/Gazetteer/Places/Asia/Armenia/_Texts/KURARM/39*.html
13. http://perso.wanadoo.fr/kurdistannameh/histoire/kizil/hist2_kizil_kurd.htm
14. <http://user.freenet.am/~gurun/turkce.htm>
15. <http://user.freenet.am/~sivas/Sepasdian1950in.htm>
16. http://www.agbu.org/agbunews/display.asp?A_ID=47
17. <http://www.aina.org/ahrr.htm>
18. <http://www.aksiyon.com.tr/yazdir.php?id=23084>
19. <http://www.altancivelek.com>
20. <http://www.anarres.net/anatolia/ermenice.html>
21. <http://www.anca.org/ancadesk.php>
22. <http://www.answers.com/topic/hamshenis>
23. http://www.armeniadiaspora.com/population/note_turkey_pop.html
24. <http://www.armeniapedia.org/index.php?title=Hamshen>
25. http://www.armenocide.am/genocide_museum.htm
26. <http://www.armenocide.de/armenocide/armgende.nsf/0/CF7A3142040147C3C1256AD70079AFBC?OpenDocument>
27. http://www.arts.monash.edu.au/eras/edition_1/burgess.htm
28. <http://www.biyografo.net>
29. <http://www.bolsohays.com>
30. <http://www.chaldeansonline.net/forums/ruediger-benninghaus.html>
31. <http://www.cibin.de>
32. <http://www.deakin.edu.au/~kstudyg/articles.html>
33. http://www.dersim.biz/html/dersim_neresidir_.html

34. http://www.devrimcidemokrasi.org/arsiv/2001/Karadeniz'de_Azinlik_Miliyetler.htm
35. <http://www.devrimcidemokrasi.org/arsiv/2001/Sayi-13/arastirma2.htm>
36. <http://www.did-dpa.org/Html/engarmenianQ6.htm>
37. <http://www.dozame.org/villages/burnedvillages.htm>
38. http://www.etext.org/Politics/Arm.The.Spirit/Kurdistan/Kurdistan.Parliament.in.Exile/armenian_genocide.txt
39. <http://www.eth.mpg.de/pubs/wps/pdf/mpi-eth-working-paper-0050.pdf>
40. <http://www.ezilenlerinsosyalistplatformu.com/modules.php?name=Sections&op=printpage&artid=2>
41. <http://www.geocities.com/cryptoarmenians/Adiyaman.html>
42. <http://www.geocities.com/cryptoarmenians/MalChurch.html>
43. <http://www.geocities.com/cryptoarmenians/Sirnak.html>
44. <http://www.geocities.com/cryptoarmenians/Sirnak2.html>
45. <http://www.haigazian.edu.lb/announce/pressrelease.htm>
46. <http://www.hdb4you.de/galerie.asp>
47. <http://www.hopalilardernegi.org.tr/index.asp?altsayfa=sevim>
48. <http://www.Hopam.com>
49. <http://www.horizonweekly.ca/2006-03-22>
50. <http://www.hri.org/news/cyprus/tcpr/2005/05-12-30.tcpr.html#09>
51. <http://www.hyetert.com/rehber.asp>
52. <http://www.iatp.am/economics/migr/hayga-e95.htm>, Planeta of Diaspora, #25, 1999


53. http://www.iranica.com/articles/ot_grp5/ot_kurdish_tribes_20040616.html
54. http://www.isic-centre.org/Bulletins/95_Oct_Nov.pdf
55. <http://www.jihadwatch.org/archives/2005/02/005091print.html>
56. http://www.joshuaproject.net/Joshua_Project_-_Languages_Listing.htm
57. <http://www.jubileecampaign.co.uk/world/tur2.htm>
58. <http://www.karalahana.com/index.htm>
59. <http://www.khrp.org/news/pr2004/26-11-04.htm>
60. <http://www.kurdish.com/media/article/kwr-article-15.htm>
61. <http://www.lazebura.net/english - Lazebura.net>
62. <http://www.milliyet.com.tr/ozel/siyaset/secim2002/images/>
63. <http://www.numbers@armeniadiaspora.com>
64. <http://www.ozgurpolitika.org/1997/aralik/1226kyb.htm>
65. http://www.panarmenian.net/news/eng/?task=society&id=11935&date=2005_01-19
66. <http://www.paula-wolfert.com/articles.html>
67. <http://www.pkk.org/2002/03>
68. http://www.pressbox.co.uk/detailed/Arts/Armenians_in_Malatya_soon_to_demand_the_reopening_of_the_church_79067.html
69. <http://www.roadtoarmenia.com/scenes/scenes.html>
70. http://www.secularislam.org/testimonies/More_Testimonies_Why_I_Left_Islam.htm
71. <http://www.surphac-tbrevank.org/sht/okul/arama.asp>
72. <http://www.tallarmentiantale.com/TURKISH-SCHOLARS.htm>
73. <http://www.tb-yayin.gov.tr/tarimkoy/sayi127/m04.htm>

74. http://www.turkishdailynews.com/old_editions/09_11_96/feature.htm
75. <http://www.vahitbicak.com/tepetr.htmhttp>
76. <http://www.venk.info/default.asp>
77. <http://www.yaylayolu.info/forum/>
78. http://www.nadir.org/nadir/initiativ/kurdi-almani-kassel/aktuue/2002/jan2002/armenier_tr.htm
79. <http://www.newneighbors.am/am/news.php?cont=3&rg=2&date=16.02.2006&month=3&year=2006>
80. <http://www.ulkuocaklari.org.tr/arastr/teror/10.htm>
81. <http://www.zaman.com>
82. <http://www.zaman.com/?bl=national&alt=&trh=20061026&hn=37691>
83. <http://www.metimes.com/storyview.php?StoryID=20051205-073332-7827r>
84. <http://www.hetq.am/eng/society/0504-bagrjoglu.html>

Բովանդակություն

Ներածություն.....	7
ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ	
- Տեսական նախադրեալ.....	9
ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ	
- Քննարկման հիմունքներ.....	13
Ա- Պատմա-ժամանակագրական հոլովոյթ.....	13
Բ- Աշխարհագրական շրջագիծ.....	20
Գ- Տիպաբանական տեսակաւորում.....	22
ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ	
Ա- 1923-38 թթ. ժամանակահատուած.....	37
Բ- 1938-50 թթ. ժամանակահատուած.....	71
Գ- 1950-60 թթ. ժամանակահատուած.....	93
Դ- 1960-71 թթ. ժամանակահատուած.....	116
Ե- 1971-80 թթ. ժամանակահատուած.....	138
Զ- 1980-91 թթ. ժամանակահատուած.....	156
Է- 1991-2005 թթ. ժամանակահատուած.....	173
Է (ա) «Պաշտօնական» հայություն.....	175
Է (բ) «Իսլամացած» հայություն.....	197
Է (գ) «Թաքուն» հայություն.....	219
ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ	
- Եզրակացություն.....	257
ԿԵՐՋԱՐԱՆ	277
ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՆԵՐ	279

Տպարան
Կաթողիկոսութեան Հայոց
Մեծի Տանն Կիլիկիոյ
Ամբիփաս - Լիբանան



Ծնած է Թեհրան, 1964ին: Միջ-
նակարգ դպրոցը ավարտած է
1982ին: Ստացած է պսակաւոր
գիտութեանց աստիճան՝ շինա-
րարական մասնագիտութեամբ,
1987ին: Ստացած է մագիստրոսի վկայական սեյսմիկ
ճարտարագիտութեան մասնագիտութեամբ, 2000ին:
Պաշտպանած է ատենախօսութիւն 2001-2006ին եւ
ստացած թեքնիք գիտութիւններու դոկտորայի աստի-
ճան:

1988-90ին ծառայած է Իրանի ծովուծին մէջ, որպէս
աւագ լեյդենանտ: Եօթ տարի դասախօսած է իրան-
եան համալսարաններու մէջ:

Զեղինակ է միջազգային, հայաստանեան եւ իրա-
նական գիտական հանդեսներուն մէջ տպագրուած
մօտ երկու տասնեակ յօդուածներու, 33 Ազգային ա-
կադեմիայի պատմութեան հիմնարկի երաշխաւորու-
թեամբ հրատարակուած մէկ մենագրութեան եւ հայ
մամուլին մէջ («Դրօշակ», «Ալիք», «Ազդակ», «Ակունք»)
լոյս տեսած բազմաթիւ հրապարակագրութիւններու:
Մասնակցած է միջազգային գիտաժողովներու:

2005էն ի վեր 33 Ազգային ակադեմիայի պատ-
մութեան հիմնարկին մէջ ասպիրանդ-հայցորդ է:

2006ին կը տեղափոխուի Երեւան եւ անկէ ի վեր
կ'աշխատի ԶՅԴ պաշտօնաթերթ Դրօշակի խմբագրա-
կազմին մէջ, իբրեւ խմբագիր: Չուզահեռ, կը դասա-
խօսէ «Երեւանի ճարտարապետութեան եւ շինարա-
րութեան պետական համալսարան»ին մէջ:

